Հրանտ Օ. Սարգսյան

Ե. ԼԱԼԱՑԵԱՆ.

14173.
½

# ԳԱՆՁԱԿԻ ԳԱՐԱՌ

Ա. ՀԱՏՈՐ.

*Արտատպած*
Ազգագրական Հանդիսից.

ЯАМ

ԹԻՖԼԻՍ.
*Տպարան Կ. Մարտիրոսեանցի.* ||| Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1|2.
1900

Digitized by Google

OL
45880
.3 C

Lalayan, E.

Gandzaki gawar.

HARVARD UNIVERSITY
LIBRARY
FEB 26 1992

Digitized by Google

*Նորին Վեհափառութեան*

# Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ԵՒ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Խորին երախտագիտութեամբ

Նուիրում է

*Աշխատասիրողն.*

Digitized by Google

Digitized by Google

# ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌ

## ՆԻՒԹԵՐ ԱԳՈՒԳԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

### ԳԱՆՁԱԿԻ ԳՕՒԱՌ.

Գանձակի գաւառը իւր այժմեան սահմաններով բռնում է հին Ուտեաց աշխարհի Ջակաշէն [1]), Գարդման [2]) և Արցախի Փառիսոս [3]) գաւառները։ Սրա մէջ է մտնում նաև Ջրաբերդի Գիւլիստան [4]) կամ Իգիրմիդորդ մահալը, բացի Թալիշ գիւղից, Գիւլիստան բերդից և Հոռեկայ վանքից։

Այս գաւառն ևս, ինչպէս աւանդում է Խոր. Վաղարշակ Ա. Արշակունի թագաւորի ժամանակ ենթարկւում էր Սիսակեան Առան կուսակալին, բայց յետոյ անցաւ Աղուանից թագաւորութեանը։ Սակայն շուտով հայերը կրկին տիրեցին նրան, ինչպէս ասում է Բիւզանդ (Ե. 13). (Սպարապետն Մուշեղ) Թափէր ի նոցանէ, (այսինքն

[1]) Ջակաշէն գաւառը կոչւում է նաև Ջիկաշէն (Խոր. մատենագր. եր. 610), Մովսէս Կաղանկատուացին մի տեղ (եր. 251) կոչում է Ջակաշէն, մի ուրիշ տեղ Արշակաշէն (եր. 265)։ Ամենից ճիշտ պէտք է համարել Ջակաշէն անունը, որ հաւանօրէն ծագած պէտք է լինի Սագասինի կոչումից, սկիւթական Սագ ցեղի անունով, որը ըստ Ստրաբոնի արշաւելով Հայաստան՝ տիրեց այս գաւառին։ Սա բռնում է Կուր գետի և Կուրակ ու Ջամքոր գետակների մէջ ընկած երկիրը։

[2]) Այս գաւառը ընկնում էր Կուրակ և Ջամքոր գետակների, դաշտաբերանի և Մռաւեան լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան մէջ։ Սա կոչւում է նաև Գարդմանաց ձոր. (Մատ. Խոր. 258), Գարդամանիկ (Վարդ. Բարձ. յիշ. Բարխուդարեան ,,Արցախ''. եր. 24).

[3]) Փառիսոսի գաւառը, որ կոչւում է նաև Փառնէս (Մատ. Խոր. եր. 609. Մով. Կաղ. եր. 273 և 279), Փառիս (Մով. Կաղ. եր. 273), ընկնում է Ջամքոր գետակի միջին օժանդակի և Գեղամայ լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան և Տաւուշ գետակի հարաւ-արևելեան օժանդակի (Ախնջի) ափերի և դաշտաբերանի մէջ։ (Բարխ. Արցախ. եր. 24)։

[4]) Գիւլստան կամ Իգիրմիդորդ մահալը ընկնում է Կիւրակ և Ինճաչայ գետերի մէջ։

Digitized by Google

յԱղուանից) բազում գաւառս զոր հատեալ էր նոցա ի նոցանէն (այսինքն ի Հայոց) զՈւտի և զՁակաշէն և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլն։

Խորենացու ժամանակ Աղուանները կրկին տիրում են այս գաւառին, բայց Սմբատ ա (892—914) նորից յետ է առնում, իսկ նրա յաջորդ՝ Աշոտ բ. (915—928), որին շատ սիրելի էր Ուտին, երբեմն պատերազմով, և երբեմն սիրով նուաճուած պահում էր, որովհետև շուտ շուտ ապստամբւում էին [1]։

Թ. դարում այս գաւառն ևս ենթարկւում է Բուղայի արշաւանքին, որ 855 թուին գալիս է Գարդմանացւոց գաւառը, ուր փախել էր Վասակ Սիսականը։

Սա ջարդել էր Բուղայի զօրքերը, վայր էր գլորել նրանց զօրապետին և իւր ձիու ոտների տակ կոխկռտելով՝ փախել էր Գարդման ամրոցը՝ Կտրիճ անունով իշխանի մօտ։ Սա թէև սիրով ընդունել էր նրան, բայց յետոյ դաւաճանութեամբ կապել էր նրան և ուղարկել Բուղային, յուսալով եթէ ոչ պատուի արժանանալ, գոնէ չենթարկուիլ նրա բռնութեան. Բայց հակառակն է պատահում։ Բուղան առնում է բերդը և իշխանին կալանաւորում [2]։

Ինչպէս այժմ, այնպէս և հին անցեալում այս գաւառի ամենանշանաւոր քաղաքը եղել է Գանձակը (այժմ Ելիսաւէտպոլ)։ Սա գըտնւում է հին Ձակաշէն գաւառում և Մովսէս Կաղանկատուացու ասելով (եր. 265), հիմնարկուել է 836 թուին Բաղդադի ամիրայի հրամանով, արաբ Խազը-Փատգոսի որդու ձեռքով։

Կարճ միջոցից Գանձակը դառնում է Աղուանից մայրաքաղաք, ուր և փոխադրւում է Աղուանից կաթուղիկոսարանը [3]։

Տասներորդ դարի վերջում Փատլուն ամիրան տիրում է Գանձակին, որի սերնդի ձեռին մնում է նա մինչև 1088 թուականը, երբ պարսից Մելիք շահի հրամանով Պուղան Ամիրան պարսպի մի կողմը քանդելով առնում է այս քաղաքը և իւր կողմից կուսակալ նշանակում [4]։

Սոյն միջոցներին Գանձակը անցնում է Ձէդդադինեան հարստութեան երկրորդ ճիւղին, որի նախահայր Ձեդդադին Աբուլ Սուարը 1072 թուին գնել էր Անի մայրաքաղաքը իւր Մանուչէ որդու համար և այնտեղ հիմնել Ձեդդադինեան հարստութեան առաջին ճիւղը [5]։

1139 թուին սաստիկ երկրաշարժից կործանուել է Գանձակը, շինութիւնների փլատակների տակ թաղելով բնակիչներին։ Այս ժամա-

[1]) Ինն. Ստոր. Հին Հայ. 337.
[2]) Յովհաննէս Կաթ. եր. 71.
[3]) Մատթէոս Ուռհայեցի եր. 278.
[4]) Ինճինճ. Ստոր. 311. Չամչեան պատմ. Գ. 13.
[5]) Стэнли-Лэнъ Пулъ: Мусульманскія династіи.

Digitized by Google

նակ վրաց Թագաւոր Դիմետրէն, Դաւթի և Գէորգի հայրը, եկել և տարել է քաղաքի դռները իւր երկիրը [1]։

Գանձակը մնացել է պարսից Զիդդադինեան հարստութեան ձեռքին մինչև ԺԻ դարը և եղել է նրանց գլխաւոր, իշխանանիստ քաղաքը, մինչև Տափար սուլթանի ժամանակ, որ իւր երկիրը իւր որդիների մէջ բաժանելով՝ Գանձակը տուել է իւր կրտսեր որդուն։ Սրա ժամանակ պարսիկները շատ վատ են վարուել քրիստոնեաների հետ, մինչև անգամ, իբրև նախատինք քրիստոնէութեան, քաղաքի գլխաւոր դռան սեամի տակ դրել են խաչը, որպէսզի անցնող-դարձնողը ոտնակոխ անէ նրան։

Այս միջոցներում վրացիները հետզհետէ մօտենում են Գանձակին և Զաքարէ ու Իվանէ սպասալարները (ԺԻ դարում) առնում են Գետաբէկը և Զարեքը [2]։

1235 թուին թաթարները Մուղանի դաշտից յարձակւում են Գանձակի վրայ։ Բնակիչները սկզբում պաշտպանւում են. բայց երբ թաթարները քանդում են պարիսպը մեքենաներով՝ նրանք յուսահատուած իրանց ստացուածքը թաքցնում են գետնի տակ, կրակ են տալիս տներին և փախչում։ Թաթարները ներս են խուժում, մնացածներին սրի քաշում, խնայելով միայն երեխաներին՝ ապա պեղում են վառած տեղերը և գտնում թաքցրած անթիւ գանձերը, թալանում և այսպէս թողնելով քաղաքն աւերակ և ամայի՝ վերադառնում են Մուղան։ Սակայն կարճ միջոցից Զարմաղան նորից շինում է քաղաքը և մարդկանց վերաբնակեցնում այստեղ [3]։

Այնուհետև պատմութիւնը Գանձակի մասին լռում է մինչև 1579 թուականը, երբ Օսմանցոց Օսման փաշան առնում է Գանձակի հետ և՛ Զարաբերդը, Զարեքի գետից մինչև Երասխը։ Այս արշաւանքի հետևանքը լինում է մի սոսկալի սով, որ լրացնում է պատերազմի աղէտները [4]։ Ապա, 1607 թուին, երևում է Ջահ-Աբասը, որ առնում է Գանձակը, կոտորում բոլոր այլազգիներին, աւերում է հին քաղաքը [5] և նրանից փոք ինչ հեռու հիմնարկում նորը, վերակոչելով [6] Աբբասապատ. ուր և կանգնում է մի գեղեցիկ մզկիթ։

Ջահ-Աբբաս առնում և կործանում է նաև Ջամքորը։

Այնուհետև Գանձակը կառավարւում է պարսից կողմից նշանակուած խաներից։

---

[1]) Կիր. եր. 65. Վարդ. Բարձ. 162.
[2]) Ղամչեան Գ. 149.
[3]) Ղամչեան. Գ. եր. 206. Ինճինճ. Ստոր. 312.
[4]) Ղամչեան, պատմ. Գ. 531.
[5]) Անդ. Գ. 555.
[6]) Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց եր. 86.

Digitized by Google

1721 թ. լեզգիները Ալիսուլթանի առաջնորդութեամբ 8000 հոգով յարձակւում են Գանձակի վրայ և մտնում քաղաքը, բայց այստեղ քաղաքացիները զանազան փողոցներում յարձակուելով նրանց վրայ՝ կոտորում են մօտ 1220 մարդ և մնացածներին փախցնում։ Սակայն սրանք գնում են Զամքորը ասպատակելու, Գանձակի Օղուրլու խանը հալածում է նրանց, բայց յաղթւում և յետ է դառնում։ Այս յաղթութիւնից քաջալերուած՝ լեզգիները զանազան կողմեր ասպատակութիւններ են սփռում և կրկին գալիս Գանձակի վրայ։ Այս միջոցին Գանձակեցիները վրաց Վախթանգ թագաւորին օգնութեան են կանչում, և երբ նա գալիս առնում է Զամքորը՝ լեզգիները փախչում են։ Վախթանգը Գանձակի մօտ բանակ է դնում և սպասում մի ամիս։ Այս միջոցում գանձակեցիները ստիպում են Վախթանգին, որ կոտորել տայ թարաքամաներին, որոնք կրօնակից լինելով լեզգիներին, հրաւիրում են նրանց այս երկիրը։ Վրաց զօրքը տարածւում է ամեն կողմ և կոտորում ու թալանում ոչ միայն թարաքամաներին, այլ և հայերին և շատերին Թիֆլիս գերի տանում [1])։

Հազիւ Վախթանգը վերադառնում է Թիֆլիս՝ երբ 1722 թուին լեզգիները նորից յարձակւում են Գանձակի վրայ, առնում են քաղաքը, ծերերին և պառաւներին կոտորում, իսկ աղջիկներին և մանուկներին գերի տանում [2])։

Դեռ մի ամբողջ տարի էլ չանցած, 1723 թուին օսմանցիների զօրքը սուլթան Ահմէդի հրամանով առնում է Գանձակը, ինչպէս և Երևանն ու Դավրէժը և ահագին աւերածութիւններ գործում։

Բայց կարճ միջոցից Գանձակը նորից անցնում է պարսից ձեռքը և խան է կարգւում Օղուրլի-խանը, որին 1740 թուին յաջորդում է որդին, Զահվերդի խանը. սրա երկու օրինաւոր կանանցից մինը, Գիւլ-Գունչէն՝ հայուհի էր։ Զահվերդի-խանին 1756 թ. յաջորդում է որդին՝ Ջաւադ-խանը։ Այս վերջին երկու խանների մասին մենք կը խօսենք Մելիք-Բէկլարեանների պատմութեան մէջ։

Մահմադ-շահը Թիֆլիսը աւերելուց յետոյ գալիս է Գանձակ, որտեղից մեծամեծ ասպատակութիւններ է սփռում Արցախ, Գուգարաց և Աղուանից երկիրները։ Բայց երբ Նուխում և Զամախում ապաստանածները ընդդիմադրում են սրա զօրքերին և մինչև անգամ վնասներ հասցնում, Մահմադ-շահը կատաղած հրամայում է ձիերի և ջորիների ոտների տակ ձգել և սպանել 600 գերիները, որոնց Թիֆլիսից բերած գերիների միջից զատել էր իբրև ծերեր և ցաւագարներ, և բացի սրանից, շինել է տալիս մի կրազանգ ուղղագիծ պատ,

---

[1]) Ծսայի կաթողիկոս Աղուանից Հասան-Ջալալեան եր. 30.

[2]) Շամչեան պատմ. Հայոց Գ. 784.

Digitized by Google

որի մէջ թողնում է 52 ծակ, այնքան նեղ, որ մի մարդու գլուխ հազիւ կարող էր անցնել, և ապա Արցախի զանազան գաւառներից բռնած 52 հայ մելիքներին, որոնց մեղադրում էր, թէ ձեռնտու են եղել Իբրահիմ խանին փախչելու, բերում է այս պատի մօտ, գլուխները անցկացնում ծակերի մէջ և եռապատիկ թոկերը ձգելով վզերից, կապում է ամէհի ջորիներին և այնքան ծեծել է տալիս ջորիներին՝ որ նրանք քաշքշելով պոկում են մելիքների գլուխները։ Այս միջոցին լսում է որ Ջիրազի բնակիչները և նրանց խանը ապստամբել են, իսկոյն գնում է դէպի Թէհրան, որպէս զի նրանց առաջն առնէ։

Սրա հեռանալուց յետոյ Արցախի Իբրահիմ-խանը, որ Դաղստան էր փախել, Վրաց Հերակլի հետ դաշն կապելով վարձում է կովկասեան 12000 զօրք և միանալով վրաց զօրքի հետ 1796 թուին գալիս է Գանձակի Ջաւատ-խանի վրայ։ Սա չկարողանալով նրանց ընդդիմադրել, մելիք Մէջլումի հետ ամրանում է բերդում, սակայն դաշնակիցները պաշարում են բերդը և բուրգերից մինի վրայ սպանում մելիք Մէջլումին, որ հրամանատար էր. յիսուն օրից յետոյ Ջաւատ-խանը յաղթուելով՝ հաշտութիւն է խնդրում և ստիպւում է վարձուած լեզգիներին վճարել խոստացուած վարձը և վերադարձնել իւր և մելիք Մէջլումի ունեցած մի քանի հարիւր Թիֆլիսեցի գերիները։ Բացի սրանից Հերակլը գերի է տանում Վրաստան Գանձակի բնակիչների մեծ մասն [1])։

1796 թուի դեկտեմբերին ռուսները Զուբովի առաջնորդութեամբ, որի հետ էր և Հայոց Յովսէփ արքեպիսկոպոսը, առնում են Գանձակը, սակայն Կատարինէ կայսրուհին վախճանւում է և Աղէքսանդր Ա. յետ է կանչում իւր յաղթական զօրքը։ Տեղական Ջաւադ-խանը նորից գլուխ է բարձրացնում, մինչև որ 1804 թուին յունուարի 3-ին ռուսները Ցիցիանովի առաջնորդութեամբ կրկին առնում են Գանձակը, սպանելով Ջաւադ-խանին և նրա կրտսեր որդուն։ Գնդապետ Պաւլ Միխայլովիչը Եկերեան գնդով թողնում է այստեղ, ինչպէս և Կ. Պոլսեցի Գեղարդակիր Յովհաննէս եպիսկոպոսը, [2]) որ Թիֆլիսի առաջնորդ էր։

1826 թուին, երբ Աբբաս Միրզան պաշարել էր Ջուշին, Գանձակի թուրքերից պատգամաւորներ գնացին և խնդրեցին գալ վերականգնել Գանձակի խանութիւնը։ Աբբաս-Միրզան էլ իւր աւագ որդի Մահմէդ Միրզին, իւր փեսայ Ամիր-խան-սարդարին և Ջաւադ-խանի որդի Ուղուրլու-խանին ուղարկեց սրանց խնդիրը կատարելու։ Սրանք առան Գանձակը, աւերեցին Ելենէնդորֆ և Աննէնֆէլդ գա-

[1]) Դիւան Հայ. պատմ. Դ. հ. եր. 742—43.
[2]) Դիւան Հայոց պատմ. Բ. եր. 174—175.



Digitized by Google

զուրթները, որոնցից առաջնի բնակիչներից շատերը կարողացան «ազատել իրենց կեանքը միայն հայերի օգնութեամբ, թաքնուելով նրանց տներում հէնց Գանձակի մէջ», [1]) իսկ Աննէնքովեցիք փախան Թիֆլիս, և միայն գուլքերը կորցրին։ Այս միջոցին (սեպտեմբերի 2-ին) Հայ ազգի Մատաթովը 2000 հոգի զօրքով, եկաւ դէպի Ջեագամ և պատահեց 10—12 հազար պարսից զօրքերի։ Միւս օրը, Ջամքոր գետակի մօտ տեղի ունեցաւ մի ահեղ կռիւ, և պարսիկները 2000 դիակ և մեծ աւար թողնելով պատերազմի դաշտում՝ փախան դէպի Գանձակ և այս բերդն էլ անխնամ թողնելով՝ նահանջեցին մինչև Ղարաբաղ։ Ամսի 4-ին Մատաթովը մտաւ Գանձակ, որտեղ նրան ընդ առաջ եկան տեղացին հայերն ու հայ հոգևորականութիւնը խաչով ու խաչվառով [2])։

Այս միջոցին Պասկևիչը Կովկասեան զօրքերի ընդհանուր հրամանատարի պաշտօնը ստանձնելով՝ իւր զօրքերով եկաւ Գանձակ և սեպ. 13-ին քաղաքի առաջը եղած ընդարձակ դաշտում ճակատամարտ տուեց Աբբաս-Միրզայի բազմաթիւ զօրքին և յաղթելով փախցրեց դէպի Թավրիզ։ Այս պատերազմի մէջ մեծ գործ կատարեց ինչպէս իշ. Մատաթովը, այնպէս և հայոց հեծելագունդը, Մանուչարեան Գրիգոր եպիսկոպոսի առաջնորդութեամբ։ Այսպիսով Գանձակը կրկին մտաւ Ռուսաց տիրապետութեան տակ և Պասկեվիչի առաջարկով վերակոչուեց Ելիսաւետպոլ, ի պատիւ Ելիսաւետա կայսրուհուն։ Այնուհետև սկսեց կամաց կամաց զարգանալ և 1870 թուին դարձաւ համանուն նահանգի նահանգական քաղաք։

## Հայ Մելիքութիւններ

Գանձակի գաւառում եղել են Մելիք Բէկարեան, Մելիք Մնացականեան, Մելիք Չահնազարեան և Մելիք Թոստոմեան մելիքները։ Սրանցից առաջինը իշխել է Իգիրմիդորդ կամ Գիւլիստան մահալին, որ նախնի բաժանմամբ ընկնում է Ղարաբաղի խանութեան մէջ։ Այս մելիքութիւնը կազմում էր Խամսայ (հինգ) մելիքութիւններից մինը, որ սկզբներում բոլորովին անկախ, իսկ վերջերում ենթարկուած էր Ղարաբաղի խաներին։ Միւս մելիքութիւնները գտնուում էին Գանձակի խանութեան մէջ և գրեթէ շարունակ ստորադրուած են եղել Գանձակի խաներին։ Սրանք այնքան էլ նշանաւոր չեն եղած։

Տալիսենք սրանցից իւրաքանչիւրի պատմութիւնը։

---

[1]) Потто. Кавказская война т. III. вып. I. ст. 101.

[2]) Երիցեան Ամենայն հայոց կաթ. հ. ա. եր. 261.

Digitized by Google

## ՄԵԼՔԻ-ԲԷԿԱՐԵԱՆՆԵՐ.

Ուանգութեան խսելով՝ Մ'ելիք-Բէկարեանների տոհմը սերուած է Սև-Աբովից, որ տպան և վեցերորդ դարի վերջում, յայտնի չէ թէ ինչ պատճառներով, Նուխու գաւառի Նիժ գիւղից գաղթում է Գիւլիստան, ուրիշ 7 ընտանիքի հետ և առ ժամանակ բնակում վրաններով Թուխ-բուլաղ (Դեղեմական) գիւղում։ Հաստատապէս յայտնի չէ, թէ Սև Աբովը բուն Նիժեցի (ուտի) է եղել, թէ Պարսից կամ Լեզգիների արշաւանքներից ստիպուած՝ թափառելիս է եղել այն կողմերը։

Նոր գաղթած աւերակ գիւղատեղում Սև Աբովը, որ մի վիթխարի, հաստաբազուկ և սևերես մարդ է եղել՝ ստիպուած օրական ապրուստը հայթայթելիս է եղել գիսաւորապէս որսորդութեամբ։

Մի օր, երբ մի սպանած եղջերու շալակած, հաստ մահակը ձեռին վերադառնում է վրանը՝ տեսնում է հեռուն, մի ծառի տակ, եօթը աւազակներ նստած։ Սրանցից մինը մօտենում է Սև Աբովին, և ուզում է նրանից եղջերուն խլել, բայց Սև Աբովը մահակի մի հարուածով նրան գետին է գցում։ Իսկոյն ընկերներից մինը օգնութեան է հասնում, բայց սա էլ նոյն վիճակին է ենթարկւում։ Յետոյ գալիս են հետզհետէ միւսները, որոնց բոլորին էլ Սև Աբովը մահակի հարուածներով գետին է գցում։ Այս միջոցին վրայ են հասնում Բարտաղի խանի մարդիկը, որոնք ուղարկուած էին հէնց այս աւազակներին բռնելու, և կապկապելով նրանց՝ տանում տանում են։ Բարտաղի խանը զարմացած վարձատրում է իւր մարդկանցը, որոնք պատմում են, իբր թէ հրամայուած են բռնել աւազակներին։ Միևնոյն ժամանակ հրամայում է քանդարկել այնքան աւերածութիւններ անող աւազակներին, որպէսզի բայրամի տօնը անցնելուց յետոյ նրանց գլխատեն։ Երբ հասնում է գլխատման օրը՝ աւազակները դիմում են խանին և ասում. «Պարտքը մեզ, ինչպէս կամենում ես, որովհետև քիրուի մեծ մահեր ենք տուել քեզ, բայց մի անպատուիր մեզ, վարձատրելով այդ խաղբազանքներին, որովհետև մեզ բռնել է մի քաջ տղամարդ Թուխբուլաղում և ոչ թէ այդ վախկոտները»։

Խանը անմիջապէս բերել է տալիս Սև Աբովին և երբ հարցնում է, թէ ինչ վարձատրութիւն է ցանկանում իւր քաջութեան համար՝ Սև Աբովը, որպէս գաղթական՝ ընակութեան տեղ է խնդրում նրանից և ստանում է Թաղիջ կամ Թալիշ գիւղը, Հոռեկայ վանքի մօտ։

Մ'յսքան է միայն յայտնի Սև Աբովի մասին, որի գերեզմանը

Digitized by Google

գտնուում է Հոռեկայ վանքի մօտ և կրում է Հայոց ՌՁԱ (1081=Փրկչական 1632) թուականը, որ է Աբովի մեռած տարին։

Սև-Աբովին յաջորդում է Մելիք Եաւրին, որի անունը թէև յիշուում է ժողովրդի մէջ, սակայն գործերի մասին ոչ մի յիշատակութիւն չկայ։ Սրա գոյութիւնը հաստատուում է և այն փաստով, որ Թալիշ գիւղի Աւետարանի յիշատակարանում ասուած է, թէ 1650 թուին (երբ կազմել են Աւետարանը) Թաւիջ գիւղում իշխան է եղել Սև Աբովի որդի մելիք Եաւրին։

Մելիք-Եաւրուն յաջորդում է Մելիք-Բէկլար, որ քաջ և խելացի անձնաւորութիւն է եղել։ Սա խլում է այս կողմերի հին տիրապետող Աբրահամ-Իւզբաշուց (Իբրահիմ- գեաւուր) միքանի գիւղեր, ինչպէս են Վերի-շէնը, Ներքին շէնը, Երքէջը և այլն։ Նա տիրում է նաև Գիւլստան բերդին, վերանորոգում է և իւր բնակութիւնը այնտեղ հաստատում։ Նա ունենում է երեք որդի, մելիք Աբով, որ յաջորդում է իրեն, Մելիք Թամրազ (+ 1750) և Իսայ-խան-աղա (+ 1752)։

Մելիք-Բէկլար Ա-ին յաջորդում է աւագ որդին՝ Մելիք-Աբով Բ, որ կաղ մականունն էր ստացել, որովհետև գնդակի հարուածից ոտքը վնասուել էր։

Սա մի անգամ Գանձակ գնալիս ջերմում է, ուստի իջնում է ձիուց և Տուլուզ (Ղարաբուլախ գիւղի հանդէպ, այժմ աւերակ) գիւղի մօտ մի ծառի տակ նստում է հանգչելու։

Այս միջոցին Գանձակի մեծ կալուածատէր Միրզա Մահմատ Մուստաֆի աղջիկը, գեղեցիկ Ղամար Սուլթանը, աղախիններով շրջապատուած, զբօսնում է իւր հօր խաշների մօտ։ Կաղ-Աբովը հէնց որ տեսնում է նրան՝ մոռանում է իւր ջերմը, առևանգում է և իւր ձիու գաւակն առնելով փախցնում է Ամենափրկիչ վանքը, ուր մկրտել է տալիս և ամուսնանում հետը։ Միրզա Մահմադ Մուստաֆան միքանի անգամ իւր մարդկանցով գալիս է իւր աղջիկը կուռվ յետ խլելու, սակայն Մելիք-Աբովը յաղթում է նրան և յետ դարձնում։ Վերջ ի վերջոյ անները հաշտուում է փեսայի հետ, և բացի այդ աղջկանից ուրիշ ժառանգ չունենալով՝ իւր բոլոր կալուածքները թողնում է նրան *)։

Մելիք-Աբով սուրը ձեռին պաշտպանում է իւր ժողովուրդը լեզգիների արշաւանքներից և երբ 1721 թուին, Պետրոս Մեծը առնում է Դէրբէնտը՝ Մելիք-Աբովն էլ իւր զօրքով գնում է Գանձակի մօտ բանակած վրաց Վախտանգ թագաւորի և հայոց միւս մելիքների մօտ, որպէսզի ռուսների հետ միանալով, թօթափեն պարսից լուծը։

Սակայն երբ Պետրոս մեծը յանկարծ յետ է դառնում, և Վախթանգ թագաւորը շտապով վերադառնում է Թիֆլիս՝ Մելիք-Աբովը

*) „Записка изъ апелляціоннаго дѣла“ Мелик-Бекляровыхъ, որ գտնուում է պ. Ս. Մելիք-Բէկլարեանի մօտ։

Digitized by Google

Հայոց մելիքների հետ ի միասին անպաշտպան մնալով, ցրում են իրենց երկիրները և ամրանում ամուր տեղերը, որովհետև արդէն սաստիկ գրգռել էին Պարսից բարկութիւնը։ Սակայն Մելիք-Աբով յոյսը չէ կտրում ռուսների օգնութիւնից, ուստի երբ Օսմանցիները առնում են Թիֆլիսը, Երևանը և Նախիջևանը՝ 1725 թուի մարտի 10-ին Գանձասարի Եսայի կաթողիկոսի և Աբրահամ, Յոհան, Պաղի Իվան մելիքների հետ թուղթ է գրում Պետրոս Մեծին, որի մէջ ասում է. «Այժմս որ մեր թուականս ռճհգ է, մարտի ամսոյ մէկումն, 14700 հեծեալ սայ զօշուն եկին մեզ վերայ. 3 փաշայ էր, Զահեն, Սալահ և Ալի անուն։ Մեք էլ տեսանք, որ զատէն կռուելով չէ լինել, յառաջ գնացինք զօնաղ արինք, մեր գեղերանց վերայ բաժանեցինք, որն բճ-ով, գճ-ով, դճ-ով, և եճ-ով տեղ ու տեղ կոտորեցինք. բ. փաշան ևս սպանեցինք. Սալահ փաշան ողջ պահած ունեմք. ապա մէկ ՃԾ մարդ փախան բրծան. ԲՃ էլ աւելի քրիստոնեայ էսիր կայր ազատեցինք։ Ահա այս արարք և գործ մեր ոչ թէ մերով կարողութեամբ է, այլ զքո ամենայաղթ զօրութիւնդ և օգնութիւն յուսալով, ապաւինեմք և համբերեմք սպասելով. այժմ այսուհետև մուշախաս նոցա մեծ զօրք և զօշուն կուգայ մեզ վրայ, եթէ փութանակի մեզ օգնութիւն և թիկունս ոչ հասցէ ի հզօրէդ, յատու կտոր ամենայն ազգս հայոց քրիստոնէից բնաջինջ առնելոյ են. խնդրեմք, աղաչեմք, ժտեմք, զի վասն անուան Քրիստոսի մի անտես արասցես զհայցուածս մեր» *)։

Սակայն այս խնդրած օգնութիւնը ուշացաւ, չնայելով որ Մելիք Աբովը մի տարի առաջ, 1724 թուի փետրուարի 5-ին, իւր եղբօր, մելիք Թամրազի և Աւան ու Միրզա Իւզբաշիների ստորագրութեամբ դարձեալ դիմած էր Պետրոս Մեծին և գրած. «Ահա մինչև ցայս թարիղս թէպէտ չորից կողմանց թշնամիք զօրեղք յարուցեալք կան ի վերայ մեր, ապա աստուծով և քոյին կարող զօրութեամբ և աղօթիւք զմեզ և զմեր մերձակայքս ողջութեամբ պահեալ եմք. թէպէտ կռուելով, և թէ այլովք հնարիւք և ակն ունեմք զի մինչև ի տէրութիւն քոյ առ մեզ հասանելն, կարողասցուք պահել զմեզ ի թշնամեաց մերոց քոյին զօրութեամբ և աղօթիւք, զի ամրագոյն տեղիս ժողովեալ կամք ի տեղիս տեղիս և զօրքն հանապազ ի գալ թշնամեայ ելեալ մարտնչին ընդ նոսա. և մեծաւ յուսով ակն ունիմք ողորմութիւն և շափաղաթ քոյ փութով առ մեզ հասանելոյ և յորժամ մերձեսցի զօրքն թագաւորական ի սահմանս մեր, յայնժամ և մեք ելցուք ըստ չափու կարողութեան մերում զօրօք ընդ առաջ զօրաց հզօրիդ..... և վասն այն այժմս ոչ արկաք 'ի թիւ զհամար զօրաց մե-

*) Эзовъ: Сношенія Петра Великаго съ Арм. народомъ, ст. 418.

Digitized by Google

բոդ, զի յոյժ ցիր և ցան են ամենանդ... բայց ազգանունքիւն զիմուց պատերազմականաց յորով ունին» *)։

Այս խնդրին ի պատասխան Պետրոս Մեծը 1724 թուին նոյեմբեր 10-ին հրովարտակ է ուղղում մասնաւորապէս Սնայի կաթողիկոսին, Սևան և Մրրդա Իւզբաշիներին (չգիտենք ինչու էր մոռացուած Մելիք Թամրազին, քանի որ նա էր էր ստորագրել խնդրին) ամբողջ հայ ազգին ընդհանրապէս, որով առաջարկում էր գաղթել Դուսների Գաղթականներից խլած Գիլան, Մազանդարան և Բագու երկրները։ Բայց մելիքները յանձն չեն առնում։

Մելիք Եբոզ Բ. մեռնում է 1728 թուին և որովհետև նրա որդին Յովսէփ կամ Իւսուփը դեռ պատանի էր, մելիքութեան պաշտօնը ստանձնում է Մելիք Եբոզի եղբայր Մելիք Թամրազը։ Սակայն սա չէ կառավարում որպէս ժամանակաւոր խնամակալ իր մատաղահաս եղբօր որդու, այլ որպէս երկրի իսկական տէր։ Եւ որպէսզի կարողանայ իշխանութիւնը ընդ միշտ վարել, սկսում է ճնշել պատանի Յովսէփին, նրան հեռու պահել գործերից և նոյն-իսկ ծառայում է նրա կեանքին վերջ դնել։ Այս ժամանակներում Յովսէփը մօր հետ միասին ապրում էր Գիւլստան բերդում. իսկ Մելիք-Թամրազը Հաւեկայ վանքի մօտ շինել էր մի գեղեցիկ ապարանք և բնակութիւն հաստատել։

Ծերունիների պատմում են, թէ մի ինչ-որ հարկահան է եկել Գիւլիստանի մահալին էլ հարկ գանձելու։ Մելիք Թամրազ ամենայն կերպ նպաստել է նրան և նոյն-իսկ սաստիկ գովել է նրա մօտ իւր հանգուցեալ մելիք եղբօր հրացանը, որ գտնուելիս է եղել նրա որդու՝ պատանի Յովսէփի ձեռքին։ Հարկահանը կանչում է Յովսէփին, խնդրում է ցոյց տալ հրացանը և խլում է նրա ձեռքից։

Երբ Յովսէփը լալով գնում պատմում է այս ամենքը իւր մօրը՝ սա սաստիկ յանդիմանում է նրան, որ հօր յիշատակը այդպէս հեշտութեամբ թողել է ձեռքից։

Յովսէփը սաստիկ յուզուած, միքիչ փող է խնդրում մօրից և զէնքեր առնելով՝ իւր մի քանի երիտասարդ ընկերներով հետևում է հարկահանին։ Իրը յարձակման նշան որոշում է «ծկրտ», իսկ դադարման՝ «մկրտ». խօսքերը։ Երբ հարկահանը մտնում է Թաղթաւի նեղ ձորը՝ Յովսէփը «ծկրտ» գոչելով յարձակւում է նրա վրայ, կտրում նրա գլուխը և խլում իւր հօր հրացանը **)։ Ընկերներն էլ յարձակւում են

*) Անդ, եր. 367.

**) Այս հրացանը Մելիք-Բէկլարեանների ժառանգները վաճառել են գեներալ Երմոլովին հազար ռուբլով, և սա ուղարկել է Պետերբուրգի Զէնքերի մուզէումը։

Digitized by Google

ջորեպանների վրայ և բոլորին կոտորում։ Ապա հարկահանի հաւաքած ոսկիներն առած՝ վերադառնում են Գիւլիստան բերդը *)։

Յովսէփը երիտասարդութեան հասնելով՝ բարեկամանում է Ջրաբերդի Մելիք-Ադամի հետ, որ թշնամի էր Մելիք Թամրազին, և նրա խորհրդով ու օգնութեամբ յարձակւում է Մելիք Թամրազի ապարանքի վրայ, մի քանի օր կռուելուց յետոյ առնում է ապարանքը և բռնում Մելիք-Թամրազին։ Իսկոյն հրամայում է նրան կախել չինարի **) ծառից և իրեն հռչակում է մելիք։

Մելիք Թամրազը թողնում է երկու որդի, Դանիէլ, որ թէև կրում էր մելիքի տիտղոսը, բայց մելիքութիւն չէր անում և Սարուխան-բէկ, որ 1723 թուի հայոց գնտերի չորս քաջ զօրապետներից մինն էր։

Այնուհետև Մելիք Յովսէփը, սերտ միացած Ջրաբերդի Մելիք-Ադամի հետ՝ գործում է Փանահ-խանի դէմ։

Երկու խօսք սրա մասին. Փանահ-խանը Ջուանշիրի թուրք ցեղի Սարիջալու տոհմից էր, սա թէհրանում շահի մունետիկի պաշտօն էր կատարում, երբ մի անկարգութեան համար գլխատման դատապարտուեց, ուստի փախաւ եկաւ Ջուանշիր։ Այստեղից նա դիմեց Ջրաբերդի Մելիք-Ալլահ-Ղուլի-սօլթանին և նրա մօտ դարձաւ հարկահան (տուրքեր հաւաքող)։ Թէև Պարկաստանից մի քանի անգամ պահանջեցին, որ Փանահին բռնեն և յետ ուղարկեն, նակայն Մելիք-Ալլահ-Ղուլի սօլթանը պաշտպանեց նրան։

1747 թուին Նադիր-շահը սպանուեց և գահաժառանգութեան համար կռիւներ ծագեցին, որից օգտուելով Նադիրի Խորասան տարած Ջիվանշիրցի գաղթականները վերադարձան իրենց հայրենիքը—Ղա-

*) Բազմաբդիւն Բաֆֆին իւր ,,Խամսայի-Մելիքութիւններ''-ի մէջ (եր 17). այս անցքը պատմելով՝ հարկահանին Միրզա-Թահիր է կոչում, և Շահ-Սուլթան Յուսէյնի գահընկեցութեան միջոցին վերագրում։ Սեզ թւում է, թէ այստեղ մի ժամանակագրական սխալ պիտի լինի, որովհետև Մելիք Յովսէփի հայրը Մելիք-Սբով՛Ի. վախճանուել է 1728 թուին, երբ արդէն Շահ-Սուլթան Յուսէյնը վախճանուած էր (1722 թուին) և այս կողմերը 1723 թուից ընկած էին Օսմանցիների իշխանութեան ներքոյ։

Աշխարհիս է, Միրզա-Թահիրը եկել է Ղարաբաղ և Գանձակ հարկ հաւաքելու, նակայն այս եղել է 1702 (ՌՃԾԱ) թուին; ինչպէս կկարդամ է Ը-ռանի կաթողիկոսը (եր. 47)։ և Միրզա-Թահիրն էլ իւր հետ 1100 մարդ է ունեցել, որոնց պատանի .Յովսէփը չէր կարող ջարդել։ Կարծում ենք, որ այս հարկահանը օսմանցիներից է ուղարկուած եղել և եթէ Յովսէփը անպատիժ է մնացել՝ պատճառն այն է եղել, որ նոյն գաւառները կրկին Պարսից ձեռքն են անցել։

**) Այս չինարի ծառը կոչւում է Ղանլու-չինար (արիւնալից չինար) որից այժմ միայն կոճղերն են մնացել։

բաբաղի անապատները։ Ջառչի Փանահը անմիջապէս գնաց նրանց մօտ և կարճ միջոցից հրաժարեցնել տուեց նրանց նախկին տանուտէրին և ինքը ընտրուեց։ Եւ երբ Ադիլ-շահը թագաւորելով, Ամիր-Ասլան-խանին ուղարկեց Ղարաբաղը խաղաղացնելու՝ Ջառչի Փանահը ընծաներ տալով՝ նրա միջնորդութեամբ շահից ստացաւ խանի տիտղոս։

Ջիվանշիրցիները թափառական խաշնարածներ լինելով՝ սեփական երկիր չունէին՝ նրանք ձմեռը թափառում էին Կուր գետի աջ ափի տափարակներում, իսկ ամառը բարձրանում Ղարաբաղի լեռները, որոնք հայ մելիքների իշխանութեան տակ գտնուելով՝ Ջիվանշիրները ստիպուած էին ոչխարներից տասանորդ տալու։ Փանահ-խանը ցանկանում է այս լեռներից մինի վրայ մի հաստատուն տեղ ունենալ, ուստի և գնում է Բայաթ (Գարգար գետի մօտ) և սկսում մի բերդ շինել։ Բայց Գիւլիստանի մելիք Յովսէփը և Ջրաբերդի Մելիք Ալլահ-Ղուլի սօլթանը Ջիրվանի Հաջի-Ձելէբի կառավարչի հետ յարձակւում են այդ բերդի վրայ և հիմնայատակ անում։

Յետոյ Փահան-խանը փորձում է Թարնակիւրտ (Տիգրանակերտ) աւերակների վրայ մի ուրիշ բերդ կառուցանել, որը կոչում է Ասկարան։ Սակայն Գիւլիստանի Մելիք-Յովսէփը, Ջրաբերդի Մելիք-Ալլահ-Ղուլի-սօլթանը և Խաչէնի Հասան Ջալալեան Մելիք-Ալլահվերդին դարձեալ քանդում են այդ բերդը, որովհետև լրենց երկրների սահմաններին մօտ էր գտնւում։

Այսպէս՝ մինչդեռ հայ մելիքների միաբան գործունէութիւնը ի դերև էր հանում Փանահ-խանի բոլոր յոյսերը և նա չէր կարողանում ոչ մի տեղ հաստատուիլ՝ մի տխուր դէպք եկաւ խանգարելու այդ միաբանութիւնը և նպաստելու Փանահ-խանին՝ ոչ միայն հաստատուելու հայ մելիքների երկրի սրտում, այլ և իշխելու նրանց վրայ։

Վարանդայի իշխող Մելիք Յովսէփի եղբայր Մելիք-Ջահնազար Բ, որ վերին աստիճանի անբարոյական մարդ էր և միաժամանակ երկու կնոջ հետ էր ամուսնացել, սպանում է իւր եղբօրը Մելիք-Յովսէփին և նրա տեղ ինքը մելիք դառնում։ Այս անիրաւութիւնը պատժելու համար Գիւլիստանի Մելիք-Յովսէփը, միացած Ջրաբերդի Մելիք Խսրայելեան Ալլահ-Ղուլի-սօլթանի, Խաչէնի Մելիք-Ալլահ-վերդու և Դիզակի Մելիք Աւանեան Մելիք Եսայիի հետ՝ պաշարում է նրա Աւետարանոց ամրոցը։ Սակայն ձմեռը վրայ հասնելով՝ նրանք չեն կարողանում ամրոցը առնել, այլ միայն աւերելով և աւարելով շրջակայ գիւղերը՝ յետ են քաշւում, գարունքին կրկին յարձակուելու պայմանով։

Հէնց որ սրանք հեռանում են՝ Մելիք-Ջահնազար Բ բոլորովին անճարացած և անօգնական մնալով՝ ձեռք է մեկնում Փանահ-խա-

Digitized by Google

նին և նրա խորհրդով 1752 թուին հիմնում է Ղուշի բերդը, միանգամայն պատերազմ մղելով դաշնակից մելիքների դէմ։

Այս պատերազմները տևեցին մօտ քսան տարի, որի ընթացքում Փանահ խանը թէև յաջողեցրեց դաւաճանութեամբ սպանել տալ Խաչենի Մելիք-Ալլահվերդուն և նրա մելիքութիւնը Խնձորեստան գիւղի տանուտէր՝ դաւաճան Միրզախանին յանձնելով (1755 թ.), Խաչէնը իրեն հպատակ և դաշնակից դարձնել՝ բայց և այնպէս՝ չկարողացաւ ճիւս երեք դաշնակիցներին ընդդիմադրել և ստիպուեց հաշտութիւն խնդրել։ Բանակցութեան համար որոշուեց գնալ մի չէզոք տեղ՝ Ամարասայ վանքը։ Այստեղ եկաւ Փանահ-խանը իւր սիրելի Մելիք-Ջահանազար Բ հետ և բանակցեց հայ մելիքների հաւատարմատար Ջրաբերդի Ալլահ-Ղուլի-սօլթանի հետ, որին Նախիջևանի Հէյդար-Ղուլի-խանի դրդմամբ և հակառակ իւր դրած պայմանին, կալանաւորեց, տարաւ Ղուշի բերդը և գլխատեց (1756)։ Ալլահ-Ղուլի սօլթանին յաջորդեց եղբայրը՝ Մելիք-Ադամը, որ աւելի սերտ կերպով միացաւ Գիւլիստանի Մելիք Յովսէփի հետ և աւելի ոխերիմ կերպով սկսեց կռուել Փանահ-խանի դէմ։ Մելիք-Ադամը մանկութեան հասակից պատանդ էր եղել Դաղստանի Խոսրով սօլթանի մօտ և լաւ վարժուել էր լեռնականների պատերազմական կարգերին։ Նրան ազատել էր Նադիր-շահը։

Ահա այս Մելիք Ադամը, իւր եղբօր մահուան վրէժխնդիր լինելով՝ միացաւ Գիւլիստանի մելիք-Յովսէփի հետ, ամրացաւ Ջերմկայ բերդում և սկսեց պատերազմել Փանահ-խանի հետ։ Այս պատերազմը ամբողջ չորս տարի տևեց և մեծամեծ վնասներ տուեց Փանահ-խանին *)։

Փանահ-խանը հպատակեցնելով Խաչէնը և գրկելով Ջրաբերդը իւր նշանաւոր պաշտպանից՝ կարծում էր, թէ արդէն բոլորովին թուլացրել է միւս մելիքների ոյժը, ուստի և մարդ ուղարկեց Գիւլիստանի մելիք Յովսէփի մօտ և խստիւ պահանջեց հպատակութիւն։ Մելիք Յովսէփի քաջ, վիթխարի և դիւրաբորբոք որդին, Բէկլարը թոյլ չտուեց իւր հօրը պատասխանելու, ասելով, թէ ինքը կրտայ Փանահ-խանի պատասխանը և ապա իւր թուրը բռնելով պատգամաւորի գլխի վրայ, ստիպեց կուլտալ հրամանագիրը։ Եւ երբ նա սարսափած կուլ տուեց թղթի վերջին կտորը՝ Բէկլարը ասաց. «Դէհ գնա այժմ. այստեղ կերածիդ արտադրութիւնը կըլինի Փանահ-խանի պատասխանը»...

Այս խօսքերից վրդովուած՝ Փանահ-խանը շարունակեց աւելի խստութեամբ պատերազմել, սակայն դաշնակից հայ մելիքների—Գիւլիստանի, Ջրաբերդի և Տիզակի—զօրքերը շարունակ պաշարման մէջ էին պահում Ղուշու բերդը։

*) Ադիգէօզալ եր. 14—15. Ընորհակալութիւն եմ յայտնում պ. Ն. Ե-բիցեանին, որ բարեհաճեց այս ձեռագիրը տալ ինձ օգտուելու։

Digitized by Google

Այս միջոցներում (1761 թ.) Ղարաբաղ եկաւ Ուրմիեցի Ավշար Ֆաթալի խանը, որ Կաղիր-շահի քաջ զօրավարներից մինն էր և նրա մահից յետոյ սրի ոյժով հնազանդեցրել էր ամբողջ Ատրպատականը։ Իսկոյն Գիւլիստանի մելիք-Յովսէփը և Ջրաբերդի մելիք Ադամը միանում են նրա հետ և բանակ դնելով Խոջայու գետի ափին՝ ամբողջ վեց ամիս շարունակ պաշարում են Ղուշու բերդը։ Վերջապէս Փանահ-խանը և Մելիք Ջահնազարը անձնատուր են լինում։ Բայց Ֆաթալի-խանը փոխանակ իւր խոստման համեմատ այդ երկուսին հայ դաշնակից մելիքներին յանձնելու, որ ինչպէս կամենան այնպէս վարուեն նրանց հետ՝ տասը հազար թուման փրկանք և Փանահ-խանի որդի Իբրահիմ-աղային պատանդ է առնում և գնում Պարսկաստան *)։

Հայ մելիքները դժգոհ մնացին Ֆաթալի խանից՝ Փանահ-խանն էլ աւելի թշնամացաւ իրենց հետ, որովհետև նա գիտէր որ միայն իրենց ձեռնտուութեամբ Ֆաթալի-խանը կարողացաւ յաղթութիւնը տանել, ուստի և հեռացան գնացին վրաց Թէյմուրազ իշխանի (Հերակլի հօր) մօտ և առաջարկեցին նրան միանալ իրենց հետ Փանահ-խանի իշխանութիւնը ոչնչացնելու։ Թէյմուրազ սիրով յանձն է առնում, որովհետև ինքն էլ թշնամացած էր Փանահ-խանի հետ։ 1762 թուին Վրաց և Հայոց զօրքը պաշարում է Անկարանի բերդը և Գարգար գետի ափին ճակատամարտ տալիս։ Փանահ խանը յաղթում է և փախչում Պարսկաստան, բայց Խուդափիրինի Նկամուրջի **) մօտ՝ Դալի Մահրասան և Թիւլի-Արզման քաջերից բռնւում է և յետ բերւում։ Մելիք-Ջահնազար Բ. էլ, որ Մելիք Միրզախանի հետ ամրացած էր Ղուշու բերդում՝ փախչում ապաստանում են Աւետարանոց ամրոցում։ Հայոց և Վրաց զօրքերը պաշարում են այս բերդը և միքանի օր կռուելուց յետոյ առնում, աւերում, կողոպտում և Մելիք-Ջահնազարին ու Մելիք-Միրզախանին են գերի բռնում։

Թէյմուրազը թալանելով ու աւերելով ընդհանրապէս Փանահ-խանի երկրները՝ սրանց իշխանութիւնը տալիս է Մելիք Յովսէփին ու Մելիք Ադամին և ինքը ուզում է վերադառնալ, տանելով իւր հետ Փանահ-խանին, Մելիք Ջահնազարին և Մելիք Միրզախանին։ Հայ մելիքները պահանջում են, որ իրենց պայմանի համեմատ Թէյմուրազը իրենց ձեռքը յանձնէ այդ երեք գերիներին, որոնց հետ կը վարուեն ինչպէս իրենք կը կամենան։ Սակայն Թէյմուրազը իւր խոստումի կատարումը ձգձգելով՝ վերադառնում է Թիֆլիս և մեծ փրկանքներ առնելով այդ երեքին էլ արձակում։

Մելիք Յովսէփ և Մելիք Ադամ սաստիկ վշտացած Թէյմուրա-

*) Ադիգէօզալ։
**) Երասխի վրայ։

Digitized by Google

ի խաբեբայութիւնից՝ դիմում են Զիրվանի կառավարիչ Հաջի-Զեղեբի-խանին և առաջարկում, իրենց հետ միասին Թէյմուրազից վրէժ լուծելու։ Սա սիրով յանձն է առնում, որովհետև ինքն էլ Թշնամի է եղել Թէյմուրազին։ Սրանց միացեալ զօրքը արշաւում է դէպի Թիֆլիս, սակայն Գանձակի մօտ հանդիպում է վրաց զօրքին, որ ընդհարումն ունենալով Գանձակի Զահվերդի-խանի հետ՝ նրան գերի էր բռնել։ Միացեալ զօրքը յարձակւում է վրաց զօրքի վրայ՝ ջարդում, և յետ փախցնում, խլելով Զահվերդի-խանին և այն ահագին աւարը, որ նրանք խլել էին Փանահ-խանից։

Հայ մելիքները ազատում են Զահվերդի խանին, որով և՛ բարեկամութիւն են հաստատում նրա հետ, և մի առ ժամանակ մնում Գանձակում։

Այս միջոցում Զահվերդի խանը միջնորդ է հանդիսանում Փանահ-խանի և հայ մելիքների մէջ և աշխատում է նրանց հաշտեցնել։

Մելիք-Յովսէփը և Մելիք-Ադամը քանի տարուայ պատերազմներից սատակիչ վնասուած և ձանձրացած՝ համաձայնւում են և՛ ի նըշան հաշտութեան Մելիք Յովսէփը առնում է Մելիք Զահնազար Բ. դուստր Անարնանին (Մարիամին) իւր որդի Քէլարին կնութեան։ Փանահ-խանի հետ հաշտութիւն են կնքում հետևեալ պայմաններով։

ա) Փանահ-խանը տէր է լինում Զուշի-բերդին, առանց իրաւունք ունենալու միջամտել մելիքների երկրի և հայատակների գործերի մէջ. բ) Եթէ հարկաւոր լինի պատերազմ արտաքին թշնամիների հետ՝ պէտք է վճռուի ընդհանուր համաձայնութեամբ. գ) Փանահ-խանը ինքնագլուխ ոչ ոքի հետ պատերազմելու իրաւունք չպիտի ունենայ, դ) Հայոց մելիքների երկրներից հաւաքուած հարկերը պէտք է գործ դրուեն տեղացին պէտքերի համար. ե) Փանահ-խանը Ղարաբաղում նոր նուաճումներ անելու համարձակութիւն չպիտի ունենայ կայն *)։

Այս պայմանները Փանահ-խանը քանի կենդանի էր պահպանեց, սակայն նրա որդի և յաջորդ Իբրահիմ խանը բոլորովին ուշադրութիւն չդարձրեց և շատ անգամ խնդրեց Գանձակի Զահվերդի խանից, որ իւր մօտ եղած մելիք Յովսէփին և մելիք Ադամին յանձնէ իրեն։ Սակայն Զահվերդի խանը չկատարեց նրա խնդիրը, որի պատճառով այս երկուսի մէջ յարաբերութիւնը լարուեց, միևնոյն ժամանակ Զահվերդի խանը չէր թոյլ տալիս այս մելիքներին իւր մօտից հեռանալ, այնպէս որ մելիք-Յովսէփը սատակիչ զրուած՝ մի օր թողեց ամեն ինչ և փախաւ գնաց վրաց Հերակլ թագաւորի մօտ և նրան դիմեց Զահվերդի խանի դէմ։ Հերակլ թագաւորը նայելով թշնամացած լինելով Զահվերդի խանի հետ՝ օգուտ քաղեց այն հանգամանքից,

*) Բաֆֆի. Խամ. մելիքութիւններ. Բ. տպ. եր. 80.

Digitized by Google

որ Զիրուանի Հիւսէին խանը պատերազմ է գնացել Զահվէրդի խանի վրայ և Իբրահիմ-խանն էլ միւս կողմից յարձակուել է Գանձակի վրայ, ուստի Մելիք Յովսէփին ղազախեցի զօրքեր և իւր պատուաւոր ծառաներից մինին Իւանէին տալով ուղարկեց նրա վրայ։ Այս միջոցին Գանձակի և Ղազախու միջև բնակուած Զամշադին կոչուած թուրք ցեղը, որ ենթարկւում էր Գանձակի խանին, նրանից ապստամբում և մտնում է Հերակլի իշխանութեան տակ։ Այսպիսի նեղ հանգամանքում Զահվէրդի խանը դիմում է ճարեցի լեզգիներին և մեծ խոստումներով նրանց օգնութեան կանչում։ Դիմում է նաև շրջակայ խաներին, բայց միայն Երևանի խանը մի փոքրիկ գունդ է ուղարկում։ Կշռելով որ իւր ոյժերը շատ փոքր են այս երեք թշնամիների հետ կռուելու համար՝ Զահվէրդի խանը հաշտութիւն է կնքում Հիւսէին և Իբրահիմ խաների հետ և նրանց յետ դարձնում։ Այս միջոցին Յովսէփը դեռ ևս Զամշադնումն էր, ուր դիմեցին քեօլանեցի Զրաղ և Ալթա փախստականները և պատմեցին, թէ Զահվէրդի խանը չկարողանալով վարձատրել իւր հրաւիրած լեզգիներին՝ նրանց ուղարկել էր Երևանի կողմերը թալանելու։ Գեղամայ ծովի ափին սրանք հանդիպում են քեօլանցիներին, որ Երևանի խանից ապստամբելով գնում էին Տուզախ՝ Փանահ-խանի որդու իշխանութեան տակ մտնելու։ Այստեղ սրանց մէջ կռիւ է տեղի ունեցել, և լեզգիները թալանել և գերել են շատերին, որոնց մէջ և 20 հայ ընտանիք։ Արդ խնդրում էին, որ Մելիք Յովսէփը օգնութեան հասնէ և գերիներին ազատէ։ Մելիք Յովսէփը յարգում է նրանց խնդիրը և Իւանէի ու Զամշադնի Ալլահվերդի սուլթանի հետ ընկնում է լեզգիների յետևից և Գետաբակ գիւղի մօտ մեծ ջարդ տալով նրանց, բոլոր գերիներն ու աւարը յետ է խլում։ Լեզգիները յաղթուած և բոլոր աւարից զրկուած փախչում են իրենց երկիրը։ Այս լսելով Զահվէրդի խանը մարդիկ է ուղարկում փախստականների յետևից և յորդորում է իւր մօտ դառնալ, որպէս զի ինքը կարողանայ նրանց շահել։ Նրանք չեն համաձայնում յետ դառնալ, այլ կրծքերը ծեծելով պատասխանում են, թէ Զահվէրդի խանն եղաւ իրենց թշուառութեան պատճառը և թէ իրենք մի օր վրէժը կը հանեն։ Իսկ վիրաւորուածներից ու փախստականներից մի քանիսը վերադառնում են Զահվէրդի խանի մօտ, որոնց նա ուտեստ, հանդերձ, ձի է տալիս և բժիշկ նշանակում բժշկելու։

Երբ նրանք ճանապարհ են ընկնում՝ գանձակեցիները ընկնում են նրանց յետևից և կողոպտում են նրանց, որովհետև իրանք շատ անգամ կողոպտուել էին նրանցից. սակայն Զահվէրդի խանը մարդիկ է ուղարկում որ դաստիկ ծեծելով յետ են բերում այդ գանձակեցիներին, և Զահվէրդի խանը նրանցից շատերի քիթն ու ականջները կըտ-

Digitized by Google

բատել է տալիս։ Այս վարմունքի համար գանձակեցիները սկսում են սաստիկ ատել Զահվէրդի խանին։ Մի քանի օրից յետոյ Զահվէրդի խանը կանչում է Գանձակի մեծամեծներին և նրանց ասում է թէ ինձ դրամ տուէք, որովհետև լեզգիներին վարձատրութիւն խոստացայ և չտուի, որով նրանց թշնամացրի ինձ հետ. այժմ պէտք է տամ. մէկ էլ ուզում եմ որդուս ամուսնացնել և դրամ չունիմ։ Քաղաքի մեծամեծները առանց որոշ պատասխան տալու գուրս են գալիս նրա մօտից և իրենց մէջ խորհուրդ անելով տալիս են նրա պահանջած գումարը։ Սակայն մի երկու օրից մի երեկոյ բոլորը հաւաքուելով յարձակւում են Զահվէրդի խանի տան վրայ, բոլորին կոտորելու նպատակով։ Այս դաւադրութեան մասին Զահվէրդի խանը միայն մի ժամ առաջ լսելով՝ առնում է իւր որդուն և մերկ ու բոբիկ փախչում է Զամքոռ, մելիք Ադամի մօտ, որ իրեն բարեկամ էր։ Խանի միւս որդիքը և մի կինը, որոնք սարը ամառանոց են գնացած լինում, այս բօթը լսելով փախչում ապաւինում են Երևանի խանի մօտ։

Գանձակեցիները անմիջապէս հրաւիրում են Փանահ խանի որդի Իբրահիմ խանին, որ սիրով յանձն է առնում և գալիս է Գանձակ։ Զահվէրդի խանը մելիք Ադամի ձեռնտուութեամբ նամակ է գրում շամշադինցիներին, որոնք իրենից ապստամբել էին, և աղերսում է նրանց իրեն օգնութեան հասնել։ Սրանք յարգում են նրա խնդիրը և շուտով գնում են նրա մօտ։ Դիմում է նաև Հերակլ թագաւորին, ու Զիրուանի Հիւսէին խանին և օգնութիւն հայցում։ Նոյն խնդիրը անում է նոյնպէս ճարեցի լեզգիներին, խոստանալով իւրաքանչիւր անձին 5 թուման։ Եւ առանց սպասելու սրանց օգնութեանը՝ շամշադինցիների և մելիք Ադամի հետ յարձակւում է Գանձակի վրայ և ըակրսում պատերազմել Իբրահիմ խանի հետ։ Այս ժամանակ մելիք Ցովսէփը Հերակլ թագաւորի կարգադրութեամբ վրաց զօրքով գալիս է Զահվէրդի խանին օգնութեան։ Այս լսելով Իբրահիմ խանը թալանում է Զահվէրդի խանի պալատն ու կայքը և իւր հետ առնելով խանի մի կինը, որ մնացած էր Գանձակում, վերադառնում է Զուշի։ Նրա հետ գնում են իրենց ընտանիքներով և այն գանձակեցիք, որոնք այդ դաւադրութիւնը սարքելով հրաւիրել էին Իբրահիմ-խանին։

Զուտով հասնում են և ճարեցի լեզգիներն ու Զիրվանի Հիւսէին խանը։ Լեզգիները բռնում են Զահվէրդի խանին և խստիւ պահանջում են որ վճարէ իրենց թէ առաջին և թէ այս անգամ խոստացած վարձատրութիւնը։ Զահվէրդի խանը անճարացած փախչում է Հիւսէին խանի վրանը, և սա սկսում է համոզել լեզգիների գլխաւորներին, որ այդպէս պահանջող չլինին, սակայն նրանք ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում և պահանջում են թոյլ տալ աւարել կամ Զամշադինը և կամ Քիլիսա-

Digitized by Google

քենդը՝ ինչպէս խանը անհաղորդած փախցնում է Զահվէրդի խանին վրայ գանակը, մելիք Յովսէփի մօտ, և սա խրատ կերպով սկսում է խաղել լեզգիների հետ։ Այս պատճառով նրանք գալիս բանակում են Թիլիսաքենդի հանդէպ, մտադրութիւն ունենալով նրան աւարել։ Այս միջոցին Զահվէրդի խանը մի փոքր գումար է գտնում և տալիս է լեզգիներին և միջնորդներով ու աղաչանքով գոհացնում նրանց և յետ դարձնում։ Մելիք Յովսէփը վրայ զօրքով Զահվէրդի խանին մրոցնում է Գանձակի բերդը և այստեղ բաւական միջոց մնում է կարգը վերականգնելու և ապա վերադառնում է Հերակլ Թագաւորի մօտ։

Այս յաղթութիւնների պատճառով Հերակլ Թագաւորը Գեռաշէն գիւղը նուիրում է Մելիք Յովսէփին, ուր նա իւր ծարդիանցով պիտի ապրէր առանց կախում ունենալու Զահվէրդի խանից։

Այս պատճառով Զահվէրդի խանը աւելի ևս դիակպում է մելիք Յովսէփի հետ և մի առիթ է փնտռում նրան վնասելու։ Մի օր նրա երէց որդին, Մահմեդ-Հասան-խանը, հօր հրամանով առնում է զօրքը և հոչակելով թէ գնում է Գուր-գետի կողմը, ուր թէր, լեզգիներ են թրուացել՝ կէս գիշերին փոխում է ճանապարհը և յանկարծ ընկնում Մելիք Յովսէփի վրայ Գեռաշէն գիւղում և սկսում կոտորել նրա բանակը։ Թոգոն մելիք Յովսէփի որդի քաջ և արի Բէգլարը վեր է թռչում և տուն առած միայնակ դուրս է վազում և ընկնում Հասան-խանի զօրքի վրայ։ Հայրը և ծառաներն էլ օգնութեան են հասնում և կոտորելով դուրս են քշում յարձակուողներին, ապա իրենց բոլոր զօրքը առած Մելիք Յովսէփը դուրս է գալիս խանի զօրքերի դէմ և ձեռ կոտորած տալով փախցնում։ Իսկ նրանց զօրքի մէջ եղած հայերին խնայում են և ձայն տալիս, որ հեռանան անօրէնութիւնից։ Մահմեդ-Հասան-խանը մեծ ամօթ համարելով յաղթուած լինելը՝ սրտով յետ է դարձնում փախչողներին, իսկ ով որ չէր յետ դառնում կուռեցու, նրան ինքն էր սպանում։

Այսպիսով պատերազմը վերջին սատակմանում է, և մելիք Յովսէփը կոտորելով տուաջ է անցնում, մինչև Գանձակի բերդի դուռը, որը պաշարած պահում է մի քանի օր շարունակ։

Այս միջոցին Զահվէրդի խանը գիմում է Հերակլ Թագաւորին և խնդրում հեռացնել մելիք Յովսէփին։ սա էլ գրում է մելիքին, որ Թողնէջալաշարումը և քաշուի իւր հայրենի Դիզիմիդորդ գաւառը, որ-ովհետև զի ապրպոի կռիւներ այլևս չպատահին։ Իբրահիմ-խանն էլ հաշտուում է նրա հետ և հրաւիրում է նրան վերադառնալ իւր երկիրը, Դիզիմիդորդ, եթէ ուզում որ այլևս արշաւանքներ չի գործի նրա երկրի վրայ։

Մելիք Յովսէփը գնում է Դիզիմիդորդ և այստեղից ցանկա-

Digitized by Google

յարձակումներ է գործում Գանձակի երկրի վրայ և մեծ վնասներ է պատճառում *)։

Մելիք Ադամն էլ մելիք Յովսէփին հետևելով հաշտուում է Իբրահիմ-խանի հետ և վերադառնում իւր երկիրը Ջրաբերդ։

Այսքան պատերազմներ վարելուց յետոյ մելիք Յովսէփը մեռնում է 1775 թ. և թաղուում է Հոռեկի վանքի մօտ։

Մելիք Յովսէփը երկու որդի ունէր, Բէկլար և Աբով։ Նրա մահից յետոյ նրան յաջորդում է Բէկլարը, որ սակայն երկար չի իշխում։ Մելիք Բէկլարը յաղթանդամ, բարձրահասակ, քաջ և ալի մարդ էր։ Նա կարդալ էլ գիտէր, որ այն ժամանակ մելիքների մէջ հազուադիւտ երևոյթ էր։ Քերականութիւնը նրան ուղարկել էր Սիմէօն կաթողիկոսը **)։

Նա մասնակից էր լինում իւր հօր պատերազմներին և դեռ նրա կենդանութեան ժամանակ ինքնագլուխ գործում էր և կառավարում։ Բայց դժբաղդաբար նրա կառավարութիւնը երկար չտևեց՝ նա ընկաւ լեզգիների դէմ պատերազմ մղելիս Գէօրան գիւղի մօտ։

Այդ անպարտելի քաջի անակնկալ մահը ժողովուրդը այնպէս է բացատրում։

Մինչդեռ քաջ Մելիք-Բէկլարը, նստած իւր սևաթոյր ձին, հրաման էր ուղարկում, որ Բորսունկուում բանակած իւր հինգ հարիւր զինուորները շտապեն իւր յետևից հասնելու, որպէս զի ջախջախեն լեզգիների առաջնորդ Բաշարչինի գլուխը՝ նրա մայրը, խաղաղասէր Հերիքնազը, դուրս է գալիս առաջը և աղերսում է, որ չգնայ պատերազմ, որովհետև ինքը գիշերը վատ երազներ է տեսել և այժմ էլ սաստիկ տխուր է։ Որդին չի լսում մօրը, և երբ սա ձիու սանձից բռնած ուզում է բռնի արգելել՝ մելիքը հրում է նրան, վայր ձգում և ինքը առաջ անցնում։ Որդու այս անօրինակ կոպտութիւնից յուզուած մայրը անիծում է նրան, թէ յետ չդառնաս։

Մելիք-Բէկլարը գնում է առաջ. իւր սպասաւորների ուղեկցութեամբ։ Երբ հասնում են Մաֆի-քիւրդ գիւղի ստորոտը՝ մելիքը իջնում է ձիուց և հրամայում է սպասել, որ զօրքը գայ։ Նստած մի ժայռի վրայ՝ նա տխուր մտածում է, և երբ հեռուից բարձրանում է զօրքի ձիերի փոշին՝ հրամայում է իւր մարդկանցը մի քիչ հաց ուտել, որ նրանց գալիս անմիջապէս ճանապարհ ընկնեն։ Ինքն էլ մի օղի է խմում և մի կտոր գաթայ գնում բերանը, բայց սա կուլ չի գնում. ծամում է, վայր թափում և տխուր նախազգացութեամբ նստելով ձին

*) Գետաշէնում Մելիք-Յովսէփի շինած ձիթհանքն ու ջրաղացը վերջին տարիներս Մելիք-Բէկլարեան ժառանգները ծախեցին Մելիք-Մնացականեաններին։

**) Գիւան Հայոց պատմ. Հ. Գ. երես 535.

Digitized by Google

առաջ է գնում կռուի դաշտը. այստեղ մօր անէծքը կատարւում է, և նա ընկնում է հրացանի գնդակից...

Բայց իսկապէս Մելիք-Բէկլարի կեանքի մէջ հետեւեալ սիրային վէպն է տեղի ունենում։

Մելիք-Բէկլար Բ. ամուսնացած էր Մելիք-Զահնազար Բ-ի դուստր Ամարնանի (Մարիամի) հետ, բայց չնայելով դրան՝ նա պահում էր մի սիրուհի Բալա անունով։ Սրա համար նա Խարխափուտի ձորում մի գեղեցիկ այգի էր տնկել և ամարանոց կառուցել։ Այս շինութեան հետքերը մինչև այժմ էլ կան, և մրգատու ծառերը խառնուելով վայրի ծառերի հետ, բռնել են ամբողջ ձորը, որի միջից կարկաջելով հոսում է մի վտակ։

Երբ մելիքի օրինաւոր կինը լսում է ամուսնու դաւաճանութեան մասին՝ սաստիկ յուզուած, տանում է օրօրոցը, որի մէջ քնած է լինում փոքրիկ Ֆրիդոնը, և դնելով սկեսրոջ առաջը՝ ասում է, «Քանի որ քո տղան մի աղախնի է սիրում՝ Մելիք-Զահնազարի աղջիկը այստեղ գործ չունի, վերցրու թոռդ»։ Տիկին Հերիքնազը աշխատում է խաղաղեցնել նրան, խոստանալով ուղիղ ճանապարհի բերել որդուն։ Սակայն ինքը Մարիամը, որ իւր հօր նման միջոցների մէջ խտրութիւն դնել չգիտէր՝ վճռում է ինքը դրա առաջն առնել, ուստի և կաշառում է իրենց Լալա ծառային, որ սպանէ մելիքի սիրուհուն։ Որոշում են այն գիշերը, որի յաջորդ առաւօտը մելիքը պատրաստւում էր պատերազմի ելնելու։ Լալան մտնում է Բալայի սենեակը և քնած միջոցին նրան խեղդում է՝ հէնց նրա երկար մազերով և ապա տանում մի հորի մէջ ձգում։ Առաւօտեան, երբ մելիքը ձի նստած շտապում էր գնալու՝ տարածւում է Բալայի սպանման լուրը։

«Երբ կը վերադառնամ, ես կը գտնեմ սպանողներին» ասում է նա և գնում։

Լալան սարսափում է այս խօսքերից, նա գիտէր, որ մելիքը կարող է իմանալ, թէ ով է սպանել և այն ժամանակ ոչ միայն իւր գլուխը, այլ և իւր ամբողջ ընտանիքը զոհ կը գնայ նրա վրէժխնդրութեան։ Ուստի և ոճիրից ոճրի անցնելով՝ պատերազմի խառնուրդի ժամանակ հրացանի մի գնդակով վայր է գլորում քաջին և ինքը առաջինը վրայ վազելով՝ գրկում դիակը և եափունջու մէջ փաթաթած դնում ձիու վրայ ու բերում տուն...

Մելիք-Բէկլարը որդի չունենալով՝ մելիքութիւնը անցնում է նրա եղբօրը, Մելիք-Աբովին։ Սա մի քաջ, պատերազմասէր, եռանդուն նախաձեռնող և անխոնջ անձնաւորութիւն էր *)։

Սրա ժամանակ ռուսաց ազդեցութիւնը Կովկասում աւելի և ա-

*) Կովալենսկի. Акты Кав. Арх. Ком. Т. I. № 34.

Digitized by Google

զօրեղացել էր, և Կատարինէ կայսրուհին մտածում էր տիրել ամբողջ Տաճկաստանին և Կոստանդնուպոլիսը դարձնել քրիստոնէական պետութեան մայրաքաղաք, ինչպէս և Անդրկովկասում վերականգնել երկու քրիստոնէական տէրութիւններ, հայոց և վրաց, որ միայն Ռուսաստանից կախումն ունենային։ Այս մտքի իրագործումը յանձնուած էր իշխան Գ. Պոտեմկինին, որ ցանկանալով կրել հայոց թագաւորութեան թագը՝ սրտով կպած էր գործին և իշխան Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի միջոցով անձանձրոյթ գործում էր։ Եւ որպէս զի հրապուրէ միւս գաւառներին ևս ռուսաց հովանաւորութիւնը խնդրելու՝ իշխան Պոտեմկինը մեծամեծ շնորհներ էր արել վրաց Հերակլ թագաւորին, որ և 1784 թուին երդուել էր հաւատարիմ լինել ռուսաց գահին։

Այս միջոցին գեներալ Պ. Ս. Պատեմկինը գրում է մելիք-Յովսէփին, թէ ինքը հրամայել է ռուսաց զօրքին՝ Բուրնաշէվի հրամանատարութեամբ գնալ Վրաստան. արդ թող ինքը պատրաստուի իւր հպատակներով դուրս գալ Ղարաբաղից։ Եւ որովհետև մելիք-Յովսէփը կենդանի չէր՝ այդ պատճառով այս նամակը ստանում է մելիք Ֆրիդոնը։

Նոյնպիսի նամակներ ստանում են և մելիք-Ադամ Իսրայէլեանը, Մելիք Դանիէլ Մելիք-Բէկեանը, որոնք Աբովի հետ ժողովի են հաւաքւում Գանձասարի վանքը և Յովհաննէս կաթողիկոսի հետ միասին, 1781 թուի դեկտեմբերին խնդրողական նամակներ են ուղարկում կայսրուհուն, Պաւլ Պոտեմկինին և Յովսէփ եպիսկոպոսին, որոնց պատասխանն էլ ստանում են 1782 թուի յունիսին։ Այս միջոցին յիշեալ մելիք Ադամ Իսրայէլեանը մեռնում է։ Յովհաննէս կաթողիկոսը, Մեժլում Ադամեանը, Աբով Յովսէփեանը, Մելիքբէկեանը կրկին նամակներ են ուղարկում կայսրուհուն իրենց Դանիէլ և Գաբրիէլ մարդկանց ձեռքով, որոնց պատասխանն էլ իւր ժամանակին ստանում են։ Այս բանը իմանալով Իբրահիմ խանը՝ 1784 թ. նոյեմբերի 5-ին հրաւիրում է իւր մօտ Յովհաննէս կաթողիկոսին և յիշեալ մելիքներին ու իւզբաշիներին, կեղծելով իբր թէ ոչինչ չգիտէ։ Երբ հրաւիրուածները գալիս են՝ սպանել է տալիս Յովհաննէս կաթողիկոսին, իսկ սրա եղբայր Սարգիս եպիսկոպոսին, միւս երեք եղբայրներին և մելիք-Մեժլումին բանտարկում է Ջուշու բերդում և 9 ամիս և 6 օր այնտեղ պահում։

Միևնոյն ժամանակ հրամայում է թալանել Գանձասարի վանքը։

Մելիք Աբովն էլ ուղևորուել է դէպի Ջուշի, սակայն Ասկերանի մօտ լսում է թուրքերից, որ խանը բանտարկել է մելիք-Մեժլումին, ուստի անմիջապէս յետ է դառնում և Ֆրիդոնի և իւր ըն-



Digitized by Google

տանիքի հետ փախչում Թիֆլիս, Հերակլ թագաւորի մօտ, ուր և գալիս է մելիք-Մեժլումը, փախչելով բանտից։

Վերջապէս 1787 թ. ռուսները օգնութեան են հասնում և Բուրնաշով գնդապետը ռուսաց զօրքով և Հերակլ թագաւորը իւր 5000 զօրքով գնում են Իբրահիմ խանի վրայ։ Սրանց հետ են լինում մելիք Աբովը, մելիք Գրիգորը և մելիք Մեժլումը։ Սրանք բոլորը իշ. Օրբելեանի հրամանատարութեան տակ գալիս են մինչև Գանձակ, բայց այստեղ յանկարծ գեներալ Բուրնաշեվը հրաման է ստանում անմիջապէս վերադառնալ Ռուսաստան, որովհետև ծագել էր երկրորդ ռուս-տաճկական պատերազմը։ Հերակլը ռուսաց զօրքերի հետ յետ է դառնում. նրանց հետ են գնում և մելիքները, սակայն ճանապարհին մելիք Գրիգորը ընկնում է Իբրահիմ-խանի մարդկանց ձեռքը, որոնք սաստիկ տանջում են նրան, մինչև որ նրա մօրեղբայր Զումշուդը 10,000 ռուբլի փրկանք տալով ազատում է նրան *)։

Իբրահիմ-խանը այսպէս անակնկալ կերպով ազատուելով ռուսներից՝ աւելի ևս բռնանում է. թալանում աւերում է Իգիրմիդորդն ու Քրաբերդը, առաջինի վրայ մելիք է նշանակում Իսրայէլին, իսկ երկրորդի վրայ Գիւլ-եաթաղ գիւղի Ռուստամ-բէկին։ Մելիք-Մեժլումի մօրն ու մելիք Աբովի ընտանիքից մի քանի հոգի բռնում և տանում է Զուշի։ Այս հալածանքների ժամանակ այս երկու գաւառներից մօտ 500 տուն փախչում են և գալիս վերաբնակում Զամքորում, Գանձակի մօտ։

Մելիք Աբովն ու մելիք Մեժլումը Թիֆլիսից Յովսէփ արքեպիսկոպոսի միջոցով նորից դիմումն են անում կայսրուհուն, խնդրելով իսկապէս օգնել իրենց գոնէ մի փոքրաթիւ զօրքով, որովհետև իրենք կարող են նրանց ահարկու անունով ոչնչացնել պարսից զօրութիւնը և ջնջել Զուշուայ խանութիւնը։ Իսկ եթէ օգնութիւն չպիտի լինի՝ թոյլ տան իրենց գաղթելու Կասպից ծովի ափերի մօտ, Դերբենդի շրջակայքը, ուր իրենց տրուելիք երկիրները իրենց սեփականութիւն համարուին և իրենք մելիքներն ու նրանց ժառանգները լիակատար իշխանութիւն ունենան իրենց հպատակներին տիրելու։

Յովսէփ արքեպիսկոպոսը այս երկու մելիքների խնդիրը իշխան Գ. Պոտեմկինի միջոցով ներկայացնելով Կատարինէ կայսրուհուն՝ ի միջի այլոց ասում է. **) Մելիքները պահանջում են, որ բարեհաճեն հաստատելու իրենց վաղեմի արտօնութիւնները, որ ամենահին ժամանակներից վայելում էին իրենք, և որ մինչև անգամ իրենց թշնամիները չեն կամեցել խափանել, այսինքն, որ նրանք իրաւունք ունե-

*) Акты I. եր. 871.
**) Բաֆֆի երես 114.

Digitized by Google

նան տիրելու իրենց հպատակների վրայ և նրանց յաջորդները նոյնպէս իրաւունք ունենան ժառանգելու նոյն իշխանութիւնը, նոյնպէս և այն երկրները, որ կը տրուեն իրենց բնակութեան համար, կարողանան սեպհականացնել միևնոյն իրաւունքով։

Այս խնդիրների պատասխանը յայտնի չէ։ Ռուսները զբաղուած լինելով տաճկական պատերազմով՝ չկարողացան օգնութեան հասնել հայ մելիքներին, որոնք անհամբեր սպասում էին դրան։ Վերջը տեսնելով որ ռուսաց օգնութիւնը ուշանում է՝ նրանք սկսեցին համոզել Հերակլին, որ հայ վրացական զօրքով յարձակուեն Իբրահիմ խանի վրայ, սակայն Հերակլը ոչ միայն չհետևեց այս առաջարկին, այլև համաձայնեց յանձնել նրանց Իբրահիմ խանին այն պայմանով, որ սա էլ յետ դարձնէ այն երկու հարիւր թուրքերը, որոնք առաջ վրաց հրպատակութեան տակ էին և Բորչալուից փախել եկել էին Ղարաբաղ և Ասկերանի շրջակայքում բնակութիւն հաստատել։

Իւր այս տմարդի վարմունքը հեշտութեամբ կատարելու համար Հերակլը հրաւիրում է մելիքներին Թիֆլիսի Օրթաճալա կոչուած այգիներում հացկերոյթի, որպէս զի հարբեցնէ և այդ դրութեան մէջ հեշտութեամբ բռնելով ուղարկէ Իբրահիմ խանին։ Բարեբախտաբար հայ մելիքները Հերակլի հայ քարտուղարի միջոցաւ իմանում են նրա այդ մտադրութիւնը, ուստի և առարկելով թէ մինչև ճաշը կամենում են մի քիչ որս անել՝ հեծնում են ձիերը և փախչում դէպի Գանձակ։

Ճանապարհին մելիք Մեժլումը վրացի սայլապանների միջոցաւ լուր է ուղարկում Հերակլին. թէ չի մոռանայ նրա հիւրասիրութիւնը։

Գանձակում Ջաւադ-խանը սիրով ընդունում է նրանց, տեղ և միջոց տալիս ապրելու։

***

Իբրահիմ-խանը Յովհաննէս կաթողիկոսին սպանելուց յետոյ Գանձասարի կաթողիկոսութիւնը տուել էր իւր հլու հպատակ Իսրայէլ կաթողիկոսին որ Երիցմանկանց վանքի կաթողիկոս էր համարում, թէև նստում էր Գանձակ. իսկ Երիցմանկանց վանքի կաթողիկոսութիւնը այդ ժամանակ անցել էր փոքր Սիմոն անունով մէկին, որ նոյնպէս Իբրահիմ խանի հլու հպատակն էր. այս պատճառով մելիքները ցանկանում են ունենալ իրենց կաթողիկոսը. ուստի մեծ դրժուարութեամբ Յովհաննէս կաթողիկոսի եղբայր Սարգիս եպիսկոպոսին Գանձասարից փախցնում են Գանձակ և այստեղ 1724 թուին Աղուանից կաթողիկոս օծել տալիս. այսպիսով Աղուանից փոքրիկ երկրում միաժամանակ երևեցան երեք կաթողիկոսներ, որոնք միմեանց դէմ կռուելով՝ զբաղեցրին ժողովրդին և վնասեցին ընդհանուր գործին։

Մելիք Աբովն ու մելիք-Մեժլումը ապրելով Գանձակում Ջաւադ

Digitized by Google

խանի մօտ՝ հետզհետէ միմեանց հետ թշնամացան։ Մի անգամ երբ երկուսն էլ Ֆաւադ-խանի մօտ ճաշի էին հրաւիրուած՝ միմեանց հետ սաստիկ կռուեցան այն պատճառով, որ մելիք-Մեժլումը պասը ուտում էր։ Եւ երբ պարսից Աղա-Մահմատ խանը 1795 թուին պաշարեց Ղուշի բերդը, մելիք Աբովը միանալով մելիք Քումշուդ մելիք Ջահանգարեանի և Իբրահիմ-խանի հետ՝ սկսեցին պաշտպանել Ղուշու բերդը, իսկ մելիք Մեժլումը Ֆաւադ-խանի հետ անցաւ Աղա-Մահմադ-խանի կողմը և նրան համոզեց մի առժամանակ թողնել Ղուշու բերդի պաշարումը և գնալ աւերել Թիֆլիսը։ Աղա-Մահմադ-խանը հետևեց մելիք Մեժլումի խորհրդին։ 1795 թուի սեպտ. 12-ին առնուեցաւ Թիֆլիսը և թալանուեց, որով և լուծուեց մելիք Մեժլումի դէպի հերակլը պահած ոխը, նրա ցոյց տուած անհիւրասիրութեան համար։

Մելիք-Աբովը Աղա-Մահմադ-խանի Պարսկաստան վերադառնալուց յետոյ կրկին վերադարձաւ Գանձակ, Ֆաւադ-խանի մօտ։ Եւ երբ 1796 թուին ռուսները Զուբովի հրամանատարութեամբ և հայոց Յովսէփ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ առանց պատերազմի առան Դերբենդը, Ղուբան և Ջամախին, ու հետևեալ տարին մօտեցան Գանձակին՝ մելիք Աբովը համոզեց Ֆաւադ-խանին, որ առանց պատերազմի անձնատուր լինի ռուսներին։ Իբրահիմ-խանն էլ տեսնելով, որ բոլոր խաները ընդունեցին ռուսաց հպատակութիւնը, որովհետև նրանց կողմն էր հայ տարրը, երկրի գլխաւոր ոյժը՝ ինքն էլ խոնարհուեց ռուսաց գահի առաջ։ Բայց երբ (1796 թ. յունիսի 6) Կատարինէ կայսրուհու մահուան պատճառով Զուբովը յանկարծ յետ կանչուեց, այս բոլոր խանութիւնները նորից գլուխ բարձրացրին և սկսեցին աւելի բարբարոսաբար նեղել հայերին, որոնք ռուսների կողմնակից լինելով, ստիպել էին խաներին հպատակութիւն ընդունելու։

Դեռ այս բաւական չէ՝ այս պատերազմների պատճառով հայերը չկարողացան երկիրը մշակել, ուստի և շուտով սաստիկ սով ընկաւ, որին և հետևեց սարսափելի ժանտախտը։ Աղա-Մահնադ-խանն էլ կրկին դիմեց Ղուշի և առաւ այն, ասպատակ սփռելով ամբողջ Ղարաբաղ։ Սովից, ժանտախտից և պարսից բռնակալութիւնից տագնապած թշուառ հայ ժողովուրդը սկսեց գաղթել, բայց ուր-ամէն կողմ, ուր որ աղօտ յոյս ձգում էր նրան,—Վրաստան, Ռուսաստան, Պարսկաստան։

Մելիք Աբովը դիմեց Վրաստան. նրա ժողովուրդը հետևեց նրման, սոսկալի նեղութիւններ կրելով ճանապարհին։ Աւանդութիւնն ասում է, թէ Երքեճցի մի գերդաստան ճանապարհին այն աստիճան նեղւում է սովից, որ կինը ստիպում է ամուսնուն գնալ անտառից փայտ բերել և խորովել իրենց որդիներից մինին։ Երբ հայրը աղի արտասունքներով ուղևորւում է անտառ՝ տեսնում է մի եղջերու, որի

Digitized by Google

Եղբիւրները ծառի հիւղերի մէջ բռնուած լինելով, չի կարողանում փախչել։ Այս եղջերուն վրկում է խեղճ երեխայի կեանքը։ Վերջապէս հասնում են Վրաստան. սակայն վրացիք անհիւրասէր հերակլից աւելի վատ են ընդունում նրանց. մերկ, քաղցած հայերը դունէ դուռ ընկած մուրում են, և վրացիները ցանում են մի կտոր հաց տալու. նրանք պահանջում են հայերից, որ ստրկութիւն ընդունեն, փոքր ինչ ուտեստ ստանալու համար։ Ստրկութիւնը, որ այդ ժամանակ տիրում էր Վրաստանում, բոլորովին խորթ էր հայերին։ Սրանք ցանկանում էին այս երկրի մէջ էլ ունենալ մի անկիւն, ուր կարողանային ապրել իրենց վաղեմի օրէնքներով։ Բայց վրաց վարմունքը այնքան յուսահատեցուցիչ էր, որ մելիքները վճռեցին ռուսաց կայսեր դիմել և ահա 1799 թուին մելիք Փրիդոն մելիք-Բէկլարեանը և մելիք Ջումշուդ մելիք Ջահնազարեանը *) անձամբ գնացին Պետերբուրգ։

Այստեղ մելիքները խնդիր մատուցին Պաւլ կայսեր, որի մէջ ի միջի այլոց ասում էին. «Երբ իշխան Պոտեմկինը և նոյն անուն միւս գեներալը, բարձրագոյն բարեհաճութեամբ, գրաւոր կերպով կանչեցին մեզ բարբարոսների լծից ազատուելու, մենք, հանդիսաւոր կերպով և եռանդով ամբողջ աշխարհի առաջ արտայայտեցինք թէ ենթարկում ենք ամենքիս և ամեն ինչ, գործով իսկ պատրաստ ենք, միացնելու մեզ և մեր ընտանիքները ձեր համայն Ռուսիոյ կայսրութեան.... բայց անբարեբաստիկ բախտով, որ անյաղ է իւր հալածման մէջ, և մեր դժբախտութիւնից այս բոլոր մեր սպասած բարիքները մեզ համար դարձան չարիք և կատարեալ կորուստ։ Մեծ կայսր, փրկիր անօգնականներիս, ապատիր մեզ, որ դէպի Ռուսաց գահը ունեցած մեր անձնուիրութեան պատճառով կորչում ենք. պարգևացրու Քո օգոստափառ անուան վրայ դրած մեր յոյսը. մի մերժիր այս աղերսը»։

Մելիքները խնդրում էին հետևեալ երեք միջոցներից մինը. ա) Ընդունել կայսերական հովանաւորութեան և իշխանութեան տակ և Ղարաբաղը. բ) կրկին ուղարկել, որի օգնութեամբ կարելի կը լինէր գաղթեցնել մելիքների հպատակ հայերին և մահմեդականներին և նրանց բնակութեան տեղ տալ Մաշարից մինչև Եկատերինոդրադար ընկած երկիրը և նրա շրջակայքը կամ գ). հրամայել Վրաց թագաւորին, որ նրանց բնակութեան համար տայ իւր իշխանութեան տակ գտնուած դատարկ երկիրը, որ այժմ Ղազախ է կոչւում, և տարած-

*) Մելիք Ջումշուդը մելիք Ջահնազար Բ-ի աւագ որդին էր, որ օրէնքով պիտի ստանար մելիքութիւնը։ Սակայն Իբրահիմ-խանը զրկեց նրան իրաւունքից և մելիք նշանակեց միւս եղբօրը, Յուսէյնին, որ Իբրահիմ-խանի կնոջ Հուրի-Ջատ խանումի հարազատ եղբայրն էր։ Մելիք Ջումշուդը, ինչպէս յետոյ կը տեսնենք, այս բանից «նեղակալնլով» սկսեց ընդդէմ գնալ Իբրահիմ-խանին։

Digitized by Google

ւում է մինչև Լոռի գաւառը, ուր և առաջները կային հայկական գիւղեր, որոնք պարսից զանազան աւերածութիւններից դատարկուել են։ Եւ եթէ այս երեք խնդիրներից ոչ մինը չի յարգուի՝ այն ժամանակ «հայրենիքից, հպատակներից, իշխանութիւնից և բոլոր կալուածքներից զրկուած» խնդրատուները իրենց անտանելի կեանքի վիճակը յանձնում են Նորին Մեծութեան բարեհաճութեան [1]։

Կայսրը յարմար գտաւ երրորդ միջոցը և 1799 թուի յունիսի 2-ի հրովարտակով բարեհաճեց առաջադրել վրաց թագաւորին՝ Ղազախի երկիրը յանձնել մելիքներին։ Հրովարտակի մէջ ասւում էր, ի միջի այլոց. «Թողնել բոլոր այն իրաւունքները և արտօնութիւնները նրանց (մելիքների) հպատակ հայերի վրայ, որ նրանք ունէին իրենց նախկին հայրենիքում, չզրկելով երբէք նրանց պատկանած այս իշխանութիւնից, քանի որ հաւատարիմ կը մնան. իսկ այն դէպքում, երբ նրանցից մինը, որ կարելի չէ սպասել, ընդհանուրի բարեկեցութեան շահերին ընդդէմ կերևի... վարուել ինչպէս որ մենք կը հրամայենք» [2]։ Սրանից անկախ՝ Վրաստանում մինիստր Ս. Ս. Կովալենսկուն 1799 թուի ապրելի 16-ին տրուած հրահանգի 10 կէտում բացատրուած էր, թէ կայսրը ցանկանում է, որ այս նոր քրիստոնեայ հասարակութիւնը Վրաստանում որքան կարելի էր ծաղկէր. «Նոյն-իսկ այդ երկրի սեփական օգուտների համար, դուք պէտք է աշխատիք, որ թագաւորը այդ հողերը զիջէր մելիքներին ամենաձեռնտու պայմաններով. և որովհետև մի այդպիսի հասարակութիւն չի կարող հաստատուել և զարգանալ, եթէ նրան ի վաղուց հետէ յատուկ սովորութիւնները և կառավարութիւնը պաշտպանուած չլինին՝ ուստի և ցանկալի էր, որ նրանք Վրաստանից միմիայն որպէս վասսալ կախումն ունենային», վճարելով թագաւորին մի չափաւոր հարկ և մասնակցելով երկրի պաշտպանութեան [3]։

Միևնոյն ժամանակ Մելիք Ֆրիդոնին և Մելիք Քումշուտին տրուեցան շքանշաններ և թոշակներ,—մելիք Ֆրիդոնին՝ տարեկան 1000 ռուբլի, մելիք Քումշուտին 1400 ռ. և սրա որդի մելիք Պօղոսին՝ 600 ռ.։

Վրաց թագաւոր Գէօրգի ԺԲ. կայսեր հրովարտակի հիման վրայ տուեց մելիքներին հողեր, որոնք, ինչպէս երևում է 1802 թուի մայիսի 8-ին կազմած Վրաստանը գաւառների բաժանելու վաւերաթղթից՝ հետևեալներն են. Մելիք Ֆրիդոնին՝ Ուզունլեար, իսկ մելիք Աբովին՝

---

[1]) Акты Кавк. арх. ком. т. I. № 872. յիշուած Эзовъ: Сношенія Петра Великаго съ Арм. народомъ. եր. CXIII.

[2]) Անդ. №№ 875 և 876. յիշ. Эзовъ-ի յիշ. գր.

[3]) Акты Кав. Арх. ком. т. I. № 1. 87 յիշ. Эзовъ-ի յիշ. աշ. մէջ։

Digitized by Google

Բոլնիս [1]։ Իսկ Հաճի-կալէի (Աղճի-դալա) մօտ բնակուած նոր գաղթականները պատկանում են մելիք-Ջումշուդին և մելիք-Փրիդոնին [2]։

Ստանալով այս գիւղերը՝ մելիք Աբովը և մելիք Փրիդոնը [3]) վերադառնում են Իգիրմիդորդ և մեծ կեղուԹիւններով իրանց հպատակներին տեղափոխում են այս նոր տեղերը։ Ճանապարհին սրանք հաղնում են ոչ միայն Իբրահիմ խանի մարդկանցից, լեզգիներից, այլև Գանձակի Ջաւադ-խանից։ Բանաւոր աղբիւրները ասում են, ԹԷ երբ Ջաւադ-խանը լսում է ԹԷ մելիք Աբովը ուզում է գաղԹել, կամենում է Թոյլ չտալ, բայց մելիք Աբովը նրան հաւատացնում է, ԹԷ ոչ ԹԷ Վրաստան է գնալու, այլ ուզում է Գանձակի մօտ, Ձրխ կոչուած տեղում գիւղ հիմնել և վերաբնակուիլ։

Ջաւադ-խանը հաւատում է, մանաւանդ երբ մելիք Աբովը գիւղի հիմքը ձգում է. բայց հէնց որ Ջաւադ-խանը միամտած հեռանում է՝ մելիք Աբովը գիշերով անցնում է Գանձակի մօտից։

Նոյն բանաւոր աղբիւրներն ասում են, որ լեզգիներին երկիւղ պատճառելու համար, սպանուած լեզգիներից խրտուիլակներ էին պատրաստում և տնկում ճանապարհին։ Վերջապէս 7000 հոգուց մօտ 4000 կորցնելով՝ մելիք Աբովը հասնում է Բոլնիս։

Այստեղ իւր նախնի մելիքական իրաւունքներով և նախնի սովորութիւններով մելիք Աբովը կառավարում է իւր հպատակներին։ Այս իրաւունքները չխլուեցին նրանից և այն ժամանակ, երբ 1801 Թուի սեպտեմբերի 12-ին Վրաստանը միացրուեց Ռուսաստանի հետ, որովհետև Վրաստանի ներքին կառավարութեան կազմակերպութեան մասին նոյն Թուին կազմուած կանոններում ասուած է. «Ղարաբաղից գաղԹած հայերը, որոնք կառավարւում են առանձին արտօնութիւններով, մնում են իրենց մելիքների իշխանութեան ներքոյ [4])։

Մելիք Աբովը յաճախակի յարձակումներ էր գործում Ախալցխայի վրայ, որ այն ժամանակ օսմանցոց իշխանութեան տակ մի առանձին փաշայութիւն էր կազմում, այս յարձակումները գուցէ շատ երկար տևէին, եԹէ 1801 Թ. մայիսի 1-ին գեներալ մայոր Լազարևը

[1]) Անդ. հատ. 2. եր. 1149. [2]) Անդ. հ. I. եր. 123.

[3]) Պատմական անեկդոտներից մի երկուսը. Երբ Մելիք-Ջումշուդն ու Մելիք-Փրիդոնը գնացին Պետերբուրգ՝ պալատում նրանց հիւրասիրեցին ԹԷյով։ Մելիք Ջումշուդը գդալով խառնեց ԹԷյը և ապա գդալը կոխեց իւր ականջի յետևը, փափախի մէջ, որ չխանգարէ իրեն ԹԷյը խմելու։

Տեսնելով արքունիքում սեղան և աԹոռ, որ այն ժամանակ բոլորովին չկային Կովկասում, Մելիք-Փրիդոնը հարցնում է մօրեղբօրից—Մելիք-Ջումշուդից, ԹԷ ինչի՞ համար են դրանք։ Սա բացատրում է, ցոյց տալով սեղանը, ԹԷ նստելու համար է, իսկ միւսը (աԹոռը) ոտները վերան դնելու, որպէս զի հանգիստ նստի։

[4]) Акты I .№ 550.

Digitized by Google

չզգուշացնէր նրան, թէ դրա այդ քայլը ընդդէմ է ռուսաց պետութեան և կարող է ծանր հետևանքներ ունենալ, քանի որ Թուրքաստանը խաղաղութեան դաշն է կապած օսմանեան պետութեան հետ [1]։

Մելիք Աբովը թէև դադարեցնում է իւր յարձակումները, [2]) բայց շատով մի նոր հանգամանք պատճառ է դառնում նրանց վերանորոգելու։ Ախալցխայի Ջերիֆ փաշան ապստամբում է օսմանեան կառավարութիւնից, որովհետև նրա պաշտօնը յանձնւում է Ախալցխայի նախկին փաշա Սուլէյմանի որդուն։ Ջերիֆ փաշան դիմում է մելիք Աբովին և օգնութիւն խնդրում, իսկ սա այդ մասին յայտնում է գեներալ մայոր Լազարևին և Գէորգի ԺԲ թագաւորին, որոնք խորհուրդ են տալիս, ոչ թէ Ջերեֆին օգնութեան, այլ ընդդէմ գնալու [3]) և մելիք Աբովը լսում է նրանց խորհրդին. իսկ մի կարճ միջոցից յետոյ Երզրումի Սիրասկիր փաշան գրում է Կնօրինգին, թէ մելիք Աբովը եկաւ Ախալցխայի (ապստամբ) փաշայի դէմ կռուելու, որի համար և շատ շնորհակալ եմ և այդ մասին յայտնել եմ սուլթանին։ Միևնոյն ժամանակ խնդրում էր, որ թոյլ տրուի մելիք Աբովին զօրքերն աւելացնել [4])։ Մելիք Աբովի օգնութեան դիմում է նաև թագաժառանգ Աղէքսանդրը, որ պարսից կողմը հակուած՝ կամենում էր ապստամբեցնել վրացիներին ռուսաց դէմ։ Սակայն մելիք Աբովը հաւատարիմ մնալով ռուսներին, չէ կատարում նրա խնդիրը, որով և գրգռում է նրա թշնամութիւնը, միանգամայն ենթարկուելով ռուսների կողմից կասկածանքի, և երևի այս է եղել պատճառը՝ որ երբ Կովալենսկին, Վրաստանում մինիստր նշանակուելով եկել է Թիֆլիս՝ գտել է մելիք Աբովին 2—3 ամիս առաջ բանտարկուած, որին և ինքը արձակել է տուել։

Այդ միջոցում մելիք Աբովը, Կովալենսկու ասելով՝ ունեցել է 400 ընտանիք իւր Իգիրմիդորդի գաղթականներից և 300 ընտանիք ուրիշ տեղերից եկած հպատակներ, և կարող է մինչև 1000 զինուոր հանել [5])։

Մելիք Աբովի օգնութեանն է դիմում նաև վրաց թագուհի Դարիջանը, որ իւր ամուսնու Գէորգի ԺԲ-ի մահից յետոյ աշխատում էր գահը յանձնել Աղէքսանդր որդուն, որի հետ և սկսում է բանակցել [6])։

Ահա այսպէս Մելիք Աբովը Վրաստանում առաջնակարգ նշանակութիւն ունեցող մարդ դարձաւ. նրա նիւթական դրութիւնն էլ բաւական բարելաւուել էր, որովհետև բացի սովորական եկամտից՝ նա

[1]) Акты. հ. I. եր. 637. № 887.
[2]) Անդ. եր. 638.
[3]) Անդ. հ. I. № 69. [4]) Անդ. №. 1031.
[5]) Акты. հ. I. Записка Ковалевскаго о Грузіи.
[6]) Акты. Арх. ком. հ. I. եր. 640.

Digitized by Google

ստանում էր նաև տարեկան 500 թումանն (1,500 ր.) եկամուտ տրվանքաշ-ռնան պաշտոնից, որ տուել էր Գէորգի ԺԲ. Այս պաշտօնի նշանակութիւնը այն էր, որ մելիքը պէտք է Ավքերդու [1]) ճանապարհի վրայ պահականոցներ պահէր և իւր ձիաւորները պէտք է ուղեկցէին կարաւանները մի իջևանից մինչև միւս իջևանը, և այս ծառայութեան համար հարկ էին վերցնում, բացի ուտելեղէնից և ազից, բեռից մի ռուբլի։ Միևնոյն ժամանակ նա պիտի ուղեկցէր և այն կարավանին, որ գնում էր Կողբից աղ բերելու։

Մելիք Աբովի համարումը Գէորգի ԺԲ-ի մօտ այն աստիճան բարձրացաւ, որ երբ Ղարաբաղի միւս մելիքների հպատակներից մի քանի հարիւր ընտանիք փախան Փամբակ, մելիք Աբովը կարողացաւ նրանց ևս իւր իշխանութեան տակ առնել, և երբ մելիք Ջումշուդը բողոքեց Գէորգի ԺԲ-ին և յետ պահանջեց իւր հպատակներին՝ Գէորգին փոխանակ մելիք Աբովից գաղթականները պահանջելու, Բորչալուի Խան-արիս կոչուած ջրանցքը ժամանակաւորապէս տուեց մելիք Ջումշուդին, որ այլևս պահանջ չանէ [2])։

Գէորգին շատ անգամ գովում էր մելիք Աբովին նրա ճատուցած ծառայութիւնների համար և մի անգամ էլ գրում է. Կեցցես, կեցցես. իսկապէս մելիք Յովսէփի արժանաւոր որդի, ձեր այնքան գովելի և հաճելի քաջութիւնները մեզ շատ ուրախացրին, և մենք գտնելով դրա մէջ մեզ ծառայելու այնպիսի եռանդ, որպիսին մի ուրիշը չէր կարող ցոյց տալ, յայտնում ենք ձեզ մեր շնորհակալութիւնը և նորից կրկնում ենք կեցցես [3])։

Սակայն շատ երկար չեն տևում այս բարեբաստիկ օրերը։ Գէորգի ԺԲ. մեռնում է, ռուս կառավարիչները և Վրաց իշխաններն այնպէս բարեկամաբար չեն վարում նրա հետ, հետզհետէ սահմանափակում են նրա իրաւունքները։ 1804 թուին նրա աւագ որդին, Թուստան-բէկը ռուս-պարսկական պատերազմում գերի է բռնւում և Թաւրիզում գլխատւում, վշտացած մելիքը իւր ցաւերը յայտնում է Մինաս-աղա Լազարեանին իւր 1807 թ. նոյեմբերի 23-ին գրած հետևեալ նամակով [4])։

---

[1]) Լալվար լեռան մօտ գիւղ, Թիֆլիսից Ջալալօղլու վրայով Երևան տանող ճանապարհի վրայ։

[2]) Акты Арх. Ком. հ. II. եր. 1158—1163.

[3]) Անդ. հ. 2 եր. 1156—1157. Նաև Кавк. старина 1872. № 2. եր. 36.

[4]) Այս նամակի իսկականից առնուած պատճէնը ստացայ մեր պատկառելի պատմաբան՝ պ. Ա. Երիցեանից, որին և խորին շնորհակալութիւնս եմ յայտնում։

Digitized by Google

Գերապատիւ բարձր բարեձնունդ իշխանապետ աղայ Մինաս

Ակնկալութիւն ազգիս Հայոց և յատկապէս իմ ողորմած և ամենաբարերար ազնուագութ տէր։

Իբրև զարեգակն փայլի բարձր և ամենացանկալի անուն ձեր ընդ ծագս աշխարհի բարեհրչակեալ քարոզի անդադար յամենայն մըսեղեաց և դուք էք այս օր ակնկալութիւն մեր և յոյս և ես օրհնութեամբ մնացեալ յողկուզաց յերևելից ի վեհից նախնեաց յարանց քաջաց և յօրհնեալ արմատաց։

Արդ եթէ դուք որ այսօր իբրև ծառ սաղարթախիտ և պտղալից ծաղկեալ էք ամենազօր բազկաւ Բարձրելոյն և ունիք համարձակութիւն բարեխօսել վասն ազգիս առ աստուածատիպ կայսերդ առատապարգև և բարեշնորհս առնել, և մեք մերով զանազան ազգի ազգի քաջագործութեամբ և մեծագոյն հաւատարմութեամբ մնայցեմք անբարձ և անպսակ յանկեալ ուրեք, և իբրև աննշան ոք, և հասարակ անձն համարիցիմք, ապա երբ լինիցիմք բարեբախտ և ոմն յայտնիցիմք զցաւն մեր։ Եթէ լուսահոգի Զահամիր աղայն լսելով զմեծագործութենէ Ղարաբաղու մելիքացս՝ ցնծայր յոգի, զանազան կերպիւ ուժտու լինէր մեզ մելիքացս, դուք, որ այս օր ողորմութեամբ Քրիստոսի առաւել էք քան զնա փառօք և պատուով, որչափ ևս առաւել պարտիք ձեռնտու լինել մեզ և բարերջանկութեան մերոյ ցանկալ, և չթողուլ զի աշխատանք մեր և անուն ընդ վայր կորիցէ և իբրև անարի ոք վատահամբաւ մեռանիցեմք։ Մեծագոյն հաւատարմութիւնք իմ առ սուրբ աթոռդ Ռուսաց և քաջութիւնք իմ առ Զուպով զօրապետն որ ի Զուշի, յայտնիք են ամենից, գուցէ և ձերդ վեհանձնութեան, թէ զիարդ զհզօրն այն վիթխարի աղայ Մահամադ խան անշահ ամօթապարտ կոր ի գլուխ յետս դարձուցաք և զամենայն զօրութիւն նորին թուլացուցեալ ցան և ցիր յերեսն երկրի սփիւռ տարածեցաք։ Նմին իրի արքայն Հերակլ ցանկացեալ ունել զմեզ ինքեան պաշտպան՝ երդմամբ և թղթովք հաւատարմացոյց մեզ գալ առ ինքն և բնակիլ յերկրի իւրում և համարուիլ ընդ գլխաւոր թաւադսն և կնիազսն իւր, որք և եկաք և ըստ խոստման իւրում ետ մեզ Պօլնիս անուանեալ տեղին և 'ի պալատի իւրում բարձրագոյն քան զամենայն երևելիս իւր յատկացեալ կայր վասն մեր տեղի և այնպէս էաք մինչ ցվախճան Հերակլեայ և Գօրգեայ. այժմ ոչ հողի տէր եմք և ոչ կալուածոց և ոչ թէ պատուոյ, զի ամենեքեան նեղեն զմեզ և յափշտակել ջանան զՊօլնիս և տասանորդս պահանջեն ի վաստակաց մերոց, վասնորոյ բոլորիմք զզուեալ բնաւին ոչ կամիմ բնակիլ անդ, զի այժմ մինչ ես շինութեամբ և բարութեամբ լցի և զամենայն աւազակս և զթշնամիս անտի վանեցի, տիարք բազումք յայտ-

Digitized by Google

նեցան. մինն ասէ, թէ այն ջուրն իմ մուլքն է, միւսն թէ այն սարն իմս է, իսկ այլ միւսն՝ այն հողն իմն է, և տասանորդս խնդրէ թէ ի ցորենոյ և թէ ի խոտոյ, ոչ թողուն գմեզ վարել, ոչ թողուն խոտ հնձել. և ոչ թողուն զի հօտք և անդիայք մեր ճարակեսցին, վասնորոյ ամենայն անասունք մեր սատակեցան և մեք կամք երեռելոյ և տատանեալ և յայսմ ամի առատց վարուցանի մնացեալ. վասնորոյ, եթէ ամենայն քարինք Պօլնիսոյ յոսկի դարձցին՝ հրաժարելով հրաժարիմք, ոչ փող մնաց ի քսակի մերում, ոչ ամօթ յերեսս մեր և ոչ սիրտ համբերելոյ այսպիսի անտանելի թշուառութեանց, զի միշտ ի դրունս դատաստանաց մաշիմք և չունիմ ուստէք մեզ օգնութիւն. վասն որոյ ահա զաղերս մատուցի Նորին Կայսերական Մեծութեան զի ի գութ շարժեալ հրամայեսցէ մեզ երթալ ամենայն ժողովուրդով մերով ի հայրենի երկիր մեր ի Ղարաբաղ և անդ բնակիլ և զարդարել շինութեամբ, և որպէս խոստացեալ եմ ողորմած կայսերն իմով թղթով, այժմ ևս զնոյնն ուխտեմ և խոստանամ կատարել վասն շահաւետութեան արքունի գանձարանի։

Մելիք Ջումշուտին հրաման եղև գնալ յերկիր իւր, մեզ ընդդէմ ոչ լինիցի. վասնորոյ խնդրեմ, ողորմած տէր, զի ամենայն զօրութենէ և ամենայն սրտէ գուն գործել և ի տեղի մեր բերան և լեզու եղեալ փոյթ արասջիք այսմ, ոչինչ խնայեալ ի ծախս, զի ունիմք շնորհակալութեամբ հատուցանել զամենայն ծախսն, որք լինին վասն այսմ, մնալոց եմք զամենայն կենաց մերոց պարտաւոր ձերդ ամենամեծ բարերարութեան։ Հերակլ արքայն բաց 'ի Պօլնիսոյ, խոստացաւ մեզ հարիւր տուն մարդ և ի քաղաքիս ևս տուն և տան տեղի մեզ վայել, բայց ինքն վախճանեցաւ և մեք փոյթ չտարաք հոգալ, որպէս ահա Նորին թղթոյն կոպիայն առաքեցաք ընդ թղթոյս առ ձերդ վեհանձնութիւն 'ի գիտել։ Ունէաք պատիւ առաւել քան զթաւադսն և զկնիազսն ի ժամանակս նոցա, այժմ 'ի ժամանակի յետին մուժիկի չափ էլ չեմք։ Գօրգի արքայն տուեալ էր մեզ քեարվան պաշութիւն, որով ամենայն տարի 500 թուման արդիւնք լինէր մեզ, այն ևս զկնի վախճանի Նորին ի ժամանակս սոցա կորեաւ, որ այժմ մէկ փողի արդեանց տէր չեմք։

Ցիցիանովին յայտնեցաք Գօրգի արքայի թուղթն, խոստացաւ մեզ գրել առ կայսրն և փոխանակ քարվանպաշութեան տոնլուղ և աստիճան վասն մեր հաստատել, այն ևս մնաց այնպէս կիսակատար, ինքն մեռաւ և Գիօրկու թուղթն մնաց 'ի Նորին կեանցելոյն։

Այլ և թէ որքան հաւատարմութիւն եմ արարեալ ողորմած կայսերն իմոյ ոչ մինն յայտնի չէ եղեալ տէրութեան. ես զինչ արարից, մի միայն անդրանիկ որդի ունէի Թէոստոմ-բէկ, որդի Ծերութեան իմոյ

Digitized by Google

և Ժառանգ նախնեաց իմոց, այն և զոհ մատուցի ինքնակալ կայսերն իմոյ ողորմածի, քան զայս առելի ոչ ոք կարէ առնել զոր ես արարեալ եմ, և այժմ և զ առնեմ. մէկ կաթիլ արիւն ունիմ՝ այն և զ յանենայն ժամու 'ի պատրաստի կամ հեղուլ վասն անուան ողորմած կայսերն իմոյ. այլ քան զայս առաւել զինչ արարից, չգիտեմ։ Երևի ճշմարտապէս, զի հայ եմ, վասնորոյ նախանձին ամենայն կուսակալք և զօրապետք դորին ընդ յառաջագիմութիւն իմ և քաջագործութիւն և ոչ կամին յայտնել ստուգութեամբ ուր հարկն է, զի այսպէս մնացեալ, յուսահատեցայց և փչացայց։ Աստուծով այսու ցաւով իմով չեմ մտանելոյ ի գերեզման և չեմ յուսահատեալ փչանալոց, որպէս մինչ ցարդ գործեալ եմ զմեծամեծս, այլ և զ Աստուծով գոլծելոց եմ զնորանորս ի սքանչացումն լսողաց և տեսողաց, և արիութեամբ, քաջութեամբ ի հող մտանելոց, և ոչ իբրև անզօր և տկար յանկողնի մեռանելոց և մուրթաթ *) սատակելոց։

'Ի ժամանակս Գէորգի արքային ի մինիստրութեան Կաւալենցկուն, թէ զինչ եմ գործեալ, և որքան հաւատարմութիւն արարեալ տէրութեան այդմիկ, կարէք գիտել ի թղթոց նորին Կաւալենցկուն, զոր ընդ գրոյս առաքեցի առ ձեզ։ Ցիցիանովին և իւր բոլոր զօրացն կենաց և փրկութեան ես եմ եղեալ պատճառ, առաքելով աստի յԵրեւան հաց, բարութ և գիւլլայ ձեռամբ իմ քաղցր, միածին, անդրանիկ որդի Ռօստոմ բէկին՝ հանդերձ յիսուն վաթսուն իմոյին քաջ արամբք։ Աստուծոյ ողորմութեամբն 'ի կէս աւուրն բարութ գիւլլայն և հացն է հասեալ Ցիցիանովին Ռօստոմ բէկին և ի նոյն գիշերի շահն է եկեալ յանկարծակի բազմութեամբ անհամար զօրաց ի վերայ Ցիցիանովին. մտածելի է թէ չէր հասեալ վեց սահաթ յառաջ Ռօստոմ բէկն, զինչ էր լինելոց Նորա կեանքն, այսուամենայնիւ ոչ շատացեալ կրկին առաքեալ էր Ցիցիանովն գորդին իմ իւր մարդովք ի Ղարաքիլիսայ և այն, որք ի ճանապարհին 10, 12 հազարի զօրաց պատահելով, ոմանք ի մարդկանց նահատակեցան յունուն ինքնակալին ամենայն Թուսաց և զամենեսեանս կապեալ խաղացուցին ի Դավրէժ հանդերձ իմ անդրանիկ որդի Ռօստոմ բէկի իբրև զոչխար ի սպանդ, ուր և կատարեցան ազգի ազգի տանջանօք և չարաչար մահուամբ, վասն անուան ինքնակալ կայսերն և այսպէս որդիս գնաց և վաթսուն մարդս և ս ընդ նմա գնացին իւրեանց ձիովք, ապրանքով, զինուք, սրովք և ամենայն իրօք և թէ որքան վնաս եղև ինձ այսու թողում ձեզէն քննել, և ինձ ցաւովք և վշտօք լցելոյս ցտակից և վշտակից լինել։ Եւ այսոցիկ ամենայն գրեցելոյս բաց այլոց, կենդանի վկայք են յաստուածակոյս կողմէ ղեներալ պարոն Տուչկովն և պարոն Լեոնդովն։

*) Թուրքացած։

Digitized by Google

Պարոն Վոլխոնսկուն թէ զինչ հաւատարմութիւնք եմ ցուցեալ, թող ինքն վկայեսցէ. կուսակալ գրաֆ Կուտովիչին ևս ոչ պակաս ծառայութիւն ցուցի, ի վերայ ամրոցին Ախալքալաքու զահ և զերկիրդ ամենեքեանսք արկանելով ևայլն. սա ևս նման միւսոց ոչ գիտաց և ոչ շնորհակալ եղև, և ոչ կայսերն յայտնեաց ինչ վասն մեր, ի յանձնարարութեանց ձերոց ոչ ինչ շահ յառաջացաւ, զի որպէս թուղթ ողորմածն տեառն իմոյ ետ ինձ ասաց, թէ աղայ Մինասն վասն քո յանձնարարութիւն արար ինձ ևայլն։ Բայց արժանի և շահաւէտ պտուղ ինչ ոչ եցոյց։ Քանիցս խնդիր մատուցաք թէ հրամայեա մեզ գնալ ի Ղարաբաղ ի հայրենի աշխարհն մեր, նման մելիք Քումշուդի, ոչ հաճեցաւ, թէ դուք որ երթայք, Պօլնիս գիւղն աւերի. և ախալցխացիք և լէկզիք և այլ գողք և աւազակք յաւարի առնուն զշրջակայ գիւղօրայս Թիֆլիսու։ Իսկ մինչ ասեմք թէ որպէս արքայն հերակլ տուեալ էր մեզ զՊօլնիսն շրջակայ հողովն և ջրովն և ամենայն իրօք, դու ևս նման նմին զնոյն հաստատեա, պատասխանէ մեզ թէ ոչ կարեմ այլոց մուլքն քեզ տալ ևայլն։ Զորով և զանձ առնեմ չտալ պատուական լսելեաց ձերոց զտաղտկութիւն։

Արդ՝ զորս ինչ խնդրեմ այժմ Նորին Կայսերական Մեծութենէն միջնորդութեամբ ձերով, նախ՝ հրամայել մեզ և ամենայն ժողովրդոց մերոց գնալ ի Ղարաբաղ, ի հայրենի աշխարհն մեր, որպէս ի վերդ գրեցաք. մեզ ոչ Պօլնիս է պիտոյ, ոչ հարիւր տուն մարդն, և ոչ ի մէջ քաղաքիս՝ տուն և տեղի, զորս տուեալ էր մեզ արքան հերակլ։

Երկրորդ վասն մեր պենցիա հաստատել ի տեղի քարվանպաշութեան, զոր տուեալ էր մեզ արքայն վրաց Գէօրգի, որով տարին 500 թուման ստանայաք, որպէս և Ցիցիանովն խոստացեալ էր, զոր ի վերդ գրեալ եմք։ Երրորդ վասն մեր աստիճան պոլկովնիկութեան հաստատել վասն ամենայն հաւատարմութեանց իմոց, ըստ զօրութեանց թղթոց արքային հերակլայ և ըստ խոստմանց Ցիցիանովի։

Եւ չորրորդ՝ որովհետև Թոստամ բէկ որդիս հանդերձ իւր վաթսուն քաջ արամբ զոհ եղան յանուն ինքնակալիդ և զրկեցան ի կենաց և ի պսակաց, ի տեղի նոցա խնդրեմ չին մայեօռութեան վասն իմ որդի Եսայի բէկին և վասն իմ քեռ որդի Ադամ բէկին մելիք Մեջլումեան. զայսոսիկ զամենայն յանձնեալ ըստ ամենայնի, մնամ բազում յուսով և ակնկալութեամբ օր ըստ օրէ սպասեալ

Ամենախոնարհ ծառայ ձերդ վեհանձնութեան
Մելիք Ապով մելիք Յովսէփեան Ղարաբաղու

Ի նոյեմբ. 23. 1807, ի Թիֆլիս.

Digitized by Google

Մելիքի խնդիրը չկատարուեցաւ, նա չկարողացաւ վերադառնալ իւր հայրենի երկիրը։ Իսկ նրա յարաբերութիւնները օրէցօր աւելի և աւելի լարուեցան Վրաց ազնուականների հետ, որոնք մի հրաւէրքի մէջ լոբիի մէջ թոյն խառնելով թունաւորեցին նրան, Մանաս-բէկ որդուն և Միրզա-Խաբաշխ քարտուղարին։ Մանաս-բէկը ազատուեց, բայց Մելիք-Աբովն ու Միրզա-Խախանը մեռան 1808 թուին, կարճատև հիւանդութիւնից յետոյ։

Մելիք-Աբովի մարմինը փոխադրուեց Հոռեկ և թաղուեց տոհմական գերեզմանատանը։

---

Մելիք-Աբովը ունէր երեք որդի, Թոստոմ-բէկ, Եսայի (Սայի) բէկ և Մանաս-բէկ։

Երէց որդին հօր նման քաջ էր և պատերազմասէր, հաստատակամ և անձնավստահ։ Բացի այն, որ միշտ մասնակցում էր իւր հօր արշաւանքներին՝ նա 1804 թուին, ռուս-պարսկական պատերազմի ժամանակ միայնակ սկսեց գործել և ռուսաց զօրքերով երկու անգամ պաշար և վառօդ հասցրեց Իշխան Ցիցիանովին, որ Երևանը պաշարած միջոցին, ինքը չորս կողմից շրջապատուել էր պարսկական զօրքերով։ Երբ երրորդ անգամ Թոստոմ-բէկը 500 ռուս զինուորներով վառօդ էր տանում, Փամբակի ձորում, Ղուրսալի գիւղի մօտ պատահեցաւ Փիր-Ղուլի-խան զօրավարին 8000 զինուորներով, որին շուտով միացաւ վրաց ապստամբ թագաժառանգ Աղէքսանդրը, 3000 զինուորներով։ Թոստոմ-բէկը չնայելով որ անհամեմատ քիչ զօրք ունէր, այնուամենայնիւ պատերազմից խոյս չտուեց, այլ ընկաւ թշնամու վրայ և սկսեց կոտորել։ Նրա ձին գնտակահար լինելով գլորուեց՝ Թոստոմ-բէկը ուրիշ ձիու վրայ ցատկեց և առաջ սլացաւ, չնայելով, որ արդէն երկու վէրք էր ստացել, բայց երբ գնտակը վիրաւորեց և աջ ձեռը՝ այն ժամանակ վայր ընկաւ։ Պարսիկները կոտորեցին բոլոր զինուորներին և 16 հոգու հետ նրան գերի բռնեցին և տարան Աբաս-Միրզայի մօտ։ Սա շղթայած ուղարկեց նրան Թաւրիզ և հրամայեց բանտարկած պահել և բժշկել վէրքերը մինչև իւր վերադարձը։ Երբ յաղթուած և վրէժխնդրութեամբ լցուած Աբաս-Միրզան վերադարձաւ Թաւրիզ, կանչեց Թոստոմ-բէկին և առաջարկեց ընդունել մահմեդականութիւն, բայց Թոստոմ-բէկը վճռական-կերպով մերժեց. ուստի Աբբաս-Միրզան հրամայեց նրան գլխատել։

Թաւրիզի հայերը մեծ սգով թաղեցին նրան եկեղեցու գաւթի գերեզմանատանը և պահպանեցին հետևեալ տխուր երգը՝ որ յօրինել էր նա բանտում.

Digitized by Google

«Մունետիկն ի ձայն բարձր աղաղակէ,
Ժանտ դահիճն սուր ի ձեռին անչաղ սրէ,
Վագեր հանգոյն զիմ կենաց թել կտրել խնդրէ,
Ի կախաղան և կամ ի սպանդ,—ուր զիս տանէ։
Քաղաքս համայն մահմեդական, աստ խուռն գան, զիմ մահ սգան,
Դառնագին լան զիս Աբովեան՝ քաջ ախոյեան։
Մթթէ չիք ոք աստ քրիստոնեայ, զիս փրկեսցէ
Ցայս ամենի և մահագոյժ վայրագ դահճէ։
Ընդէր զանմեղ արիւն թափել, չէր ցանկայ,
Նուիրական զենման իմոյ լերուք վկայ։
Սէր հայրենեաց ի թշնամեաց ձեռս մատնեաց,—ուրախ մեռայց,
Եւ դասեցայց ընդ դիւցազանց իմոց նախնեաց։
Փշրանք մնացեալ իմ սիրելի հայոց ազգի,
Որք գտանիք ի ձեռս պարսից ցայս քաղաքի,
Մի՛ մոռասջիք պատմել և զայս յորդւոց յորդի,
Թէ քաջն Թոստոմ վասն հայրենեաց ի սպանդ վարի։
Թէպէտ ցաւիմ զի չմեռանիմ ի մարտ ընդդէմ թշնամեաց իմ,
Այլ յօժարիմ, զի զոհ լինիմ այսպէս վսեմ։
Այս քաջ բազուկք յարեաց պարսից հսկայ հզօրս
Տապաստ արկին ի բազում նուագս հարիւրաւորս.
Աւաղ, կնատ անգութ դահճի եղէ ես որս,
Պատմեսջիք զայս վեհ դիւցազին՝ զառամեալ հօրս.
Քաջ նահատակ որդիդ միակ ի ձեռս վայրագ պարսից էանկ,
Իւր յաղթանակ մահ դժնդակ էառ պսակ։
Մեծդ յարեաց, արքայորդիդ Աբաս-Միրզա,
Սուր ի ձեռին դահիճն հէգ առ ընթեր կայ,
Զիս թշնամիս քոյոյ ազգի պատրաստ ի մահ
Զիմարդ կամիս սպանանել՝ շուտ հրամայեա։
Միայն սգամ, զի կապեալ կամ. թէ միւս անգամ հրացան, սուր իմ
Ի ձեռս ունիմ,—զբազուկս իմ ձեզ ցուցանեմ»...։

Մելիք-Աբովի միջնակ որդին, մելիք Սային, կոյր էր։ Սրա պատճառը, բանաւոր աղբիւրների ասելով, Մեհտի-Ղուլի-խանն էր, որի ուղարկած բժիշկը փոխանակ լաւացնելու Սայիի ցաւոտ աչքերը՝ դիտմամբ կուրացրել է նրան։ Սային կոյր լինելով չէր կարող յաջորդել հօրը, ուստի և մելիքութիւնը մնում էր նրա կրտսեր որդի Մանասքէհին։ Բայց որովհետև մելիքութեան օրինաւոր ժառանգ Ֆրիդոնը, մելիք Բէկլար Բ-ի որդին, արդէն չափահաս էր, ուստի և նա մելիք ճանաչուեց։

Սակայն նա երկար չապրեց, որովհետև մի անգամ իւր եղբօր

Digitized by Google

Սամի հետ վէճի բռնուած ժամանակ, սա դաշոյնի մի հարուած է տալիս Մելիք-Ֆրիդոնի գլխին, որից նա վախճանուում է։ Եղբայրասպան Սամին փախչում է Ֆիլիստան գիւղը, ուր իւր դաշոյնը դնում է կրակի վրայ, և երբ տեսնում է, որ դաշոյնի վրայ մնացած եղբօր արիւնը եփ չէ գալիս, գուշակում է, որ եղբայրը արդէն մեռել է, ուստի և փախչում, գնում է Երևան և խանին ապաստանում։

Մելիք-Ֆրիդոնի մահից յետոյ մելիքութիւնը պիտի անցնէր Մանաս-բէկին, ուստի և նա դիմեց գլխաւոր հրամանատար զօրապետ Տօրմասովին, խնդրելով, որ իրեն հաստատեն իբր ժառանգական տիրապետող Հոլնիսի բնակիչների, բայց նրան ոչ միայն մերժեցին, ասելով, թէ Հոլնիսը և նրա բնակիչները ոչոքի չեն պատկանում բացի թագաւորից, այլև կալանաւորեցին և պահեցին Թիֆլիսում, «որպէսզի նա Հոլնիսի բնակիչների մէջ այլևս վրդովմունք չյարուցանէ» *)։

Ժողովուրդը յուսահատուած սկսեց վերադառնալ իւր հայրենի երկիրը։ Նոյնն արաւ և Մանաս-բէկը՝ բոլորովին հրաժարուելով Հոլնիսից, որ իւր հօրն էր նուիրուած կայսեր հրամանով։

Վերադարձած գաղթականները նորից ձեռք բերին իրենց գիւղերը, նորից շինեցին իրենց տները և սկսեցին ապրել դարձեալ վաղեմի սովորութիւններով, սակայն նրանց պետերը կառավարութեան կողմից այլևս չճանաչուեցան որպէս մելիքներ, այլ՝ լոկ կալուածատէրեր և մահալ նահաբի։ Երկիրը բաժանուեց մելիք-Աբովի և մելիք-Ֆրիդոնի ժառանգների մէջ, որոնք ռուսական սովորութեան հետեւելով՝ սկսեցին կոչուիլ իրենց պապերի անունով, առաջինները, մելիք-Յովսէփի թոռները՝ Մելիք-Յովսէփեաններ, և երկրորդները, Մելիք-Բէկլարի թոռները՝ Մելիք-Բէկլարեաններ։ Առաջինների աւագն համարուեց Մանաս-բէկը, իսկ երկրորդներինը՝ Մելիք-Ֆրիդոնի որդի մելիք-Յովսէփը։ Մանաս-բէկը մի նշանաւոր գործ չարաւ, բացի այն, որ որպէս նախիր մի անգամ յարձակուեց փախստականների յետևից և ձիուց ընկնելով ոտները կոտրեց։ Մի քանի տարուց յետոյ նա սպանուեց Զէյվա գիւղի թուրքերից, որոնք գիշերով յարձակուելով նրա տան վրայ, կամենում էին սպանել նրա որդի Սողոմոն-բէկին, որ հողային վէճի պատճառով սպանել էր իրանց ընկերներից մինին։

Մելիք Ֆրիդոնին յաջորդեց որդին՝ Մելիք Յովսէփ Բ։ Սրա նշանաւոր գործն այն եղաւ, որ 1826 թուի պարսից արշաւանքի ժամանակ, միանալով Սարգիս միտրապոլիտի և Ջրաբերդի Մելիք-Վանի Աթաբէկեանի հետ՝ գնացին Աբաս-Միրզայի մօտ, Խանքենդ աւանը և աշխատեցին իջեցնել նրա հայերի դէմ զգացած ցասումը և թոյլ չտալ հայերի ընդհանուր կոտորած յառաջացնել, որովհետև, Աբաս

*) Акты Арх. Ком. т. II.

Digitized by Google

Միրզան լաւ հասկանալով, որ ռուսները հայերի ձեռնտուութեամբ կարողացան տիրել Ղարաբաղին, կամենում էր կոտորել բոլոր հայերին։ Այս երեքը կարողացան իջեցնել Աբաս-Միրզի բարկութիւնը և յետ կեցնել նրան այդ մտադրութիւնից։ Եւ ապա նոյն իսկ ընծաներ ըստանալով նրանից՝ վերադարձան։

Սակայն պարսից պարտութիւնից յետոյ իշխան Մադաթովը գաւառանութիւն համարելով դրանց ռուսաց թշնամու հետ ունեցած տեսակցութիւնը՝ երեքին էլ կալանաւորել տուեց, Սարգիս մետրապոլիտին ուղարկեց Թիֆլիս, ուր նրան բանտարկեցին, իսկ մելիք Յովսէփին և մելիք Վանուն ուղարկեցին Բագու, որ այնտեղից Սիբիր աքսորեն։ Բայց սրանք երեքն էլ կարողացան արդարանալ և ազատուել *)։ Մելիք Յովսէփը վերադարձաւ Իգիրմիդորդ և կառավարութեան կողմից նաիբ կարգուեց այս մահալի վրայ։

Այնուհետև որպէս մահալ նաիբի նա գրեթէ մելիքական իրաւունքներով կառավարեց իւր ժողովուրդը մինչև 1843 թուականը, երբ մեռաւ և Ծաղուեց Հուեկայ վանքի տոհմական գերեզմանատանը։

Մելիք Յովսէփ Բ. յաջորդեց երեց որդին՝ Գրիգորը, որ Բէուկ-Աղա (մեծ պարոն) էր մականուանուած։ Սակայն սա կնամոլ լինելով՝ սպանուեց ոմն Յարութիւն Գրիգորեանից, որ այդ արաւ իւր կնոջը նրա ճիրաններից ազատելու համար։

Սրա որդին Յովսէփ բէկը ժառանգեց տոհմական կալուածները, առանց մելիքական մի որևէ իրաւունքի, և այժմ էլ իբր կալուածատէր ապրում է Ղարաչինար գիւղում։

## ՄԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Մելիք Բէկլարեանները՝ գլխաւորապէս Աբով Բ-ի, Բէկլար Բ-ի, Յովսէփ Ա-ի ժամանակ, գրեթէ բոլորովին անկախ և միահեծան տէր են եղել Իգիրմիդորդին։ Նրանք անուանապէս հպատակել են պարսից շահերին, որոնց պահանջած միջոցին միայն մի փոքրիկ տուրք են տուած։ Վերջին Աբով Գ. և Գրիգորի միջոցին նրանք ճանաչել են վրաց թագաւորների դերիշխանութիւնը և որոշ հարկ տուել, իսկ վերստին Իգիրմիդորդ վերադառնալուց յետոյ մի առ ժամանակ հարկատու են եղել Մեհտի-Ղուլի-խանին։

Իրենց երկրի մէջ նրանք ունեցել են անսահման իրաւունք, նրանց կամքը հպատակների համար օրէնք է եղած և նրանք տնօրինել են ոչ միայն մարմնաւոր, այլ և շատ անգամ հոգևոր իշխանու-

*) Բաֆֆի. Խամ. Մելիք. Բ. տպ. եր. 232—233.



Digitized by Google

թեան վերաբերեալ գործերը։ Այսպէս օր. նրանք են թոյլ տուել սրսակ, և նրան լուծել *). Նրանց հրամանով են քահանաները ձեռնադրուել, նրանց կամքով Սարգիս եպիսկոպոսը կաթողիկոս է կոչուել և այլն։

Այսպէս ուրեմն մելիքները իրաւունք են ունեցել իրենց հպատակ երկրում.

1) հարկ վերցնելու.
2) զինուոր առնելու.
3) դատ կտրելու.
4) կարգ պահպանելու.

Երկիրը կառավարելու համար մելիքը իւրաքանչիւր գիւղում ինքը նշանակում էր տանուտէր կամ հաստատում էր ժողովրդի ընտրածին։ Սա կատարում էր մելիքի հրամանները, իւր գիւղի հետ հաւաքում էր հարկը, փոքրիկ դատեր էր կտրում, հսկում էր կարգի վրայ, զինուորներ էր հաւաքում և յաճախ նրանց առաջնորդում մելիքի մօտ, որ ընդհանուր հրամանատար էր համարուում։

Իւր այս ծառայութիւնների համար տանուտէրը թէև ռոճիկ չէր ստանում, բայց ժողովուրդը երկու օր վարում էր նրա հողը, նրա համար փայտ էր բերում և այլ ծառայութիւններ կատարում։

Usagուաձf. Մելիք Բեկլարեանները տիրապետել են ամբողջ Գիւլիստանին, ուր 24 գիւղ է եղել։ Սփսոս որ ոչ մի վիճակագրական տեղեկութիւն չկայ նրանց բնակիչների թուի մասին։

Մելիքութիւնը կորցնելուց յետոյ էլ այս կալուածքների մեծ մասը դարձեալ մնացել է նրանց ժառանգների ձեռքը։

Այսօր էլ այդ ընդարձակ կալուածներից նրանց ձեռքին են մնացել հետևեալները.

Մելիք Բէկլարեաններին. Գիւլիստան գիւղը (մօտ 2000 դ.) Զարխչի կալուածքը (1500 դ.) Խարխափուտ գ. (1500 դ.) Ղարաչինար գ. (700 դ.) Ղազիքենդ կալ. (400 դ.) Ղողթուվթ գիւղը (200 դ.) Հայոց Պարիս գ. (4000 դ.) Թոդան գ. (1200 դ.) Մանաշէտ (1200 դ.) Բուզլուխ գ. (2000 դ.) Ղարաբուլախ գ. (1500 դ.) Դիշտիխ կալ. (1000 դ.) Միլ կալ. (1600 դ.) Ղազիան կալ. (400 դ.) Խանագէ կալ. (5000 դ.) Թալիշ գիւղը **) (3500 դ.) Թուվբուլախ գիւղը (1333 դ.) Քիւչուկ Սիղնախ կալ. (1250 դ-) Բարամբաղ կալուածքը (3210 դեսեատին)։ Ընդամէնը՝ աւելի քան 33000 դեսիատին։

---

*) Մելիք Յովսէփ Ա-ին գանգատւում է Մուսին թէ կինը իւր հետ լաւ չէ վարուում։ Սա էլ անմիջապէս հրամայում է նրան բաժանել և մի ուրիշի հետ պսակել, որ և կատարում են։

**) Բանակցում են մոսկուաբնակ Թամհարեան եղբայրներին վաճառելու։

Digitized by Google

Մելիք Յովսէփեանններին. Էրքէճ գ. (5000 դ.) Ղազան-բուլախ կալ. (2000 դ.) Ենկի-քենդ գ. (500 դ.) Ղըզըլ-ելդուն (1000 դ.) Աղաբամ (1000 դ.), Սուլուկ գ. (300 դ.). Ընդամենը՝ մօտ 10,000 դ. ի միասին՝ աւելի քան 40,000 դ.

Հարկեր.—Իգիրմիդորդի բնակիչները, քանի որ մելիքները Ջուշու խանին չէին ստորադրուում՝ վճարում էին հետեւեալ հարկերը, որից միայն հոգեւորականները, տանուտէրները, քեռդխուդաները, գզիրները և սափրիչներն էին ազատ։

Մալջեհաս—հացահատիկների 1/8 մասը։

Սալեաճ.—չկարողացայ որոշել։

Գլխահարկ կամ ոսկի.—Իւրաքանչիւր տուն վճարում էր ռուսական փողով հաշուած մօտ երեք ռուբլի։

Գիւնփուլի.—Գիւղացիները պարտաւոր էին մելիքի հողերը վարել, ցանել, հնձել, կրել և այլն։ Առաջներում այդ օրերի թիւը որոշուած չէ եղել և միայն կախուած է եղել մելիքի կամքից, բայց վերջերում որոշել են տարուայ ընթացքում քսան օր։ Կարելի էր այս քսան օրը աշխատելու փոխարէն չորս ռուբլի տալ, ռուսական փողով հաշուած։

Ծառայ եւ աղախին.—Իւրաքանչիւր 25 տուն մի ծառայ և 30 տուն մի աղախին էր տալիս մելիքի տանը ծառայելու։ Եթէ գիւղը այդքան տուն բնակիչ էլ չունենար՝ այնուամենայնիւ ազատ չէր այդ պարտաւորութիւնից։

Փայտ.—Իւրաքանչիւր տուն պարտաւոր էր տարին մի իշաբեռ փայտ տանել մելիքի համար։

Պսակի.—Իւրաքանչիւր պսակի հրաման ստանալիս հպատակները մելիքին վճարում էին 3—6 ռուբլի, ռուսական փողով հաշուած. բացի դրանից պարտաւոր էին տանել մելիքին մսացուի սուկին, երիկամունքը, 2 հաւ և 2 շիշ օղի։ Երբ հարսը ուրիշ գիւղ էին տանում՝ պարտաւոր էին աւելի վճարել։

1825 թուին Թալիշի կամ Իգիրմիդորդ մահալը, իւր Ղարաչինար, Թալիշ, Էրքէչ, Ղարաբուլախ, Բուզլուխ, վերին և ներքին Աղճաքենդ գիւղերով, ուր կային 143 հարկատու և 102 հարկից ազատ տներ՝ վճարում էր խանին թէ հացահատիկներով և թէ դրամով 1472 ռ. 98 կ. և 114 չերվոնեց (ռուսական ոսկի), չհաշուած 300 ռուբլի (խան ռուբլիով հաշուածը) որ գնում էր որպէս չափար փուլի [1]։ Խաներին ստորադրուած միջոցին վճարում էին նաև հետեւեալ հարկերը, որոնցից մի քանիսը շատ տարօրինակ են.

---

[1]) Описаніе Карабагской провинціи. Магилевскаго и Ермолова 2-го. Магалъ Талышинскій.

Digitized by Google

**Օթախ-խարճի և**

**Հափար-փուլի.**—Խանի ձիաւոր ծառաների վարձ։

**Ղուլլուղ եւ թաղվիլանի.**—Խանի ծառաների օգտին տան գլուխ առնում էին 50-ական կոպէկ օթախ-խարջի անուամբ առնուած իւրաքանչիւր չետվերտ [1]) հացահատիկից. և իւրաքանչիւր բեռ փայտի համար 25 կ. ղուլլուխ։

**Միրզայեանի.**—Յօգուտ խանի քարտուղարին, գիւղից 20—100 բուբլի և 2—10 չետվերտ ցորեն։

**Ճերբեեչի փուլի.**—Յօգուտ խանի շերբետչիների (օշարակ պատրաստողների) գիւղից 10—80 բուբլի և 2—10 չետվերտ ցորեն։

**Աղ.**—Գիւղից 8—40 բաթման։

**Աքարփասի.**—Խանի ձիաների համար գարի։

**Հայրամլի.**—100—200 ր. խանի ծառայողներին, զուարճանալու համար։

Խանի ջորեպանի համար իւրաքանչիւր գիւղ տալիս էր մի-մի ձեռք շոր, ջորիների համար մի-մի չուլ, համետի համար կտոր և թել, մի քանի զոյգ պարկ։

**Քեարխանա-խարջի.**—Խանի խոհանոցի համար գիւղից 1—5 բաթման իւղ, 2—20 ոչխար, մի եզ, 1—5 բաթման բուրդ և այլն։

**Ջորքը.**—Մելիքների ժամանակ կանոնաւոր, մշտական զօրք չկար, այլ հարկաւոր դէպքում հաւաքւում էին և ապա կրկին ցրւում և պարապում իրենց գործերով։

Ամեն մի տուն պարտաւորուած է եղել մելիքի պահանջած միջոցին մի զինուոր տալ. իսկ երբ դրութիւնը ծանր էր լինում, զինւում էին բոլոր զէնք կրելու ընդունակ մարդիկը։ Զինուորը ինքն էր հայթայթում իւր համար զէնքեր և ձի, իսկ եթէ նա բոլորովին աղքատ էր լինում՝ մելիքն էր տալիս։ Առանձին զինուորական համազգեստ չկար։ Զինավարժութեան համար յատուկ օրեր և ծառայութիւն չէր նշանակուած, բայց կային որոշեալ հանդէսներ, երբ երիտասարդ զինուորները մելիքի և ժողովրդի ներկայութեամբ վարժւում էին հրացանաձգութեան և ձիարշաւի մէջ։ Այսպէս՝ հարսանիքներին ձիարշաւներ էին կազմւում, բացի սրանից, երբ նորապսակները եկեղեցուց վերադառնում էին նորահարսի տունը՝ մի բարձր ծառից բարակ թելով մի խնձոր էին քաշ տալիս, և մակարները աշխատում էին գնտակով վայր ձգել խնձորը և ով յաջողացնում էր՝ մի զոյգ գուլպա կամ մի այլ բան նուէր էր ստանում։ Մելիքը ինքը ներկայ էր գտնւում այս խաղերին։

---

[1]) Ծաւալի չափ—10 պուդ ցորեն պարունակող։

Digitized by Google

Մեծ պասի առաջին օրը բոլոր գիւղացիները ձի էին հեծնում և դաւուլ զուռնի առաջնորդութեամբ գալիս մելիքին առնում և գնում մի հարթ տեղ ձիարշաւի։ Յետոյ խմբով շրջում էին գիւղում. նշանաւոր տներից «խոնչա» (ուտելեղէն և գինի) էին դուրս բերում նրանց առաջ և նրանց հիւրասիրում։ Վերջը մելիքին տանում էին իրանց տունը, անմիջապէս մելիքը հրամայում էր իւր ծառաներին գինի տալ բոլորին և սրանք. «Մելիքի մին օրը հազար» բղաւելով խմում էին և ուրախ, երջանիկ ցրւում տները։

Զինուորները ռոճիկ չէին ստանում, միայն խլաձ աւարը, մելիքի բաժինը վերցնելուց յետոյ, իրենց մէջ բաժանում էին։

Բայց մելիքները մօտ 300 զինուոր միշտ պահում էին իրենց մօտ որպէս թիկնապահներ, որոնց կերակրում և թոշակ էին տալիս։

Մելիքները իրենք էին համարւում զօրքի ընդհանուր հրամանատարը, բայց իւրաքանչիւր խումբ ունէր իւր ղեֆշի. այս պաշտօնը ժառանգական էր՝ երբեմն էլ մելիքը տալիս էր այդ պաշտօնը իւր քաջութեամբ աչքի ընկնողին *)։

Զինուորների թիւը որոշ յայտնի չէ. Մելիք Աբով Գ. 1000 զինուոր ունէր, իսկ Մելիք Յովսէփ Ա. և Մելիք Բէկլարը գուցէ՝ 3—4000։

Պատերազմի ժամանակ որոշեալ կարգ ու կանոն չկար. մելիքը ընկնում էր առաջ, նրան հետևում էր զօրքը։

Զինուորների սպառազինութիւնը կազմում էին—դաշոյն, թուր և հրացան։

Հրացանը շինում էին Գիւլիստանի բերդում, իսկ վառօդը՝ Երիշէնում, ուր կայ շորա (селитра). վառօդ պատրաստելը մելիքի արտօնութիւնն էր կազմում։

Դատ.—Դատավարութեան իրաւունքը պատկանում էր մելիքին և նրա հաստատած տանուտէրին։ Ծանր յանցանքները ինքը մելիքն էր քննում, իսկ թեթևները՝ տանուտէրները։ Այս վերջիններիս վճիռներից դժգոհը կարող էր բողոքել մելիքին, որի վճիռը վերջնական էր։ Սակայն լինում էին դէպքեր, որ մելիքի վճռից դժգոհ հպատակները, նրան թշնամանալով՝ անցնում էին թշնամի մելիքի կողմը և կամ դիմում խաներին և զանազան բամբասանքներ և լրտեսութիւններ անում իրանց մելիքի դէմ։

Կատարողական իշխանութիւնը դարձեալ կենդրոնանում էր տանուտիրոջ և մանաւանդ մելիքի ձեռքում։ Երբ մի վճիռ արձակուեց՝

*) Акты Арх. ком. Т. III. № 874. եր. 633.

Digitized by Google

տանուտէրը հրամայում էր իւր գզիրին, իսկ մելիքը իւր դռանը կանգնած չիսունի չափ ծառաներից մինին, որ դատախազի հետ գնայ և վճիռը գործադրէ։ Վճիռը արձանագրուած չէր յանձնւում ծառային, այլ միայն մի թղթի վրայ խփուած մելիքի կնիքը և կամ նրա համրիչը։ Վճռի էութիւնը բերանացի բացատրում էին ծառային, նա էլ դատապարտուածին, և իբր հաստատութիւն իւր ասածին՝ ցոյց էր տալիս մելիքի կնիքը կամ համրիչը։ Թէև մելիքը, ինչպէս և տանուտէրը, իւր դատավարութեան համար վարձ չէր պահանջում, բայց ծառան պոկում էր ինչքան կարող էր թէ մէկ և թէ միւս կողմից։

Դատավարութեան համար որոշ օրէնքներ կամ օրէնսգիրք չըկար. մելիքները ղեկավարում էին սովորութեան իրաւունքով և իրանց բարեհայեցողութեամբ։

Դատավարութեան համար յատուկ շէնք չկար. դատը տեսնում էր մելիքի տան բակում կամ ապարանքի սենեակներից մէկում։ Շատ անգամ պատահում էր, որ մելիքը փողոցում, հրապարակում էլ դատ էր կտրում։

Նոյնպէս չկային դատավարութեան յատուկ օրեր. մելիքը դատ էր կտրում՝ երբ ցանկանում էր, բայց առաւելապէս նա դատի էր նստում կիրակի օրերը, երբ գործից ազատ լինելով՝ ուրիշ գիւղերից էլ գալիս էին գանգատուելու։

Սովորաբար գանգատաւորներից պահանջում էին հաստատել իրենց ասածները վկաներով և կամ երդումով։ Ընդհանրապէս երդման հետևեալ ձևերն էին գործ դրւում.

ա. Եկեղեցում՝ կամ մի սրբի առաջ գանգատաւորը մի գոյգ մոմ էր վառում, և բռնելով մեղադրուածի կռնից, մօտեցնում էր մոմերին, որ փչէ հանգցնէ։ Եթէ հանգցնէր՝ անմեղ էր համարւում։

բ. Գանգատաւորը մի վառ ածուխ էր տալիս մեղադրուածին, և սա վերան ջուր ածելով ասում էր. Այսպէս անցնիմ՝ թէ որ արել եմ։

Երբեմն առաջաւոր մարդիկն էին երդւում իրենց ստորադրուածների փոխարէն։

Ընդհանրապէս՝ երդուելը շատ ծանր էր համարւում և ոչ միայն շատ հազիւ էին պատահում սուտ երդուողներ, այլ և երբեմն յանցանքը յանձն էին առնում, որպէսզի չերդուին։

Մելիքները հետևեալ պատիժներն էին տալիս.

ա. Ծեծ.—Սա ամենասովորական և ամենագործածական պատիժն էր։—Երբեմն ինքը մելիքն էր ծեծում, բայց սովորաբար ծառաներին էր հրամայում այս պատիժը գործադրել։ Շատ անգամ էլ պառկեցնում էին և բարակ ճիպոտներով ծեծում։ Նաև կապում էին ծառից և այնպէս ծեծում. շատ անգամ էլ այդպէս կապուած 2—3 օր պահում էին։

Digitized by Google

բ. Տուգանք.—Տուգանք էին վերցնում մելիքներն իրենց օգտին։

գ. Բանտարկութիւն. Յատուկ բանտ սկզբներում չկար. մելիքի ախոռը, փայտատունը, իսկ աւելի ուշ, մի որոշ սենեակ ծառայում էր որպէս բանտ։

դ. Անուանարկութիւն. Այս պատժին գլխաւորապէս ենթարկւում էին անառակ կանայք. որոնց իշի վրայ նստացնում, իշի պոչը ձեռը տալիս, երեսին մուր քսում և շրջեցնում էին գիւղով։ Աւելի փոքր յանցաւորների երեսին թրիք էին քսում և գիւղով ման ածում։

ե. Դամղա խփել.—Մերկացնում էին նստատեղին և մելիքի կնիքը խփում։

զ. Այրումն. Փլաւ-քամին կրակի մէջ կարմրացնում էին և դնում դատապարտուածի գլխին, որ անմիջապէս մեռնում էր։ Այսպէս է պատժել Մելիք Բէկլարը Հովիւ Հախվերդուն։

է. Կախ-տալ.—Առանձին կախաղան չկար. սովորաբար ծառերից էին կախ տալիս. այսպէս Մելիք Աբով Գ. կախ է տուել Փանոսանց Հայրապետին Բոլնխում, որ չէր ուզում իրեն հնազանդել։

ը. Ձիու պոչից կապել եւ քաշ տալ։ Այս պատժին ենթարկւում էին անուղղելի պոռնիկ կանայք. այսպէս Մելիք Յովսէփ Ա. նոյն պատժով սպանել է պոռնիկ Մարիամին։

## ՄԵԼԻՔՆԵՐԻ ԿԵԱՆՔԸ

Մելիքները առաւօտները շատ վաղ էին վեր կենում, մի բաժակ օղի խմում և մի քանի թերխորով ձու ուտում։ Անմիջապէս փոքրիկ, 12—15 տարեկան մանկաւիկը, գեղեցիկ հագնուած և ոսկեջրած ունելին գօտկում խրած՝ մատուցանում էր ղայլանը, և ինքը մի քիչ հեռու կանգնում, որ ղայլանը հանգչելու դէպքում կրակ բերէ։ Փամը մօտ 10-ին մելիքը նախաճաշում էր։

Նախաճաշիկից յետոյ մելիքը դատ էր կտրում։

Կէսօրից քիչ անց մելիքը ճաշում էր։ Սովորաբար մելիքի համար առանձին էին ճաշ պատրաստում։ Իսկ գանգատաւորների, ուրիշ գիւղերից եկած գիւղացիների և հասարակ հիւրերի համար միշտ առատութեամբ ճաշ էր պատրաստւում խրխանայում, որ մելիքի տնից մի քիչ հեռու էր գտնւում և ուր ամէն մի եկուոր կարող էր ճաշել։ Սովորաբար մելիքները հիւրասէր էին և նրանց սեղանը ամենքի համար բաց էր. մի գանգատաւոր, մի գիւղացի չէր կարող գալ մելիքի տունը՝ և առանց հաց ուտելու վերադառնալ։

Ճաշին մելիքին մատուցանում էին մի քանի տեսակ կերակուրներ, բայց առաւելապէս փլաւ և գոմշի թափան։ Փլաւի համար գործ էին ածում արծաթեայ սկուտեղներ, նոյնպիսի ծաղկոցներով։ Սովո-

Digitized by Google

բաբար ուտում էին մէկ ամանից դանակի և պատառաքաղի գործածութիւնը անծանօթ էր, կար միայն գդալ։

Սաղէ կոչուած մի ծառայ մելիքի առաջը կանգնած գինի էր լցնում և մատուցանում։

Բաժակը սովորաբար մի հատ էր լինում, և ձեռքից ձեռք անցնում։ Հիւրեր եղած միջոցին առաջին բաժակը ինքը մելիքն էր խմում։

Գինի խմելիս հպատակները բարեմաղթութիւն էին անում, ասելով. «Մելիքի մին օրը հազար»։ Միևնոյն դարձուածքը գործ էին ածում և այն բոլոր դէպքերում՝ երբ կամենում էին իրենց գոհունակութիւնը յայտնել։ Զատ անգամ մելիքի յատուկ աշուղական խումբը զուարճացնում էր սեղանակիցներին։

Ճաշից յետոյ մելիքը փոքր ինչ քնում էր և յետոյ կամ գնում զբօսնելու, կամ կրկին դատ կտրում և կամ որսի գնում։

Մելիքի անցնելիս բոլոր տեսնողները ոտքի էին կանգնում և խոնարհութեամբ բարևում նրան։ Մելիքը սիրով ընդունում էր նրանց բարևը և հետները խօսելիս նրանց Խոնէ (երեխայք) անուանում. թէկուզ նրանք իրենից շատ հասակաւոր լինէին։ Նա, որպէս մելիք, իւր բոլոր հպատակների հայրն էր համարւում։

Երեկոները մելիքը անց էր կացնում իւր մտերիմների հետ. բաւական վաղ ընթրում էր, ապա մի քիչ զուարճանում Նարդէ և այլ խաղերով և ապա պառկում քնելու։

Մելիքների ամենամեծ զուարճութիւնը որսորդութիւնն էր։ Նրանք շատ յաճախ գնում էին որսի, բազէներով և որսական շներով, մի քանի կտրիճների ուղեկցութեամբ։

Կիրակի օրերը մելիքները եկեղեցի էին գնում և կանգնում իրանց յատուկ տեղը, որտեղ մի գորգ էր լինում փռուած։

Մելիքները մասնակցում էին ժողովրդի ուրախութեան և տրխրութեան։ Հարսանիքի ժամանակ հարսնքատէրը դաւուլ զուռնով գալիս էր մելիքի դուռը, մի ոչխար կամ գառ, 2—3 հատ հաց, մի շիշ գինի նուէր բերում և խնդրում ներկայ գտնուիլ հարսանիքին։

Մելիքը դրամ էր նուիրում հաց բերողին, որ հացթուխի կողմից էր լինում։ Յետոյ դաւուլ զուռնի առաջնորդութեամբ գնում էին հարսնատուն, ուր բոլոր հանդիսականները վեր էին կենում և թագուորը գալիս համբուրում էր մելիքի ձեռքը։ Պարզ է, որ առաջին տեղը, առաջին բաժինը, առաջին բաժակը սրան էր պատկանում։

Ոչ միայն առաջին բաժակը նրա կենացն էին խմում, այլ և բոլոր միւս կենացների ժամանակ կրկնում էին «Մելիքի մին օրը հազար» դարձուածքը։

Երբ նորապսակները պատրաստում էին հարսի տնից փեսայի

տուն գնալ, նախ և առաջ դաւով զուռնի առաջնորդութեամբ գը-նում էին մելիքի տունը և դռան առաջ կանգնում։ Մելիքը հանդի-սաւոր կերպով դուրս էր գալիս, մակարները ուրախութեան աղաղակ արձակում, նորապսակները համբուրում էին մելիքի ձեռքը և սա մի «խալաթ» (նուէր) էր տալիս նրանց։

Նաւասարդին բոլոր ժողովուրդը խնձոր, ընկոյզ, գինի առած՝ գալիս էր շնորհաւորելու մելիքի նոր տարին և հիւրասիրւում մելի-քից ճաշով։ Նոյնն էր լինում և միւս տօներին, բայց աւելի պարզ կերպով։

Ինչպէս որ մելիքը մասնակից էր ժողովրդի ուրախութեան և տխրութեան՝ այնպէս էլ ժողովուրդը բաժանում էր մելիքի ուրա-խութիւնն ու տխրութիւնը։ Երբ մելիքը պսակում էր իւր որդուն կամ աղջկան՝ ամբողջ ժողովուրդը եօթն օր եօթ գիշեր քէֆ էր ա-նում և բազմաթիւ ոչխարներ ու գառներ նուէր բերում։

Երբ մելիքը մեռնում էր՝ նրան դնում էին անկողնի մէջ և ձեռքերը վերմակի վրայ խաչում. ապա բոլոր գիւղերի բնակիչները գալիս էին և համբուրում մելիքի ձեռքը։ Յետոյ արդէն մելիքին պա-տանքում էին և բոլորի յուղարկաւորութեամբ մեծ շքով թաղում։ Երբ գանձ էին ասում՝ բոլորը աշխատում էին որքան կարելի է շատ խաչահամբոյր ձգել, կամենալով սրանով արտայայտել իրենց տածած սէրն ու յարգանքը դէպի հանգուցեալ մելիքը։ Այնուհետև մի առժամանակ սուգ էին պահում։ Ամբողջ մի տարուայ ընթացքում հարսա-նիքներին դաւուլ զուռնա չէին ածում։

Մեռած մելիքի քառասունքը տալուց յետոյ մելիքի ժառանգը հրաւէր էր անում և ընդունում շնորհաւորութիւններ մելիքական դահը ժառանգելու առիթով։

Մելիքների կանայք.—Մելիքները կին էին առնում սովորա-բար ուրիշ մելիքների աղջիկներ։ Շատ հազիւ էր պատահում, որ մե-լիքներն ամուսնանային իրանց հպատակներից մինի աղջկայ հետ։ Եւ նոյն իսկ ժողովուրդը վատ աչքով էր նայում դրա վրայ։ Այսպէս, երբ Մելիք Աբով Գ-ը առաջին կնոջ մահից յետոյ, որ Մելիք Թոստոմի դուստրն էր, այդպիսի մի քայլ արաւ՝ ժողովուրդը նրան մեղադրեց, թէ նա ամուսնացաւ իւր [illegible] (հաւ պահողի) աղջկայ հետ, ուստի և սերունդը փչացաւ և այլ որդիներ այլևս չեղան։ Նոյնպէս հազիւ էր պատահում, որ մելիքին աղջիկ տային իրենց հպատակներից մինին։ Շատ շատ՝ նրանց իւզբաշին կարող էր այս բախտին արժանանալ։

Մելիքի կանայք իրենց հպատակներից մտաւորապէս շատ բար-ձրը չէին, և նրանց նման հեռու էին պահում իրենց տղամարդկան-ցից. տան մէջ հարսնութիւն էին անում, թէև աւելի կարճ ժամա-

Digitized by Google

նակ։ Հագնում էին նոյն ժողովրդական տարազով, միայն աւելի թանգագին կտորներից։ Բայց Մելիք Աբով Գ-ի և Մելիք Յովսէփ Բ-ի կանայք Թիֆլիսի վրացնակ շորեր ունէին։

Սրանք միքանի աղախին և ծծմայր ունէին, և տան կառավարութեամբ չէին զբաղւում. միայն մետաքսից թէշիկով թել էին մանում, ասղնագործում, քսակ և այլ ձեռագործներ շինում։

Ժողովրդի կանանց հետ էլ այնքան մօտ յարաբերութիւն չունէին, միշտ իրենց բարձր էին պահում։ Ծօներին գիւղացի կանայք խնձոր, մրգեր առած գալիս էին նրանց շնորհաւորելու։ Երբ մելիքի կինը անցնում էր՝ բոլոր կանայք և տղամարդիկ ոտքի էին կանգնում։

Մելիքների որդոց դաստիարակութիւնը շատ աննախանձելի դրութեան մէջ էր։ Քանի փոքր էին ծծմօր և աղախինների հսկողութեան ներքոյ էին լինում, երբ փոքր ինչ մեծանում էին՝ տան ծառաներն էին դառնում նրանց դաստիարակները, որոնք իրենց հետ զբօսանքի էին տանում, ձի նստել, հրացան ձգել էին սովորեցնում։ Միմիայն Մելիք-Բէգլար Բ-ը գրագէտ է եղել, իսկ մնացեալները բոլորն էլ անգրագէտ են եղել։ Մելիքներն եթէ շատ որդի էին ունենում՝ երբեմն կրտսերներից մինին ուղարկում էին Էջմիածին կամ Գանձասար կարդալու, որ հոգևորական դառնայ. այսպէս՝ մելիք Ֆրիդոնը իւր Դաւիթ որդուն Էջմիածին էր ուղարկել կարդալու, որտեղից նա իւր ուսուցիչ եպիսկոպոսի հետ անցել է Հնդկաստան և այնտեղ մնացել։ Երբեմն էլ պատահում էր, որ մելիքը իւր որդիներից մինին պատանդ էր տալիս կամ պարսից շահին և կամ Ղուշուայ խանին, ուր նրանք սովորում էին պարսկերէն գրել-կարդալ։ Այսպէս՝ Մելիք Ֆրիդոնի որդի Ղամիր-խան բէկը Իբրահիմ-խանի մօտ պատանդ է եղել և սովորել պարսկերէն։

Մելիքներից այդ ժամանակներում քաջութիւն էր պահանջում, սուր խաղացնել, հրացան ձգել. իսկ այս հմտութիւնները նրանք կատարելապէս ունէին։

Զգեստ.—Մելիքների զգեստը ժողովրդի զգեստի տարազից չէր տարբերւում, միայն կարւում էր աւելի ճաշակով և աւելի թանգագին կտորներից։ Նրանք ունէին իրենց յատուկ դերձակը, որ ամբողջ Իգիրմի-դորդում յայտնի էր լինում։ Այսպէս օր. մելիք Յովսէփ Բ. դերձակը Պարիս գիւղից էր, Մուսի անունով։

Մելիքները միաժամանակ շատ ձեռք զգեստներ չէին ունենում և լիաւուրը դսնաւուրից իւր տարազով չէր տարբերւում, միայն աւելի հասարակ կտորից էր կարուած լինում։ Դսնաւուրը, ամենալայն շորերը, մելիքներն առաւելապէս հագնում էին պատերազմ գնալիս, ասելով եթէ կեանքս գնալու է, թող շորերս էլ գնան։

Digitized by Google

**ՄԵԼԻՔ ՓՐԻԴՈՆԻ (ՈՐԴԻ ԲԷԿԼԱՐ-ԲԷԿ).**
**(Միակ պատկերը, որ մնացել է այս մելիքների տոհմից).**

Մելիքների զգեստը բաղկանում էր հետևեալ կտորներից՝

—Չապիկ.— որ կարում էին նաշուր կոչուած կապտաւուն կըտաւից։ Սա կարճ էր լինում, և կուրծքը կոճկւում էր ճախ։ Թևի տակ։

Փոխան.—Կարւում էր սպիտակ կտաւից կամ կարմիր ալըշից. խոնճանով կապւում էր շապկի տակից։

Digitized by Google

Ձալվար.—Կարում էր գ-ա-գէ-ը կոչուած կտորից, որ պատրաստում էր ուղտի մազից։ Փողքերը բաւական լայն էին լինում. Վերևի մասում մի քիչ լայնութեան կարմիր մետաքսեայ երկձալ ձըտոր էր կարում, որ կոչում էր ջ-ա-ֆ. սրա միջով անցնում էր մետաքսից գործած գեղեցիկ փնջերով խոնճանը, որ կապում էր առջևից։

Ձալուարը հագնում էին փոխանի վրայից և փողքերը բաց թողնում. իսկ փոխանի փեղկերը դնում էին գուլպի մէջ և վրայից դոլախ կապում։ Սա 6—8 սանտիմետր լայնութեան և կէս մետր երկարութեան երկկձալ կտոր էր, որի ծայրին ամրացրած էր ժապաւէն։

Դոշլուղ.—Երիտասարդներինը կարմիր, հասակաւորներինը՝ մանիշակագոյն մետաքսեայ կտորից էր կարում։ Սա մի քառանկիւնի կըտոր էր, որի ծայրերից կարուած ժապաւէնները հանգուստում էին երկուսը վզի և երկուսը մէջքի վրայ։

Ձմեռուայ դոշլուղը բամբակած էր լինում։ Երիտասարդների դոշլուղը մետաքսեայ թելերով ասեղնագործած էր լինում։ Վերջի ժամանակներում դոշլուղ այլևս չէին գործածում, որովհետև արխալուխի կուրծքը բաց չէին թողնում։

Արխալուղ.—Հագնում էին դոշլուղի վրայ. կարում էին մետաքսեայ կտորից, երիտասարդինը՝ կարմիր, հասակաւորներինը՝ մանիշակագոյն։ Փէշերը կարճ էր լինում, կուրծքը եռանկիւնաձև բաց և պորտի մօտ երեք ղայթանի կոճակներով կոճկւում։ Կրծքի եռանկիւնաձև բացուածքը տակից ծածկւում էր դոշլուղով։ Վերջերը արխալուղները կարում էին առանց կուրծքի բացուածքի, ուստի և դոշլուղ այլևս չէին գործածում։ Արխալուղի աստառի վրայից, եզրերին, մի քիչ ներսով, այնպէս որ չէր երևում, երկու մատ լայնութեան կտորէ քէօպա էր կարում։

Արխալուղի վրայ կապում էին ոսկեայ ղոշէ, իսկ աւելի վաղ՝ գօտի։

Չուխա.—Կարում էր բրդէ կտորից, մէջքի վրայ բուզմայով սեղմում էր և իջնում մինչև ծնկները. կուրծքը եռանկիւնաձև բացուած էր և գօտկատեղի մօտ երեք ղայթանի կոճկով կարող էր կոճկուել, բայց սովորաբար չէին կոճկում։ Թևքերը կարճ էին։

Քիւլանա.—Սա սամոյր մուշտակ էր, քիրմաշալ երեսով, որ ձըմեռը հագնում էին արխալուղի վրայից, չուխայի փոխարէն։

Ոսկերիճ.—Հագնում էին՝ գուլպա և չոռ-ա, իսկ ձի նստելիս՝ չոքէ.

Գլխներիճ.—Ծածկում էին ֆ-ա-ղոյ սև երկար փոփոխ։

Քնելիս գլխները ծածկում էին գէ-ա-գէ-ը, որ կարում էր գառի սպիտակ մորթից, նոյնպիսի աստառով։

Ձեռքեր.—Մելիքները կրում էին ձախ կողքին ղ-ա թուր, առ-

Digitized by Google

ջևից՝ դաշոյն, ձախ ուսովը ձգում էին շղ, վառօդաման, որից վառօդ էին ածում հրացանի կայծառի մէջ։ Աջ ուսով ձգում էին ղամբ—փամփուշտաման, որի մէջ շարում էին վառօդ պարունակող փամփուշտները։

Մելիքին հետևում էր հրացանակիրը՝ տանելով իւր հետ 1—3 հրացան մելիքի համար։

Մելիքների կեանքը.—Բոլոր մելիքները, մանաւանդ անգրագէտները, գործ են ածել կնիք, որ ներկայացնում էր մի կեռ թուր, շուրջը գրուած. Քսի ծառայ մելիք (այս ինչ)։

Ըստ դէպքերում կնիքի փոխարէն գործ են ածել համրիչը։ Այսպէս օր. պսակի գրաւոր, կնքուած հրաման տալու փոխարէն մելիքը բաւականացել է միայն իւր համրիչը տալով, որ ներկայացրել են քահանային և սա կատարել է պսակը։ Մելիքի ծառաները մելիքի հրամանները կատարելիս նախ ցոյց են տուել նրա համրիչը և կամ մի ուրիշ իրը, օր. թաշկինակը և այլն։

Ապարանք.—Գիւլիստանի մելիքների պալատը, որ գտնւում է Հոռեկայ լեռան ստորոտում, բաղկացած է չորս սենեակներից, մի կամարակապ սրահից և ամբողջապէս շինուած է սրբատաշ քարով։ Չորս սենեակներն էլ մի շարքումն են։ Առաստաղները գմբէթաձև են։ Վերջին երկու սենեակների գմբէթաձև առաստաղները վերջանում են բոլորակ ծակերով։ Այս սենեակների անկիւններում, պատերի մէջ շինուած են ծալքեր։ Ամբողջ շինութիւնը զուրկ է պատուհաններից. դռները ցած են և լայն։ Սրահի երկարութիւնը 40 մետր է և զարդարուած է 7 գեղեցիկ սիւներով։

Սրանց կից շինուած են խոհանոցներ և մի քանի մութ սենեակներ և մի փոքրիկ ախոռ, ուր միշտ մի ձի պահւում էր, վտանգաւոր ժամանակ մելիքին փախցնելու։ Գլխաւոր շինութեան դիմացը կայ մի այլ շինութիւն, որի աջ ծայրում գտնւում է մարտկոցի աւերակը։ Այս շինութիւններից 25—30 քայլ դէպի հիւսիս-արևմուտք գտնւում է մի այլ շինութիւն 3 սենեակից բաղկացած, որոնցից երկուսի առջևի պատերը փլած են. երրորդ սենեակի դռան ճակատին արձանագրուած է.

«Յիշատակ է Ոհան Բաբուն մերէն Մելիք Թամրազ Ռձԝ (1701). Թէ այս և թէ վերոյիշեալ միւս երկու շինութիւնները շրջապատուած են պարիսպներով, որոնց մի մասը դեռ կանգուն է։

Ամրոցը.—Մելիքներն ունէին իրենց տոհմական ապրոցը, ուր ապաստանում էին վտանգ սպառնալիս և ուր խաղաղ ժամանակ մընում էին մի քանի տասնեակ զինուորներից բաղկացած մի փոքրիկ գունտ։ Այս ամրոցը կոչւում է Գիւլիստան-բերդ և այժմեան աշխար-

Digitized by Google

հագրական բաժանմամբ ընկնում է Ջիւանշիրի գաւառում *)։

**Մելիքների գերեզմանատունը.**—Մելիքներն ունէին տոհմական գերեզմանատուն, որ գտնուում է Հոռեկայ վանքի **) հիւսիսային կողմում. գերեզմանները միմեանց շատ մօտ են գտնուում և ունին 2,13 մետր (1 սաժէն) երկարութեան, 1 մետր (1 արշ. 6 վերշոկ) լայնութեան և 0,72—1,50 մետր (1 արշ.—2 արշ.) բարձրութեան քառանկիւնի միակտուր տապանաքարեր, որոնք եզրափակուած են գեղեցիկ, նուրբ նշխերով։ Նորագոյնների վրայ Բլիէֆ դուրս է փորուած կեռ թուր—Մելիք Բէկլարեանների տոհմադրոշմը։ Միքանի ուռենիներ ստուեր են սփռում գերեզմանների վրայ։

Հին տապանագրերը եղծուած են և շատ դժուարութեամբ են կարդացուում. ես կարողացայ կարդալ հետևեալները.

Այս է տապան Մելիք Բակլարի ՌՃԿԹ։

---

*) Այս բերդի հիմնարկութիւնը աւանդութիւնը վերագրում է մի աղջկայ, որը և իբր արձանագրել է մի քարի վրայ, թէ ես բանուորներիս համար օրական երկու ջուալ աղ գործածելով, կարողացայ միայն այս բերդը շինել, ինձանից յետոյ ուրիշները ինչ պիտի կարողանան շինել։

Գիւլիստան-բերդը գտնուում է համանուն գիւղից հազիւ չորս վերստ հեռու, մի բարձր, սեպացած քարաժայռի վրայ, որի երեք կողմից հոսում է Խնճայ-չայը և նրան հրուանդանի դիրք տալիս։ Քառաժայրի երեք կողերը սաստիկ ժայռոտ և ուղղահայեաց են, այնպէս որ ոչ մի ճանապարհ չի կարելի գտնել, իսկ հիւսիսային կողմը փոքր ինչ թեք է և այստեղից է բարձրանում միակ, նեղ ճանապարհը. որի համար տեղ-տեղ հարկ է եղել ժայռերի կրծքերը տաշել։ Քարաժայռի տափարակ գագաթին կայ մի հաստ պարիսպ, չորս աշտ սրակներով ամրապնդուած, իսկ հիւսիսային կողմում մի քիչ ներքևից կայ և մի երկրորդ պարիսպ, որ գնալով բնդհարւում է միւս կողերի ժայռերին։ Եւ որովհետև միակ մատչելի փէշը այս կողմն է եղել. ուստի և սրան կից բլրակի վրայ կայ չորս աշտարականի մի փոքրիկ մարտկոց։ Բերդի մէջ դեռ մինչև այժմ էլ մնում են մի և երկյարկանի տների և մի եկեղեցու աւերակներ։ Հարաւային կողմում մի բաւական լայն և բարձր ստորերկրեայ անցք իջնում է մինչև գետի ափը, որտեղով պաշարման միջոցներին իշով ջուր են կրել։ Բերդի հիւսիսային ստորոտում, մարտկոցի բլրի լանջին կայ մի մեծ մեճետի աւերակ, մօտը խանութների, տների հետքեր։ Բերդի շուրջը, բլրակների վրայ կան փոքրիկ դիտանոցներ։

**) Հոռեկայ վանքը գտնուում է Թալիշ գիւղի արևմտեան կողմում, մի լեռան լանջին, որտեղից երևում է նոյն, Ջիւանշիր, գաւառի դաշտերը, Կուր և Թարթար գետերը։ Վանքը մի փոքրիկ, քառանկիւնի, Թաղակապ շինութիւն է, հասարակ քարով շինուած, և ունի փոքր ինչ աւելի մեծ գաւիթ։ Ներսը շատ հասարակ է, միայն պատերի մէջ կան շատ գեղեցիկ, հին տապանաքարեր, որ իբր քար գործ է ածուած։ Գաւթի մէջ կան շատ գերեզմաններ։ Վանքը շինել է ոմն տէր Յովհաննէս՝ ՉԻԸ (1279) թուին, իսկ գաւիթը հինգ տարի յետոյ։

Վանքի արևմտկան կողմում կան միաբանների խցերի աւերակներ։

Այժմ վանքը բոլորովին անխնամ է թողնուած։

Digitized by Google

Այս է տապան Հուռումսին,
Որ է կողակից Մելիք Ապօվին թվ. ՌՄԶ թ.
Այս է տապան մելիք Փրիդոնին,
Ժառանգ մելիք Բէկլարեանին,
Անպատմելի է մարդոց պետ զմահին
Քանզի զայսպիսիս սակաւ պատահին։
Ոչ Այ հրամանի եւ ոչ ըստ կամաց
Թողի աշխարհիս քառասուն ամաց
ի 6 փեբրուարի 1808 ամի Փրկչին։
Այս է տապան մելիք Յովսէփին,
Որ է որդի մելիք Փրիդոնին,
Տիրապետող աշխարհային,
Ղարաբաղու մեծ իշխանին։
Մեծ իշխան էի եւ յոյժ փառաւոր
Ժողովուրդս բազում եւ շատ ծառաւոր,
Բազումս գործող եւ աշխատաւոր
Ունայն էր զամէն աշխարհս անցաւոր
Թվին 1843 յունուարի 20 ՌՄՂԲ։

## ՄԵԼԻՔՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ

Մելիք-Բէկլարեանները թողել են բաւական թուով ժառանգներ։ Սրանցից միքանիսը շալուանակում են ապրել իրենց տոհմական գիւղերում և կառավարել իրենց կալուածները, միւսները վերաբնակել են Գանձակ, Թիֆլիս, Կալկաթա և այլ քաղաքներ, ուր կամ արքունի ծառայութեան են մտած և կամ վարում են մասնաւոր պաշտօններ։

Գիւղում մնացողներն ընդհանրապէս, և սրանցից աւելի զարգացածները մասնաւորապէս *), թէև պաշտօնապէս զրկուած են նախնի մելիքական ընդարձակ իրաւունքներից, բայց և այնպէս՝ օգտւում են գրեթէ այդ միևնոյն իրաւունքներով։ Այսպէս՝ թէև ոչ տիրապետող, բայց որպէս հողատէր, նրանք, այս բէկերը, տասանորդ են վերցնում երկրի բոլոր բերքերից և երեսնական կոպէկ ստանում այն ամէն դեսեատին հողի համար, որ կառավարութեան միջամտութեամբ իրենց կալուածքներից բաշխուած է գիւղացիներին։ Երկրորդ՝ թէպէտ ոչ դատաւոր, բայց որպէս գիւղի ամենաազդեցիկ և հեղինակաւոր մարդ, դատ են կտրում, կամ գիւղական դատաւորների և տա-

*) Ինչպէս օրինակ Սարդիս Մելիք Բէկլարեանը, որ աւարտել է Մոսկուայի Պետրովկայա ակադեմիան, որա որդին՝ Դաւիթը, որ գիւղատնտեսութիւն է ուսել արտասահմանում։ Նշանաւոր է նոյնպէս սրա դուստրը, որ բժշկուհի է։

Digitized by Google

նուտիրոջ վրայ ճնշում գործելով՝ դատը իրենց կամեցածի պէս վճռել տալիս։ Գիւղացիները այս բէկերին գիւղական պաշտօնեաներից աւելի իւելացի և աւելի հեղինակաւոր անձնաւորութիւն համարելով, սիրով նրանց են դիմում և խնդրում վերջացնել իրենց դատը։ Պատահում են դէպքեր, երբ բէկի ախոռը մի երկու օր իբր բանտ է ծառայում յանցաւորներին։ Երրորդ՝ թէպէտ այս բէկերը գիւղական պաշտօնեաներին ոչ նշանակող և ոչ հաստատող են, սակայն նրանց ընտրութեան և հաստատութեան խնդրում բաւական մեծ դեր են խաղում և հաստատութիւնից յետոյ էլ միշտ կախման դրութեան մէջ պահում նրանց։ Եւ այս՝ որովհետև այդ պաշտօնեաները նախ որ միշտ քաղցրացնում են իրենց բերանները բէկերի տանը, նրանց հետ ուտել խմելով, երկրորդ՝ միշտ յոյս ունին նրանցից շահուելու, երրորդ՝ դիտեն, որ դրանք ոստիկանի և գաւառապետի հետ մօտիկ յարաբերութիւն ունենալով, կարող են վնասել իրենց և կամ յայտնել իրենց կատարած գեղծումների մասին։ Չորրորդ՝ նոյն կախման դրութեան մէջ է և քահանան, որ պաշտօն է մատուցանում իրենց, բէկերի և կամ սրանց նախնեաց շինած եկեղեցում։ Սրա ընտրութիւնն էլ եթէ ոչ բոլորովին, գոնէ մեծ մասամբ կախուած է բէկերից. բաւական է, որ սրանք միքանի անգամ գովեն քահանացուին և ժողովուրդը անմիջապէս նրան կընտրէ, առաջնորդն էլ չի մերժիլ բէկերի միջամտութիւնը, որովհետև շատ բաներում նրանք կարող են օգտաւէտ լինել թէ եկեղեցիներ շինելիս կամ վերանորոգելիս և թէ ժողովրդական մի որև է աղէտի ժամանակ։

Բէկերը մեծ պատիւ և համակրանք են վայելում նաև ժողովրդից։ Նրանք անցնելիս բոլորը, կին թէ տղամարդ, ծեր թէ երիտասարդ, նստած տեղերից ոտքի են կանգնում և շատ խորը գլուխ տալիս։ Նաւասարդին և միւս տոներին, խնձորներ, գառներ առած գալիս են բէկերի տօնը շնորհաւորելու։ Հարսանիքներին հրաւիրում են նրանց և առաջին տեղը, առաջին բաժինը նրանց տալիս և առաջին բաժակը նրանց կենացը նուիրում։ Դեռ մինչև այժմ էլ ժողովուրդը պահպանում է մելիքների ժամանակ գործածուած դարձուածքը՝ «Մելիքի մին orը հuզար», միայն մելիքի փոխարէն ասում է «բէկի»։

Սակայն պէտք է ասել, որ բէկերը նախկին մելիքների նման որոշ պարտականութիւն, որոշ զբաղմունք չունենալով՝ իրենց կեանքը անց են կացնում անգործութեան մէջ, ուստի և պարապութիւնից ձանձրացած՝ կամաց կամաց դիմում են դէպի քաղաք, ստանձնելու մի որևէ պաշտօն։ Այս պարապութիւնը նրանց բարոյական անկման է տանում, որ ցոլանում է և ժողովրդի վրայ։ Բէկերը հետզհետէ կորցնում են նախկին տիրապետողների առանձնաշնորհումները և դառ-

Digitized by Google

նում սոսկ կալուածատէրեր, ուստի և ժողովուրդը նրանց վրայ սկսում է նայել ոչ որպէս իւր տիրոջ, կառավարչի և պահպանողի, այլ որպէս սոսկ կեղեքիչների, որ տառանորդ են վերցնում, առանց մի որևէ ծառայութիւն մատուցանելու։ Առաջիկայ պատկերը մի տեսարան է ներ-



ուեշմամբ դիմակաւոր մի գիր Պոլսի



Digitized by Google

կայացնում բէկերի կեանքից. այրի կինը իւր աղջկայ ձեռին մի աւել և մի հաւ տուած, բերում է բէկին նուէր և խնդրում գալ տատա-նորդն ստանալու։

## ՄԵԼԻՔ-ՉԱՀՆԱԶԱՐԵԱՆՆԵՐ

Մելիք Զահնազարեանները տիրել են Ոսկանապատ, Միրզիկ, Մուռուզ և Բրաջուր գիւղերին։ Սրանց նախահայրը եղել է Մելիք Նազարը, որ մելիքութիւն է ստացել Զահ-Աբասից 1601 թուին և վերակոչուել Զահ-Նազար, այսինքն Զահի-աչք, որովհետև շահին շատ սիրելի է եղել։

Մելիք-Զահնազարին յաջորդել են, ինչպէս երևում է տապանագրերից, Մելիք Յովսէփ Ա, Մելիք Եաւրի (վախճ. 1720), Մելիք Յուսուփ Բ. (վախճ. 1730) Մելիք Գաբրիէլ (վախճ. 1780 թ.) և Մելիք Յուսուփ Գ. (վախճ. 1826) որի եղբայրն էր Քոչար-բէկ, (վախճ. 1740 թ.) և որդիներն էին Բէկլար-բէկ և Եաւրի-բէկ։ Միայն Մելիք Յուսուփ Գ-ի մասին գիւղի ծերունիները և ժառանգները կարողանում են մի քանի անցք պատմել, միւսների մասին ոչ մի տեղեկութիւն չկայ։

Մելիք Յուսուփը ունեցել է մի աղջիկ, որի գեղեցկութեան մասին Ղարանց Պետին պատմել է Քաւադ-խանին։ Սա էլ ցանկացել է նրան ևս ունենալ իւր կանանոցում, ուստի և մի օր վերէ կացել և եկել Ոսկանապատ, իբր քէֆ անելու։ Մելիք Յուսուփը մի մատակ գոմէշ իւր ձագով նուէր է ուղարկել նրան և ապա գնացել տեսութեան։

Քաւադ-խանը սիրով ընդունել է նրան և ասել. «Անասի սանա, բալասի մանա» (Մայրը քեզ, որդին ինձ)։

Մելիք-Յուսուփը, կարծելով, թէ այդ խօսքերը նուէր ուղարկած գոմէշի և նրա ձագին են վերաբերում՝ պատասխանել է.

«Անասի դա սանա, բալասի դա». (Մայրն էլ քեզ, որդին էլ)։

Քաւադ-խանը շատ գոհ է մնացել և լաւ քէֆ արել, մտադրուելով շուտով առնել աղջկան և վերադառնալ, սակայն շտապով կանչուում է Գանձակ, որովհետև ռուսների յարձակման մասին լուրեր են եկած եղել։ Այս միջոցին Քաւադ-խանի մտերիմներից մէկը, Իսմայիլ-բէկը յայտնում է Մելիք-Յուսուփին, թէ Քաւադ-խանը եկել էր նրա աղջիկը տանելու, և նրա վերոյիշեալ խօսքերը վերաբերում էին նրա աղջկան և ոչ թէ գոմէշի ձագին։

Մելիք Յուսուփը սաստիկ վրդովւում է և տեսնելով որ ոչ մի ուրիշ միջոց չկայ՝ վճռում է ծածկաբար փախչել իւր գերդաստանով։ Բայց նախ և առաջ պէտք էր ազատուել խանի լրտեսից՝ Ղարանց

Digitized by Google

Պետից։ Ուստի Մելիք Յուսուփի եղբայրը, Քոչար-բէկը, Սարգիս և Հայրապետ Միրզայեանների հետ, տանում են Պետիին Սուրուն-խաչերի մօտերքը զբօսնելու։ Այստեղ հերթով ընկնում են աղբիւրի վրայ ջուր խմելու և երբ հերթը Պետիին է հասնում՝ նրանք դաշոյնների հարուածներով սպանում են նրան։

Հետևեալ օրը, Մելիք-Յուսուփը հրամայում է բոլոր գիւղայիններին, կանանց և եօթ տարեկանից բարձր երեխաների հետ հաւաքուել եկեղեցում աղօթելու, որ Աստուած յաջողութիւն տայ սկսուած պատերազմում։ Միքանի ոչխար էլ մատաղ է անում։ Երբ բոլոր բնակիչները հաւաքւում են եկեղեցում, «Սուրբ-Սուրբ»-ի ժամանակ Մելիք Յուսուփը Քարիտ (Մարգարիտ) աքերը (քոյր) դուրս է կանչում եկեղեցուց, փակում եկեղեցու դուռը, բանալին տալիս նրան և պատուիրում, դուռը չբանալ, մինչև որ արեգակը այս ինչ տեղը չհասնի։ Յետոյ իրենց բոլոր տնեցիներին ձիով ճանապարհ է ձգում դէպի Զուշի, իսկ ինքը մի երկու ժամ դեռ շրջում է գիւղի շուրջը, որպէսզի ոչ ոք չկարողանայ գիւղից դուրս գալ և իրանց փախուստի մասին իմաց տալ Ջաւադ-խանին։

Ապա ինքն էլ գնում է միանալու իւր գերդաստանին։ Ճանապարհին տեսնում է իւր հարսի եօթ շաբաթական երեխային (Նարիման-բէկին) վայր ընկած, վերցնում է և հետը տանում, յանձնում մօրը, որ լռելեայն արտասւում էր։ Խեղճ մայրը միւսներից յետ մնացած լինելով՝ վայր էր ձգել իւր գրկի երեխային և «հարսնութիւն անելով» չէր համարձակուել այդ ասելու ոչ տէգրին և ոչ սկեսրոջը։

Երբ երեկոյին մօտ Քարիտ աքերը բաց է անում եկեղեցու դուռը՝ անմիջապէս մի քանի լրտեսներ շտապում են Գանձակ և Մելիք-Յուսուփի փախստեան լուրը հասցնում Ջաւադ-խանին։ Սա էլ խսկոյն Իսմայիլ-բէկին ուղարկում է նրանց յետևից, հրամայելով բոլոր տղամարդկանց կոտորել, իսկ կանանց բերել Գանձակ։

Իսմայիլ-բէկը մի խումբ զինուորներով գալիս է Աղքեօրէի մօտ, և այստեղ գիշերում, մտածելով, որ մեղք է մի աղջկայ համար այնքան արիւն թափել, լաւ է թող փախչեն-գնան։ Հետևեալ օրն էլ միքիչ որոնում է և ապա վերադառնում։

Մելիք-Յուսուփը հասնում է Զուշի և այստեղ մնում, մինչև որ ռուսները առնում են Գանձակը, սպանում Ջաւադ-խանին, և այս ժամանակ միայն կրկին վերադառնում է Ոսկանապատ։

Մելիք Զահնազարեանների ժառանգները այժմ էլ ապրում են Ոսկանապատ գիւղում և տիրապետում են հողերի մի մասին։ Սանցից ամենածերը Քոչար-բէկի աւագ թոռ Մեժլում-բէկն է, որ Մելիք-Յովսէփ Գ. կեանքից պատմեց վերոյիշեալ անցքը, որը հաստատեցին և գիւղի ծերունիները։

Digitized by Google

## ՄԵԼԻՔ ԱՌՍՏԱՄԵԱՆՆԵՐ.

Այս տոհմի նախնիքը բնակուելիս են եղել Լոռի գաւառում, ուր և ունեցել են ժառանգական կալուածքներ։ Այս գերդաստանի անդամներից մինը մտել է նախ վրաց արքունիքը ծառայելու և ապադիմել է պարսից Զահ-Աբասին, և նրանից խանութիւն ստացել։ Աւանդութիւնը այս խանին Թաւադ-խան անունն է տալիս, ինչպէս հասարակ ժողովուրդը սովորութիւն ունի վրաց բարձր ծառայողներին Թաւադ անուանել։

Թաւադ-խանի որդին եղել է մելիք Առստամ, սրանը՝ մելիք Այտին, որոնց մասին նոյնպէս ոչինչ յայտնի չէ։ Մելիք Այտինի որդի Մելիք Առստամը Քուանշիր գաւառի Գիւլ-Եաթաղ գիւղի մելիք դառնալով՝ պարսկաստանից գաղթել է այդտեղ և ամուսնացել Կապատցի Ապրէս-աղայի Վարդ-խաթուն աղջկայ հետ, որի վրայ Իբրահիմ խանը աչք է ունեցել։

Մելիք Առստամի մեծ եղբայր Միսայէլ-բէկը, գրաւուելով Իբրահիմ-խանի խոստումից, թէ Քրաբերդի մելիքութիւնը իրեն կըտայ, փորձում է սպանել Քրաբերդի մելիք-Մեժլումին, սակայն բռնուելով ինքը գլխատւում է նրանից։ Երբ մելիք Մեժլումը Հերակլի հետ մեկնում է Թիֆլիս՝ Իբրահիմ-խանը մելիք Առստամին Քրաբերդի մելիք է նշանակում, միանգամայն իրեն հլու հպատակ դարձնելով։ Բայց երբ Իբրահիմ-խանը նրա կնոջը պատանդի անունով տանում է իւր հարեմը, մելիքը վշտացած դիմում է Նուխիի Սէլիմ-խանի, Իբրահիմ-խանի թշնամու մօտ։ Սա սիրով ընդունում է նրան և Դաշ-բուլաղ գիւղը նրան ընծայում։ Այստեղից մելիք Առստամը շարունակ յարձակումներ է գործում Զուշի բերդի վրայ և բաւական վնասներ պատճառում։

Մի ժամանակից յետոյ մելիք Առստամը Ղարաբաղից և Նուխուց մօտ 300 ընտանիք առնելով դաղթում է Գանձակի խանութիւնը, ուր Քաւադ-խանը (1756—1804) սիրով ընդունում է նրան և Մլզնաբերդից մինչև Եօթն աղբիւր տեղը նուիրում նրան։ Այստեղ էին գտնւում Հանդշափոր, Քարատակ, Վերին և Ներքին Ղութուլնեբը, որ այժմ աւերակ են։

Մելիք-Առստամը ապրում է Գանձակում և շատ սիրելի է լինում Քաւադ-խանին։ Այս բանի վրայ նախանձելով խանի միւս շրջապատողները, սպանում են նրան 1794 թ. *)։

*) Այս Մելիքի մարմինն ամփոփուած է Գանձակի Ս. Յովհաննէս-Մկրտիչ մայր եկեղեցու գաւթի հարաւային կողմում, որի տապանագիրն է՝

Անմոռաց յայս տապան քաջ անուանի Հանգչի մարմին Մելիք Առստամի։ Յազգէն Բագրատունի Հայկազանց տոհմի, Տիրող Բարսում, Գանձակ Նահանգի, ծնեալ 1722, վախճանեալ 1794 ամի։

Digitized by Google

1800 թուին Մելիք Առստամի ժողովուրդը Լեզգիների յարձակումներից ստիպուած հետևում է Մելիք-Բէկլարեան Աբով Գ-ին, որ մելիք Առստամի փեսան էր, և գաղթում է Բոլնիս, իսկ մի ուրիշ մաս Թիֆլիս, ուր Հալաբարի Զամքորեցոց թաղն է կազմում։

Դեռ Բոլնիսում եղած ժամանակ Մելիք-Առստամի որդի Ստեփան-աղան վախճանւում է, իսկ սրա որդի Ապրէս-աղան իւր ժողովրդի մի մասով վերադառնում է Բարսում գիւղը և այնտեղ բնակութիւն հաստատելով՝ իւր տոհմի կալուածքներին տիրում։ Այժմ այս տոհմի ժառանգները նոյնպէս ապրում են այս գիւղում և ունին բաւական կալուածքներ։

## ՄԵԼԻՔ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐ.

Մելիքական այս տոհմը իշխել է Գետաշէն և սրա շրջակայ գիւղերում։ Դեռ մինչև այժմ էլ կանգուն է սրանց մելիքական ապարանքը Գետաշէնում և դեռ կենդանի է վերջին մելիքի թոռ՝ Թեմուր-բէկը։ Ես եղայ այս եօթանասնամեայ ծերունու մօտ, որ այժմ բնակւում է Գանձակում, եղայ նաև միւս ժառանգների մօտ՝ Գետաշէնում, հարց ու փորձ արի նաև ուրիշ ծերունիների, սակայն ոչ մի հաստատուն բան չկարողացայ իմանալ սրանց հին անցեալի մասին։ Չկայ նաև ոչ մի գրաւոր վաւերաթուղթ։ Այս միայն յայտնի է, որ այս տոհմիս վերջին մելիքը եղել է մելիք Սարգիս Բ. մի քաջ անձնաւորութիւն, որ մասնակցել է Ջաւադ-խանի պատերազմներին, նախ Լեզգիների և ապա ռուսների դէմ։

Digitized by Google

# ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

## ԲՆԱԳՐՈՒԹԻՒՆ *)

**Սահմանները.**—Գանձակի գաւառն ընկնում է 41°9′ և 40°1′ հիւսիսային լայնութեան և 63°7′ և 64°60′ արևելեան երկարութեան մէջ։ Մակ-սարը (11,519) կազմում է Գանձակի և Ջիւանշիրի գաւառների հարաւային և հարաւ-արևելեան սահմանների ընդհարման վերջին կէտը։ Այս յիշեալ գաւառների մէջ սահման համարւում է Ինջա-չայը, որի ակունքներից հին պոստային ճանապարհից ներքև ձգւում է պայմանական, սահմանային գիծը, Ջիւանշիրի անապատով դէպի հիւսիս արևելք մինչև Կուրգետը, Արեշի գաւառի Քեարխուն գիւղի հանդէպ, և Կուրի վրայ ձգուած ¦երկաթուղու կամուրջից ներքև։ Գանձակի և Արեշու գաւառների մէջ արևելեան և հիւսիս-արևելեան կողմից սահման ծառայում է Կուր-գետը մինչև Արեշի գաւառի Քինչիլի գիւղը, որ ընկնում է գետի ձախ ափին. այս գետի ձախ ափով Գանձակի գաւառի սահմանը ձգւում է այս գետի երկարութեամբ հիւսիս-արևելքից մինչև Կոնչաշին լեռը, որտեղից, ընդհարուելով Ջաքաթալու

*) Գանձակի գաւառի տեղագրութիւնը գրելիս բացի իմ ճանապարհորդական նկատողութիւններից, 'ի նկատ առայ նաև Բանանց գիւղի Արժ Տէր-Երուանդ քահանայի, Գանձակեցի Յակոբ վարժապետ Տէր-Յարութիւնեանի և Կար. Ղազարեանի ձեռագիր դիտողութիւնները։ Մի քանի արձանագրութիւններ էլ ինձ տուել է պ. Աղ. Քալանթարը։ Խորին շնորհակալութիւնս յայտնելով վերոյիշեալ անձերին, հարկաւոր եմ համարում յայտնել, որ ճանապարհորդութեանս միջոցին իբր ուղղեցոյց ունեցել եմ գեր. Բարխուդարեանի „Երցախ“ը և Հաւան-Ջալալեանի „Ճանապարհորդութիւնը“։ Օգտուել եմ նաև Սբելեանի „Экономическое положеніе государственныхъ крестьянъ Елисаветопольскаго уѣзда“ աշխատութիւնից և ուրիշ երկերից, որոնք իրենց տեղերում յիշել եմ։

Digitized by Google

շրջանի հետ, անցնում է նոյն ուղղութեամբ փոքրիկ շղթայով մինչև Մուրադայ (1738) լեռը, որտեղ վերջանում է Զաքաթալի շրջանի սահմանը և սկսւում է Սղնախի գաւառը. այստեղ Գանձակի գաւառի սահմանը ընդունելով հիւսիս-արևմտեան ուղղութիւն, կտրում է Ալազան (Կանիգ) գետը, Զալան հովիտը, Իոր (Կաբրի) գետը, հասնում է մինչև Փալանթոքան ոչ այնքան բարձր լեռնաշղթան, որի վրայով բարձրանում է հիւսիս-արևելեան ուղղութեամբ համանուն լեռից (1193) փոքր ինչ բարձր, որտեղից արդէն իջնում է հարաւ-արևմտեան ուղղութեամբ և ընդհարուելով Ղազախի գաւառի հետ, Ջէյրան-չոլ հովիտով մինչև Կուր գետը, կտրում է նրան Գանձակի գաւառի Դիւգարլի գիւղի հանդէպ։ Գանձակի գաւառի արևմտեան սահմանը կազմում է Զակամ գետը, որը բաժանում է նրան Ղազախու շրջանից մինչև Խաչ-եալ լեռան անտառապատ ճիւղաւորութիւնը. ապա այս գաւառների մէջ սահմանը ձգւում է Զակամ գետի ձախ ափի ուղղութեամբ Զինգիլդաղ լեռը, որը և ծառայում է իբր Գանձակի, Ղազախի, և նոր Բայազիտի գաւառների վերջին սահմանային կէտ։

Գանձակի գաւառը նոր Բայազիտից անջատող սահմանը Զահ-դաղից ձգւում է Հայ-Գանձակեան (Армяно-ганджинская) լեռնաշղթայի ուղղութեամբ հարաւ-արևմուտք, մինչև Սատանա-խաչ լեռը, որտեղից նա ուղղւում է արևելք, և ձգւում է նոյն լեռնաշղթայով մինչև Գինալդաղ (11057) լեռը, որի միւս կողմում մեր նկարագրած գաւառը ընդհարւում է Ջիւանշիրի գաւառի հետ հարաւային կողմից մինչև Մռաւ-լեռը, այսինքն մինչև հարաւ-արևելեան վերջին կէտը։

Այս սահմանների մէջ Գանձակի գաւառը բռնում է 8398,$_2$ ք. վերստ, կամ 9557,$_3$ ք. կիլոմետր, կամ 173,75 գերմ. մղոն, կամ 874840 դեսեատին տարածութիւն *)։ Այս թիւը ցոյց է տալիս, որ Գանձակի գաւառը Անդրկովկասի բոլոր գաւառներից մեծագոյնն է, բացի Բագուի նահանգի Ջեւատու գաւառը (203,31 ք. մղոն)։

*) Приложенія къ VIII книжкѣ записонъ Кавказ. отд. Имп. Рус. Геогр. Общ.

Digitized by Google

Գանձակի գաւառի մակերեսոյթը ներկայացնում է երկու, միմեանց հակապատկեր գօտիներ. Հարաւ-արևմտեանը՝ լեռնային, Հիւսիս-արևելեանը՝ հարթ. լեռնային գօտին, որ Հիւսիս-արևելեան կողմում լայն է, նեղանում է Հիւսիս-արևմուտքում: Գանձակի հարթութիւնը միայն Հիւսիս-արևմուտքում, Ջակամ գետից մինչև Ղոչ-Ղարա-գիւղը, յենում է Կուր-գետի աջ ափին, ապա Հարաւ-արևելք ուղղուելով՝ Բոզ լեռնաշղթայով բաժանւում է Կուրի նեղ հարթութիւնից, որի հետ հաղորդակցւում է միայն Գանձակ գետի նեղ ձորով:

Բոզ լեռնաշղթան սկսւում է Կուր գետի ափից. Ղոչ-Ղարա-չայի (Կուրի վտակ) ակունքի մօտ և Հարաւ-արևելեան ուղղութիւնը պահպանելով՝ ձգւում է Կուր գետի աջ ափով, նկարագրուած գաւառի սահմաններում մինչև Մինգեչաուրեան անցքը. Բոզին հանդէպ, Կուրի և Ալազանի ձախ ափին գնում է նոյն Հարաւ-արևելեան ուղղութեամբ Թուրադայեան լեռնաշղթան, իսկ սրան զուգընթաց՝ Իօր գետի աջ ափով, Փալան-Թոքանի լեռնաշղթան, որը մօտենում է Կուր գետի ձախ ափին, Բոզ լեռնաշղթայի սկզբնաւորութեան մօտ, կարծես նրա շարունակութիւնը կազմելով:

Վերոյիշեալ լեռնաշղթաների մէջ տարածուած հարթութիւնը, որ ընկնում է Կուր գետի երկու ափերին, ինչպէս Իօր (Կանգդ) և Ալազանի (Կաբրի) նրանց միանալու և Կուրի մէջ թափուելու տեղում, անուանւում է «ամուլ»: Սամուխի տարածութիւնը 75,000 դեսիատինից աւելի է:

Փալան-Թոքան լեռնաշղթայից Հիւսիս-արևմուտք, Կուրի ձախ ափին, տարածւում է Ջէյրան-չօլ հովիտը մինչև Ղազախի գաւառի սահմանը: Կուրի կողմից հովիտը եզրափակում են ոչ այնքան բարձր լեռնաշղթաներ, որոնք համարեա զուգընթաց են Իօրի ընթացքին և ուղիղ իջնում են դէպի նա՝ Գանձակի հարթութեան Կուրին մօտիկ ափի հանդէպ:

Լեռներ.—Գանձակի գաւառի հարաւային և հարաւ-արևմտեան սահմաններով, համարեա 125 վերստ երկարութեամբ ձգւում է Հայ-Գանձակեան լեռնաշղթան, Ջահ-ալաղից մինչև Մռաւ լեռը: Այս լեռնաշղթան ծառայում է սլպէս ջրաբաշխ

Digitized by Google

այն գետերի, որոնք թափւում են մի կողմից Կուր գետը, միւս կողմից՝ ուղղւում են դէպի Սևանայ լիճը։ Այս լեռնաշղթան, Գինալ լեռից այն կողմը, ծառայում է որպէս ջրաբաշխ Ղարաբաղի (Թառթառ իւր վտակներով) և Գանձակի գետերի (Կուրակչայ, Գանձակ-գետ և այլն)։

Հայ-Գանձակեան լեռնաշղթայի միջին բարձրութիւնը հասնում է 9600′. նրա գագաթների մէջ նշանաւոր են՝ Ղարա Արխաչ, (10,081), Սատանախաչ, Օղրուջա (10936) Գինալ-դաղ (11057), Բենէովշալի, Բազիրկեան, Ղամիշ (12263) և Մռաւ (11219).

Հայ-Գանձակեան լեռնաշղթայից Հիւսիս-արևելեան ուղղութեամբ գնում են, համարեա զուգահեռական շարքերով և շատ կողմնակի ճիւղաւորութիւններով, մանր լեռնաշղթաներ, որոնք միմեանցից բաժանւում են Կուրակ-չայի, Գանձակ-գետի, Ղոչղարա-գետի, Ջամքոր-գետի, Ջակիր-չայի և Ջակամի խոր ձորերով։ Գլխաւոր լեռնաշղթայից հեռանալով ճիւղերը հետզհետէ ցածրանում են և յետոյ միախառնուելով յառաջացնում Գանձակի հարթութիւնը։

Գլխաւոր լեռնաշղթային մօտիկ ճիւղերն ունին նշանաւոր գագաթներ, ինչպէս են Ղոչղարա (Кошкаръ, 11,035) Օղրուջա (10,936), Հասան Նանա, Քեափաս և ուրիշներ։ Ընդհակառակը Բոզի, Մուրադայի և Փալան-Թոքանի շղթաներում, որոնց մասին յիշեցինք վերևում, առանձին կանգնած լեռները շատ աննշան բարձրութեան են հասնում, այսպէս՝ Բոզի շղթայում՝ Կախադաղ (1,284) և Ղարանլու (1,733), Մուրադայինում՝ Մուրադայ (1,738) և Կոնչաշին (1,440), Փալան-Թոքանիում՝ երեք համանուն գագաթներ՝ 1,480, 1,193, և 1,219 բարձրութեան։

Հետևեալ բարձրութիւնների շարքը կազմող է փոքր ինչ գազափար տալ գաւառի ծովի մակերևոյթի համեմատութեամբ ունեցած դրութեան մասին. ճիւղաւորութիւնների վերի մասում՝ Ղաքար-բէկ (7,520), Ղզըլ-դաղ (7,462), Օքիզ-դաղ (6,774), և Փասխիտ (6.599), ճիւղաւորութիւնների միջին մասում՝ Բայաքնանդ (4,973), և Ղաբաղ-Թափա (3,592). ստո-

Digitized by Google

բոտում՝ Ելենէնդորֆ (2,536), Սարվազ-Թափա (2,029), Գեշմալիք (2,018), և Ուչ-Գիլ (1,963), և դաշտավայրում՝ Ելիսավետոպոլ՝ (1,449), Գիւգարլու (1,626), Ջամքոր (1,051, Գալիլար (991), Ջիլ-Թափա (314)։

Ամբողջ լեռնային գոտին թեքւում է հարաւ-արևմուտքից դէպի հիւսիս-արևելք. իսկ հարթութիւնը՝ երկու թեքուածք ունի. մինը՝ դէպի Կուր գետը, հիւսիս-արևելեան ուղղութեամբ, այն գետերի ընթացքով, որ դուրս են գալիս լեռնային կիրճերից, և միւսը՝ իրեն, Կուրի ընթացքով, հարաւ-արևելեան ուղղութեամբ։

Գլխաւոր լեռնաշղթայի Գանձակին նայող կողմը ներկայացնում է անտառից զուրկ, ալպեան երկիր։ Նա միանում է նոյնպէս անտառից զուրկ կողմնակի ճիւղաւորութիւնների վերի մասի հետ և նրանց հետ միասին կազմում ընդարձակ ամառային արօտատեղիներ։

Անտառները ծածկում են լեռնաշղթաների և նրանց ճիւղաւորութիւնների լանջերը, գետերի և գետակների հովիտները, ինչպէս և Կուրի գետափը։

Բոզի, Փալան-թոքանի, և Մուրադայի շղթաները, անտառային բուսականութիւնից զրկուած, իրենց ընդհարուող հարթութիւնների հետ միասին ներկայացնում են ընդարձակ, ձմեռային արօտատեղիներ։

Լեռների եւ տափարակների հարթաբանական (геогностическое) կազմութիւնը.—Հայ-Գանձակեան լեռները կազմուած են գրանիտի և պորփիւրի տեսակներից. մասնաւորապէս հիւսիսային կողերի կազմութեան մէջ մեծ դեր են խաղում կաւճային կազմութեան կրաքարները։ Լեռների ստորոտը կազմուած է նեպտունապլուտոնական ծագում ունեցող համախմբումներից (конгломерать), ամուր կրաքարից, կաւային և կրա-աւազային մարնայից (мергелій). բլուրների այն շարքերը, որոնցով Կուրի մօտ վերջանում են լեռների ստորոտները՝ կազմուել են կաւճային փրփրուն զանգուածից և կրաքարից։ Կուր գետի հովիտը և գետափնեայ բարձրութիւնները վերաբերում են երրորդական (третичный) կարգի միջաժամանակային (міоценовый) կազմու-

Digitized by Google

թեան։ Խճային, աւազային և կաւային շերտերը, որոնք կազմում են Հովիտների ներքին խաւը, ցոյց են տալիս, որ չորրորդական կազմութեան շրջանին են պատկանում։

**Գեսեր.**—Թէև ամենամեծ, բայց ոռոգման համար բոլորովին անյարմար, գետը **Կուրն** է, որ մտնում է այս գաւառի սահմանը, ընդունում Ջակամ վտակը և հոսելով մօտ 125 վերստ՝ Արեշու գաւառի Քեալխուն գիւղի մօտ դուրս է գալիս նկարագրած գաւառի սահմանից։ Կուրը այս մասում հոսում է շատ խոր ափերով, այնպէս որ բնակիչները չեն կարողանում նրանից ոռոգման համար ջուր վերցնել։ Միայն Ալփաուտ գիւղից մինչև Կարակուլա գիւղը տարածուող նեղ գետափնեայ շերտը գարնանային հեղեղների ժամանակ ծածկւում է ջրով, որով և նա աւելի յարմար է դառնում հացահատիկներ ցանելու և բանջարանոցներ շինելու։

**Ինճա-չայ.**—սկիզբն է առնում Մռաւ լեռան հարաւ-արեւելեան կողմից, և հոսելով Փիլիստանի լեռնոտ երկրով, մտնում է անապատ, Ջիւանշիրի Բորսունլու գիւղի մօտ։ Սա կազմում է Գանձակի և Ջիւանշիրի գաւառների սահմանը, և նրա ջրից առաւելապէս օգտւում է Ջիւանշիրի գաւառը։

**Ղարա-չայ.**—Սկիզբն է առնում Մռաւ լեռան Հիւսիս-արևմտեան և Գեամիշ լեռան հարաւ արևմտեան կողերից. հոսելով լեռնային նեղ ձորով, ներքին Աղճաքենտ գիւղի մօտ նա երկու ճիւղի է բաժանւում—արևմտեան՝ որ կոչւում է Գէօրան-չայ և արևելեան, որ պահում է նոյն՝ Ղարա-չայ անունը։ Այս երկու ճիւղերը միայն ջրառատ ժամանակ հասնում են Քէօռ-չային, որ թափւում է Կուրի մէջ։

**Կուրակ-գեսեր.**—սահմանագիծ է Թիֆլիսի և Արցախի հայոց հոգևոր առաջնորդութեանց, սկիզբն է առնում Քեափաս, Բազիրկեան և Բանէօվշայի լեռների լանջերից. հոսելով անտառապատ ձորով, Գետաշէն գիւղից ներքև աջ կողմից ընդունում է բաւական մեծ վտակ՝ Բալա-Կուրակը, որ սկիզբն է առնում Ղամիշ լեռան հիւսիս արևմտեան լանջից, ապա ուղղում է դէպի Ղարասուն, որ միանում է Քէօր-չայի հետ։

**Գանձակ-գեսեր** կամ Ոսկանապատի գետ.—սկիզբն է առնում

Արիթինայ-սարից կամ Ղոչղարա լեռան հարաւ-արևելեան լանջից և ընդունելով երկու վտակներ՝ որ սկիզբն են առնում Սարեալ և Բանէօվշալի լեռներից, անցնում է Ելենենդորֆ գերմանական գաղութից և Գանձակ քաղաքից և բանալով իւր համար մի նեղ անցք Բոզ լեռնաշղթայի մէջ, Ղարասախկալ գիւղի մօտ թափւում է Կուրի մէջ։

**Արքենա-ջուր** կամ **Բանանց-գետ** և կամ **Ղոչղարա-չայ.**— սկիզբն է առնում Արխաշան սարից և ընդունելով Խաչ-Բուլախ վտակը, անցնում է Քարհատ և Բանանց գիւղերով, և Բոլչլի գիւղի մօտ միանալով Զովդար-չայ վտակին, թափւում է Կուրի մէջ Ղարաջամիրրի ձմերանոցի մօտ։

**Ջամքոր.**—Գաւառիս ամենաերկար գետն է և կազմւում է գլխաւոր լեռնաշղթայի Գինալ լեռից մինչև Ղարա-Արխաչ և այս լեռնաշղթայի ճիւղերի՝ Ղոչղարա և Արխաշան լեռներից մինչև Օղրուջա և Գիլիխ լեռների լանջերից բղխող բազմաթիւ վտակներից։ Այս վտակները, կրելով առանձին առանձին անուններ, միանում են երկու մեծ ճիւղերում և Գետաբէկի Ղոշա-քէօրփիի մօտ միախառնուելով՝ Ջամքոր անունը, և նեղ ձորով ուղղւում է դէպի Հիւսիս. ապա դաշտավայր դուրս գալով՝ կտրում են երկաթէ ուղին և Ջամքոր կայարանից դիմում դէպի Կուր գետը և Դելիլլար եայլաղի մօտ թափւում նրա մէջ։

**Ջակիր-չայը** սկիզբն է առնում կողմնակի ճիւղերի Ջաքար-բէկ և Ղրզլ գագաթներից, ընդունում է Արտապա, Գիւնաշ տեղերից և Մասխիդ լեռից բղխող վտակները, Մորուլ-գիւղի մօտ դաշտավայր է դուրս գալիս և Արվատ-թափա կուրգանի մօտ կտրելով երկաթէ ուղին, Թաքնալի-Օիչուլու գիւղի մօտ թափւում է Կուրի մէջ։

**Ջակամ-գետ.** Գանձակի և Ղազախի գաւառների միջև սահման կազմող այս գետը կազմւում է Ջահ-դաղ և Քիւչուկ Ջահ-դաղ լեռների Հիւսիս-արևելեան լանջերից բղխող ջրերից։ Ջակամ գետը իւր երկու ափերով պատկանելով Գանձակի գաւառին մինչև Խաչեալ լեռան զարիվայրը, հոսում է խոր, անտառապատ ձորով մինչև Թաթարլի, ուր ընդունելով Բաղա-

Digitized by Google

չայ աջ վտակը, Աշաղա-Անիպլի գիւղի մօտ դուրս է գալիս դաշտավայր և Գիւգարլի եայլաղի մօտ թափւում Կուրի մէջ։

Վերոյիշեալ բոլոր գետերը, Ինճայից սկսած մինչև Ջակամ, Հիւսիս-արևելեան ուղղութիւն ունին. նրանք Համարեա միմեանց զուգընթաց են, նրանց բոլորի ակունքներն էլ, բացի Ջակիր-չայից, սկսւում են գլխաւոր լեռնաշղթայի և սրա կողմնակի ճիւղերի վերի մասի անտառազուրկ ալպեան գօտուց, սրանք բոլորն էլ հոսում են խոր, նեղ կիրճերով, որ տեղ տեղ ներկայացնում են մերկ ժայռեր և քիրծեր, բայց առաւելապէս ծածկուած են անտառներով։ Նրանց դաշտերը, ափերի հետ միասին, հարթութեան մօտենալով ընդլայնւում են և բնակութեան համար յարմարաւոր տեղեր բաց անում։ Նրանց ջրից կարելի է լինում օգտուիլ նրանց միջին ընթացքի տեղերում, այն էլ նրանց նեղ գետափերում, միայն բանջարանոցներն ու այգիները ջրելու համար. նրանց ստորին ընթացքում, երբ նրանք բոլորովին դուրս են գալիս լեռնային կիրճերից, կարելի է լինում երկար ջրանցքներ անցկացնել ջրելու համար ինչպէս բանջարանոցներ և այգիներ, այնպէս և ցանելու արտեր։

Ասելորդ է, կարծեմ, երկարօրէն խօսել այս գետերի լեռնային տեղերում ունեցած արագ ընթացքի, ամառուայ ամիսներին սաստիկ քչանալու, ձիւնը հալչելիս և յորդ անձրևներ գալիս սաստիկ հեղեղուելու, սրանց կատաղի ալիքների իրենց շրջակայ հանքային և բուսական թագաւորութիւնների վրայ ունեցած յամր, բայց մշտատև և լործանիչ ազդեցութեան մասին.—այս բոլոր երևոյթները միատեսակ յատուկ են բոլոր լեռնային տեղերի գետերին։

Հարկաւոր ենք համարում յիշել նաև այս գաւառի հարթ մասի երկու գետերի մասին, սրանք Քէօր-չայ (կոյր-գետ) և Ղարասուն (Սև ջուր) են։ Առաջինը, Քէօր-չայը, ակիզբն է առնում Աղասի-Բէկլի գիւղի մօտ գտնուած աղբիւրներից, հոսում է Բոզ լեռնաշղթայի հարաւային ստորոտով, Կուրին զուգընթաց, և թափւում է նրա մէջ Վարվարա գիւղի մօտ։ Երկրորդ գետը, Ղարասուն, կազմւում է Կուրակ-չայի ջրերից Սարով գիւղի մօտ, հոսում է դաշտավայրով Քէօռ-չայից բարձր և, Բա-

Digitized by Google

գու-Թիֆլիսեան փոստային հին ճանապարհի մօտ միանում է նրա հետ։ Ինչպէս վերև նկատեցինք, Կուրակ-չայը, Ղարա-չայը և Գէօրանը միանում են Քէօր-չայի և Ղարասուի հետ։

Լճեր.—Գէօգ-գէօլ, գտնւում է Քեափաս լեռան Հիւսիս-արևմտեան կողմը. սրանից միքիչ հիւսիս կայ մի ուրիշ փոքրիկ լճակ, որ կրում է Աստծու ծով անունը, և միացած է առաջնի հետ։ Գէօգ-գէօլը իւր անունը ստացել է ջրի կապոյտ (գէօգ) գոյնից, իսկ Աստուծու ծովի մասին պատմում են, թէ այդտեղ մի սպիտակ գոմէշ է եղել, ոլ իւր ձագի հետ, պոզերին մոմեր վառած, դուրս է եկել լճից և արածել ափում։ Գոմէշը սուրբ համարելով, լիճն էլ Աստծու ծով են կոչել։ Երկու լճի ջուրն էլ շատ մաքուր և կապտագոյն է. առաջնի մէջ լինում են կարմրախայտ և սև ձկներ, իսկ Աստծու ծովի մէջ բոլորովին չկան։ Աստծու ծովից սկիզբն է առնում մի փոքրիկ առուակ, և թափւում է Գէօգ-գեօլի մէջ, յետոյ այստեղից դուրս գալով՝ Սպիտակ ջուր անունով միքիչ հոսում է և քարերի տակ ծածկուելով՝ նորից երևում, ուր նա ստանում է Օբխան (կուլտուող) անունը և ապա գնում Զրաղի ձորի հանդէպ թափւում Կիւրակ-չայի մէջ։

Այս լճի մասին Կիրակոս Գանձակեցին պատմում է. 1139 թուին փլաւ Ալհարակ լեռը երկրաշարժից և արգիլեց այն ձորակը, որ անցնում էր նրա միջով և կազմեց ծովակ, որ մինչև հիմայ էլ կայ և մէջը լինում են լաւ ձկներ *)։

Այս լճակը ամենալաւ զբօսավայրն է կազմում, և Հաճիքենդ ամարանոց եկողները գալիս են այստեղ մակոյկներով զբօսնելու։

Երկրորդ լիճը՝ Սէ-լէ-էնոծ-Ղ կամ Զալէ-գէօլ է, որ գտնւում է Աստծու ծովից դէպի արևմուտք։

Մի ուրիշ, սաստիկ փոքր, և նոյն իսկ աննշան լճակ էլ կայ Մուռութ և Ոսկանապատ գիւղերի միջև, ուր տզրուկներ են օրսում։

*) Կիր. Գանձ. եր. 65.

Digitized by Google

## ՀԱՆՔԵՐ

Գանձակի գաւառը շատ հարուստ է հանքերով, օրէցօր գտնուում են նորանոր հանքատեղեր և ժողովուրդը կարծես հանքային տենդով բռնուած՝ սար ու ձոր է ընկնում հանքեր գտնելու։ Հանքերից շատ քչերն են կանոնաւորապէս արտահանուում, դեռ նոր-նոր սկսում են ընկերութիւններ կազմուել նրանց մշակելու։

Մինչև այժմ յայտնի հանքերը հետևեալներն են.

### Ոսկու հանք

Քակիր-չայի ընթացքում, աւազի հետ աննշան քանակութեամբ խառնուած։

Աննենֆելդ գաղութի մօտ, Ղոչղարա գետի մօտ, Գանձակից մօտ վեց վերստ հեռաւորութեամբ։ Գանձակում, Գանձակ-չայի եզերքում, աւազի հետ խառն, շատ քիչ քանակութեամբ արծաթա-արճիճային և արճիճի հանքեր։ Ղոչղարա գետի աջ ափին, Բանանց գիւղից 3—4 վերստ. ներքև, այգիների մօտ։

### Պղնձի հանք

Գանձակի գաւառի ամենանշանաւոր պղնձահանքը գտնուում է Գետաբէկի պղնձահալական գործարանից 2½ վերստ, Սլավեանկա գիւղից 8 վ. և Ջամքորի կայարանից 50 վ. հեռաւորութեամբ դէպի արևմտահարաւ։ Սա Գետաբէկում գտնուած պղնձահալական գործարանի հետ պատկանում է գերմանացի Սիմենսին, որ գնել է 1864 թ. մեծ մասամբ յոյն բաժնետէրերից։ Պղնձահանքը բռնում է 3 քառակուսի վերստ տեղ, 12,500 ք. սաժէն էլ յատկացրուած է մագնիսական երկաթաքար (магнитный желѣзнякъ) մշակելու և 66 դ. 1200 քառակուսի սաժէն Գետաբէկի գործարանների համար։ Բացի սրանից Սիմենսին պատկանում է 21109 դեսեատին 2285 քառ. սաժ. տարածութեամբ անտառ, Քեկամի և Ջամքորի արքունական անտառներից։

Գետաբէկի պղնձահանքը ունի 12 ոյր (штоль) 193, 105, 84, 83, 195, 112, 236, 115, 70, 60, 92 և 43 սաժէն երկարութեամբ։

Գետաբէկի գործարանում կան հետևեալ տեսակի վառարաններ.

ա). Հանքայրիչ (рудообжигательный) Կիլպ և Գերստիկգիեֆերի սիստեմի . . . . . 28 հատ.

բ). Նոյնպիսի Պուպֆերշտէյնի . . . . . 13 հատ.

գ). Պղինձ հալող . . . . . 13 »

դ). Զուգուն հալելու հալոց . . . . . 1 »

Digitized by Google

ե). Սովորական և կրակի դիմացող աղիւսների թրծելու վառարաններ . . . . . 2 »

Գործարանի մի մասն էլ գտնւում է Ղալաքեանտում, ուր կան վառարաններ՝

ա). Հանքայրիչ . . . . . 2 հատ.

բ). Պղինձ հալող . . . . . 6 »

գ). Ելեքտրալուծական գործարան 100 վակերով (ванны) պղնձախառն հանքից ոսկի և արծաթ հանելու։

Գետաբէկի գործարանում կայ նաև նեղանիւ երկաթուղի 29 վերստ 80 սաժէն երկարութեամբ, 5 լոկոմոտիվով և 33 վագոնով, և նաւթանցք Դալլար կայարանից մինչև Գետաբէկ՝ 42 վերստ երկարութեամբ, 4 դիւյմանոց Մակեսմանովեան պողպատեայ խողովակներով և Վարպգինգտոնի սիստեմի շոգեշարժ մղիչներով, որոնցով նաւթը մղւում է ամեռը 110, իսկ ամառը 24—25 մթնոլորտային ճնշումով։

Այս գործարանում աշխատում են չոր, թաց և ելեկտրալուծական մեթոդներով։

Թաց մեթոդով մշակւում են բոլոր սակաւապղինձ ջուհարները, նրանց մէջ 5 տոկոսից քիչ պղինձ կայ։

Չոր մեթոդով նրանք, որոնք 5 տոկոսից աւելի պղինձ են պարունակում։

Ելեկտրալուծական մեթոդով մշակում են ոչ թէ ջուհարը, այլ արտադրուած սև պղնձի մի մասը։

## Հինգ տարիների ընթացքում *)

| | Հանուած է ջուհար. | Ստացուած է պղինձ. | Ստացուած է արծաթ կամ ոսկի պարունակող առազ. | | |
|---|---|---|---|---|---|
| 1893 թ. | 3,097380 փ. | 84,308 փ 30 Ֆ. | 77 փ. 23 Ֆ. | 1% ոսկի | 22,5 % արծ. |
| 1894 | 2,967,790 „ | 98,983 „ 26 „ | 74 „ 27 3/4 | 140 % | 22.45 % |
| 1895 | 3,572,447 „ | 122,062 „ 08 „ | 76 „ 30 1/2 | 135 % | 24,5 % |
| 1896 | 3,548,256 „ | 116,145 „ 05 „ | 67 „ 3 „ | 1,936 % | 30,784 % |
| 1897 | 4,452,710 „ | 118,962 „ 30 „ | 61 „ 16 „ | 2,35 % | 34,44 % |

| | Եղել են բանուորներ. | | Գառայողներ. | | Վճարուած է բանուորներին. | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1893 թ. | 1828 | մարդ. | 30 | մարդ | 275321 | ր. 03 | կոպ. |
| 1894 „ | 1872 | „ | 30 | „ | 259431 | „ 82 | „ |
| 1895 „ | 1539 | „ | 30 | „ | 249972 | „ 33 | „ |
| 1896 „ | 1420 | „ | 30 | „ | 247021 | „ 99 | „ |
| 1897 „ | 1848 | „ | 30 | „ | 273928 | „ 49 | „ |

*) Ես եղայ հանքում 1898 թ. ամռանը, ուստի և կարելի չեղաւ վերցնել 1898 թ. վերաբերեալ տեղեկութիւններ.

Digitized by Google

Բանուորներն ըստ ազգութեան եղել են.

| | հայեր | ռուս. | գերմ. | թաթար | վրացի | յոյն | տաճ. | պարս. | այլազգ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1893 թ. | 325 | 67 | 26 | 535 | 1 | 13 | 5 | 880 | 6 մ. |
| 1894 ,, | 379 | 35 | 39 | 559 | 5 | 22 | 7 | 845 | 11 |
| 1895 ,, | 378 | 42 | 37 | 421 | 3 | 25 | 4 | 651 | 8 |
| 1896 ,, | 309 | 52 | 29 | 391 | 1 | 11 | 29 | 553 | 5 |
| 1897 ,, | 316 | 54 | 34 | 499 | 2 | 98 | 17 | 852 | 5 |

Այս աղիւսակից երևում է, որ գործարանում ամենից աւելի պարսիկ բանուորներ են աշխատում, ապա թաթարներ, հայեր, ռուսներ, յոյներ, տաճիկներ և ապա վրացիներ։ Հայերի թիւը գնալով պակասում է։

Բանուորները աշխատում են առաւօտեան ժամը 6-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը. միայն աշնանը $8^1/_2$ ժ. կէս ժամ նախաճաշիկի և կէս օրին մի ժամ ճաշի համար հանգիստ են տալիս, հետևապէս և աշխատանքը տևում է $10^1/_2$ ժամ։

Թէ ծառայողների և թէ բանուորների ռոճիկից մի տոկոս վերցնում են, որով և պահում են մի դեղատուն, մի բժիշկ և մի հիւանդանոց 16 մահճակալներով։ Թէ դեղերը և թէ բժշկական օգնութիւնը տրւում է 'ի տրիտուր այս վերցրած տոկոսի։

25 տարի ծառայողները կենսաթոշակ են ստանում։ Դժբաղդութեան պատահողներին ըստ կամս օգնում են։ Կայ նաև բանուորների բնակութեան յատկացրուած երեք շինութիւն, որոնք առողջապահական տեսակէտից շատ աննախանձելի են։

Գոնձի հանքեր անմշակ դրութեամբ գտնւում են նաև.

Զարդախլու գիւղից 8 վերստ արևմուտք, Ղազախի և Գանձակի սահմանի մօտ։

Սոկիւտլի գիւղի մօտ, մի վերստ հեռու Գետաբէկից Սլավեանկա տանող ճանապարհից։

Նախկին Սիլոն-քեանդի մօտ, Սլաւեանկից Զարդախլու տանող ճանապարհից մի վերստ հեռու, Ջակիրից 3 վերստ հիւսիս. Սլաւեանկա գիւղի մօտ։ Բաշքեանդ սարում։

Ղարաչայ գետի ձախ ափին, նրա Ղոչղարա (Գուրի աջ բազուկ) գետի մէջ թափուելու տեղից 2 վերստ բարձր։

Ջամքոր գետի ձախ ափին, Թաքնալու գեղից արևմուտք։

Ղոչղարա գետի քարէ կամուրջից արևմտահիւսիս, 3 վերստ հեռու, այս գետի ձախ ափին. Քարհատ գիւղից բարձր Քեամանդ լեռներում։

Դաստաֆուր գիւղի շրջակայքում, համանուն գետի մօտ։

Էյրալ-թախտ լեռան հիւսիս-արևմտեան լանջին։



Digitized by Google

Դաստաֆուր գետի ձախ ափին, Դաստաֆուր և Բալլուջա գիւղերի մէջ։

Ոսկանապատ և Միրզիկ գիւղերի մօտ։

Մուռութ գիւղի մօտ։

Ղարաքեշիշ գիւղի մօտ, Կանուտ-սար ժայռի տակ։

Սուլուկ գիւղի մօտ։

Գետաշէնում, Զրաղի ձորում։

Կեփաս-սարի շրջակայքում։

Ցինկի հանք (цинковыя руды)։

Բէուկ-Ամբ և Գալա (Гала) տեղերում։

Ծարրաֆար (Stibium, Сурьмяная руда).

Նիւզգեար և Սէյֆալի գիւղերի մօտ։

Կոբալտի հանք (Cobalt, Кобальтовыя руды.)

Ղոչղարա գետի մօտ, ձախ կողմում, Բալլուջա գիւղից 6 վերստ հիւսիս։

Տուտունց-առուի ձորակում, որա Ղոչղարայի մէջ թափուելու տեղից 2—3 վերստ բարձր։

Խաչ-Բուլախ-չայի (Ղոչղարայի վտակ) հովտում, գետի աջ ափում, վերին Քարհատի մօտ։

Համամ-չայի աջ կողմում։

Ձարունց-առուի հովտում, Քարհատ և Բանանց գիւղերի մէջ։

Նաև վերջերս գտնուած է Ոսկանապատ գիւղի մօտ։

Երկաթի հանքեր

Ջամքորի աջ կողմում, Սէյֆալի և Նուզգար գիւղերի միջև տարածուող բարձրութիւնների վրայ, Մեծ-Ղալա և Մեխտի խան (Նիւզգեարի մօտ) ձմեռանոցների մօտ։

Ղուշչի գիւղի մօտ (40° 44,7 հ. լ. և 63, 46,4 ա. եր.) Ղոչղարա գետի երկու կողմի լեռներում։

Զագադարայում. Քարհատում Սիմենաի ունեցած կոբալտի հանքից 5½—6 վերստ հարաւ, Սուլլու-Դարա և Նալու-ղշլախ տեղերում. Ղոչղարա գետի հովտում, Տուղոնց-առուի հետ միանալու տեղում։

Ղոչղարա-գետի վերին մասերում, Գիւնէյ Գէօրմազ լեռան ձորում, մագնիսական երկաթ է։

Ոսկանապատ գիւղի մօտ, Ղարաշէն կոչուած տեղում։

Նոյն գիւղի մօտ, Քաչքի ձորում. մագնիսական երկաթ։

Գիւլիստան գիւղի մօտ։

Քարհատի լեռներում. այս հանքի տիրապետութեան մասին երկար վէճ ծագեց քարհատցիների, որոնք իբր ի վաղուց հետէ այդ հանքը մշակողներ՝ պայմանաւորուել էին պ. Ա. Ծատուրեանի հետ և

Digitized by Google

մի քանի անձանց մէջ, որոնք այդ հանքը գտնող հանդիսանալով, սեպհականութեան իրաւունքը վաճառել էին ոմն Պաստուխովին։ Վէճը վերջացաւ յօգուտ Պաստուխովի և այժմ պատրաստութիւններ են տեսնւում նեղանիւ երկաթուղի անցկացնելու այդտեղ և գործարան հիմնելու։

Հ r ա f ա r (pyrite, сѣрный колчеданъ)։

Ղուշչի գիւղի մօտ։

Նիւզդար գիւղի մօտ, Գանձակից 25 վերս արևմտահարաւ, Սինիխդարա ձորում։ Ղազախ- Էյչիլար գիւղի մօտ, Նադիր-դաղի ստորոտում։ Ոսկանապատի մօտ, «Ղարաշէնում»։

Ձաւդար գիւղից 3 վերստ հեռաւորութեան վրայ։

Փայլածոյ թերթաքար (ֆր. Schiste micacê, micaschiste. Горючій сланецъ)

Աղ-Դուզ-դաղ կամ Կոնգուր կոչուած տեղում (920 ֆ. բ. բարձր.)։ Քոռ-չայի (Կուրի աջ վտակ) աջ կողմում։

Ն ա ւ թ

Գանձակից 30 վերստ դէպի հարաւ-արևելք և Ջէյվա նախկին փոստային կայարանից 4—5 վերստ հարաւ-արևմուտք. Գէօրան չայի աջ ափին։

Պ ա ղ լ ե ղ (ֆր. Alun, Квасцы и квасцовые: камень и сланецъ)։

Պաղլեղի ամենանշանաւոր հանքը գտնւում է Փիփ կամ Ջակլիկ գիւղից 4 վերստ հարաւ, Գանձակից 40 վերստ հեռու, Ջամքոր և Ղոչղարա գետերի միջև՝ առաւելապէս Ջորուլ Կոր լեռան մէջ։ Այս հանքը տարածւում է 17 վերստ երկարութեամբ (մինչև Ղուշչի գիւղը) և $1^1/_2$—2 վերստ լայնութեամբ։

Ինչպէս երևում է գտնուած մի քանի կաւէ և պղնձէ ամաններից, այս հանքը շահագործուելիս է եղել դեռ Հռովմայեցւոց տիրապետութեան ժամանակ։ Պարսից տիրապետութեան միջոցին ևս շարունակուել է դրա շահագործութիւնը տեղացի գիւղացիների ձեռքով, որոնք մի փոքրիկ տուրք են վճարել յօգուտ Գանձակի մեճիդիի։ Նոյնը շարունակուել է և ռուսաց տիրապետութեան ժամանակ.—ըսկըսած 1804 թուից մինչև 1865 թուականը այդ հանքը կապալով էր տրւում նախ գիւղացիներին և ապա մասնաւոր անձինքների՝ տարեկան 300—6000 ռուբլով։ 1865 թուին Խարիտոնովը արքունի գանձարանից 34,000 ռուբլի պարտք վերցնելով նոր գործարան և բնակարաններ հիմնեց, բայց յետոյ միջոց չունենալով շարունակելու, թողեց հեռացաւ և մի քանի տարուց յետոյ հանքի մշակութիւնը բոլորովին դադարեց։

Digitized by Google

Այստեղի պաղեղը ամենալաւ տեսակից է և ըստ Սարուվէի նրա բաղադրիչ մասերն են.

| | | |
|---|---|---|
| Կաւահող | 37, 58 | » |
| Կալի—(Кали) | 9, 00 | » |
| Երկաթի օքսիտ (окисъ желѣза) | — | » |
| Ծծմբային թթուատ (сѣрная кислота) | 38, 33 | » |
| Խճաձին (кремнеземъ) | 0, 14 | » |
| Ջուր | 14, 28 | » |
| | 99 93 | |

Միջին համեմատական (удѣльный) քաշն է 2,7838 *).

Բացի Փիփից, պաղեղի հանքեր կան նաև Ղուշչի գիւղի մօտ, որ միանգամայն նման է Փիփի հանքին։

Բանանց գիւղի շրջակայքում։

Բախշիկ գիւղի մօտ, Նիզգեար գիւղից 3 վերստ հարաւ։

Մարմարիօն և մարմարանման կրաքար (Мраморъ и мраморовидный известнякъ).

Քարհատ և Զազադարասի գիւղերի մէջ, Խաչ-բուլախ-չայ գետի մօտ։

Խարխափուտ գիւղում։

Ջինուքեան քար

ա) Կրաքար և դոլոմիտ (Известнякъ и доломитъ) Ելենէնդորֆ գաղութի շրջակայքում.

բ) Ոչխարք, ֆերքաքար և շեղջաքար, (Кварцитъ, песчаникъ и конгломератъ) Աբլահի քարհատը։

գ) Տրաքիտ (trachyte) Ելենէնդորֆ գաղութից 12 վերստ հարաւ։ Գանձակից 20 վերստ հարաւ Հաջիքենդի մօտ։

Ցեմենտային քար (Цементный камень).

Գանձակ գետի հովտում, վեց վերստ հարաւ։

Կրակի դիմացող կաւ (огнеупорная глина)։

Ճաքիր-բէկ գիւղի մօտ, Գետաբէգի պղնձահալական գործարանից 8 վերստ հիւսիս-արևմուտք։

Ղարաբուլախ գիւղի մօտ։

Որձաքար, (Quarz, Кварцъ)

Այքենտ-գիւղի մօտ Գետաբէկի պղնձահալական գործարանից 5—6 վերստ հեռու։

Վիմագրական քար

Գանձակից 10 վերստ հեռու Մոլլա-Ջալի սահմանում։

*) Богачевъ: „Загликскій Квасцовый заводъ"—въ Запискахъ Кавказскаго Отдѣленія Русскаго Техническаго Общества Т. IV. ст 353.

Digitized by Google

Հանքային օճառ (горное мыло) Ելենէնդորֆ գաղութից 2 վերստ արևելք։

Հանքային ջրեր

Սլավեանկա գիւղից հարաւ-արևմուտք 40°23,4 հիւս. լ. և 63°37,5 ա. եր. տակ. սառն, հանքային աղբիւր է, «Ջաջիրա» (джаджира) անունով յայտնի։

Հանիքենդ և Մուռութ գիւղերի միջև, սելտերեան թոյլ ջուր է։

Զարեքի վանքի կայուածում, Այթալու վտակի ձախ ափին, ծծրմքային սառն աղբիւր *)։

## ԿԼԻՄԱՆ

Որովհետև ոչ թէ Գանձակի գաւառի միքանի մասերում, այլ միայն Գանձակում կայ օդերևոյթաբանական կայարան, ուստի և՛ ես, այդ դիտողութիւնների հինգ տարուայ (1893—1897) թուերն առնելով Թիֆլիսի օդերևոյթաբանական գլխաւոր կայարանից, միջին թիւ դուրս բերի և ստացայ հետևեալ երկու աղիւսակները, որոնք պարզ որոշում են Գանձակի և նրա բարձրութեան վրայ եղած միւս տեղերի կլիման։

Այս աղիւսակից հետևում է։

1) Գանձակում օդի ճնշումը տարեկան միջին թուով հասնում է 724,₀ միլլիմետրի, օրորուելով 727,₀-ի, որ բարձրանում է հոկտեմբերին և 720,₀-ի մէջ, որ իջնում է յունիս և յուլիս ամիսներին։

2) Բարոմետրի տարեկան maximum-ը հաւասար է 737,₅ որ բարձրանում է դեկտեմբերին, իսկ minimum-ը 713,₀-ը, որ իջնում է մարտին։

3) Տարեկան միջին ջերմութիւնն է 12,₅. maximum-ը ₈34,₀ (օգոստոսին), միջին minimum-ը 7,₀, իսկ բացարձակ minimum-ը—9,₇ (յունուարին)։

Ամենախոնաւ ամիսները՝ հոկտեմբերը և յունուարն են, ամենապակաս խոնաւը՝ օգոստոսը։

*) Օգտուել ենք նաև Полезныя ископаемыя и минеральныя воды Кавказскаго края. сос. Меллеръ С. Пб. 1896.

Digitized by Google

| Ամիսներ | Բարոմետր. | | | ՋԵՐՄՈՒԹԻՒՆ. | | | | | | | Հացարձակ խոնաւութիւն. | | | Յարաբեր. խոնաւութիւն. | | | Ամպամած. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջին | Max. | Min. | 7. | 1. | 9. | Միջ. | Max. | Հաց. Min. | Միջ. Min. | 7. | 1. | 9. | 7. | 1. | 9. | 7. | 1. | 9. |
| Յունուար . | 726,5 | 735,6 | 715,9 | —2,2 | 2,5 | —1,2 | —0,3 | 10,7 | —9,7 | —0,4 | 3,5 | 4,1 | 3,7 | 90,2 | 74,8 | 89,0 | 6,9 | 7,0 | 6,4 |
| Փետրուար . | 723,9 | 732,9 | 713,9 | —1,7 | 5,7 | 1,4 | 1,8 | 14,6 | —9,4 | —1,7 | 3,6 | 3,9 | 3,9 | 83,6 | 59,0 | 77,0 | 5,6 | 5,7 | 5,1 |
| Մարտ . . . | 722,6 | 731.2 | 713,8 | 2,3 | 10,5 | 5,7 | 6,2 | 19,4 | 4,5 | 0,8 | 4,8 | 5,4 | 5,4 | 85,0 | 61,2 | 79,0 | 7,0 | 7,0 | 5,5 |
| Ապրիլ . . . | 723,1 | 731,2 | 714,8 | 7,7 | 13,6 | 9,7 | 10,3 | 22,0 | —0,1 | 5,6 | 6,7 | 7,3 | 7,3 | 84,0 | 63,8 | 81,0 | 7,2 | 7,1 | 6,1 |
| Մայիս . . . | 722,4 | 728,7 | 715,4 | 14,5 | 21,0 | 15,8 | 17,1 | 27,2 | 6,8 | 11,8 | 10,1 | 10,6 | 10,7 | 82,2 | 58,8 | 81,2 | 6,4 | 6,8 | 5,4 |
| Յունիս . . . | 720,9 | 726,5 | 715,9 | 18,8 | 26,0 | 20,4 | 21,1 | 33,3 | 11,8 | 14,6 | 11,6 | 12,3 | 12,1 | 71,8 | 48,2 | 69,0 | 4,2 | 5,1 | 4,6 |
| Յուլիս . . . | 720,9 | 725,9 | 714,8 | 20,5 | 28,8 | 23,1 | 24,1 | 34,4 | 11,8 | 16,9 | 12,2 | 12,2 | 12,5 | 69,2 | 43,0 | 60,8 | 4,6 | 4,9 | 3,8 |
| Օգոստոս . . | 721,5 | 727,4 | 715,9 | 21,2 | 30,2 | 24,1 | 25,1 | 34,6 | 14,5 | 20,3 | 13,2 | 13,5 | 13,1 | 71,4 | 43,0 | 55,8 | 4,2 | 4,1 | 3,2 |
| Սեպտեմբեր | 724,2 | 731,5 | 716,9 | 15,5 | 24,2 | 18,0 | 18,8 | 31,2 | 6,5 | 14,3 | 11,1 | 11,9 | 9,5 | 84,6 | 53,8 | 75,4 | 4,6 | 4,8 | 3,7 |
| Հոկտեմբեր. | 727,8 | 734,5 | 719,9 | 8,5 | 18,3 | 12,4 | 13,8 | 24,6 | 3,6 | 9,1 | 8,8 | 9,5 | 9,2 | 90,6 | 62,4 | 86,0 | 6,1 | 5,7 | 4,4 |
| Նոյեմբեր. . | 727,3 | 737,0 | 717,[illegible] | 4,2 | 10,3 | 5,5 | 6,7 | 19,4 | - 0,7 | 1,8 | 5,4 | 6,1 | 5,8 | 87,8 | 66,0 | 84,0 | 6,3 | 6,2 | 5,0 |
| Դեկտեմբեր | 727,1 | 737,5 | 719,2 | 0,5 | 5,8 | 2,0 | 2,8 | 14,1 | —2,9 | 0 | 4,3 | 4,8 | 8,6 | 88,0 | 73,8 | 86,4 | 7,0 | 6,7 | 5,4 |
| Տարի | 724,0 | 737,5 | 713,8 | 9,2 | 16,4 | 11,4 | 12,3 | 34,6 | —9,7 | 7,8 | 7,9 | 8,5 | 8,4 | 82,4 | 59,0 | 77,5 | 5,8 | 5,9 | 4,9 |

Digitized by Google

| | Քամու ոյժը. | | | ՔԱՄԻՆԵՐ. | | | | | | | | Հանդարտ. | Նստոյցք. (Précipitations) (осадки). | | | ՕՐԵՐ. | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 7 ժամին | 1 | 9 | N. | NE. | E. | SE. | S. | SW. | W. | NN. | | Դումար. | Maxim. | Թիւ. | Նստոյց. | Ձիւն. | Կարկուտ | Կայծակ | Փոթոր. | Մշուշ. | Մրրիկ | Ջերմութ. Max. 0° | Ջերմութ. Min. 0° |
| Յունուար. | 0,7 | 1,2 | 0,6 | 1,2 | 0,2 | 2,5 | 0,2 | 0,6 | 2,0 | 9,8 | 7,6 | 68,2 | 12,1 | 5,2 | 7,0 | 7 | 5 | 0 | 0 | 5 | 13 | 0 | 8 | 30 |
| Փետրուար | 1,4 | 2,9 | 1,4 | 2,0 | 1,8 | 1,0 | 0,2 | 1,6 | 4,2 | 12,4 | 11,6 | 51,0 | 12,2 | 6,5 | 14,2 | 4,2 | 3 | 0 | 0 | 4 | 7 | 1,5 | 3 | 21 |
| Մարտ. . . | 1,0 | 1,3 | 0,7 | 3,6 | 3,2 | 6,2 | 0,2 | 0,6 | 4,4 | 7,8 | 7,4 | 61,8 | 14,6 | 4,5 | 17,2 | 7,0 | 2 | 0 | 0 | 3 | 11 | 0,4 | 0 | 11 |
| Ապրիլ. . . | 1,6 | 1,7 | 1,5 | 4,0 | 1,6 | 5,6 | 0,8 | 0,6 | 2,7 | 9,0 | 11,4 | 55,2 | 37,1 | 10,2 | 10,6 | 9,2 | 0,4 | 0 | 0,4 | 3 | 14 | 1,4 | 0 | 1 |
| Մայիս. . . | 1,6 | 1,7 | 0,7 | 2,0 | 2,0 | 10,0 | 2,2 | 0,8 | 0,8 | 8,6 | 7,8 | 58,6 | 32,3 | 11,2 | 12,6 | 11,4 | 0,0 | 1 | 3 | 2 | 10 | 0,4 | 0 | 0 |
| Յունիս . . | 1,3 | 2,5 | 1,8 | 3,2 | 2,2 | 7,4 | 2,6 | 0,6 | 2,2 | 12,2 | 15,8 | 44,0 | 35,2 | 15,5 | 14,0 | 10,2 | 0 | 1 | 4 | 7 | 4 | 1,2 | 0 | 0 |
| Յուլիս. . . | 1,4 | 2,5 | 1,4 | 3,2 | 4,2 | 11,2 | 2,4 | 0,8 | 0,3 | 8,4 | 10,4 | 50,6 | 17,4 | 6,3 | 12,4 | 7,4 | 0 | 0 | 2 | 10 | 6 | 1,4 | 0 | 0 |
| Օգոստոս . | 1,2 | 2,6 | 1,1 | 2,8 | 3,4 | 11,2 | 3,0 | 0,8 | 1,5 | 7,2 | 8,0 | 50,6 | 8,8 | 5,9 | 14,0 | 3,6 | 0 | 0 | 2 | 11 | 3 | 1,4 | 0 | 0 |
| Սեպտեմբեր | 1,0 | 1,8 | 0,9 | 1,6 | 2,4 | 4,6 | 1,6 | 0,4 | 1,6 | 9,0 | 10,2 | 60,8 | 36,5 | 18,9 | 16,0 | 6,4 | 0 | 0 | 0 | 9 | 6 | 1,0 | 0 | 0 |
| Հոկտեմբեր | 0,5 | 0,9 | 0,3 | 0,8 | 0,8 | 2,2 | 1,3 | 0,6 | 2,4 | 6,4 | 3,2 | 76,2 | 12,6 | 6,5 | 15,8 | 5,0 | 0 | 0 | 0 | 6 | 8 | 1,0 | 0 | 0 |
| Նոյեմբեր . | 0,8 | 1,3 | 1,0 | 0,2 | 0,6 | 1,0 | 0 | 0,2 | 4,5 | 15,4 | 8,6 | 59,0 | 25,2 | 8,7 | 15,6 | 9,4 | 1,0 | 0 | 0 | 5 | 9 | 2,0 | 0 | 11 |
| Դեկտեմբեր | 0,9 | 1,3 | 0,5 | 0,8 | 1,6 | 1,0 | 0 | 0,8 | 4,2 | 11,2 | 6,6 | 68,8 | 10,3 | 5,2 | 20,0 | 5,2 | 3,0 | 0 | 0 | 4 | 10 | 0,3 | 2 | 20 |
| Տարի . . . | 1,1 | 1,9 | 1,0 | 25,4 | 24,0 | 64 | 14 | 8,4 | 30,8 | 117,4 | 109,6 | 704,8 | 254,3 | 18,9 | — | 86,0 | 14,4 | 2 | 11,4 | 69 | 101 | 12,0 | 14 | 94 |

Digitized by Google

Այս աղիւսակից էլ հետևում է.

1) Տիրապետող քամիներն են. արևմտեան (117,1) և հիւսիս-արևմտեանը (109,6), յետոյ արևելեան (64) և հարաւ-արևմտեանը (30,8)։ Ամենից շատ հողմեր փչում են յունիսին և ամենից քիչ՝ հոկտեմբերին։ Քամին ամենից սաստիկ փչում է փետրուարին (2,9) և ամառը, երբ շատ անգամ ծառեր է տապալում, իսկ ամենից թոյլ՝ հոկտեմբերին։

Ամենաշատ նստոյցքը տեղի է ունենում ապրիլին (37,1) և յունիսին (35,2), իսկ ամենից քիչ՝ օգոստոսին և յուլիսին. այս երկու ամիսը սաստիկ երաշտ է լինում և մեծամեծ վնասներ պատճառում։

Առաջին անգամ ձիւն գալիս է նոյեմբերի վերջին (մի անգամ), ապա մի քանի անգամներ միայն գալով՝ վերջանում է մարտին. առհասարակ ձիւն շատ քիչ է գալիս։

Կայծակը աւելի պատահում է յունիս ամսին. իսկ կարկուտ, թէև ոչ յաճախ՝ մայիսին և յունիսին։

Ամենից աւելի անպամած օրեր տեղի են ունենում ապրիլին (14), յունուարին (13) և մարտին (11), իսկ ամենից քիչ՝ օգոստոսին (3)։

Ինչ վերաբերում է ամբողջ գաւառի կլիմային, յարմար դատեցի առաջ բերել պ. Աբելեանի հետևեալ հինգ գօտիների բաժանումը։

I. Առաջին, բարձր ալպեան գօտին, զրկուած անտառային բուսականութիւնից, բռնում է գաւառի հարաւարևմտեան կողմը, 5,500—6000′ բարձրութիւնից մինչև 9,500—10,000′ ծովի մակերևոյթից, հիւսիսային լայնութեան 40°1′ և 40°8′ միջև։ Այս ամբողջ գօտում չկայ ոչ մի գիւղ, թէև Խաչ-բուլաղ եկեղեցում եղած հայկական գիւղի և եկեղեցու աւերակները ցոյց են տալիս, որ և այս գօտում, գոնէ նրա հիւսիսային մասում, ապրել է հաստատաբնակ ժողովուրդ։ Այս գօտին բաղկացած լինելով լեռների գագաթներից, փոքրիկ հարթութիւններից, ոչ խոր ձորերից և ձորակներից, բարձր գագաթներից, ներկայացնում է ամառային արօտատեղիներ, որ կենդանութիւն է ստանում մայիսի սկզբից մինչև օգոստոսի կէսը, սարուորների և նրանց անասունների գալով։ Այս միջոցում տեղի են ունենում կարճատև անձրևներ, յաճախակի մառախուղ, որ շարունակ վերանորոգում են ալպեան կանանչը։ Մնացած 8—9 ամիսների ընթացքում ամբողջ գօտին պառկած է լինում ձեան սաւանի տակ և նրա վրայ ազատ խաղում են բուքն ու բորանը։

II. Արօտատեղիների գօտուց ցած, դէպի հիւսիս-արևելք, 4000′ մինչև 6000′ և աւելի բարձրութեան վրայ ձգւում է անտառային գօտին, ուր անտառոտ ընդարձակ տեղերի հետ միասին գտնւում են և՝ վարելահողեր, խոտատեղիներ և արօտատեղեր։ Այս գօտին տարածւում է բաւականաչափ դէպի հիւսիս, մինչև լեռների ստորոտները։

Digitized by Google

Սրա հարաւային մասում մշակւում են միայն կեռասենի և շլորենի. հիւսիսային մասում, մեծ գետերի խոր ձորերում հասնում է և խաղողի որթը։ Ամբողջ գաւառին կառավարւում է առանց արհեստական ոռոգման, բացի բանջարանոցներից և խաղողի այգիներից, որոնք անշուշտ ջրւում են գետերի կամ աղբիւրների ջրով։ Սակայն այս գաւառ գիւղերից մինում, Գետաշէնում, հացհատիկների հունձը աւելի ապահովելու համար, ջրանցքներ են անցկացրել և արտերը ջրելու։

Այս գաւառում ձմեռը, ընդհանրապէս, խիստ չէ, թէև երկարատև է և ձիւնառատ. հիւսիսային կողմում նա բաւականաչափ մեղմ է, քան թէ հարաւայինում։ Բարձր և բաց տեղերում, որոնք ենթակայ են հարաւ-արևմտեան և հիւսիս-արևելեան քամիներին, ձմեռը, բնականաբար, աւելի խիստ է, քան թէ գետերի և գետակների խոր հովիտներում, և առհասարակ պաշտպանուած տեղերում։ Այնտեղ՝ ուր հովիտի լանջն էլ դէպի արեգակի կողմն է նայում, հիմնւում են լեռնային ժողովուրդների ձմերանոցները, որովհետև ձմրան արեգակի ճառագայթների տաքութիւնը բաւական է որ ձիւնը հալչի և նրա տակից խոտն երևայ։ Երկարատև և սաստիկ ցրտեր այս գաւառում չեն լինում, միայն թեթի և բորան հազուագիւտ չեն. ձեան հիւսեր ճանապարհների վերայ և ցրտից անասունների ջարդ նոյնպէս սովորական երևոյթներ են։ Վեցամսեայ ձմրան (սեպտեմբերից մինչև ապրել) հետևում է տարուայ տաք եղանակը, որը միայն յուլիսի կիսից մինչև օգոստոսի կէսն ստանում է ամառուայ բնաւորութիւն։ Տարուայ այս եղանակին յաճախակի լինում են անձրևներ, մառախուղ և կարկուտ։

Այստեղի երկարատև և կարճատև անձրևները, ցօղելով գետինն ու մթնոլորտը՝ բուսական կեանքին անհրաժեշտ չափով, կազմում են գիւղացիների ցանկացած երկնային պարգևը,—ի հարկէ, եթէ դրանք իւր ժամանակին են։ Յորդ, նոյն իսկ ոչ երկարատև, բայց ուժեղ, անձրևներն երբեմն մեծ վնասներ են պատճառում ցանքներին, թէև ոչ այն չափով, ինչպիսին պատճառում է կարկուտը, որ այս գաւառում քրոնիկական բնաւորութիւն է կրում։ Կարկուտին ենթարկուած են աւելի լեռնային, բարձր տեղերը, իսկ գետերի խոր հովիտները և ցածրանիստ տեղերը շատ հազիւ։ Կարկուտը պատահում է ամբողջ տաք եղանակի ընթացքում, բայց առաւելապէս յունիս, յուլիս և օգոստոս ամիսներին, այսինքն ցանքսերի համար ամենամնասակար միջոցին։ Շատ անգամ անձրևներն սկսում են ուղղակի կարկուտով. այսպիսի դէպքերում կարկուտը ընկնելուն պէս հալչում է, այս հանգամանքը նախագուշակում է, որ շուտով կարկուտը անձրևի տիտի փոխուի։ Կարկուտը երբեմն շատ մեծ է լինում, մինչև հաւկթի մեծութեան։

III. Անտառային գաւառից յետոյ գալիս է Բիւրակայի գաւառ, որ բաղկացած է ոչ շատ բարձր բլրակների շարքերից և գետերի լայն, ջրար-

Digitized by Google

բի հովիտներից։ Այս գոտու գիւղական հողերի լեռնային մասի հարաւային գիծը ընդհարւում է վերոյիշեալ գոտուն և չի կարօտում արհեստական ոռոգման։ Ընդհակառակը, հիւսիսային լեռնային գիծը, որ կազմուած է կրաքարից, արհեստական ոռոգման համար յարմարութիւններ չի ներկայացնում և ծառայում է որպէս անասունների ձմեռուայ արօտատեղի։ Ինչ վերաբերում է գետափնեայ ցածրանիստ հողերին, դրանք բոլորովին նմանում են ցածրանիստ ջրարբի գոտուն։

IV. Զակամից մինչև Ինճայ-չայ և լեռնաստորոտից մինչև Կուր գետը (արևմուտքում) և Բոզ լեռնաշղթայի լանջը, ներկայացնում է ցածրանիստ տաք գոտի, որի յատկանիշ գիծը անշուշտ կազմում է արհեստական ոռոգումը, ուստի և մենք նրան կոչում ենք ցածրանիստ ջրարբի գոտի։

V. Վերջապէս գալիս է Կուրի նեղ գետափը, նրա երկու կողմից ցածրանիստ և Կուրի հեղեղումներով ողողուած մի տարածութիւն. սակայն նրա աջ ափին կայ մի ցածրանիստ, ջրարբի գոտի, որ ոռոգւում է Ալազանի ջրով։

Կլիմայի և հողի յատկութեան տեսակէտից ինչպէս Կուրի գետափնեայ, այնպէս և ցածրանիստ ջրարբի գոտիները լիովին նման են միմեանց։ Այդտեղ ձմեռները կարճատև են, անձրևային, ձիւն քիչ է գալիս, սաստիկ ցրտեր հազիւ են պատահում։ Այսպիսի ձմեռը նպաստում է անապատային բուսականութեան մշտատև վերանորոգման, որը ապահովում է թափառականների բազմաթիւ անասուններին արածելու խոտով։ Ցուրտ ձմեռներում, ի հարկէ, այս գոտիներում խոտի պակասութիւն է զգացւում և անասունների ջարդ է տիրում։

Փետրուարի կիսից արդէն ձմեռը տեղի է տալիս գարնան, որը ապրիլի վերջին այնքան տաք է լինում, որ սարուորները իրենց հոտերով շտապում են դէպի սարերը. համարեա մայիսի վերջից մինչև սեպտեմբեր այս գոտիներում անձրև չի գալիս։ Մթնոլորդը սաստիկ չորանում է, բուսական կեանքը պահպանւում է միմիայն արհեստական ոռոգմամբ։ Գետերի ջրի առատութիւնը միանգամայն կախուած է լեռնային գոտու անձրևներից. որքան ամառը լեռների վրայ անձրևային է, այնքան աւելի գետերում ջուր է լինում—նշանակում է այնքան աւելի ցածրանիստ տեղերի ցանքսերը ապահովուած են ոռոգող ջրով։ Տիրապետող հիւսիսարևելեան և հարաւարևմտեան քամիները համարեա զրկուում են իրենց խոնաւութիւնից մինչև կրհասնեն այս դաշտավայրի սահմանին, ուստի և հասկի լցուելու ժամանակ սաստիկ վնասում են նրան, և. ինչպէս ասում են գիւղացիները «վառում են» արտերը։ Երբեմն էլ այնպիսի սաստիկ քամիներ են փչում, որ կոտրատում են այգիների ծառերը և պառկեցնում ցանքսերը։

Digitized by Google

## ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ *).

—

*Գանձակի գաւառը շատ հարուստ է բուսականութեամբ. կլիմայի և հողի յատկութեան տարբերութիւնները պատճառ են դառնում բուսականութեան բազմազանութեան։ Հայ-Գանձակեան լեռնաշղթայի և նրա ճիւղաւորութիւնների լանջերը հարուստ են ալպեան բուսականութեամբ և կազմում են հիանալի արօտատեղեր, մօտ 69,029 դեսիատին տարածութեամբ։*

Այստեղ լինում են հետեւեալ խոտային բոյսերը.

**Թանթրուենի** (бузина—sambucus nigra).
**Փիփերբ** (мальва—malva silvestris).
**Ջղախոտ** (*տեղ. տխտկուռ*) (подорожникъ—plantago major).
**Առուոյտ** (*սիրի-սիրի*) (клеверъ—trifolium *մի քանի տեսակներ*)։
**Հուն գաղձ** (*ցտի ճինջաղ*) повилица—cuscuta.
**Արջրնկոյզ** (дурманъ—datura stramonium).
**Սեւ բանգ** (бѣлена—hyoscyamus niger).
**Կաղրնձնի** (заразиха—orobanche).
**Սպիտակ եղնմայր** (глухая крапива—lamium album).
**Վայրի տորոն** (марена—rubia tinctorum).
**Հասարակ մատուտակ** (*բիեան*) (солодка—glycyrrhiza glabra).
**Զանգակիկ** (колокольчики—campanula *մի քանի տեսակներ*)։
**Մորի** (земляника—fragaria vesca).
**Մորի** (клубника—fragaria elatior).
**Կուաբանջար** (одуванчикъ—taraxacum officinale).
**Տատասկափուշ** (чертополохъ—carduns acanthoides).
**Վայրենի մեխակ** (гвоздика—Dianthus).
**Հասարակ յատուկ** (дик. резеда—Reseda lutea).
**Կակաչ կամ պուս** (макъ—papaner *զանազան տեսակներ*)։
**Գայլուկ** (хмель—humulus lupulus).
**Եղին** (крапива—urtica).
**Հիրիկ** (касатикъ—iris germanica).
**Ծնեբեկ** (спаржа—asparagus officinalis).
**Հասարակ եղեգն** (камышъ—arundo donat).
**Ձիաձեռ** (хвощъ—eguisetum)
**Ճարխոտեր կամ պտերներ** (папоротники—filices).

---

*) *Այս բոյսերից շատերի անուններն ստացել եմ պ. Ս. Բալաղեանից, որի համար և շնորհակալութիւնս եմ յայտնում։*

Digitized by Google

Մամուռներ, սունկեր, քարաքոսներ, ջրիմուքներ.
Դաւշաց ուրց (Tymus serpillum).
Կորդիւն (Satureja horteusis).
Պատրինջ (Melissa officinalis).
Նրեսապակ (Salvia).
Դեղուկ լեռ (Dictamrus).
Աղուեսապոչ (Alopecurus pratensis).
Հաստուրակ խոտեր (Poa).
Փեսուկ (Phleum Festuca).
Խրցակ (Bromus arvensis).

Ոսկանապատի, Բանանցի, Զամքորի, Ջեկամի լեռնոտ շրջակայքը և Դալլարի, Մինգեչաուրի և Սամուխի հարթութիւնները, որ ձգումեն Կուրի ցածր գետափին, ծածկաւած են անտառային բուսականութեամբ մօտ 127,529₃₇ դեսիատին տարածութեամբ։ Այս անտառներում առաւելապէս գտնւում են.

1) Կաղնի, (quercus).
2) Լորենի (липа—tilia europica).
3) Լինեստրեւի (остролистный клёнъ).
4) Թողուսի (զարաղաջ ильмъ).
5) Հացի (ясень—fraxinus etcelsior).
6) Կեչի Берёза—betulus).
7) Թզկի (кленъ—acer tatarica).
8) Զամ (сосна—pinus silvestris).
9) Կենի (красное д. тисъ).
10) Ցրտրցի (можевельникъ—juniperus).
11) Հանտառի (букъ—fagus silvatica).
12) Բոխի (грабъ—carpinus betulus, որից նշանաւոր են Խնձենի և բիզի տեսակները).
13) Սրհացի (рябина). Ծառերը, ինչպէս և Ազնի (бояршникъ —ctaraegus), զկոի (мушмула—mespilus germanica).

Կիլիմասրի (гордовина viburnum lantana).
Նոխուր (барбарисъ—berberis vulgaris).
Փուճի—каркасъ—celtis australis.
Մասրի—шиповникъ—rosa canina.
Արեւելեան սօսի—чинаръ—platanus orientalis.
Ցաքի—держи-дерево, paliurus aculeatus.
Մորի, մորենի—малина—Rubus idacus.
Մոռենի—ежевика—rubus caesis նաև R. fructicosus թփերը և վայրի՝

Տանձի—грушa—Purus communis.
Խնձորենի—яблоня—malus communis.
Սեկնելի—айва—Cydonia vulgaris.
Նռնենի—гранатъ—Punica granatum.
Հաղեղ—плющъ—hedera helix.
Թթենի—шелковица—morus alba և morus nigra.

Հովիտները բնուած են պարտէզներով, ուր ճշակում են խնձորենի, տանձենի, կեռասենի, թթենի, դեղձի, նռնենի, սերկևիլի, շագանակի և այլն։

Դաշտային ցածր մասերում տարածում են խաղողի ընդարձակ այգիները, որ առատութեամբ տալիս են խաղողի բազմաթիւ տեսակները *)։

---

## ԿԵՆԴԱՆԻՆԵՐ.

Գանձակը գտնուելով Գանձակ գետի հովտում, որ թեքուած է դէպի հիւսիս և ցածր մասերում, կամ գիւղի մօտերքը ունի բաւականաչափ ճահիճներ, ծածկուած է եղեգնով, կնիանով (осока) և ուրիշ ճահճային բոյսերով. գրեթէ բոլոր կողմերից շրջապատուած է թուրներով և լեռներով, ծածկուած անտառային բուսականութեամբ, որոնց մէջ ապաստան են գտնում վայրենի փենդանիների շատ տեսակները։

Տեղի բաւական բազմազանութիւնը պատճառ է դառնում և կենդանական թագաւորութեան բազմազան տեսակների։ Սա մանաւանդ նկատուում է այդ թագաւորութեան փետրաւոր (пернатыхъ) ներկայացուցիչների վրայ, որովհետև սրանց բուն գնելու սովորութիւնները և որսի կիրքերը շատ զանազանակերպ են։ Գարնան առաջին տաքերները բերում են տարեակները (скворцы) և սարտոյները (жаворонокъ)։ մանաւանդ վերջինները։ Սրանք երկում են փետրոտի վերջին կամ մարտի սկզբին։ Շատ անգամ պատահում է, որ տաք ձմեռները սարտոյները չեն հեռանում և ձմեռում են ագռաւներ։ Փոքրիկ խմբերով ապրում են դաշտերում և երբ յանկարծ ցրտից բռնուում են, փախչում են քաղաք։ Սրանց երկու տեսակը կայ՝ մարգէզի սարտոյ (жаворонокъ полевой, турагай, Alauda arvensis L.) և կատարաւոր սարտոյ (Ж. хохлатый, Al. cristata L. Galerita cristata L.)։ Սարտոյները վատ չեն երգում և տեղացիները նրանց պահում են վանդակներում։ Նրանք շուտով ընտելանում են։

---

*) Ինչպէս խաղողի, այնպէս և պտղատու ծառերի տեսակները տես՝ Այգեգործութեան գլխում։

Digitized by Google

Սարեակները, կամ տեղական բառով ժեռերը, ձմեռը թողնում են Գանձակը։ Վարդագոյն սարեակը (Розовый скварецъ, или каменный, ширкуни) Pastor roseus L.). մարտի կիսին կամ ապրիլի սկզբին է գալիս. Թուրքերը այս թռչունը սուրբ են համարում, որովհետև նրանք կոտորում են մորեխներին։ Թէ առաջին և թէ երկրորդ տեսակի դեղձանիկները հեռանում են հոկտեմբերի վերջին։

Մարտի վերջին, հէնց որ ծառերը կանաչում են, գալիս են ծիծեռնակները, (Hirundo urrica L.) Միքանիսը իսկոյն կարկատում են իրենց հին բները, միւսները նորերն են շինում և մի քանի օրից վեց ձու ածում։

Ծիծեռնակից յետոյ գալիս են բազմաթիւ թռչուններ, որոնցից նշանաւոր են. պիրոլը, (крикливая иволга, կարկաչուն մշահաւ, ղէօրդ, Oriolus galbula L.), այստեղի ամենագեղեցիկ թռչուններից մինը։ Սա լաւ է երգում, մանաւանդ ձու դնելիս։

Ճարեկը կամ տորդիկ (черный дроздъ, Թր. Ղարաթաւուղ, Turdus merula L.), ամբողջ տարին, և նոյն իսկ ձմեռը այստեղ է անցկացնում։ Սրա արուն սկսում է երգել մարտ ամսից և երգում է մինչև ամառ։ Պարսկաստանի սոխակը (Соловей Гафиза или персидскій, Lusciola Hafizi Severz.) թռչում է այստեղ ապրիլի կիսին կամ վերջին։ Սրանք մեծ քանակութեամբ են լինում և ամէն մի այգում կամ պարտիզում գտնւում են, միայն այնպէս քաղցր չեն երգում, ինչպէս արևելեան և արևմտեան սոխակները։

Խաղտրտնիկը (Плиска или трясогузка, Motacilla alba L.). ջրերի մօտ է ապրում։ Շատ անգամ ձմեռում է այստեղ և եթէ գընում էլ է, վերադառնում է մարտի սկզբին։ Նաև կան՝ մոխրագոյն անծեղ (сѣрый сорокопутъ, Enneoctonus excubitor L.), խաձկտիկ, (снигиръ, Pirrhula vulgaris Bechst). ճեղագռաւ (сивоворонка или ракша, (Coracias garrulaL.) ցոպլոպ. (Թուրք. ֆաթմա-պաճի. Upupa epops L.) պիծակասպան (щурка или пчѣловѣдъ=երաշտահաւ (Merops apioster.) և ձկնկուլ. Աղկիոն (зимородокъ.) Գիշերային գիշատիչ թռչուններից նշանաւոր են բու, (филинъ, Strix Bubo, Bubo maximus L.) որ 2 ֆուտ բարձրութեան է հասնում։

Վերոյիշեալ թռչունները պատկանում են երգեցիկների խմբին և ոչ միայն օգտաւէտ են իրենց երգերով մեզ զուարճացնելու պատճառով, այլ և կոտորում են մի քանի վնասակար միջատներ, թրթռուններ, ճուներ և այլն։

Անտառի աւելի մեծ թռչուններից նշանաւոր են. կկուն և կրացահարի մի քանի տեսակները։ Սովորական կկուն (обыкновенная кукушка, cuculus canarus L.) այստեղ է թռչում ապրիլի վերջին, և մի-

Digitized by Google

այն ամառն է մնում. կոցահարներից այստեղ միայն երեք տեսակը կան. լիսեռնիկ (дятель-вертиголовка, աղաջ-դալէան, Jynx torquilla L.) կանաչ կոցահար (зеленый д. Picus viridis) և սև կոցահար (черный д. P. Martius L). սրանք առաւելապէս գտնւում են Ա-զատ գիւղի անտառներում։

Ագռաւների (Corvinae) տեսակներից համարեա բոլորն էլ կան, միայն աւելի նշանաւոր է սև, հասարակ ագռաւը, կռաւաբ (тулашъ. черный воронъ, Corvus corax L.). կայ նաև սերմնաքաղ ագռաւ (грячъ C. frigilegus). կաչաղակ (сорока бѣлобокая, թր, սաղ-սաղան, Pica caudata Briss). և ճայր կամ չարդը (сойка, garrulus glandarius L)։

Գիշատիչ թռչուններից կան թէ ցերեկուայ և թէ գիշերուայ։ Առաջիններից նշանաւոր են սպիտակագի արծիւը, (орелъ бѣлохвостый Haliaëtus albicilla L.) սև անգղ (черный коршунъ, չամաղան, Milvus niger Briss), կարմիր անգղ (красный коршунъ), սակը (ястребъ-утятникъ կիրղի, թրք. Astur palumbarius L.) և ճուռակը (պարսկ. շահէն, ястребъ переплятникъ, astur nisus L.) սրանք մեծ քանակութեամբ ոչնչացնում են դաշտային մկներին։ Ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին գալիս են որձ լորը (перепель бильдерчин, Coturnix communis Bonn.) սրա հետ գալիս է և լորամարգին (дергачъ կամ коростель, ельба, crex prateusis bechst)։

Աշունը որսորդութեան ամենալաւ ժամանակն է և այս միջոցին առաւելապէս որսում են փասիան (фазанъ, phasianus colchicus L) կաքաւ, մորիկ (сѣрая куропатка чиль, starna cinerea L). սրանք շատ քնքոյշ են և ցրտի չեն դիմանում, ուստի և ցուրտ օրերին գալիս են գիւղերը և մտնում դարմանանոցները, ուր հեշտութեամբ նը-րանց բռնում են։ Սրանց բները հասարակ են և գետնի վրայ, ուստի և գարնանային հեղեղների ժամանակ մեծ քանակութեամբ ոչնչանում են։

Աղաւնիներից գլխաւորապէս կան հետևեալ տեսակները. վայրաս-սուն հաւփալ, (сизый голубъ, գէօգարչին. columba livia Briss). աղաւնի- տատրակ (горлица, ала-бахта, Turtur auritus Ray). և Palumbus torquatus aldr. սրանցից միայն վայրասուն հաւփալը ձմեռում է այստեղ, իսկ միւս երկու տեսակը հեռանում են աւելի տաք երկրներ։

Օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի սկզբին ճահիճների վրայ երևում են ջրակոցարը, (бекасъ барашекъ, scolopax gallinago L.) հոկտեմբերի վերջին գալիս են և վայրի կոցարն կամ ձիական թռչունը, (лѣсной бекасъ или вальдшнепъ, S. rusticola L). ճահճային միւս

Digitized by Google

թռչուններից յաճախ պատահում են ճայը (бѣлая цапля, ard. nivea Gm.), եզտիւրիկ (կիւիւ) (чибисъ-питолица, vanellus cristatus L.). Գարնան գիշերները լսում են Ardea stellaris (выпа կամ водяной быкъ L.) ճայնը։

Գանձակ գետի ափերի թանձր խոտերի մէջ ապրում է միպյնակ Rallus aquaticus (водяной пастушокъ). և շամբահարը (камышница зеленоногая կամ чортова курица, gallinula chloropus). այս երկու թռչունն էլ շատ վախկոտ են, լաւ են վազում, բայց վատ թռչում. մի քանի քայլ թռչելուց յետոյ թաքնատում են թաց կենալ եղեգների մէջ. ձմրան սկզբին սկսում են որսալ բադեր (утка) և արօս (стрепетъ, otis tetrax L). այս վերջիններս գալիս են աշնան վերջին և եթէ ձմեռը տաք է՝ երկար են մնում, իսկ եթէ ցուրտ, թռչում են աւելի հարաւ և մի ժամանակից յետոյ կրկին վերադառնում, այսպիսով նրանք ամբողջ ձմեռ չլսում են, անցնելով մի տեղից միւս տեղ։ Գարնան սկզբին հեռանում են հիւսիս, ուր և ձու են դնում։ Սրանց, ինչպէս և մեծ արօսը (дрохвъ, otis tarda L). որսում են յորդ անձրևներից յետոյ, որովհետև սրանց փետուրները այնպէս սպասելի թռչում են, որ սրանք մեծ դժուարութեամբ են կարողանում ամենափոքր տարածութիւնն անցան թռչել *)։

Ընտանի կենդանիներից կան՝ կով, գոմէշ, ձի, էշ, ջորի, ուղտ ոչխար, այծ, խոզ։

Վայրի կենդանիներից՝ ադուէս, գայլ, արջ, չաղալ, եղջերու, նապաստակ և այլն.

---

*) Օգտուել եմ Емельяновъ: Елисоветополь и его обрестности въ орнитологическомъ отношеніи etc. въ Сборникѣ Матеріаловъ для описанія Кавк. племенъ и мѣстностей. Т. XXI.

Թռչունների մասին աւանդութիւններ տես Հաւատքի բաժնում։

Digitized by Google

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍ

## Գ Ա Ն Զ Ա Կ

Գանձակ նահանգական և գաւառական քաղաքը ձգւում է Հիւսիսային լայնութեան 40°41′ և արևելեան երկարութեան 64°6′ աստիճանների տակ, 1449 ոտնաչափ բարձրութիւն ունեցող հարթութեան վրայ և բռնում է 114,76 ք. վերստ կամ 130,60 ք. կիլոմետր տարածութիւն։ Քաղաքի միջով անցնում է համանուն գետը, բաժանելով նրան երկու նշանաւոր՝ Հայոց և Թուրքաց մասերի։ Հայոց մասը, որ ընկնում է գետի աջ կողմը, բաժանւում է Քիլիսաքեանդ և Պոլլաջալու թաղերի. առաջնում բնակւում են զլխաւորապէս Հայեր, իսկ երկրորդում՝ Թուրքեր։ Թուրքաց մասը, գետի ձախ կողմը, բաժանւում է Երևանցոց, Թուրքերի, Բաղբանչիլար և Նորաշէն թաղերի։ Երևանցոց թաղում գտնւում է ս. Գէորգ եկեղեցին, քաղաքային ժողովարանը, Ցիրալովի առաջնակարգ, գեղեցիկ և այլ հիւրանոցներ, ամենալաւ խանութները և այլն։ Թուրքերի թաղում՝ ընդարձակ հրապարակը, մզկիթը և այլն։ Բաղբանչիլար թաղը ձգւում է Թուրքաց թաղից դէպի արևմուտք և կոչւում այգիների (բաղերի) մէջ։ Սրա բնակիչները մեծ մասամբ Թուրքեր են։ Նորաշէն թաղը գտնւում է մեծ հրապարակից դէպի արևմտահիւսիս՝ մօտ մի վերստ հեռաւորութեան վրայ, Թուրքաց թաղի յետևը։ Այստեղ կան ս. Աստուածածնի եկեղեցին և ս. Սարգսի ուխտատեղին։

Եթէ համեմատելու լինինք Հայոց և Թուրքաց մասերը, կը տեսնենք, որ Թուրքաց մասը բռնում է ամենալաւ, հարթ տարածութիւնը, այն ինչ Հայոցը աւելի բարձր և համեմատաբար աւելի վատ տեղը, բայց փողոցները, շինութիւններն և



Digitized by Google

մաքրութիւնը ի նկատի առնելով, հայոց մասը աւելի բարձր է:

Երևանցոց և Քիլիսաքեանդ թաղերում փողոցները կանոնաւոր և լայն են, մինչդեռ միւս թաղերում, ընդհանրապէս ոչ, թէև այստեղ էլ կան միքանի կանոնաւոր փողոցներ:

Գանձակի զմբդը մեծ հրապարակն է, որ տարածւում է թրքաց թաղում, գլխաւոր մզկիթի առջև. սա մօտ 150 ս. երկարութիւն և 40 սաժէն լայնութիւն ունի. բարձր, հարիւրամեայ չինարի ծառերը շարուած են չորս բոլորից, քառ-ակ աղբիւրը խոխոջում է մէջ տեղում, բազմաթիւ խանութները եղերում են նրան, իսկ ահագին քանակութեամբ հազար ու մի տեսակ մրգերն ու այլ և այլ ուտելեղէնները, որ անկարգ ու անկանոն կերպով ածուած, դիզուած են այս ու այնտեղ, չինարենիների ստուերի տակ, նրան մի արտակարգ գեղեցկութիւն են պարգևում: Ափսոս, որ այժմ, զանազան փայտեայ խանութներ շինելով, փոքրացնում և տգեղացնում են այն հրապարակը, որ հնումը և ձիարշաւների համար իբր ասպարէզ է ծառայել (տես 304—305):

Գանձակի երկրորդ սքանչելիքը փողոցների երկու կողմից բարձրացող, ահագին, հարիւրամեայ չինարիները և սրանց մօտով—փողոցների երկու կողմից—քչքչալով հոսող ջրերն են: Այս չինարիները չափազանց բարձր և հաստ են. մինչև անգամ սրանցից մինի փուճ կոճղի մէջ մի կօշկակարի խանութ էր տարքուած: Ափսոս որ ձիաքաշի գիծն անցկացնելիս ստիպուած եղան կտրելու այս չինարին:

Նոյն բարձրուղէշ, հարիւրամեայ չինարիներն են, որ զարդարում են առաջները՝ խանի, իսկ այժմ հասարակաց այգին, որ գեղեցիկ զբօսավայր է:

Շինութիւններն ընդհանրապէս աղիւսից են, որովհետև քաղաքի մօտերքում քարհանք չկայ: Տներից նորերը կանոնաւոր, բաւական գեղեցիկ, յարմար և բարձր են, իսկ հները, ինչպէս և թուրքերինը, անկանոն, ցածր և տգեղ:

Հասարակական շինութիւններից ամենից հին թուրքաց գլխաւոր մզկիթն է, որ նշանաւոր է նաև ճարտարապետական տեսակէտից: Սա շինուած է Շահ-Աբաս Ա. ժամանակ և գր-

Digitized by Google

տընուում է Հրապարակի Հարաւային ծայրում. շրջապատուած է պարսպով, որի գլխաւոր դռան երկու կողմում բարձրանում են երկու մենարեներ. գաւթում կայ ջրի շատրուան: Այստեղ է նաև թուրքաց տղայոց դպրոցը:

Բացի սրանից կայ նաև ուրիշ երկու մզկիթ, որ ճարտարապետական կամ հնագիտական տեսակէտից մի առանձին նշանակութիւն չունին:

Ջահ-Աբասի մզկիթից յետոյ ամենահին շէնքը Հայոց ս. Յովհաննէս-Մկրտչի մայր եկեղեցին է, որ գտնուում է Քիլիսաքեանդ թաղում: Սա վեց հասարակ սիւների վրայ հաստատուած միջակ բարձրութեան մի շէնք է, որի առաջ շինուած է մի դաւիթ, փոքրիկ կաթուղիկէով, որտեղից զանգակներ են քաշ արած:

Եկեղեցուս շինութեան թուականը գտնուում է հարաւային պատում, արևի ժամացոյցի տակ եղած հետևեալ արձանագրութեան մէջ.

'Ի ժամանակն Ովանէս կաթուղիկոսի թվին ՌՁԲ (1633) ամի շինեցաւ սուրբ Ովանէս եկեղեցին։

Գաւթի շինութեան մասին էլ կայ արձանագրութիւն արևմտեան դռան վրայ.

Հիմնեցաւ ի հիմանէ գաւիթ սուրբ Յովհաննէս եկեղեցւոյս ի հայրապետութեան տեառն Եփրեմայ եւ առաջնորդութեան Ներսէսի սրբազան արքեպիսկոպոսի արդեամբ եւ ծախիւք Մահտեսի Տէր Գէորգի Տէր Յովհաննիսեան. հայցեմ առ սիրելի եղբարցդ ոչ հանդիպիք ընթեռնուլ՝ զմէկ բերան զողորմի խընդրեցէք առ Աստուած 1816 ամի։

Իսկ կաթուղիկէի մասին արձանագրութիւն կայ բուն տաճարի արևմտեան դռան հարաւային կողմում.

Ի թվին Հայոց ՌՅԺԱ. շնորհիւն Աստուծոյ ես Մահտեսի Աղաջան Խաչատուրեան իմով սեպհական արդեամբ կառուցի նորաձեւ կաթուղիկէս սուրբ Յովհաննէս եկեղեցւոյս ի յիշատակ հոգւոյ իմոյ եւ ամենայն ննջեցելոց եւ կենդանեաց իմոց։ Աղաչեմ զհանդիպողսդ, յիշեսջիք զմեզ յարժանաւոր մաղթանս ձեր, զի միջնորդութեամբ սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց ջնջեսցէ Տէր զձեռագիր յանցանաց իմոց, յամի Տեառն 1862-ին, Գանձակ։

Digitized by Google

Այս եկեղեցին է եղել գանձակեցիների պանթէօնը և այստեղ, կամ որա բակումն են թաղուած Գանձակի գրեթէ բոլոր նշանաւոր մարդիկը, ինչպէս՝

Աղուանից «սուրբ Ներսէս» կաթուղիկոսը՝ հարաւային խորանում, 1742 թուին։

Մելիք Հաթամի որդի Աբէլը նոյն խորանում՝ 1776 թ.

Եղիշէ վարդապետը (1757), Զարաբերդցի Աթանաս վարդապետը (1764), սուրբ Երուսաղէմայ նուիրակ թոխաթցի Ֆարաւոն վարդապիտը (1786), Մուրթ անապատի առաջնորդ Յարութիւն վարդապետը (1800), սուրբ Ստեփաննոս նախավկայի միաբան Ստեփաննոս վարդապիտը (1834), եկեղեցու գաւթում։ Դալի-Մահրասա մականուած Աւագ վարդապետ Զարապերտու (1796) և Թիւլի-Արզուման ուզպաշին (1796) եկեղեցու բակում։

Այս եկեղեցում կայ 11 հատ ձեռագիր աւետարան *) և հինգ մասունք, որոնցից նշանաւոր են Տեառնեղբօր Յակոբոսի, Յովհաննէս Կարապետի, Պանտալիոն բժշկի և ս. Մինասի մասունքները, արծաթեայ խաչերի մէջ ամփոփուած։

Այս եկեղեցին բաւական հարուստ է և բացի ուրիշ անշարժ կալուածներից, ունի նաև մի բաղանիս։

Բացի այս եկեղեցուց, քաղաքումս կայ ուրիշ երեք եկեղեցիներ էլ, որոնցից ս. Լուսաւորչինը աւելի նշանաւոր է ճարտարապետական տեսակէտից։ Սա գտնւում է Քիլիսաքենդիրի մասում մի գեղեցիկ շրջապարիսպի մէջ։ Չորս սիւների վրայ հաստատուած մի հոյակապ շէնք է սա, որի գմբէթը դեռ ևս չէ կառուցուած։ Լուսամուտները նեղ և երկար են։ Դռների առաջ կան փոքրիկ, գեղեցիկ գաւիթներ։ Եկեղեցու երկարութիւնն է $30^1/_2$ մետր, լայնութիւնը՝ 20 մետր։ Արևելեան պատի վրայ արտաքուստ կայ հետևեալ արձանագրութիւնը.

Ընորհիւ եւ ողորմութեամբ Աստուծոյ հիմնեցաւ սուրբ տաճարս ի 14-ն սեպտեմբերի 1853 ամի եւ յետ աւարտելոյն տրուի բարեպաշտ ժողովրդոց Գանձակայ ի կայսրութեան ամենայն Ռուսաց Նիկոլայոս Բ. եւ ի հայրապետութեան տեառն Գէորգ

*) Տես Ձեռագիրների բաժնում։

Digitized by Google

Դ, օծաւ յ9 նոյեմբերի 1869 ամի ի սրբազան Մպկար արքեպիսկոպոսէ առաջնորդէ Կարասպանի եւ Խմերեբի եւ ամուսանիցս. Աբուրբ Լուսաւորիչ եկեղեցի յանուն սրբոյն Գրիգորի մեծի հայրապետին ազգիս։ Հիմնարկեցաւ սուրբ տաճարս յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի 1853 ամի եւ աւարտեցաւ 1869 ամի։

Միւս երկու եկեղեցիները Հողաշէն և անշուք են։ Սուրբ Գէորգը գտնւում է գետի ձախ կողմում, Մեծ-Զուկայի մօտ, միւսը, ս. Աստուածածինը՝ Նորաշէն թաղում։ Այս երկու եկեղեցիներիս հիմնարկութիւնը վերագրւում է Երևանից և նրա շրջակայքից գաղթած ժողովրդին, որոնք իրենց հետ բերել են նաև ս. Գէորգայ մասունքը, որ այժմ էլ պահւում է համանուն եկեղեցում։

Բացի այս եկեղեցիներից քաղաքում կայ նաև ս. Աստուածածին, ս. Սարգիս և ս. Կիրակոս և Յուղիտա ուխտատեղիները, ուր կիրակի և տօն օրերը բազմաթիւ ուխտաւորներ են հաւաքւում։

Ռուսներն էլ ունին մի բաւական հոյակապ, փոքրիկ եկեղեցի։

Միւս շինութիւններից նշանաւոր են նահանգապետի տունը, տղայոց գիմնազիան, Ցիրալովի հիւրանոցը, քաղաքային ժողովարանը, հայոց յաջորդարանը, արհեստաւորաց դրպրոցը և այլն։

Քաղաքին ջուր մատակարարում է պ. Պետրոս Նանասեանի Քիլիսաքենդ թաղում և մի պարսկի մեծ հրապարակում շինած աղբիւրները։ Իսկ Նորաշէնի թաղը օգտւում է ջրհորի ջրից։

Քաղաքի միջով անցնում է ձիաքաշ երկաթուղի, սկսած Քիլիսաքեանդի վերին մասից մինչև շոգեշարժ երկաթուղու կայարանը, որ գտնւում է քաղաքից դէպի հիւսիս, 3 վերստ հեռաւորութեան վրայ։

Քաղաքը պատած է այգիներով, որոնց մէջ նշանաւոր է Էջմիածնապատկան ահագին այգին։

Քաղաքի շրջակայքի հնութիւններից նշանաւոր է հին քաղաքատեղում, այսինքն այնտեղ, ուր գտնւում էր Գանձակը մինչև Շահ-Աբաս առաջնից աւերուիլը, թերքաց Գէօղ-Իման

ուխտատեղին, որ մի գմբէթաւոր մատուռ է, որի գմբէթի վրայ կանաչագոյն աղիւսով խաչաձև շինուածքներ կան։ Հայկական աւանդութեան ասելով, սա եղած է Հայոց Խոսրով Նահատակի գերեզմանը, որ նահատակուել է՝ չկամենալով մահմեդականութիւն ընդունել։ Իսկ պարսկական աւանդութիւնն ասում է, թէ սա մահմեդականութիւն ընդունելու համար քրիստոնեաներից է նահատակուել։ Այս ուխտատեղու շուրջը կան նախկին քաղաքի աւերակներ։

Գանձակի բնակիչները 1886 թ. աշխարհագրով եղած են 11,543 ար. 8751 իգ. ի միասին՝ 20294 հոգի, որից՝ Հայերը 4837 ար. 4077 իգ. ի միասին՝ 8914, Թուրքեր՝ 6524 ար. 4615 իգ. ի միասին՝ 11,139 հոգի. ռուսներ՝ 100 ար. 31 իգ. ի միասին՝ 131 հոգի. վրացիներ՝ 77 ար. 26 իգ. ի միասին՝ 103 հոգի. միւս ազգութիւններից 5 ար. 2 իգ. ի միասին՝ 7 հոգի։ 1897 թ. միօրեայ աշխարհագրով *) Գանձակում եղել են 18,238 ար. 14,852 իգ. ի միասին՝ 33090 հոգի։

Գանձակում, որպէս համանուն նահանգական և գաւառական քաղաքում, ամփոփուած են բոլոր նահանգական և գաւառական վարչական հիմնարկութիւնները։ Այստեղ է գըտընուում և նոյն գաւառի հոգևոր կառավարութիւնը, որ ենթարկուում է Վրաստանի և Իմերէթի առաջնորդական թեմին։ Այժմ յաջորդ է արժ. Բագրատ վարդապետ Գէորգ-Թաւաքալեանը, որ բաւական մեծ համակրութիւն է վայելում թէ հայ և թէ նոյն իսկ Թուրք ազգաբնակութեան կողմից **)։

*) 1897 թ. յունուարի 28-ին կատարած միօրեայ աշխարհագրի մատեանները դեռ ևս դտնուում են Պետերբուրգի գլխաւոր ստատիստիքական գրասենեակում, իսկ սրանց սկագրութիւնը պահուում է Գանձակի ոստիկանատանը։ Ես այժմ խստիւ արգելուած է թոյլ տալ այս սկագրութիւններից օգտուելու, որպէսզի զանազան սխալմունքների տեղիք չտրուին։ Ոչ մի հնաբաւորութիւն չունենալով օգտուելու այս աշխարհագրից, մենք Գանձակի գաւառի ստատիստիքական տեղեկութիւնների բաժինը կը տպագրենք, երբ այդ մատեանները կը վերադարձուին Թիֆլիսի ստատիստիքական գրասենեակին, երբ և թոյլ կը տրուի օգտուել նրանցից։

**) Պարտք եմ համարում իմ խորին շնորհակալութիւնս յայտնել ինչպէս արժ. Բագրատ վարդապետին, նոյնպէս և գաւառապետ պ. Մօրակուն, որ մեծապէս նպաստեցին ինձ գաւառում ճանապարհորդելիս։

Digitized by Google

Հանի-ֆենդ գտնուում է Գանձակից դէպի հարաւ, 23 վերստ հեռաւորութեամբ, ուր Սարեալ լեռնաշղթայի բազուկները բոլորաձև տարածուելով կազմում են միքանի փոքրիկ ձորակներ։ Ամառանոցը տեղաւորուած է այս բազուկներից մինի վրայ, անտառի մէջ և բաժանուում է երկու մասի, ներքին և վերին։ Առաջնում բնակւում են առաւելապէս աղքատ, իսկ վերինում՝ հարուստ մարդիկ։ Իւրաքանչիւրն էլ կրում է իւր բնակիչների յատկանիշ գոյնը։ Առաջնում գտնուում է կեղտոտ բազարը, փողոցում վեր ածած ճմերուկի և սեխի կոյտերով և սրանց կճեպներով։ Այստեղ, մի հաստաբուն ծառի տակ ապաստանած աշխատում է մաշկակարը, երեկոները իւր գործիքները ծառի բնի մէջ փորուած պահարանի մէջ զետեղելով։ Նոյն ծառի միւս կողմն էլ ասիական դարբինն է իւր փուքսն ու սալը սարքել։ Սրա հանդէպ ասիական հիւրանոց է, ուր դաւուլզուռնի և սազանդարի ձայնը երբէք չի ընդհատուում, և որը կեղտոտութեան և վաշխառութեան մի կատարեալ բուն է. ամենահասարակ, խոհանոցանման սենեակի օրավարձը երկու ռուբլի է։ Վերին մասում, մանաւանդ բազուեցիների թաղում, երևում են երկյարկանի, զեղեցիկ և բաւական ճաշակով շինուած տներ, ընդարձակ պատշգամբներով, փոքրիկ պարտէզներով և շատրուաններով։ Այստեղ կայ նաև կլուբ մի փոքրիկ դահլիճով, երեք կանոնաւոր և բաւական լաւ հիւրանոցներ։ Մի փոքրիկ, քարաշէն, բաւական գեղեցիկ ռուսական եկեղեցի էլ շինուած է հայկական մի աւերակ եկեղեցու տեղը, իսկ հայկական եկեղեցի չկայ։

Բարեբաղդաբար հասարակաց զբօսավայր չկայ, ուր կանայք սեղմուած կորսետներով և սնդոյրած երեսով զբօսնէին։ Այստեղի զբօսատեղին անտառն է, ուր իւրաքանչիւր գերդաստան բոլորովին ազատ և ուրիշների ընկերակցութեան վտանգից ազատ կարող է բոլորովին նեղլիժէ զբօսնել, երգել, խաղալ։ Սառնորակ աղբիւրները, որ բղխում են անտառի զանազան կողմերում, և փոքրիկ առուակը, որ կարկաչում է ձորակի մէջ, ամենալաւ զբօսավայրերն են կազմում քէֆ և թէյ սիրող սարուորների համար, որոնց քրքնջի և երգի ձայները

Digitized by Google




ԳԱՆՁԱԿԻ

Digitized by Google



ՀՐԱՊԱՐԱԿԸ

Digitized by Google

գալիս են ընգհատելու ծառերի քաղցր սոսափիւնը և թռչունների դայլայլիկը։

Գիշերները, մինչդեռ բուն արիստոկրատ դասակարգը կլուբի կանաչ սեղանների առաջ կաւճի փոշի է կուլ տալիս, իսկ նրա փափկասուն կանայք լոտտ կամ կեկլի է խաղում, երիտասարդների խմբերը անտառի զանազան կողմերում և ամառանոցի արևելեան ծայրի բարձրութեան վրայ, որտեղից երևում է Մռաւն ու Քեափասը՝ սիրերգներ են սարքում։ Ամէն երեկոյ զինուորական երաժշտախումբը ածում է կլուբի բոտոնդում, բացի ուրբաթ օրերից, երբ իջնում է ներքին շինեցիներին էլ հաճոյք պատճառելու։ Միայն կիրակի երեկոները տեղի են ունենում եւրոպական պարեր, միւս երեկոները պարն արգելուած է, որովհետև պարող զոյգերը միմեանցով գրաւուած կարող են դիպչել կանանչ սեղաններին և կամ բաղդ փորձողների ուշքը դրաւել։

Լողարաններ, բաղանիս, հանքային ջրեր չկան, բացի սելտերեան ջրի մի աւազանից, որ գտնւում է ամարանոցից փոքր ինչ հեռու, Մուռուլթի մօտ, բայց նրանից էլ չեն օգտուում։

Այստեղ ամարանոց են գալիս ոչ միայն Գանձակի քաղաքացիները և կառավարչական ատեանների ծառայողները, այլ և բագուցիներ։ Իսկ ձմեռը բացի պահապաններից՝ ոչ ոք չի լինում։

---

Digitized by Google

# ՀԱՅՈՑ ՆՇԱՆԱՒՈՐ ԳԻՒՂԵՐ

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ Ա. ԾՐՋԱՆ

### ԽԱՆՔԵՆԴԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

Ղարադաղլու կամ Խանքեանդ.—Գտնուում է Գանձակից դէպի արևելք, 18 վերստ հեռաւորութեան վրայ։ Գիւղում կայ մի աղիւսաշէն եկեղեցի Դանիէլեանի ծախքով կառուցուած։ Հողը շատ սակաւ է, միայն ունի այգիներ, որ ոռոգւում են Սափիքիւրդ անուանուած արիի ջրով և տալիս են բաւական լաւ գինի։ Բնակիչները գաղթել են Ատրպատականի Ղարադաղից 1828 թուին. ընդամէնը 40 տուն են, 89 ար. 83 իգ. ի միասին՝ 172 հոգի. բոլորն էլ հայ լուսաւորչական։

Գիւղից կէս վերստ հեռու Կուրակ-չայ գետի ափին գըտընուում է Նահատակ անուն կրող ուխտատեղին։

Ղարադաղլուի մօտ է թրքաց Ղարադաղլու փոքրիկ գիւղը։

Սարով.—Գտնուում է Գանձակից հիւսիս, Կուրակ-չայի ձախ կողմում. ունի մի հասարակ, փայտաշէն եկեղեցի։ Գիւղը պատկանում է Կամսարականներին։ Բնակիչները գաղթած են Ուտի—Առանձնակի Սարով գիւղից. ընդամէնը՝ 35 տուն են, 83 ար. 72 իգ. ի միասին՝ 115 հոգի, բոլորն էլ հայ լուսաւորչական։

Սարովի մօտ գտնուում է թրքաց Սարով գիւղը։

Ջարգեալար կամ Խոյլար.—Գտնուում է Ղարադաղլուից մօտ մէկ ու կէս վերստ դէպի հարաւ, Կուրակ գետակի ձախ կողմում։ Ունին սեպհական աքլ։ Գիւղում կայ մի հասարակ եկեղեցի։ Բնակիչները գաղթել են Խոյից, 1828 թուին.

Digitized by Google

ընդամէնը՝ 86 տուն են, 189 արական 174 իգական ի միասին 363 հոգի. բոլորն էլ հայ-լուսաւորչական։

Խանքենդ, Սարով և Ղարադաղլու գիւղերը միասին կազմում են մի հասարակութիւն. երեքի կլիման էլ սաստիկ տաք է, ուստի և բնակիչները միւս գիւղացիների հետ համեմատած՝ ծոյլ են։ Երեք գիւղերումն էլ, բացի սովորական երկրագործութիւնից և այգեգործութիւնից, պարապում են նաև շերամապահութեամբ և բամբակի արդիւնաբերութեամբ։

---

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ Բ. ԾՐԱՆ

### ԲԱՆԱՆՑԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

Բանանց կամ Բայեան գիւղ.—Տարածւում է Արթենաջրի ձախ ափին, երկու երկար ու ցածր բլրակների գագաթներին և երեք կողմից շրջապատուած է Փոփոստ (կոնաձև), Դակ-քար, Փլաթի (կաղնու) սեռ և Ֆատի սեռ լեռներով։

Աւանդութեան ասելով, այս գիւղը հիմնուել է Գանձակի հետ միաժամանակ և միևնոյն ժողովուրդն է բնակութիւն հաստատել այս երկու տեղումն էլ։

Մի ուրիշ աւանդութիւն էլ ասում է, թէ Բանանց անունը ծագել է Բան-անոց—(գործարան) խօսքից, որովհետև այստեղ եղել են Քարհատի երկաթը հալելու գործարաններ։ Գիւղում փողոցներ չկան, այլ ծուռն ու մուռ կածաններ են։ Տների մեծ մասը կանոնաւոր սենեակներից են բաղկացած, որոնցից ամենահինը՝ 38 տարի առաջ է շինուած, միւս, փոքրագոյն մասը գետնափոր խուղեր են։ Եկեղեցին, որ կրում է ս. Լուսաւորիչ անունը, շինուած է մի ապառաժի վրայ և բաւական ընդարձակ ու գեղեցիկ է։

Գիւղի արևմտեան կողմում մի բլրակի վրայ գտնւում է մի հին հանդարտարան, ուր կայ մի խաչքարձան ՌԻԶ (1467) թուականից «Պարոն Իվէտրինայ»-ի։

Digitized by Google

Գիւղի կլիմայն մաստիկ տուք է և խեղդիչ, որովհետև պատած է լեռներով։ Բուսականութիւնը շատ հարուստ է և ամբողջ ձորակը պատած է պտղատու ծառերով։

Բնակիչները մեծ մասամբ բնիկներ են, բաղդն էլ հայ լուսաւորչական, 274 տուն, 1135 արբ. 860 խգ. ի միասին 1995 հոգի։ Մտաւորապէս այս գիւղացիները բաւական բարձր են, իրենց երկու քահանաներն էլ միջնակարգ կրթութեան տէր են։ 1872 թուից ունեցել են եկեղեցական-ձիական դպրոց, այժմս էլ պետականն է բացուել։ Շատ երեխաներ էլ ուսանում են զանազան քաղաքներում։ Այս գիւղացի են բժիշկ Տէր-Միքայէլեանը և ինժիներ Լևոն Տէր Միքայէլեանը. իրաւաբան Յով. Տէր Իսրայէլեանը, ինչպէս և Ստեփան Տէր Աւետիքեանը, որ յայտնի է Բանանց գիւղի ֆեանքից գրած պատկերներով։

Փոքր Բանանց կամ Դամբլաձոր.—Գտնւում է Մեծ Բանանցից մի վերստաչափ հեռու, նոյն վտակի աջ կողմում։ Այստեղ կայ մի աւերակ եկեղեցի, որի աւազանի վրայ գրուած է. «Մեհրի ճան, տարան ա...»։

Նահատակ.—Փոքր Բանանցից փոքր ինչ ներքև գտնւում է Նահատակ անուն ուխտատեղին, իսկ սրա հանդէպ ձորի ձախ ափում մի քարայր, որի մէջ, ասում են, ճգնել է մի ճգնաւոր։

Զովդաղ կամ Հարց-հանգիստ.—Գտնւում է Բանանց գիւղից հիւսիս, Մլզնաբերդ սարի հիւսիս-արևմտեան կողմում, մի բարձր սարահարթի վրայ, որտեղից երևում է Գանձակը իւր այգիներով ու շրջակայքով։ Մի քիչ հեռու բարձրանում է մի լեռ, ուր կան շատ հին հանգիստներ։ Գուցէ հէնց այս պատճառով էլ գիւղը կոչուել է Հարց-Հանգիստ։ Գիւղի շրջակայքում կան լաւ քարահանքեր, որտեղից քար են տանում Գետաբէկում հնոցներ շինելու։ Գիւղում կայ մի եկեղեցի, որի մէջ գրուած է Մլզնաբերդից բերուած մի շատ գեղեցիկ, փոքր և սպիտակ խաչարձան, հետևեալ արձանագրութեամբ.

Թվ. ՈԻ. Անուամբն Աստուծոյ ես Մարգարիտ դուստր Ուխտիկայ կանգնեցի զսուրբ նշանս 'ի փրկու-

Digitized by Google

թիւն հոգւոյն Զարդմբերին եւ Զարտագունին, Մխի-թարայ եւ Կանանին. որ յաղաւթս յիշէր եւ զՆտոմ, որ գործող էր խաչիս։

Բնակիչները Հայ լուսաւորչականներ են, որ տարբերւում են միւս գիւղացիներից իրենց կոշտ բարբառով։ Ընդամէնը՝ 98 տուն են, 472 ար. 383 իգ. ի միասին՝ 855 հոգի։

Գիւղի Հիւսիսային կողմում, մի խոր ձորում, որտեղից հոսում է Հարց-Հանգիստ առուակը, գտնւում է Վսկաթել (Ոսկեթել) կոչուած փոքրիկ, փայտածածք մատուռը, որի մասին աւանդութիւնն ասում է, թէ մի վսկաթել կոյս աղջիկ է նահատակուել այստեղ։ Մատուռից ներքև բղխում է մի սառնորակ աղբիւր։

Սրանից փոքր ինչ բարձր գտնւում է Բախչիկ աւերակը, որ հին գիւղատեղի է, ունի եկեղեցի և մեծ հանգստարան։

---

## ՓԻՓԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

Նոր-Փրփ.—Զիբլի-քար, Եգնանիստ, Լալուկ-քար, Զիլի-քիր լեռները բոլորաձև տարածուելով, իրենց լանջերի ընդհարման վրայ կազմում են մի փոքրիկ հարթ տարածութիւն, ուր տեղաւորուած է Նոր-Փիփ գիւղը։ Աւանի աղբիւրներից գոյացած մի փոքրիկ առուակ հոսում է գիւղի միջով և ջրելով մօտակայ այգիները՝ թափւում է Զամքորի մէջ։

Եկեղեցին սրբատաշ քարերից, վեց գեղեցիկ, կլոր սիւների և ռոմանական կամարների վրայ հաստատուած շէնք է, մի բաւական գեղեցիկ գմբէթով։

Գիւղը համեմատաբար շատ քիչ է ենթարկուել քաղաքակրթութեան, այնպէս որ տների մեծագոյն մասը դեռ էլի ղարատամներ են։

Բնակիչները գաղթել են Հին-Փիփից, ընդամէնը՝ 319 տուն, 1465 ար. 1331 իգ., ի միասին՝ 2796 հոգի։ 1877 թուից ունեցել են Հայոց եկեղեցական ծխական դպրոց, որի շէնքը կառուցուել է Զարեքայ վանքի վանահայր՝ Աստուածա-

Digitized by Google

տուր վարդապետ Տէր Յարութիւնեանի ծախսով։ Բացման առաջին տարին ուսուցիչ է եղել Աղէքսանդր Արարատեանը, որ դպրոցի բացումը նկարագրել է իւր «Գաւառական ուսումնարանի հիմնարկութիւնը» գրուածքի մէջ։

Հին-Փիփ.—Գտնւում է Զամքոր գետի աջ ափին. այժմ աւերակ է, որովհետև բնակիչները՝ կլիման սաստիկ տաք և շատ օձեր լինելու պատճառով՝ տեղափոխուել են Նոր-Փիփ։ Գիւղի անունը ծագել է, ինչպէս ասում է աւանդութիւնը, Փեփլոնեայ կուսի անունից, որ նահատակուել է այստեղ և ամփոփուել գիւղի եկեղեցում։ Գիւղը Ջակլիկ էլ է կոչւում, մօտակայ «զակ»—շիբի հանքերի պատճառով։ Գիւղի եկեղեցին բաւական մեծ և շքեղ է։ Սրա դռան վերայ կայ հետևեալ արձանագրութիւնը.

Կամաւն Ասուծոյ մեք Փիփեցոց ժողովուրդս միաբան շինեցաք զեկեղեցիս 'ի հայրապետութեան տեառն Պետրոսի ձեռամբ Սարգիս վարդապետին, յիշխանութեան Մուրթուզա Ղուլի խանին. յիշեցէք ի Քրիստոս տանուտէր Վարդանէսն եւ կողակից Մարեան։ Ուազանի վրայ էլ գրուած է. Յիշեցէք 'ի Քրիստոս Թատուրն եւ կողակիցն իւր Մարեան թվ. ՌՃԾԹ.

Եկեղեցու հարաւային կողմում կայ մի փոքրիկ մատուռ, որին տեղացիները կոչում են Բարսամ-նգնաւոր։ Մատուռի մէջ կայ երեք գերեզման, որոնցից միմիայն մինի տապանաքարի վրայ կայ արձանագրութիւն, որ հետևեալն է.

Ես Մաղագայ եպիսկոպոս կանգնեցի զխաչս հաւր.... եղբաւրն իմոյ տէր Պար... մարն եպիսկոպոսին թվ. ՋՋ.

Այս գիւղատեղին այժմ իբր ձմերանոց է ծառայում Նոր-Փիփեցիների համար, որոնք իրենց անասունները ձմեռը այստեղ են պահում։

Բուսական նահատակ.—Գտնւում է Նոր-Փիփից հազիւ երկու վերստ հեռաւորութեամբ դէպի արևմտահիւսիս մի լեռան գագաթին։ Սա մի հասարակ մատուռ է դարաւոր ծառերի հովանու տակ։ Լեռան ստորոտում ևս կայ մի ուրիշ

Digitized by Google

մատուռ, մի սառն աղբիւրի և տուքը համարուած Ծառերի կողքին։ Ալանդուքիւնն ասում է, թէ մի Ոսկան անունով մարդ իւր քրոջ հետ նահատակուել է այստեղ։ Քրոջ գերեզմանը գտնուում է աղբիւրի մօտ, իսկ եղբօրը՝ լեռան գլխին։ Համբարձման, Վարդավառին և ս. Աստուածածնին բազմաթիւ ուխտաւորներ գալիս են այստեղ ուխտ։

Փիսի արևելահիւսիսային կողմում, Համքարի աջ կողմի մի բարձր ստրահարթի վրայ գտնուում է մի գիւղատեղի, Սրվրեցիք անունով, ուր աւերակ եկեղեցու լուսամտի քարը մի տապանաքար է՝ հետևեալ արձանագրութեամբ. Թվ. ՉԽԲ. Ես Հեամզա կանգնեցի զխաչս որդոյ իմոյ Պապի։

Նոյն գիւղից հարաւ, Ջիրասարի վրայ կայ մի մատուռն աւերակ, ուր կայ մի գերեզման։ Այս մատուռը ուխտատեղի է։

Գարդմանիկ.—Սա հին Գարդման աւանն է, որ այժմ թրքաբնակ է, գտնուում է Գանձակից 40—42 վերստ հեռաւորութեամբ՝ Փիսի և Ղաբաղ-Թափի մէջ տեղը, Գարդման փտակի ձախ կողմում։ Գիւղի մէջ երևում է մի հին եկեղեցու աւերակ, կլոսով չափ թաղուած հողի տակ. եկեղեցու շուրջը կան բազմաթիւ գերեզմաններ, որոնցից 7 ունին միմեանցից մի-մի քայլ հեռաւորութեամբ բարձր միատեսակ խաչքարեր։ Սրանցից մինի վրայ գրուած է. Կանգնեցաւ խաչս Քրիստոսի թվ. ՌՂՄԱ։ Միւսների տապանագրերը անընթեռնելի են։

Գիւղից փոքր ինչ հեռու, դէպի հարաւ կայ մի փոքրիկ մատուռ Սրբլթան անունով, որ ուխտատեղի է։ Սրա մօտ կայ մի $3^1/_2$ մետր բարձրութեան մահարձան, հետևեալ տապանագրով. Այս է տապան սուրբ Սրապիոնի թոռն մեծին Սամուրին մեծին Սատին թվ. 22.

Նոյն գիւղից բաւական վերև կայ մի հին գիւղատեղի Ղաբաղ-Թափէ անունով, ուր կայ դեռ կիսականգուն մի մեծ եկեղեցի, որի վրայ կան հետևեալ արձանագրութիւնները. «Ես Խոսրովս. թվ. ՌՃԽՍ» 'ի թ. ՌՃԾԵ։ Այստեղ այժմ թուրքեր են բնակւում։

Digitized by Google

## ԽԱՉԱԿԱՊԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

**Քարհատ-գիւղ** կամ **Դաբճասան.**—Ընկած է Բանանց գետի ձախ ափին մի խոր ձորում և երեք կողմից պատած է բարձր լեռներով։ Ունի մի հասարակ, փայտաշէն եկեղեցի։

Ինչպէս ասել ենք, Քարհատը նշանաւոր է իւր երկաթի հանքերով։ Բնակիչները բնիկ հայեր են, 80 տուն, 435 ար. 361 իգ. ի միասին 796 հոգի։

Գիւղից 4—5 վերստ հեռու, հարաւ-արևմտեան կողմը, նոյն գետի աջ ափին գտնւում է հին Քարհատի աւերակները, որոնց մէջ նշանաւոր է ՌՃԻԸ թուին շինուած եկեղեցին։

**Խաչակապ** կամ **Խաչափակ** և կամ **Ղուշչի.**—Գտնւում է Կիրանցի հիւսիսային կողմը, մի հովտում, որի միջով հոսում է մի փոքրիկ առուակ։ Տների մեծ մասը գետնափոր են, միւսները մի կամ երկյարկանի կոնոնաւոր բնակարաններ։ Եկեղեցին չորս սիւների վրայ հաստատուած գեղեցիկ, թաղակապ մի շէնք է, որ շինուած է 1650 թուին և վերանորոգուել 1864-ին։

Եկեղեցու մօտ կայ հանգստարան, ուր նշանաւոր է հետևեալ տապանագիրը. Այս է տապան մելիք Պաբին թվ. ՌՄԼԷ.

Գիւղում կան երկու՝ Խաչ-քցի *) և Ֆիրանաւոր անուններով մատուռներ, որոնք ուխտատեղիներ են համարւում։ Գիւղի չորս կողմն էլ կան բարձր խաչարձաններ։ Աւանդութիւնը պատմում է, թէ այդ խաչարձանները կանգնեցրել է ս. Մեսրովբը, երբ Գարդմանի Խուրս իշխանի ձեռնտուութեամբ վերացրել է այստեղից էլ կռապաշտութեան մնացորդները։ Եւ ի յիշատակ այդ անցքի՝ գիւղը կոչուել է Խաչակապ կամ Խաչափակ։

Մի ուրիշ աւանդութիւն էլ բացատրում է գիւղի նորադոյն անունը։ Ջահ-Աբբասի արշաւանքների ժամանակ այս գիւղից Գրիգոր անունով մինը ցանկանում է մի բաղէ բռնել, որ

*) Տես հաւատքի բաժնում։



Digitized by Google

շահին ընծայ տանի, բայց ժայռից վայր է ընկնում և մեռնում։ Շահ-Աբբասը լսելով այդ, կամենում է այս գիւղը նուիրել նրա հօրը, սակայն վերջինս հրաժարւում է և խնդրում է նուիրել համայնքին, որպէսզի միշտ իւր հանգուցեալ որդուն ողորմի տան։ Շահն էլ կատարում է նրա խնդիրը և գիւղն էլ կոչում է Ղուշչի։

Բնակիչները բնիկ հայեր են, ընդամէնը՝ 114 տուն, 676 ար. 637. իգ. ի միասին 1313 հոգի։

**Կիրանց** կամ **Սէիդ-Բեանդ.**—Գտնւում է Քարհատից 3—4 վերստ արևմուտք և նոյն չափ էլ Խաչկապից հարաւ, ԱրուԹինի ջրի վրայ։ Ունին մի փայտաշէն եկեղեցի։ Բնակիչները գաղԹել են Ղարաղ-Թափից, ընդամէնը 35 տուն են, 237 ար. 199 իգ. ի միասին 436 հոգի, բոլորն էլ հայ լուսաւորչական։

Գիւղի մօտ կայ **Կաղնի-խաչ** անունով մի փոքրիկ մատուռ, ուր աւանդաբար ասում են, ԹԷ ամփոփուած է Գարգման գաւառիս տիրապետող խուրս իշխանը, որին պատկանելիս են եղել բոլոր հանքերը *)։

Մատրան մօտ, որ մեծ ուխտատեղի է, կայ մի հինաւուրց վանք։

---

## ՄԻՐԶԻԿԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

**Ոսկանապատ** կամ **Զուռնապատ.**—Տարածւում է Համանուն կամ Գանձակ գետակի ձախ ափին, մի փոքրիկ բարձրուԹեան վրայ։ Շորակը ծածկուած է այգիներով. գիւղի փողոցները անկանոն են և կեղտոտ, տները, ընդհանրապէս վատ չեն, ԹԷև կան նաև երկյարկանի, գեղեցիկ տներ ևս։ Գիւղի

*) Մի ուրիշ աւանդուԹիւն էլ ասում է, ԹԷ դա մի քրիստոնէուԹիւն ընդունած Թուրքի գերեզման է, որ նահատակուել է Թուրքերից։ ԱւանդուԹիւնն աւելացնում է, ԹԷ նահատակուԹիւնից յետոյ հայերի և Թուրքերի մէջ վէճ է ծագել, ԹԷ ո՞ւմ ծիսակատարուԹեամբ պէտք է նրան ամփոփել։ Վերջապէս համաձայնել են և նախ մոլլան և ապա քահանան հրամայել է նահատակին կանգնելու, և միայն քահանայի հրամայած միջոցին նեղեցեալը կանգնել է, ուստի և հայկական ծէսով են Թաղել։

Digitized by Google

մէջ կայ ս. Յակոբ Հին եկեղեցին, ուր այժմ էլ պաշտօն է կատարւում, իսկ ձորի մէջ, գետի աջ ափին, կայ մի փոքրիկ թաղակապ, անսիւն մատուռ Ս. Սարգիս անունով։ Մի այդպիսի մատուռ էլ կայ գետի ձախ ափին ս. Աստուածածին անունով։ Այս երկուսի շուրջն էլ կան քանդուած խցեր և գերեզմաններ։

Գիւղում կայ պետական երկդասեան դպրոց։

Այս գիւղումն են բնակւում Մելիք-Զահնազարեանները, որոնց նախնիքը երկար ժամանակ իշխել են այս գիւղում։

Բնակիչները բնիկներ են, 117 տուն, 406 ար. 334 իգ. ի միասին 740 հոգի։

Ոսկանապատ գիւղից վերև, գետի ափին, միմեանցից փոքրիկ հեռաւորութեամբ գտնւում են Դաստափոր, Ցնծահալ և Գեատամիշ թրքաբնակ գիւղերը, ուր մինչև այժմս էլ մընում են միմի աւերակ եկեղեցի և ընդարձակ հանգստարան։

Բրաջուր (Աղբրաջուր, Ղարա-քեշիշ).—Գտնւում է Գանձակից դէպի հարաւ-արևմուտք, մօտ 15 վերստ հեռաւորութեան վրայ, Միրզիկի հիւսիսային կողմում։ Տեղը դաշտային է և լաւ ճանապարհով յարաբերութիւն ունի քաղաքի հետ։ Շրջակայքում անտառներ չկան, այլ միայն մացառներ։ Գիւղում կան փոքր ի շատէ կանոնաւոր փողոցներ, տների մեծ մասը նոր ձևի են, միայն կալերը, մարագները և գոմերը նոյնպէս գտնւում են գիւղի մէջ, տների մօտ։ Ունին մի հասարակ եկեղեցի։ Գիւղում այգիներ, բանջարանոցներ չկան ջուր չլինելու պատճառով։

Բնակիչները բնիկ և Պարսկաստանից գաղթած հայեր են, ընդամէնը՝ 35 տուն, 190 ար. 163 իգ. ի միասին՝ 353 հոգի։ Պարապմունքը նոյնն է։

Այս գիւղի հարաւային կողմում կայ կայծաքարի և սպիտակ քարի հանք։

Միրզիկ.—Գանձակից մօտ 20 վերստ արևմտա-հարաւ, Ոսկանապատից 2—3 վ. դէպի արևմտահիւսիս, մի բլրի լանջին։ Հարաւային կողմից պատած է անտառով. գիւղը շատ գեղեցիկ տեսք և քաղցրահամ աղբիւրներ ունի։ Միայն կանո-

Digitized by Google

նաւոր փողոցներ չկան և կալերը, մարագները և գոմերը գըտնւում են տների մօտ։ Ունին մի քարաշէն փոքրիկ, խոնաւ եկեղեցի, որի կամարակալ քարի վրայ գրուած է. Ողեամբ Միրզիկայ սուրբ Գաբրիէլ եկեղեցիս շինեցաւ 1674 ամի։

Գիւղից $1^1/_2$ վերստ հեռաւորութեամբ կան բանջարանոցներ, ուր կան նաև խնձորի և տանձի ծառեր։

Գիւղի հարաւային կողմում կայ մի կիսաւեր, հասարակ մատուռ, որ յայտնի է Ովասափ անունով։ Սրա խորանում բուսած է մի մեծ կաղնի ծառ, որ պաշտւում է։ Գիւղից մի քիչ վերև կայ մի ուրիշ աւերակ մատուռ ս. Աստուածածնի անունով և երեք խաչարձան։

Բնակիչները հայեր են՝ 71 տուն. 339 արս. 264 իգ. ի միասին՝ 603 հոգի։ Բացի երկրագործութիւնից և անասնապահութիւնից պարապում են նաև ածխագործութեամբ և փայտ են կրում Գանձակ։

Մուռուք.—Տեղաւորուած է Սարի-եալ լեռան արևելահայեաց լանջին մի փոքրիկ հարթակի վրայ. առաջև ձգւում է խոր ձորը, որի միջով հոսում է Ոսկանապատի գետը։ Ձորը պատած է գեղեցիկ այգիներով։ Մուռուքի տները գեղեցիկ են և շատերը եւրոպական կահ-կարասիքով զարդարուած։ Գանձակեցիները ամարանոց են գալիս այստեղ, որ իսկապէս շատ լաւ ամարանոց կարող էր համարուել, եթէ որ խոնաւ չլինէր։

Գեղեցիկ է նաև գիւղական փոքրիկ եկեղեցին։

Բնակիչները Պարսկաստանից 1828 թուին եկած հայ գաղթականներ են. 34 տուն, 131 արս. 107 իգ. ի միասին 238 հոգի։

---

## ՄԻԽԱՅԼՈՎՅՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

Աբլահ-գիւղ.—Գտնւում է Գետաշէնից Հիւսիս, ձորի մէջ. փոքրիկ գիւղ է, ուր միայն նշանաւոր է սուրբ Մինաս անուն բաւական գեղեցիկ սրբատաշ եկեղեցին, որ ունի հետևեալ արձանագրութիւնը.

Digitized by Google

Թվ. ՌՃՁԱ. Յիշատակ է Պետրոսին, Ցակոբին, Մըրզին տրապ տէր Պողոսին, որ էին որդիք Ալեքսիսի՝ ազգէն Հասանայ, որ էր ժամանակն Վալի Նամատին *), որ կոչի Թանմազ, որ թագաւորեցաւ ի երկրին բարսից, բազում գաւառս աւերեաց։

Բնակիչները բնիկ են, մի մասն էլ Հաթերքից գաղթած. բոլորն էլ Հայ լուսաւորչական. 34 տուն. 111 արբ. 85 իգական. ի միասին՝ 196 հոգի։

Ս. Յովհաննէս անունով մի ուխտատեղի կայ գիւղի հիւսիսային կողմում, բարձր սարի գլխին, որ մի խաչարձան է, հովանաւորուած բարձր և հինաւուրց հացի և կաղնի ծառերի սաղարթներով։

Ազատ կամ Սուլուկ գիւղ.—Հիմնուած է Պանդ լեռան լանջին։ Աւանդաբար պատմում են, թէ Նադիր-Շահը այս գիւղին ամէն տեսակ հարկերից ազատ է կացուցել, ուստի և կոչուել է Ազատ։ Եւ յետոյ միայն, Ջաւադ-խանի եղբայր Իմամ-Ղուլի-խանը գիւղում տեղի ունեցած մի ապստամբութեան պատճառով, զրկել է այդ արտօնութիւնից **)։

Բնակիչները լուսաւորչական Հայեր են, ընդամէնը 52 տուն. 189 արբ. 164 իգական. ի միասին՝ 353 հոգի։

Գիւղի արևմտեան կողմում, մօտ $1^1/_2$ վերստ հեռու գըտընւում է մի հին, աւերակ վանք, ուր աւանդութեան ասելով հանգչում են Երմողեայ քահանայի նշխարքը։ Սրա դռան կամարակալ քարի վրայ գրուած է.

Թիւն ՉԻԸ. Ես Մխիթար եւ Տիրածեր շինեցաք զեկեղեցիս ի հայրապետութեան տէր Ըստեփաննոսի Աղուանից կաթուղիկոսի։ Սրանից փոքր ինչ վերև.

*) Նադր-Շահին։

**) Մի ուրիշ աւանդութիւն էլ ասում է, թէ Լանկթամուրը այս գիւղով անցնելիս՝ զինուորները մտել են գիւղի եկեղեցին և կողոպտել։ Այս պատճառով Լանկթամուրի վիզը ծռուել է և երեսը յետևը դարձել։ Լանկթամուրը հարց ու փորձ է արել այս թշուառութեան պատճառի մասին և երբ մի տիրացուից լսել է, թէ եկեղեցին է պատժել, հրամայել է վերադարձնել աւարը, և անմիջապէս վիզը ուղղուել է. այս պատճառով էլ վանքը, ինչպէս և ամբողջ գիւղը ազատ է կացուցել ամեն տեսակ հարկերից և յարձակումներից, ուստի և վերակոչուել է Ազատ։ (Տէր Յարութիւնեան)։

Digitized by Google

Սպաղայ Ելչ խանին ու խարայնախին Ուառս լեղով շինեցի զեկեղեցիս։

Մատուռի շուրջը կայ Հանգստարան, ուր կան ԺԲ. դարից գերեզմանաքարեր, իսկ արևմտեան կողմում գիւղատեղի։

Բախշիկ կամ Հանի-շէն և կամ Հանի-քենդ.—Գտնւում է Արլահի հարաւ-արևմտեան կողմում և հիմնուած է 1870 թուին, երբ կառավարութեան կարգադրութեամբ Հաճի-քենդի այժմեան ամարանոցի նախկին բնակիչները գաղթեցին այստեղ։

Բայց մօտակայ ընդարձակ գերեզմանատնից և հին եկեղեցուց յայտնի է, որ հին գիւղատեղի է եղել։

Բնակիչները 38 տուն են, 141 ար. 123 իգ. ի միասին՝ 264 հոգի։

Գեսաշէն կամ Ձայ-քենդ.—Գտնւում է Հաճի-քենդից դէպի արևելահարաւ, մի խոր ձորում, որի միջով հոսում է Կուրակ-չայ գետակը։ Ձորը ամբողջապէս ծածկուած է այգիներով։ Գիւղի տները գլխաւորապէս գտնւում են ձորի արեւելահայեաց լանջին, իսկ արևմտահայեաց լանջին կան հին հնձանների աւերակներ և նոր շինուեցաւ պետական դպրոցական շէնք։ Ձիներթիւնների մէջ նշանաւոր է Տէր-Գրիգորեանի քառայարկ, գեղեցիկ տունը և Մելիք-Մնացականեանների նախկին մելիքական ապարանքը։ Գիւղի գրեթէ կեդրոնում գտնւում է ս. Աստուածածնի եկեղեցին, որ մօտ ժամանակներս նորոգել են, վերացնելով այն աղբիւրը, որ առաջ բղխում էր եկեղեցու հիւսիսային պատից և թափւում եկեղեցու կեդրոնում շինուած մի քառանկիւնի աւազանի մէջ։ Եկեղեցին պարսպապատ է և գաւթում կայ մի հինաւուրց բռշնի ծառ, որից կախուած է եկեղեցու զանգակները։

Գիւղի վարի ծայրում գտնւում է մի փոքրիկ, հասարակ մատուռ, ուր կայ մի նահատակի գերեզման։ Այս մատուռը նշանաւոր ուխտատեղի է և կոչւում է «Աւագ ս. Նշան»։ Դռան կամարակալ քարի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը.

Թվ. ՌՃԻԶ. կամաւ ամենակալին Աստուծոյ շինեցաւ սուրբ Նահատակս ձեռամբ.... եւ որդուն Քա-

Digitized by Google

մալ պակն, օգնականութեամբ գեղուս. թագաւորութեան Պարսից Շահ Սուլէման, հայրապետութեան Սիմէոնին յիշատակ Փամին։

Մատուռում պահւում է չորս նշանաւոր գրչագիր աւետարան *) և հետևեալ մասունքները. ա) Կենաց փայտի մի մասն, մի արծաթէ փոքր խաչի մէջ զետեղուած. բ) Եղիշէ առաքեալի բազկի մի մասը, մի արծաթէ, ոսկեզօծ աջի մէջ ներփակուած, որի վրայ կայ հետևեալ գրութիւնը. Այս է աջ սրբոյն Եղիշէի առաքելոյն. աշխատողքս՝ որ այ Իգնատիոս եպիսկոպոս, որ եբեր սուրբ նշխարս ի Կաֆայու յիշատակ սորա, տէր Ոսկան եպիսկոպոս։

Կամաւն Աստուծոյ Կարապետ եպիսկոպոս ետոյ նորոգեցի, Աստուած ողորմի ասացէք։

Կամաւն Աստուծոյ Մուրադ որդի Նիազի շինեցի սուրբ աջս, Աստուած ողորմի ասացէք. առաջնորդութեան Ոսկան եպիսկոպոսին, թվն ՌԿԷ էր։ գ) Հինգ արծաթէ խաչեր։

Մատուռը բաւական անխնամ կերպով պահպանում է մի քահանայ։

Գիւղի վերի ծայրումն էլ կայ մի փոքրիկ, կամարակապ, անսիւն եկեղեցի, որ ունի միայն մի խորան և մի աւազան։ Եկեղեցու դռան կամարակալ քարի վրայ գրուած է. «Այս է Մէլիք Թամրազին որդի Սարուխանին եխպար Եաւրին. Քապաճին Սպավի որդի, որդի Մէլիք Օսէփին Վէլուլպէհեզ»։

Մի քիչ բարձր՝ թվ. ՌՃՂԸ։ Աւանդութեան ասելով, սա կուսանոց է եղել, և այժմս էլ Անապատ է կոչւում։ Ձուրջը կան խուցեր, որոնցից միքանիսը դեռ ևս կանգուն են։

Անապատի մօտ գտնւում է Հայոց եկեղեցական դպրոցի շէնքը, որ չէ աւարտուած։

Անապատից միքիչ հեռու կայ մի ուրիշ, փոքրիկ կամարակապ, անսիւն և անխորան մատուռ, որի միակ դռան կամարակալ քարի վրայ քանդակուած է թէ ինչպէս Քրիստոս կշռելու է ննջեցեալների հոգիները։

Բնակիչները բոլորն էլ լուսաւորչական Հայեր են, առա-

*) Տես գրչագիրների բաժնում։

Digitized by Google



Digitized by Google



Ջիհ-Վրաստի շինած տպարանը Թիֆլիսի Գանձակում

ելալպէս Բոլնիսից, Ջրաբերդից և Ըռստակից գաղթած. ընդամէնը՝ 446 տուն, 1357 ար. 1201 իգ. ի միասին՝ 2558 հոգի։ Գիւղացիները բաւականաչափ կրթուած են, որովհետև վաթսունական թուականներից ունին դպրոց և շարունակ շրփւում են Հաջի-քենդի սարուորների հետ, որոնք շատ անգամ գալիս են սրանց գիւղը քէֆեր սարքելու։ Կան բաւականաչափ խանութներ, որոնցից մինում կայ և ֆոնոգրաֆ, գիւղացիներին զուարճացնելու։ Պատմում են, թէ ինչպէս գիւղացիները առաջին անգամ ֆոնոգրաֆի ձայնը լսելիս, սարսափած փախել են, կարծելով թէ սատանայ կայ մէջը նստած։

Բացի սովորական պարապմունքը, երկրագործութիւնն ու այգեպանութիւնը, այս գիւղացիները պարապում են նաև դարբնութեամբ, հիւսնութեամբ, դերձակութեամբ, թամբագործութեամբ, ոսկերչութեամբ և այլն։

---

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ Գ. ԾՐՋԱՆ

### ՊԱՏԱՁՈՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

**Պատ գիւղ.**—Գտնւում է Գանձակից մօտ 67 վերստ հեռու, դէպի արևմտահիւսիս և երկաթուղու Ջակամ կայարանից մօտ 15 վերստ հեռու, դէպի արևմտահարաւ, մի բարձր (4973 ոտ.) տափարակ տեղում։ Գիւղի արևմտեան կողմից հոսում է Պատա-գետը, որ սկիզբն է առնում Խաչ-եալ և Օքիւզդաղ լեռնաշղթաներից։ Մօտ կէս դար առաջ այս գիւղը գրտընւում էր այժմեան տեղից փոքր ինչ հիւսիս, ձորակում, ուր այժմ գիւղի այգիներն են. սաստիկ շոգը ստիպել էր բնակիչներին տեղափոխուել աւելի բարձր։ Գիւղում կայ մի հին, աւերակ և մի նոր եկեղեցի։ Դպրոց երբէք չեն ունեցել։ Բնակիչները Ղարա-Մուրատից, Ջրաբերդից և Փամբակից են եկել, բոլորն էլ հայ լուսաւորչական. ընդամէնը 246 տուն. 985 ար. 735 իգ. ի միասին՝ 1720 հոգի։

---

Digitized by Google

## ԲԱՐՍՈՒՄԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

Բարսում.—Գտնւում է Գանձակից մօտ 46 վերստ հեռու գէպի արևմուտք, Գառնակերից 3—4 վերստ դէպի արևելահիւսիս, Զամքոր գետի ձախ ափին, ժայռոտ ձորի լանջին։ Գիւղը բաժանւում է երկու մասի. առաջնում, որ գտնւում է ձորի մէջ, բնակւում են ձմեռը, իսկ երկրորդում, որ տարածւում է ձախակողմեան լեռան գագաթին, առաջնից 4 վերստ հեռաւորութեան վրայ, ապրում են ամառը, որովհետև այդ միջոցին առաջին մասում սաստիկ շոգ է լինում։

Գիւղում չկան կանոնաւոր փողոցներ. տներն էլ մինը միւսին կից շինուած լինելով, շատ անգամ մինի կտուրը ծառայում է միւսին որպէս բակ։ Գալերը և մարագները գտընւում են երկրորդ մասում. այստեղին մօտ են նաև գոմերը։

Ձմեռը գիւղի վրայ արևն ընկնում է ժամը մօտ 9-ին, իսկ սրա մօտակայ Զովդառ գիւղում հէնց ծագելիս, այս հանգամանքն ի նկատ առնելով՝ տեղացիներն ասում են. «Մարդ Զովդառ հաց ուտի, Բարսում բան անի»։

Գիւղում կայ մի նոր, քարաշէն և երեք հին, աւերակ եկեղեցիներ։ Սրանցից առաջինը քարաշէն է, փայտաշէն ծածկով և գտնւում է Հարաւային Հանգստարանի մօտ, ուր կան ՋԺ. (1461), ՌԽ. (1521) և ՌԽԵ. (1596) թուականները կրող գեղաքանդակ տապանաքարեր։ Այս եկեղեցու կամարակալ փայտի վրայ գրուած է. Թվ. ՌՃԵ. էր։ Երկրորդը գտնւում է հիւսիսային Հանգստարանի մօտ. երրորդը մի բարձր սեռի վրայ է և կոչւում է «Թռան (Թառած) եղցի». սրա միայն չորս պատերն են կանգուն մնում. մէջը բուսած է մի բուշնի ծառ, որ սուրբ է համարւում։

Զամքորի ափին, ձորի մէջ տարածւում են գիւղացիների այգիները։ Այստեղ, Ակուբանց բաղում կայ ս. Հռիփսիմէի անուան նուիրուած մի քարաշէն վանք, մի ուրիշն էլ կայ գիւղի արևելեան կողմի այգիներում, որի անունը անյայտ է։

Գիւղից փոքր ինչ հեռու, Զամքոր-գետի աջ ափին գտընւ-

Digitized by Google

ւում է ներքին-Չօթիւլ գիւղատեղին, ուր կայ մի եկեղեցի և գերեզմանատուն։

Բնակիչները բոլորն էլ հայ լուսաւորչականներ են, որոնց մէջ նշանաւոր են Մելիք-Աստամեանները, այս երկրի նախկին տիրապետողների ժառանգները։ Ընդամէնը՝ 155 տուն. 617 ար. 556 իգ. ի միասին՝ 1173 հոգի։

Պարապում են բացի սովորական՝ երկրագործութիւնից, այգեգործութիւնից և անասնապահութիւնից, նաև շերամապահութեամբ։

**Գանձակեր գիւղ** (ռուսերէն և թուրքերէն՝ Բարում).— Գտնւում է Գանձակից մօտ 40 վ. արևմուտք, Ջակիրից 7—8 վ. հիսրաւ, ահագին ժայռերի տակ, Զամքոր գետի ձախ ափին։ Շատ հին գիւղ է և շատ անգամ պատսպարան է եղել շրջակայ գիւղացիներին թշնամիների յարձակման միջոցին, որովհետև ընկած է խոր ձորի մէջ և սաստիկ դժուարանցանելի ճանապարհներ ունի։ Կայ մի եկեղեցի ս. Աստուածածին անունով, կառուցուած 1838 թ.։ Կլիման վատառողջ է, տենդային։ Բնակիչները հայեր են, 84 տուն, 380 ար. 360 իգ. ի միասին՝ 740 հոգի։ Բացի սովորական պարապմունքից, պարապում են նաև այգեգործութեամբ։

Գիւղի հիւսիս-արևելեան կողմում, նոյն Զամքորի աջ ափին կայ մի մատուռ, ուր գտնւում է մի գերեզման՝ **Նանատակ** անունով։

**Ջակիր.**—Գտնւում է Գանձակից մօտ 36 վերստ հեռաւորութեամբ դէպի արևմուտք, Զարդախլուից դէպի արևելահարաւ։ Ունին մի քարաշէն եկեղեցի։ Հողն արքունի է, սակայն շատ սակաւ, որովհետև լաւագոյն մասը Նովո-Տրօիցկա գիւղին է տրուած։ Բնակիչները Գիւլամբերից են գաղթած, ընդամէնը՝ 104 տուն, 437 ար. 369 իգ. ի միասին 806 հոգի. բոլորն էլ հայ լուսաւորչական։

**Նուզգար.**—Գտնւում է Գուլամբերից 5—6 վերստ դէպի արևելահիւսիս, մի սարահարթի վրայ։ Ունին մի հին եկեղեցի և գիւղից փոքր ինչ հեռու մի հին հանգստարան, ուր կան ԺԴ. դարուց մնացած տապանագրեր և մի հին կիսաւեր մա-

Digitized by Google

տուր։ Բնակիչները գազթել են գաղթիս սկզբին Երևանի գաւառի Քանաքեռ, Ճպիթղդան և Ճռբվեզ գիւղերից։ Ընդամէնը 76 տուն են, 301 ար. 261 իգ. ի միասին 562 հոգի։

Այս գիւղացիներից մի քանի տուն տեղափոխուած են Ղամարլու գետակի աջ ափին մօտիկ և հիմնել Կիրչամբիւրը, միայն սա դեռ ևս առանձին գիւղ չէ համարւում։

## ՄԻՍԿԻՆԼՈՒԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ղալաքեանդ կամ Փառիսոս.—Սա մի քաղաքի աւերակ է, որ տարածւում է Համանուն կամ Ղամքոր գետի երկու ափին, Գետաբէկի պղնձահանքից 23 վերստ հեռաւորութեամբ։ Տեղը մի գեղեցիկ հովիտ է ներկայացնում, որի հիւսիսային կողմում բարձրանում է Համանուն բերդը։ Յայտնի չէ, թէ ով է հիմնարկել այս քաղաքը և երբ, միայն գիտենք, որ Մեծ Սիւնեաց Սենեքերիմ թագաւորը պայծառացրել է քաղաքս եկեղեցիներով և բերդով, և կոչուել է «Թագաւոր Փառիսոսի» *)։ Նրան յաջորդել է որդին Գրիգորը, որի մահից յետոյ նոյնպէս յայտնի չէ թէ ով է տիրապետել։ Ինչպէս երեւում է շինութիւնների հետքերից և 12 եկեղեցիների աւերակներից, քաղաքը մի ժամանակ բաւական ընդարձակ և մարդաշատ է եղել։ Աւագ եկեղեցին, որ բաւական մեծ է եղել, վերջին տարիներս բոլորովին քանդել են և քարերը տարել։ Սրա մօտ կան երկու տապանի խաչարձաններ 2Ի և 2Լ թուերի արձանագրութեամբ։

Այստեղ այժմ զետեղուած է Սիմենսի ելեկտրալուծական գործարանը, իսկ ամառուայ երեք ամիսներին գալիս են այստեղ մի քանի վաճառականներ և արհեստաւորներ, սարը գնացողների պէտքերը հոգալու։

Ղարաբուլաղ.—Գտնւում է Ղալաքեանդի բերդի հիւսիսային ստորոտից բղխող աղբիւրից յառաջացած առուակի ձախ ափին։ Այստեղ կայ մի հինաւուրց, գեղեցկաշէն, չորս սիւների

*) Երցախ. եր. 431. Ծն. 48.

*վրայ հաստատուած եկեղեցի, որի միայն տանիքն է մի քիչ քանդուած։ Եկեղեցին լցուած է աղբով։ Շուրջը և առուակի ափին կան բազմաթիւ գերեզմաններ, բայց տապանագիր չի նկատուել։*

**Մեծ եւ Փոքր Ղարա-Մուրադ.**—*Ղալաքեանդից դէպի արևմտահիւսիս, Ջակամ գետի ակունքների շուրջը գտնւում են մի քանի ձմերանոցներ, ուր թուրքերը ձմեռները գալիս են իրենց անասունները պահելու։ Սրանցից նշանաւորներն են՝ Մեծ և Փոքր Ղարա-Մուրադ, Գիւնազ-Գէօրմազ, Գերգեր, Լէշքար, Արիկրան, մի քիչ բարձր՝ Զէյդան-դամ, Բոյրամ-դամ և Թիք-խաչ։ Սրանցից Փոքր Ղարա-Մուրադում կայ Հայոց մի կիսաւեր եկեղեցի, իսկ Մեծ Ղարա-Մուրադում կան երկու եկեղեցի. մինը բաւական մեծ է, հոյակապ, վեց սիւների վրայ հաստատուած և դեռ կանգուն. միւսը փոքր է և կիսաւեր։ Առաջնի աջակողմեան խորանի ճակատին գրուած է.*

**Շինեցաւ սուրբ տաճարս ձեռամբ անարժան Ջուղայեցի ուստայ Մուսէսին որդի Եսկարին զաւակ Սողոմոնին հրամանաւն Տէր Փիլիպոս կաթուղիկոսին. եկի շինեցի սուրբ եկեղեցիս Ղարամուրատին Հայոց թվին ՌՁԴ. ով որ կարդամ, ողորմի Մոսէին յիշեցէք ի տէր, Ասուած ձեզ յիշէ, ամէն»։** *Սեղանի ճախակողմը, աստիճանների վերև.* **Շնորհիւն Քի շինեցաւ սք Ամենափրկիչս ի ժամանակս շհ. Սփն թվին ՌՁԴ. էր, յիշեցէք Զաքարէն եւ կողակիցն Խաթուն ջան եւ մայրն Սառիկն եւ հայրն Վելիճանն եւ որդին Ղարամուրատն, Ղուկասն եւ դուստրն իւր Գուլաղէն, Զաքարի հայրն Վելիճանն, կողակիցն իւր Գուլդանէն, որդին իւր Ադամն, Հխնզրն, Ովանէսը, յիշեցէք եւ Ասուած ողորմի ասացէք»։** *Փոքր ինչ ներքև.* **Սուրբ սեղանս քարն յիշատակ է Ըռըստամին, իւր եղբայր Էվազին, Պարոնին, իւրեանց Խաթունին. թվ. ՌՁԴ։**

*Փոքր եկեղեցու դռան վրայ էլ կայ գրուած.*

**Շնորհիւ Ասուծոյ ես Ովանէս վարդապետս, որդի ապաշխարողի շինեցի զեկեղեցիս արդեամբք եւ զո-**

Digitized by Google

յիւ՛ ամենայն frիսսոնէից յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց եւ ամենայն աշխատողաց ի մայրապետութեան անապատիս թագուհւոյն եւ կայինային ի ՌՃԾ. թվ.

Այս եկեղեցուց մի քիչ հեռու, վտակի աջ կողմի հարթակի վրայ կայ նոյնպէս մի կիսաւեր անապատ, քանդուած խցեր և մի երկար քարէ սիւն, որի վրայ քանդակուած է մի խաչ և գրուած է «Սուրբ Սարգիս»։

Այս եկեղեցիներիս և ընդարձակ գերեզմանատնից երևում է, որ Մեծ Ղարա-Մուրադը երբեմն գիւղաքաղաք է եղել։

---

## ՁԱՐԴԱԽԼՈՒԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

Ձարդախլու.—Գտնւում է Ջակամ կայարանից մօտ 18 վերստ դէպի հարաւ, մի առուակի հովտում։ Գիւղը ձգւում է առուակի ուղղութեամբ և անհամեմատ աւելի երկար է, քան լայն։ Հովիտը փոքր առ փոքր բարձրանալով ընդհարւում է չորս լեռների, որի պատճառով և՛, ասում են, գիւղը կոչուած է Ձարդախլու, այսինքն չհալ-դաղլու—չորս լեռնանի։ Այս լեռներից հարաւային, խաչ-եալ անուանուածի վրայ կայ մի գեղեցիկ խաչքար ՌՀԵ. թուականով, որ ս. Գրիգոր Լուսաւորիչ է կոչւում և ուխտատեղի է։

Գիւղում կայ մի քարաշէն եկեղեցի. 1878 թ. ունէր ծխական դպրոց, որ այժմ փակ է։ Գիւղից մի վերստ հեռու, Ջագրի ձորում, տարածւում են այգիներ, ուր առաւելապէս կան թթենիներ։

Բնակիչները մասամբ Թիֆլիսի Հալաբարի մասից 1823 թ. գաղթած երևանցիներ են, մասամբ էլ Ղարաբաղից և Պարսկաստանից եկուորներ։ Բաւական յառաջադէմ են. ունին Ներսիսեան դպրոցն աւարտած քահանայ և բաւական գրագէտ անձինք։ Այս գիւղից շատ երեխաներ սովորում են Թիֆլիս և Գանձակ, երեք հոգի էլ աւարտել են բժշկական ֆակուլտետը։

Ընդամէնը՝ 202 տուն են, 753 ար. 561 իգ. ի միասին՝ 1314 հոգի։

Digitized by Google

Պարարտությունը նոյնն է. կան նաև մի քանի խանութներ և արհեստանոցներ։

Գիւղից փոքր ինչ հեռու, դէպի հիւսիս, գտնւում են շինութեան մնացորդներ, որ ուխտատեղի են «Մանտուռ» (մատուռ) անուամբ։ Սա նախկին Աղուանից կաթուղիկոսների ամառանոցի աւերակներն են։

Հայի Գետաբէկ կամ Ղազախ.—Գտնւում է համանուն պղնձահանքից հազիւ 3 վերստ հեռաւորութեամբ մի դաշտակի վրայ։ Բնակիչները վերաբնակել են այստեղ հին Գետաբէկից, ուր եկել էին Ղազախի Կոթ, Ոսկեպարիսպ և Ղալաչա գիւղերից։ Գիւղում նշանաւոր ոչինչ չկայ, նոյն իսկ եկեղեցի չունին, այլ օգտւում են պղնձահանքում եղած եկեղեցուց։ Գիւղը միշտ պատած է պղնձահանքի ծխով, որ արտերին մեծ վնասներ է պատճառում, որովհետև այրում է մօտիկ տեղերի հասկերը և խանգարում փոքր ինչ հեռու տեղերինը՝ կանոնաւոր աճման։ Ուստի և ժողովուրդը, որ այլ ևս այնքան գործ չի կարողանում գտնել պղնձահանքում, խնդիր է մատուցել կառավարութեան՝ իրենց մի ուրիշ տեղ տեղափոխելու։

Ընդամէնը՝ 44 տուն են, 178 ար. 149 իգ. ի միասին՝ 327 հոգի։

Հին Գետաբէկ.—Գտնւում է Զամքոր գետակի ձախ կողմում, Գանձակից մօտ 56 վերստ դէպի արևմտա-հարաւ՝ մի ձորում, որի միջով հոսում է Գետաբէկի առուակը։ Այստեղ են գտնւում Սիմենսի պղնձահանքի գործարանները, գեղեցիկ բնակարանը, շուկան, մի հիւրանոց և այլն։ Մի բլրակի վրայ կանգնած է Հայոց ս. Գէորգ եկեղեցին, որ շատ հին է։ Եկեղեցու շուրջը կայ մի ընդարձակ, հին գերեզմանատուն։ Մի ուրիշ եկեղեցի էլ է եղել, բայց պղնձահանքի կապալառուն քանդել է տուել և քարերը իւր շինութիւնների վրայ գործածել։ Այստեղ գլխաւորապէս բնակւում են զանազան ազգի բանուորներ, որոնք աշխատում են այստեղի գործարաններում և պղնձահանքերում։ Երկինքը միշտ պատած է ծխով։

Digitized by Google

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ Գ. ԾՐԱՆ.

### ԳԻԼԻՍՏԱՆԻ ՄԱՀԱԼ.

**Գիլիստանի մահալ.**— Գիլիստանի մահալը իւր անունն ստացել է համանուն բերդից և գիւղից, նա կոչւում է նաև **Թալիշի** մահալ Թալիշ գիւղի անունով և Իկիրմիդորդ, այսինքն քսան և չորս, որովհետև բաղկացած է եղել 24 գիւղերից։ Սրա նախկին սահմաններն են՝ հիւսիսից Կուրակ գետը, հարաւից՝ Թարթար գետը, արևելքից՝ այժմեան փոստի ճանապարհը, իսկ արևմուտքից՝ Առաւ սարը։ Ինչպէս տեսանք պատմական տեսութեան մէջ, այս մահալը կազմում էր մի առանձին, զօրեղ մելիքութիւն, Մելիք-Բէկլարեանների իշխանութեան տակ և այժմ էլ մեծ մասամբ պատկանում է նրանց ժառանգներին։ Այժմեան աշխարհագրական բաժանմունքով Գիլիստանի մեծագոյն մասն ընկնում է Գանձակի գաւառի երրորդ ոստիկանական շրջանում, իսկ մի մասը, ինչպէս Թալիշ գիւղը, Գիլիստանի բերդը, Հռեկայ վանքը, ընկնում են Ջիվանշիրի գաւառում։

Գիլիստանի մահալն ընդհանրապէս լեռնոտ է, թէև զուրկ չէ նաև գեղեցիկ տափաստաններից, այստեղ բարձրանում են Ձիշ-Թափա Դոդ-օ-դաղ և այլն լեռները և տարածւում Խրխափորի, Աղջաղալի և այլ հարթութիւնները։ Ամբողջ տարածութիւնը ծածկուած է հարուստ բուսականութեամբ, լեռները պսակուած են անտառներով, որոնց մէջ կան նաև պրտղատու ծառեր։ Դաշտավայրերում հասնում է խաղողը և տալիս նշանաւոր գինի, մանաւանդ Մուշկէս անուանուածը, որ հրաշալի է։ Հայոց բոլոր գիւղերը պատկանում են զանազան կալուածատէրերի և մանաւանդ Մելիք-Բէկլարեաններին։



Digitized by Google

## ՎԵՐԻ ՀԷՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

**Վերի գէն կամ Աղջամեանդ.**—Գտնուում է Ղարայ-չայ գետի ձախ ափում և շրջապատուած է լեռներով։ Այստեղ նշանաւոր է ս. Աստուածածնի կամարակապ, անսիւն եկեղեցին, որ շինել է Մելիք-Յովսէփը 1756 (ՌՄԵ) թուին և քարաշէն, երկարաձիգ կամուրջը Ղարաչայ գետի վրայ, որ շինել է գիւղատէրը։ Ամառը գիւղի շուկան սաստիկ կենդանանում է, որովհետև այստեղով են անցնում Ջիվանշիրից սար գնացող թուրքերը։ Բնակիչները 108 տուն են, 564 ար. 453 իգ. ի միասին՝ 1017 հոգի, որից 100 տունը՝ 555 ար. 449 իգ. հայեր են, իսկ 8 տունը, 9 ար. 4 իգ. թուրքեր։

Թէ այս և թէ ներքին շէնը այժմ պատկանում է թուրք Միրզատգիւզալովներին, որոնց անցել է Մեհտի-Ղուլի խանից։ Իսկ սա ժառանգել է իւր մայրը՝ Հիւրազատայ խանումից, որ Մելիք Զահնազար Բ. աղջիկը լինելով՝ մի օր հիւր է եկել իւր քրոջը՝ Մելիք-Բէկլար Բ-ի կին՝ Ամարնանու (Մարիամի) մօտ և այս երկու գիւղերը ընծայ ստացել։

**Ներքին գէն.**—Նոյն դաշտավայրի վերի ծայրում, Ղարաչայի ձախ ափին, մի սարի ստորոտում։ Գիւղում նշանաւոր է միակ, ս. Աստուածածնի եկեղեցին, որ շինուած է ՌՃԽԶ (1697) թուին և շատ անգամ իբր ապաստանարան է ծառայել գիւղացիներին, որովհետև պատերի վրայ նկատելի են բազմաթիւ գնդակների հետքեր։ Գիւղի հարաւային կողմում մի բլրակի վրայ կայ մի կիսաւեր վանք, որ ոչ մի արձանագրութիւն չունի և ժողովրդից անուանուում է Իրեք-մանկունք։ Իսկ սրանից ներքև, ձորի մէջ, կայ Լիտր անուանուած գիւղատեղի, գերեզմանատուն և երեք քարէ խաչեր։

Բնակիչները բոլորն էլ հայեր են, 117 տուն. 502 ար. 440 իգ. ի միասին՝ 942 հոգի։

Digitized by Google

## ՂԱՐԱՉԻՆԱՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**Հայի Պարխ.**—Գտնուում է Երքէջի մօտ, լեռան լանջին։ Ո՛չ մի նշանաւոր բան չկայ գիւղում, մինչև անգամ եկեղեցի չունին. տներն էլ շատ հասարակ են։ Գաղթել են Հին Պարխից, ուր այժմ մալականներ են բնակւում։ Բնակիչները Հայեր են՝ 37 տուն, 191 ար. 172 իգ. ի միասին՝ 363 հոգի։

**Ղահուրթ կամ Հայոց Զէյվա.**—Մի փոքրիկ գիւղ է, Ղարաչայի ձախ ափին, սաստիկ մօտ Ղարա-Զինարին։ Եկեղեցի անգամ չունին։ Բնակիչները բոլորն էլ Հայեր են, 14 տուն, 48 ար. 40 իգ. ի միասին՝ 88 հոգի։

**Գիւլիսաան.**—Գտնուում է մի երկարաձև բլրակի վրայ և շրջապատուած է Խանալան, Ղալաբուլաղ, Գէօգ-Թափա, Սաքաթ-քէշմաշ, Ղազան-դրմազ, Զախմախ-բուլախ և Քամարգէօզի լեռներով։ Գիւղի առաջից հոսում է Ինջայ-չայը։ Գիւղում կայ մի հին աւեր և մի նոր, քարաշէն և գեղեցիկ եկեղեցի։ Այս եկեղեցում կայ մի «Ծեր-աւետարան» կոչուած ձեռագիր, որ շատ հրաշագործ է համարւում և շատ ուխտաւորներ ունի։

Գիւղում նշանաւոր է մի հին, երեք թաղակապ սենեակներից բաղկացած քարաշէն ապարանք, որի դռան կամարակալ քարի վրայ գրուած է.

Զնորհիւն Այ շինեցաւ ապարանս ի թվին Ռ եւ Մլա. ես Յակոբոս ծառայ Այ իշխող գեղոյս որդի Ապրահամ սպարապետին։

Գիւղի տներն ընդհանրապէս շատ հասարակ են, միքանիսը նոյն իսկ գետնափոր։ Բնակիչները Հայեր են, 42 տուն, 181 ար. 168 իգ. ի միասին՝ 349 հոգի։

**Նոր-շէն կամ Եկիբեանս և կամ Մանաս-շէն.**—Գտնուում է Ղարաչինարի մօտ, Ղարաչայ-գետի աջ կողմում, մի բլրակի վրայ։ Այստեղ է բնակուել Մելիք Աբով II որդի Մանաս-բէկը, որի անունով և գիւղը այժմ էլ Մանաս-շէն է կոչւում։ Գիւղում կան այգիներ և պարտէզներ. տները մեծ մասամբ շատ հասարակ են, ինչպէս և եկեղեցին։ Բնակիչները

Digitized by Google

բնիկ հայեր են՝ 52 տուն, 221 ար. 199 իգ. ի միասին՝ 420 հոգի, որից միայն 3 տուն, 6 ար. և 2 իգ. թուրքեր են։

**Ղարա-Չինար** կամ **Աղջա-Ղալա.**—Ընկնում է Ղարա-չայի աջ կողմում, հարթ տարածութեան վրայ։ Գետի շնորհիւ այս գիւղը միւսներից համեմատաբար մաքուր է. բազմաթիւ այգիներն ու պարտէզները գիւղին գեղեցիկ տեսք են տալիս։ Այստեղ կան բաւական թուով երկյարկանի գեղեցիկ տներ, և մի քարաշէն, նոր եկեղեցի և արքունական տարրական ուսումնարան։ Այստեղ է բնակւում այս, երրորդ ոստիկանական շրջանի ոստիկանը՝ ամառուայ ընթացքում։ Բնակիչները բոլորն էլ հայեր են, 126 տուն, 399 ար. 369 իգ. ի միասին՝ 768 հոգի։

**Խարխափուս** կամ **Նոր-Խրխափոր.**—Ընկնում է մի հարթութեան վրայ, Գէօրգին սարի ստորոտում, Ղարա-չայի աջ կողմում։ Տները շրջապատուած են պարտէզներով։ Գիւղի մի ծայրում կանգնած է տիկ. Մելիք-Բէկլարեանի ծախքով նոր կառուցուած քարաշէն, գեղեցիկ եկեղեցին և Թալիշ-բէկ Մելիք-Բէկլարեանի նոյնպէս գեղեցիկ և ընդարձակ տունը։ Թէ եկեղեցու և թէ Մելիք-Բէկլարեանի տան բակում աւադ սարկաւագուհի Փեփրոնէ կոյս Խուբեանց Մելիք-Բէկլարեանի ծախքով կառուցուած են աղբիւրներ գիւղական հասարակութեան համար։ Մի ուրիշ բարեգործ էլ, Գրիգոր Մելիք-Բէկլարեան, կառքի ճանապարհ է շինել Նոր Խրխափորից մինչև Գիւլիստան գիւղը։

Այս գիւղի մօտ, Կողեր անուանուած գիւղատեղում կայ մի աւերակ վանք, և մի հին գերեզմանատուն։

Բնակիչները գաղթել են այստեղ հին Խրխափոր գիւղից, որ ընկած է Գիւլիստան և Նոր Խրխափոր գիւղերի միջև, մի հովտում։

Այս գիւղը այժմ աւերակ է, ծածկուած պտղատու և վայրի ծառերով։

Նոր Խրխափորի բնակիչները բոլորն էլ հայեր են, 27 տուն, 88 ար. 90 իգ. ի միասին 178 հոգի։

Digitized by Google

## ԷՐԶԷՋԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

**Գուզլուխ.**—*Գետեղուած է Քեափաթին մերձ, մի բարձրութեան վրայ և շատ ցուրտ կլիմայ ունի, որի պատճառով և ստացել է այդ (սառցային տեղ) անունը։* Սա Գիւլիստանի *ամենաբարձր ամարանոցը կարող է համարուել։ Բացի գիւղական փոքրիկ եկեղեցին, գիւղիցս փոքր ինչ հեռի կայ նաև* սուրբ Մինաս *անուն մի ուխտատեղի։*

*Բնակիչները հայեր են,* 23 *տուն,* 97 *ար.* 91 *իգ. ի միասին՝* 188 *հոգի։*

**Ղարաբուլախ.**—*Ընկած է սարի լանջին, որի ստորոտով հոսում է Կիւրակ գետի վտակներից մինը և միքիչ հեռու միանում նոյն գետի հետ։ Իր դիրքի շնորհիւ, գիւղը բաւական մաքուր է. և ունենալով մեղմ կլիմայ, գեղեցիկ ամարանոց է։ Թէև ընդհանրապէս տները հասարակ են, բայց կան և միքանի կանոնաւոր, երկյարկանի գեղեցիկ շինութիւններ։ Եկեղեցին բաւական հոյակապ է, վեց սիւների վրայ հաստատուած, ս. Աստուածածին անունով։ Սրա արևմտեան դրան ճակատակալ քարի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը.*

Շնորհօք ամենակալին մեք Ղարաբուլաղի ժողովուրդս մեծ եւ փոքր շինեցինք սուրբ եկեղեցիս յիշատակ հոգոց մերոց եւ ամենայն ննջեցելոց ի հայրապետութեան տեառն Պետրոսի, ի թագաւորութեան պարսից Շահ Սիւլէմանի խանութեան երկրիս Ուղուրլու խանին եւ պարոնութեան գեղիս Քարգալլի բէկին, տարուղէն Մուրթուզա Ղուլին. տանուտէր տէր Սիմէօն, տէր Յակովբ, տէր Ազարիէն. տէր Դաւիթ, Գրիգոր, Ազարիա, Շահնազար, Յարուի Աւան, որ ջերմեռանդ սիրով աշխատեցին. ես Մեղիդիւթ էրիցս գրեցի թուին ՌՃԿԵ. որ կարդաք մէկ բերան ողորմի ասէք. ամէն։

*Գիւղի մէջ կայ երկու աւերակ եկեղերի, իսկ շրջակայքում չորս եկեղեցի, աւերակ գիւղատեղերով։ Առաջինը կոչւում է* Բրդի շինի եղցի, *երկրորդը՝* Կոսի կալ, *երրորդը՝* Միջի վանք *և չորրորդը՝* Երի վանք *(վերին վանք)։ Չորսի*

Digitized by Google

շուրջն էլ կան ընդարձակ գերեզմանատներ։ Գլի վանքում մի գերեզմանաքարի վրայ կարդացուում է. «Այս է հանգիստ սուրբ Գրիգորայ Գանձակայ եպիսկոպոսին»։ Իսկ Կոսի գյուղում եկեղեցու խորանի կամարի վրայ մի խաչքարի ստորոտում՝ թվ. ՈՀԹ. (1230)։

Ղարաբուլաղի բնակիչները, որ մի ժամանակ բաւական շատ են եղել, այժմ միայն 44 տուն են, 158 ար. 148 իգ. ի միասին 306 հոգի, բոլորն էլ հայեր, բացի 3 թուրք տղամարդկանցից։

Մանատիք կամ Մանուշ էն.—Գտնուում է Պուզլուխից փոքր ինչ ներքև, նոյնպէս մի բարձրութեան վրայ և ունի առողջարար կլիմայ ու հրաշալի տեսարան։ Գիւղում կայ մի նորաշէն եկեղեցի և մի մատուռ ընկուզի ծառերի տակ, որ կոչւում է Նահատակ։

Բնակիչները 40 տուն են, 217 ար. 184 իգ. ի միասին 401 հոգի, որից միայն մի տուն, 4 ար. 2 իգ. թուրք են։

Թոդան աւերակ.—Սա մի գիւղատեղի է Ղարաբուլաղ գիւղի մօտ, մի ձորակի լանջին։ Դեռ կիսականգուն է հին եկեղեցին, որի հարաւային կողմի խորանի վրայ գրուած է.

«Ժամանակս Շահ Սեֆիին. խանութիւն Մուրթուզա Ղուլի խանին թանուլդ, կաթուղիկոս Գանձասարայ տէր Գրիգորին թվ. Ռ.»

Այստեղ կայ նաև մի մատուռ, որ վերանորոգուած է։ Սրա մօտ կայ մի խաչքար, 2,35 մետր երկ. և 1 մետր լայնութեան, որի վրայ արձանագրուած է.

Ի թվին ՀԾԷ (1308) ես Գրիգոր ու Պաղամ կանգնեցամ զխաչս 'ի բարեխաւսութիւն ծնողաց մերոց...։

Այս մատուռը բաւական նշանաւոր ուխտատեղի է համարուում։

Աւերակիս մօտ է համանուն թրքաբնակ գիւղը։

Իրէջ.—Ընկնում է մի ձորում և երեք կողմից պատած է սարերով։ Արևմտեան կողմից հոսում է Փոքր-Կուրակը։ Արևելեան սարի ժայռոտ լանջին կայ երկու արհեստական քարայր, յատկապէս պաշտպանութեան համար շինուած։ Հարա-

Digitized by Google

*ւայլին սարից անձրևների ժամանակ մեծ հողաթմբեր են պրրծնում և տակովն անում տները, ուստի և այս կողմի տներում այլ ևս չեն բնակւում։*

*Գիւղում կայ մի եկեղեցի ս. Սարգիս անունով, որի դռան ճակատակալ քարի վրայ գրուած է. «... յիշատակ թվ. ՌՃԿԵ.» (1716)։ Թէ եկեղեցու պատերի և թէ հին գերեզմանատնում կան ԺԳ. դարուց խաչքարեր։ Բնակիչները բնիկ են, որ գաղթել են Բոլնիս և ապա վերադարձել։ Այս վերադարձի թուականը յայտնի է լինում եկեղեցու մօտ գտնուած մի գերեզմանի հետևեալ տապանագրից.*

**Թվ. ՌՄԿԶ. (1817), որ է Պօլնուսու գալն մայիսի ի (20) Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ»։**

*Բոլորն էլ հայեր են, 94 տուն, 408 ար. 373 իգ. ի միասին՝ 781 հոգի։*

*Էրքէջի մօտ է* **Մկնատամ** *անունով ուխտատեղին և Ղրաբուլախ ու Ենկիջա գիւղատեղիները, իրենց կիսաւեր եկեղեցիներով։*



Digitized by Google

## ՆՇԱՆԱՒՈՐ ՎԱՆՔԵՐ

Զարեհայ անապատ.—Գտնուում է Գետաբէկից դէպի ա-բուելահիւսիս, մօտ 8 վերստ հեռաւորութեամբ, Զամքոր գետի



ՀԱՐԵՀԱՅ ԱՆԱՊԱՏ

ձախ ափին, մի փոքրիկ հարթութեան վրայ։ Վանքից փոքր ինչ հիւսիս, բլրակի վրայ կանգնած է զանգակատունը, իսկ

Digitized by Google

փոքր ինչ արևմուտք՝ սեղանատունը։ Վանքը պատած է պարսպով, որին կից կան այժմ քսանևհնգից աւելի, քարէ, թաղակապ փոքր խցեր։

Այս վանքը հիմնել է Գաւիթ եպիսկոպոսը ԺԷ. դարում։

Վանքը, որ կոչւում է ս. Աստուածածին, 17,28 մետր (8 սաժէն) երկարութեան, 9,72 մ. ($4^1/_2$ սաժէն) լայնութեան և մօտ 8,64 մ. (4 սաժէն) բարձրութեան մի հասարակ շինութիւն է, չորս քառանկիւնի սիւների վրայ հաստատուած։ Ունի երկու աւանդատուն, հօթը փոքրիկ պատուհան և երկու դուռն արևմտեան կողմում, որոնցից աջակողմեանը վերաշինուած է տաշած քարերով և վերին մասում մի սեղան պատրաստած։ Կարծւում է, թէ երբեմն այստեղ սանդուխտներ էլ են եղել և Համբարձման տօնին բարձրացել այդտեղ են պատարագ մատուցել։

Այս դուռը բացւում է մի նոր, կարմիր, տաշած քարից շինուած գաւթի մէջ, որ 8 մ. (11 արշ.) երկարութիւն, 6,48 մ. 3 սաժ.) լայնութիւն և եկեղեցուց 0,18 մետր ($^1/_4$ արշին) աւելի բարձրութիւն ունի։ Կամարները բոլորում են երկու ամբողջ և սրանց Հանդէպ երկական կեղծ սիւների վրայ, բաժանելով գաւիթը երկու մասի (ref), որոնցից աջը աւելի լայն է։ Այս գաւթի Հարաւային կողմում, մի գեղեցիկ, նշխերով եզրափակուած դուռ բացւում է նոյն երկարութեան և 2,88 մ. (4 արշին) լայնութեան մի սրահի մէջ, որի առաջի մասը երկու գեղեցիկ, ութակազմ սիւների վրայ բոլորող երեք կամարներ են կազմում, որոնցից միջինի ձեղունը գմբէթաձև բարձրացած է. այստեղից, երևի, երբեմն զանգակներ են կախուած եղել։

Գաւթի Հարաւային դռան վրայ գրուած է.

Ձնորհօք Այն կալի կառուցաւ ամենափրկչի վերնատունս տեղի Հզաւոյ ճեմարտի եկեղեցիս սուրբ եւ գաւիթ գովելի ի հայրապետութեան (տեղը բաց է թողնուած) շինեցաւ այս ձեռամբ տռ Ներսէսի հանդերձ ն. եղբարք՝ ամեն ի՝ փրկութիւն հոգոց մերոց, որք ընթերնուք յիշեցէք մեզ ի Քս. ամէն. թվ. ՌՃԼ Գ.

Արևմտեան դռան վրայ էլ գրուած է. Սուրբ խաչս

Digitized by Google

բարեխաւս էր Մովսէսին ներսէսեանց վասն փրկութեան հոգւոյ բարխուտարին, որ բազում սիրով եռուն շինել զգաւիթ սուրբ եկեղեցւոյն։

*Զանգակատունը 6,12 մ. (8½ արշին) լայնութեան, նոյնքան երկարութեան և 2—3 մ. (3—4 արշ.) բարձրութեան քառանկիւնի մի հասարակ շէնք է, որի վրայ բարձրանում է ութ սիւնների վրայ յանկած մի գմբէթ։*

*Զանգակատունը ունի միայն մի դուռն, որի կամարակալ քարի վրայ գրուած է.*

Կամօքն Այ շինեցաւ զանգակատունս յանուն սրբոց հրեշտակապետացն Միքայէլի եւ Գաբրիէլի. ի հայրապետութեան Պետրոսի սրբազան կաթուղիկոսին ի տանս Ողուանից եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս եւ անապատիս Զարեհայ Սարգիս վարդապետի. ձեռնտուութեամբ եւ աղօթիւք հ. միաբանից կատարումն եղեւ սբ խորանիս ի փառս Այ. արդ ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս եւ աղօթաւոր եղբարքս շինեցաք զսուրբ կաթուղիկէս, ի փրկութիւն հոգւոց մերոց. եւ ամենայն հետեւողաց, որք ընթեռնուք յիշեցէք զմեզ ի Քս. թվ. ՌՃ եւ Ը.

*Սեղանատունը 25 մ. (11 սաժէն և 2 արշին) երկարութեան, 8,64 մ. (4 սաժէն) լայնութեան և մօտ 6,5 մ. (3 սաժէն) բարձրութեան կամարակապ մի շէնք է, լուսաւորուած նեղ և փոքր պատուհաններով։ Քարէ երկշար սեղանները այժմ քանդուած են։ Սեղանատան մօտ գտնւում է խոհանոցը։*

*Պարսպի դռան կամարի վրայ գրուած է.*

Ես Մկրտիչ վարդապետս շինեցի պարիսպս, որ եղեւ խարջ իր. Թումանց. Ովանէս վարդապետն տուաւ ժ թումանց. շինեցաւ իշխանութեամբ սորա։

*Այս եկեղեցուց փոքր ինչ հեռու, արևելեան կողմը գըտընւում է «Հարանց մատուռը», որի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը.*

Ի հայրապետութեան Տեառն Պետրոսի կաթուղիկոսին, ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս

Digitized by Google

կանգնեցի զխաչս 'ի լուսաւորութիւն հոգւոյ իմոյ, եւ ծնողաց իմոց տէր Յաւանէսին Եղիսաբէթին եւ միաբանիցս, որ աստ կան հանգուցեալ, եւ ամենայն ողորմածաց մերոց, Քրիստոս Աստուած մեր լուսաւորեսցէ հոգւով եւ մարմնով աստ, եւ յաւուրն դատաստանին, եւ որ ընթեռնուր յիշեցէք ի Քրիստոս զՄելքոն կազմաւոր։

*Այս մատրան մէջ գտնուում է Սարգիս վարդապետի գերեզմանը, որի մասին Հայր Ջալալեանը հետևեալ աւանդութիւնն է պատմում։ Մի պարսիկ իւր ոխերիմ թշնամուն սպանել է և կամենալով իւր պնձի վրայից քերել սպանութեան ոճիրը, սպանուածի դին գիշերը ձգել է վանքիս դռանը։ Եւ երբ պարսիկները լսել են այս սպանութեան մասին, սկսել են նեղել և տանջել վանականներին իբրև դաւաճանների։ Բայց Սարգիս վարդապետը Աստուծու շնորհիւ, դատաւորների առաջ հարցրել է մեռելին թէ ով է եղել նրա սպանողը և սա կենդանի բարբառով ցոյց է տուել իւր սպանողին և այսպիսով ազատել միաբանութիւնը վտանգից *)։*

*Վանքը ունի 2800 դեսեատին անտառ, հինգ ձմեռանոց, որ կապալով են տրւում անասուններ պահելու, մի ջրաղաց երկու քարանի, 40 գլուխ տաւար, միքանի ձի, էշ և այլն։*

*Վանքը պահպանում է արժ. Աստուածատուր վարդապետը, որ քսան և հինգ տարուց ի վեր վանահայր է այս վանքում և իւր անխոնջ աշխատութեամբ վերջ ի վերջոյ կարողացել է յետ խլել վանքապատկան անտառը, որի համար և Վեհափառի կողմից արժանացել է խաչի և օրհնութեան **)։*

*Վանքի արևելեան պատի մօտ կան երկու միմեանց կից տապանաքարեր, որոնք թաղուած են հողի մէջ, սրանցից մինի վրայ կայ հետևեալ տապանագիրը.* Այս է հանգիստ Պաւիթ եպիսկոպոսին թուին ՌՂԲ։

Փառիսոսի վանք.—*Գտնուում է Ղալաքեանդից արևելահարաւ, Տանձուտից վերև, մի անտառապատ սարահարթի վրայ։*

---

*) Ջալալեան. Ճանապարհորդութիւն. հ. Ա. եր. 164։

**) Պէտք է նաև ասել, որ շատ շշունչներ կան նրա մասին։

Digitized by Google

Արևմտեան կողմից հոսում է մի փոքրիկ առուակ, որ գնում, թափւում է Ֆանձուտի գետի մէջ, իսկ արևելեան կողմը բարձրանում է Զոպան-դաղը։ Այստեղ, ամուր պարսպի մէջ կանգնած են երկու, բաւական մեծ եկեղեցիներ և մի մատուռ, երեքն էլ դեռ ևս կանգուն։ Եկեղեցիները միաչափ են, 25 մետր երկարութեան և 12 մ. լայնութեան, երկուսն էլ ունին մի մի կամարակապ գաւիթ։ Մատուռը ևս ունի փոքրիկ գաւիթ և սրա մօտ՝ զանգակատուն, սրբատաշ քարից շինուած։ Մատուռի դռան կամարակալ քարի վրայ, մի անարուեստ խաչի թևերի մէջ գրուած է. Ն. Խ. Ֆ. Մուսէս երէց։ Մատուռի մէջ, աջ կողմի պատում կայ մի գաղտնի մեծ պահարան։

Պարսպի մէջ կան բաւական թուով խցեր, որ բոլորովին քանդուած են. կայ նաև մի ջրավազան։ Թէ վանքերի շուրջը և թէ պարսպից դուրս կան բաւական գերեզմաններ։

Ս. Թարգմանչաց վանք.—Գտնւում է խաչակապ գիւղից դէպի հիւսիս, հազիւ չորս վերստ հեռաւորութեամբ մի գեղեցիկ սարահարթի վրայ։ Վանքը խաչաձև է և գմբէթաւոր 11 մետր երկարութեան և 10 մետր լայնութեան։ Ունի մի աւագ և երկու փոքր խորան, ինչպէս և երկու խորհրդարան։ Տասը լուսամուտ առատութեամբ լոյս են սփռում։ Վանքին կից կայ մի գաւիթ, ուր ամփոփուած են վանահայրերի մարմինները, ինչպէս Սամուէլ եպիսկոպոս Դատեան, միւս Սամուէլ, խաչատուր վարդապետ և այլն։ Կայ և մի զանգակատուն, որ 1856 թուին է կառուցուած։ Վանքի վրայ կայ ՆԼԸ (989) թուականը, որ գուցէ հիմնարկութեան թուականը լինի, թէև աւանդութիւնն ասում է, թէ վանքը հիմնուած է V-րդ դարում, ս. Մեսրոպի ներկայութեամբ։ Իսկ դաւթի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը.

Եկայք պատուեսցուք շինեալ յանուն սրբոց թարգմանչացն մեր Սահակայ եւ Մեսրոբայ, քանզի ՝ի սմա ծաղեաց մեզ լոյս ՝ի Հայաստան աշխարհի. 1029 փրկ. թվ. Գաւիթս այս կատուցաւ ի վանահայրութեան Սամուէլ եպիսկոպոսի 1800 ամի։

Digitized by Google

Վանքը ունի և մի զանգակատուն, որբատաշ քարից շինած, որի վրայ արձանագրուած է.

Զանգակատունս կառոյց Գանձակեցի Պօղոս Ամիրխանեանցը 1856 ամի։

Վանքը ունի պարիսպ, որի մէջ գտնուում են ութ գեղեցիկ խուց, պարտէզ և մի աղբիւր։ *)

Գաւթում բարձրանում է մի թումբ, որի ստորոտում, կէս շրջանաձև շարուած են խաչքարեր, իսկ թումբի վրայ կայ մի ուրիշ մարմարոնեայ մահարձան, որի առաջին երեսին գրուած է.

Ըստ ամփոփին կմախք նախնեաց հանգուցելոց ընդ հովանեաւ մենաստանի ս. թարգմանչաց. ի թիւն 405—1800 իսկ միւս երեսին՝ Կանգնի այս մահարձան ի պատիւ ոսկերաց որ աստ երեւեցան 'ի վերանորոգման թուին 1872—1883.

Վանքում կան երեք ձեռագիր աւետարաններ, որոնցից մինը յիշատակ է Գրիգոր Սիւնեաց իշխանի, 1312 թուին խաթարայ վանքին տուած։ Միւս հնութիւններից նշանաւոր է՝ մի եպիսկոպոսական կերպասեայ թագ 1640 թուից, նոյնպէս և մի եպիտրոն։ Մասունքներից նշանաւոր է ս. Ստեփաննոս նախավկայի մասունքը, որ նուիրել է վանքին Իգնատիոս եպիսկոպոսը 1558 թուին։

Վանքին պատկանում է 183 դեսեատին տեղ, բաղկացած վարելահողից, խոտահարքից և փոքրիկ անտառից։

Վանքին խնամակալ էր կարգուած այժմ Հանգուցեալ գանձակեցի Ներսէս-բէկ Տէր-Ներսիսեանը, որ թէ իւր անձնական գումարներով և թէ նուիրատուութեամբ մեծապէս բարելաւել է վանքը, վերանորոգելով շինութիւնները։

Վանքի վանահայրն է Թէոդորոս վարդապետ Ղիրակոնին, գրաբառ լեզուին հմուտ մի անձն, որ երկար ժամանակ

*) Աւանդութիւնն ասում է, թէ այս աղբիւրը բղխել է, երբ սուրբ Մեսրոպը իւր քարոզութեան միջոցին կամենալով ժողովրդին հրաշք ցոյց տալ, „ութը և մի Մովսէս խփել է քարին և հրամայել, որ ջուր բղխի“։

Digitized by Google

*վանքում ուսուցանում էր շրջակայ գիւղերից ուսման դիմող երեխաներին։*

**Թարգմանչաց անապատ.**—*Գտնւում է Մեծ Բանանց գիւղից արևելահարաւ, հազիւ 2 վերստ հեռու մի փոքրիկ բլրակի հարթ գագաթի վրայ, որի երեք կողմը պատում են Ղաշխայ-քար, Աչառի-ծմակ, Նալթոքեան, Կարմիր-քար, Հին-ընապատ, Ճնճա-քար միմեանց կից լեռները, որոնց մէջ ձրդւում են Թիրանաւորի և Անապատի ձորերը, որոնք միանալով կազմում են Բոլորանց ձորը։ Առաջի երկու ձորերից հոսում են վտակներ և միանալով կազմում Բոլորանց գետը։ Հին-ընապատ սարի և Ճնճաքարի միջև կայ մի նեղ անցք, որ, ինչպէս ասում են, ձգւում է մինչև Ղերան միւս լանջը և կոչւում է Նադիրի-ծակ։ Ասում են, թէ հին անապատը եղել է այդ ծակից վերև, Հին-ընապատ սարի վրայ։*

*Այժմեան վանքը անտաշ քարից շինուած, 15 մետր երկ. և 9 մետր լայնութեան հասարակ շինութիւն է, կամարակապ և անսիւն, և ունի միայն մի աւանդատուն և մի հասարակ դաւիթ։ Արևմտեան դռան կամարակալ քարը մի հին գերեզմանի խաչաքար է, որի վրայ գրուած է.* **Սբ. խաչս Ովանէսին.** *միւս կողմում* **Միլ խոնա Ազիզին.** *Իսկ խաչի ներս ընկած մասում տարբեր տառերով* **Ձինեց զսբ. եկեղ. թվ. ՌՀԹ.**

*Վանքից փոքր ինչ հեռու գտնւում է մի, համեմատաբար աւելի լաւ շինուած, գմբէթաւոր զանգակատուն, ուր կայ հետևեալ արձանագրութիւնը.*

**Ես Պաղդասարի որդի Մահտեսի Ներսէսս եւ Օսէփս տվինք սուրբ անապատիս ա. թուման վախմ. սոխա տուին մեզ տարեն դ. ժամ. եթէ ոք խափանի, պարտական լինի առաջի աստենին Քրիստոսի. թվ. ՌՃԽԹ.**

*Այստեղ գտնւում է տապանը* **«Տէրունց Յարութիւնի որդի Գաբրիէլ եպիսկոպոսին 60 ամ Վանահայր էր սա անապատիս, 96 ամեայ էր որ փոխեցաւ առ Քրիստոս. $18^{2}/_{13}31$ ՌՄՁ.»**

*Վանքի հիւսիսային կողմում, ուր ձգւում է ձորակը, նըկատւում է պարսպի մնացորդներ։ Վանքի մօտ կայ 10 թա-*

Digitized by Google

*ղակալ խցեր, որ բաւական լաւ են մնացել։* **Վանքի սեպհականութիւն է համարւում մի այգի, որի արդիւնքով կառավարւում է այժմեան վանահայրը, 90 տարեկան Յովհաննէս աբեղան, որ ինքն է հաց թխում, կերակուր եփում և մէն մենակ ապրում այդտեղ։**

**Ծաղկոցավանք.**—*Գտնւում է Գառնակեր գիւղից հարաւ, մօտ կէս վերստ հեռու, Ջամքոր գետի ձախ ափին, մի բարձր ժայռի գլխին. վանքը անսիւն է և բաւական ընդարձակ, 9 մետր 30 ս. երկսրութեան և 6 մետր 43 ս. լայնութեան. գմբէթ չունի, առջևից կցած է մի նորաշէն քարէ գաւիթ։ Պատերի մէջ կան մի քանի խաչքարեր, որոնցից մինի վրայ կայ* **ՋԻԵ.** (1476) *թուականը, իսկ մի ուրիշի վրայ՝* **«Սուրբ խաչ Տէր Ունան պարոն Գաբրիէլին fաւարան թվ. ՌՃԼԸ»։** *Գաւթում կան մի քանի գերեզմաններ, որոնց շրջակայ գիւղացիները* **ճրագնաւորների** *գերեզմաններ են անուանում։*

**Հրեշտակապետաց վանք.**—*Ընկնում է Ծաղկոցավանքից հարաւ, փոքր ինչ հեռու, լեռան ստորոտում։* **Վանքի երկարութիւնն է 10 մետր 70 ս. լայնութիւնը՝ 8 մետր։ Ունի մի քարուկիր փայտէ գմբէթով գաւիթ, ուր կան մի քանի գերեզմաններ։ Գաւթի հիւսիսային պատի մէջ երկու սրբատաշ քարերի վրայ արձանագրուած է.**

> **«Ճնարհիւ Աստուծոյ շինեցաւ տուրբ Միխայէլ եւ Գաբրիէլս ձեռամբ Յովհաննէս վարդապետի եւ մանտեսի Յովհաննէսի հանդերձ միաբան եղբարք թվ. ՌՄԿԵ»։**

*Գաւթի մէջ գտնուած շիրիմներից մինի վրայ.*

> **Այս է հանգիստ ճգնակեաց Յովհաննէս վարդապետի շինող վանիս Մաղաքի որդի թվ. ՌՄՀԷ»։**

**Վանքի հարաւային կողմում գտնւում են տասը խցեր միաբանների համար, որ այժմ կիսաւեր են։ Հասարակ քարի մի հաստ պարիսպ պատում է վանքը։ Պալուածքներ չունի, բացի մի այգուց։ Վանքը պահպանում է մի ծերունի քահանայ։**

**Վանքից մի քիչ հեռու կայ մի հին հանգստարան, որի մէջ կան ճգնաւորների, վարդապետների գերեզմաններ։**

Digitized by Google

Վանքի արևելեան կողմում, գետակի աջ ափի քերծում մի քարայր է գտնւում, որի մէջ երեք խաչքար կայ։ Սա կոչւում է Հարանց և աւանդութեան ասելով, այստեղ ճգնել են միքանի ճգնաւորներ։

Մի քիչ էլ հեռու կայ մի գիւղատեղի, աւերակ եկեղեցի և հանգստարան. որ յայտնի է Դիրանաւորի անունով։

Օխքը եղցի կամ Քարահերձ.—Զարեքի վանքի մօտ, Ջամքոր գետի ափին ձգւում է մինչև Ջիպասարը մի լեռնաբազուկ, որի հիւսիսահայեաց ծայրի քերծերում փորուած են քարայրներ, որոնց առաջը, բաց տեղերը քաշուած են պատեր։ Ամբողջ քերծը և մանաւանդ այրերը պատած են խիտ անտառով, մի նեղ ուղի քերծի գագաթից տանում է դէպի այրերը, բայց այժմ այդ նեղ ուղին էլ խափանուած է և այս քարայրերը շատ դժուարամատչելի են։ Սրանցից երկուսի մէջ կան վէմքարեր, հետևապէս և եկեղեցի են եղած։ Կիրակոս. Գանձակեցու ասելով (եր. 103 և 105). Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսը երկար տարիներ այս քարայրերումն է անցկացրել, յարձակումների երկիւղից ստիպուած։

Այս Քարահերձից փոքր ինչ վերև գտնւում է Աղիւսաձէն աւերակ գիւղատեղին։

Մլզնաբերդ կամ Մածնաբերդ վանք.—Սա պատկանում էր Աղսարդանայ որդի Կիւրիկէ թագաւորին, որ մի առ ժամանակ էլ այդտեղ է կացել։ Գտնւում է Հարցհանգիստ (Զովդառ) գիւղի մօտ, մի առանձնացած լեռան հարթ գագաթին։ Վանքը երկու կամարների վրայ հաստատուած մի շէնք է և ունի մի զանգակատուն։ Դռան վերև գրուած է.

Հնադարեան ուխտատեղիս յանուն սուրբ Սարգսի որէ Մլզնաբերդ, հիմնովին նորոգեց Գանձակեցի Սողոմօն Յար. Նալչադարեանցն ծախիւ իւրովք ի յիշատակ իւր կնոջն Բալախանումի, սրդոյն Լեւոնի եւ համայն ննջեցելոց իւրոց 'ի 1891 ՌՅԽ ամի։

Վանքի շուրջը պարիսպ է եղել, ինչպէս և խցեր, որոնցից միայն երկուսն են այժմ կանգուն։ Վանքը այժմ ծածկուած է բարձր ծառերով։

Digitized by Google

**Կարմիր եկեղեցի** կամ **Հռոմաէն.**—Գտնուում է Նիւկզարի մօտ, Ջամքոր գետի աջ ափին։ Սրբատաշ քարով, խաչաձև մի շէնք է, ունի գեղեցիկ կաթուղիկէ, մի աւագ խորան և սրա հարաւային անկիւնում մի փոքր և մութ խորան։ Վանքն ունի նաև մի գաւիթ, ուր կան շատ գերեզմաններ, բաւական թուով խցեր միաբանների համար և մի քարուկիր շրջապարիսպ, որ արդէն կիսաւեր են։

**Քարխանայ վանք.**—Հիմնուած է Միրզիկ գիւղի մօտ, մի լեռնահովտում. երեք կողմից պատած է բարձր լեռներով, առջևում տարածուում է մի խոր ձոր, որի միջով հոսում է մի առուակ, որ գնում միանում է Գանձակ գետակին։

Վանքը շինուած է տորոնագոյն սրբատաշ քարով, ունի երկու փոքր և մի աւագ խորան, վեց նեղ լուսամուտ և մի դուռն։ Վանքի երկարութիւնն է 12 մետր և լայնութիւնը՝ 8 մետր։ Բեմի ճակատին մի խաչքարի վրայ գրուած է. Թվ. ՌԿԵ.

Վանքը ունի և մի, հասարակ քարից շինուած գաւիթ, ուր կան ԺԷ—ԺԸ դարից միքանի գերեզմաններ։

Վանքը ունի և շրջապարիսպ ու միքանի խուցեր, կիսաւեր դրութեամբ։ Շրջապարսպի մէջ կայ Քեանդագիրմապ մականուանուած Սարգիս վարդապետի գերեզմանը։

Վանքը բոլորովին անխնամ է թողնուած։

**Եղնասար վանք.**—Գտնուում է Գետաշէնից դէպի հարաւարևելք, հազիւ երկու վերստ հեռաւորութեամբ, մի լեռնաբազկի վրայ։ Վանքը, որ կառուցուած է Եղիշէ առաքելի անուամբ, սրբատաշ քարերից, կամարակապ է և յանկում է երկու սիւների վրայ։ Գմբէթ չունի։ Երկարութիւնն է 12,4 մ. լայնութիւնը՝ 10,33 մ. Դրան հարաւային սեմի վրայ կարդացուում է. Թվ. ՌՃԼԸ. ես Նա..ո..ա Մովսէս էրէց։ Հիւսիսային սեմի վրայ. ի հոպելիանէ Ազատարարէ Գ թուականարէ մեսասան տարիք վեր տար (1311) ես անարժան տէր Ղազարս գրեցի։

Վանքի շուրջը կայ բաւական թուով խցեր, որոնցից միայն երեքն են այժմ կանգուն։ Սրանք միմեանց կից են և կամարակապ։ Մուտքի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը.



Digitized by Google

Սենեակ կերտեալ հրաշազան. վերին յարկօք եւ զանազան, Սակս տէրաստ.ր սրբազան Եղիազարիս Ընծաբան։ ՌՃԿԱ (1712)։

Վանքը ունեցել է և շրջապարիսպ։ Դարիս սկզբից այս վանքը անխնամ է թողնուած և այժմ այդտեղ խոզեր են պահ-ւում։ Ջերմ ունեցողներն էլ ուիտ են գալիս այդտեղ, սառնո-ղակ աղբիւրի մօտ մատաղ անում, իրենց շորերից կապում վանքի մօտ գտնուած ոուրբ ծառից և հիանում այն հրաշալի տեսարանից, որ բացւում է այդտեղից դիտողի առջև։

Ամենափրկիչ վանք.—Գտնւում է նուզգար գիւղի հա-բաւ-արևմտեան կողմում, Ամբոր գետակի ձորից փոքր ինչ բարձր։ Եկեղեցին կիսաւեր է և գաւթի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը.

Ընորհօքն Քրիստոսի եւ կամաւն Ես Դաւիթ եպիսկոպոս նորոգեցի զեկեղեցիս այս յիշատակ ինձ եւ իմ ծնողաց Բաղդասարին... թվ. ՌՃԻԸ։

Վանքի մէջ, բեմի առաջ կան մի քանի խաչքարեր, ո-րոնցից ամենամեծի վրայ գրուած է.

Ի հայրապետութեան Ղուանից տն. տն. Տրդատայ ս. կաթուղիկոսի, թագաւորութեան պարսից Շահապ-բազին ես Մեղապարս.... որդիս իմ Մաղաքիա Եպիս-կոպոսն... նորոգեցաք ս. Ամենափրկիչս.

Վանքը ունի շրջապարիսպ և միքանի խցեր, որ նոյնպէս աւեր են։ Մի քիչ հեռու, փոքրիկ բլրակի վրայ կայ մի հան-գրստարան։

Խամշի վանք.—Կիրակոս գանձակեցու ասելով, Քալա-հերձում բնակուող Ղուանից Յովհաննէս կաթուղիկոսը «Սե-ղուելով այլազգիներից եկաւ Հայոց աշխարհը Ջաքարէ և նրա եղբայր Իվանէ մեծ Իշխանների մօտ։ Եւ սրանք մեծ պատուով ընդունեցին նրան և Իվանէն բնակեցրեց նրան Միսիորոր (Փա-ռիսոս և Քաւս կամ Քուստի գաւառների վերի մասերը) գա-ւառի Խամշի անուանուած վանքում։ Այն մնաց ապրող մի մեծ և հրաշալի եկեղեցի շինել, բայց դեռ չէր աւարտել, երբ խափանուեց, որովհետև եկաւ Խորասանի սուլտան Ջալալադինի

Digitized by Google

և արշաւեց վրաց թագաւորութեան վրայ» *), այնուհետև հետզհետէ ինկան այլազգիների ձեռքերը ու աւերեցին Հայոց, Աղուանից և վրաց աշխարհները։ Սրանից յետոյ դարձեալ այստեղ բնակուեցան Աղուանից կաթուղիկոսները և շինեցին, աւարտեցին վանքը **)։ Ահա այս պատմական վանքն է, որ գտնուում է Մեծ Զարա-Մուրատ ամերակի արևելահիւսիսային կողմում, մի հովտի մէջ։ Երկարութիւնն է 15 և լայնութիւնը 9½ մետր։ Երկու սրբատաշ քարի վրայ յենուելիս է եղել ձեղունը, որ այժմ բոլորովին փլել է. հիւսիս-արևելեան կողմում բարձրանում է երկյարկ զանգակատունը, նոյնպէս սրբատաշ քարից շինուած։ Այստեղ աստիճանաւոր պատուանդանի վրայ դրուած է մի քարեայ խաչ, որ շատ գեղեցիկ քանդակագործուած է և կրում է վերան հետևեալ թուականը. ԹՎ. ՌՀԸ. (1629)։

Վանքը ունեցել է շրջապարիսպ և միաբանների խցեր, բայց այժմ բոլորովին քանդուած են։

Խոտնիտայ վանք.—Սա մի փոքրիկ, գեղեցիկ, գմբէթաւոր վանք է Նոր Գետաբակի արևելեան կողմում, Գետաբակի վտակի ձախ ափին մի հարթակի վրայ շինուած։ Այժմ թէև կանգուն, բայց անխնամ է թողնուած։

Պաճատալէոնի վանք.—Սա հիմնուած է համանուն սարի գագաթին, որ գտնուում է Հաճիքենդի մօտ։ Լեռը միայնակ, բլրաձև բարձրանում է մինչև 5000 ոտնաչափ բարձրութեան և գագաթին ունի մի փոքրիկ հարթ տարածութիւն։ Այնտեղ, ուր այժմ կանգնած է մի փոքրիկ, հասարակ քարից շինած գմբէթաւոր մատուռ, հնումը մի մեծ վանք է եղել, բաւականաչափ խցերով և ունեցել է միաբանութիւն։ Այժմ միայն ս. Աստուածածնի տնին բաւական մեծ բազմութիւն ուխտ է գալիս այստեղ։

Սուրբ Սարգսի վանք.—Սա մի փոքրիկ մատուռ է Հին Գետաբակի մօտ, մի բարձր և գեղեցիկ տարածութի վրայ։ Գետաբակի պիշնաշխանքի կառավարիչը այստեղ պատշգամբ,

*) Կիրակոս Գանձակեցի. եր. 105—106։
**) Անդ. եր. 171։

Digitized by Google

խոհանոց է շինել տուել և յսճախ զբօսանքի է գալիս։

Կիրակոս Գանձակեցու ասելով, այս վանքում ապաստանել է Յոհան վարդապետ Մայրավանեցին, Եզը կաթուղիկոսից հալածուելով և Մայրագոմեցի կոչուելով։

Ամենափրկիչ վանք Գիւլիստանի.—Գտնւում է Գիւլիստան գիւղից երկու վերստ հեռու, դէպի հարաւ-արևմուտք, Աղ-սու կոչուած վտակի ձախ ափի մօտ, մի անտառապատ ձորակում։ Տաճարը շինուած է անտաշ քարով չորս բոլորակ սիւների վրայ և ունի 23 մետր 50 սանտիմետր երկարութիւն և 10 մետր լայնութիւն։ Երկու փոքրիկ, նեղ լուսամուտներ աղօտ լոյս են ափռում ներսը, ուր կան մի մեծ ու երկու փոքր խորաններ և երկու խորհրդարան։ Միակ, հարաւային դուռը այժմ քանդուած է, այս պատճառով էլ տաճարը թուրքերի անասունների ապաստարան է դարձած։ Աւազանի մօտ, որ նոյնպէս կիսով չափ քանդուած է կայ ՌՂ (1641) թուականը։

Տաճարի արևմտեան կողմին շատ մօտ կան երկու թաղակապ սենեակներ, որոնցից մինի դռան սեմի վրայ գրուած է. Թվ ՌՃԿԻ. յիշատակ է այս օթաղս Եղիա վարդապետին։

Տաճարի միւս, հիւսիս-արևելեան կողմում գտնւում են միաբանների խցերը, որ նոյնպէս անտանանոց են դարձած և այժմ կիսաւեր դրութեան մէջ են։ Թէ այս խցերի և թէ տաճարի կտուրին բուսած են ծառեր։

Վանքից հազիւ քսան և հինգ քայլ հեռաւորութեան վրայ կայ մի փոքրիկ, քարուկիր մատուռ, որ այժմ ուխտատեղի է։ Զնորհիւ այն հանգամանքի, որ այս մատուռը դուռ ունի, մաքուր է մնացել և թուրքերի անասունները ներս չեն մտել։ Այս մատուռի մէջ մի խաչի վրայ գրուած է. «Հիւրիա ապաշխարողին»։ Դռան առաջ էլ մի գերեզման կայ հետևեալ տապանագրով. «Այս է հանգիստ Հիւրեղ դատին, աղաչեցէք. թվ. ՌԿԲ.»։

Դատի բէկանց վանք.—Գտնւում է Գիւլիստան գիւղից ներքև, Ինջա գետի աջ կողմում։ Սա մի հասարակ, փոքրիկ վանք է, այժմ կիսաւեր։ Շուրջը կան միաբանների խցեր և գերեզմանատուն։

Digitized by Google



Գանձակի բերդը.

Digitized by Google

## ՆՇԱՆԱՒՈՐ ԲԵՐԴԵՐ

**Գանձակի բերդ.**—Գտնւում է համանուն քաղաքի հիւսիսային կողմում, հարթ դաշտի վրայ։ Բազմաթիւ պատերազմների ասպարէզ դառնալուց յետ, 1870 թուին հիմնովին քանդուեց ռուսաց կառավարութեան կարգադրութեամբ։ Այժմ այս տեղում շինուած է և շինւում են զանազան շինութիւններ, ահագին բանտը, տներ և այլն։ Չետեղելով վերջնական աւերումից առաջ հանուած պատկերը, առաջ ենք բերում Եւցկու նկարագրութիւնը, որ արել է 1835 թուին. «Գանձակի բերդը, ամենաընդարձակը Վրաստանում, ունի վեց աշտարակ և բռնում է մի քառակուսի վերստից աւելի տարածութիւն։ Աշտարակներն ու թումբերը քարով են ծածկուած» *)։ Բերդի մէջ գտնւում էր խանի պալատը, որ երեք դարատամներից,—թաղակապ սենեակներից—էր բաղկացած **)։

**Ղալաբեանդ կամ Փառիսոս-բերդ.**—Տեղաւորուած է համանուն գիւղի հիւսիսային կողմում բարձրացող մի ժայռոտ լերան գագաթին։ Այս լեռը միայն արևմտեան կողմից միացած է Ղանդալ լերան հետ, իսկ միւս երեք կողմից նա առանձնացած է և սաստիկ զառիվեր։ Մի հաստ, մօտ 3,5 մետր լայնութեան պարիսպ բոլորում է լեռան գագաթին, 12 աշտարակներով և մի դռնով արևելեան կողմից։ Բերդի երկարութիւնը կը լինի մօտ 110 մետր, իսկ լայնութիւնը 85. դեռ ևս կիսաւեր մնում են երկու փոքրիկ մատուռներ, իսկ միւս շինութիւնների հետքերն են միայն նկատելի։ Հիւսիսային սլարսպին կից կան երկու ստորերկրեայ թաղակապ սենեակներ, որոնք միմեանց հետ հաղորդակցւում են մի դռնով։ Սրանցից առաջինը կիսով չափ լցուած է հողով, իսկ միւս մասը, ինչ-

*) Статистическое описаніе Закавказскаго края сост. Евецкій. С.-Петербургъ 1835.

**) Мевесъ. „Кавказъ“ 1864 г. № 35.

Digitized by Google

պէս և ամբողջ երկրորդ սենեակը, լի է յստակ և սառն ջրով։ Ասում են, թէ այս ջուրը բերուած է մօտակայ Ղանդալ սարից և հաղորդակցութիւն ունի Ղաբա-բուլաղ աղբիւրի հետ, որ բղխում է բերդի հիւսիսային ձորում, դարձնելով երկու ջրաղաց։ Պատմում էին, թէ երբ յարդ են ածել այս ջրամբարի մէջ, նկատել են, որ դուրս է եկել վերոյիշեալ աղբիւրից։

Քիրծերի մէջ կան երեք հատ արուեստական քարայրեր։

**Մամռուտ բերդ.**—Ըստ հայր Ջալալեանի *), այս բերդը հիմնել է Մամռուտ իշխանը, որ միևնոյն ժամանակ նպաստել է և Դաւիթ եպիսկոպոսին՝ կանգնելու Զարեքայ անա-



Մամռուտ բերդ։

պատը։ Կիրակոս Գանձակեցին **) Զարեքայ բերդ, իսկ Վարդան պատմիչը ***) Զմեղ է կոչում այս բերդին։

Գտնւում է Զարեքայ վանքի կալուածքում, վանքից մօտ երկու վերստ հեռու, դէպի արևելք, Զամքոր և Գիտաքէկ գետերի միախառնման կէտում բարձրացող մի ամրոցապատ լեռան ապառաժոտ գագաթին։ Բերդը ունի թրծած կարմիր

*) Ճանապարհորդութիւն. Հ. Ա. եր. 164։
**) Պատմ. Հայոց. եր. 103—105։
***) Վարդ. պատմիչ եր. 18։

Digitized by Google

աղիւսից պարիսպ և արևելեան կողմում կրկնապարիսպ, ամրապնդուած միքանի աշտարակներով։ Բերդի մէջ կայ մի կոնաձև բլուր, տների աւերակներ, ջրի խանգարուած աւազանի մնացորդներ և քարայրեր։ Բերդը այժմ պատած է մացառներով։ Բերդի տակ, գետի վրայ եղել է մի քարաշէն կամուրջ, որի կամարը այժմ ընկած է և տեղը փայտեր ձգած։

Մլզնաբերդ կամ Մածնաբերդ.—Գտնւում է Հարցհանգիստ գիւղի մօտ, մի սրածայր սարի գագաթին։ Սա պատկանում էր Աղսարդանայ որդի Կիւրիկէ թագաւորին, ուր և ինքը բնակւում էր։ Բերդասարի միայն արևմտեան կողմը պատած է ամուր պարսպով, որ ունի երեք աշտարակ, իսկ միւս երեք կողմերը ապառաժոտ և անմերձենալի են։ Ունի միայն մի դուռն արևմտեան կողմից։ Բերդս ունի նաև միջնաբերդ, առանձին պարսպով։ Սա տեղացիներից կոչւում է Նարին-ղալա։ Բերդի հիւսիսային մասում այժմ մի բարակ ջուր է հոսում, իսկ արևմտեան կողմում նկատելի են խեցեղէն խողովակներ, որոնցով երբեմն ջուր է բերուած բերդս։

Ղալա-բոյուն.—Բերդաքաղաքս գտնւում է Ջակամ գետակի ձախ կողմում բարձրացող լերան վրայ։ Ունի շրջապարիսպ, որ կիսաւեր է։ Կան երեք եկեղեցու, բազմաթիւ տների ու խանութների աւերակներ։ Կայ և մի ընդարձակ գերեզմանատուն։

Քարահուճ աւերակ կամ Բալլու-ղայա և Ջափար-ղալա.—Առաջինը տեղաւորուած է Մռաւ լերան արևմտեան, իսկ երկրորդը՝ արևելեան լանջին, միմեանցից մօտ եօթ վերստ հեռաւորութեամբ։ Առաջնում մնում է մի փոքրիկ եկեղեցու աւերակ, իսկ երկրորդում՝ ոչինչ։ Այս երկու տեղն էլ ճառայելիս են եղել Գիւլիստանի ժողովրդներին իբր ապաստարան՝ թշնամեաց յարձակման միջոցին։

Ղրզ-ղալա.—Կանգնած է Ղուլալի գիւղից վերև, Ախնջի վտակի աջ ափին բարձրացած սեպաձև և անմատչելի ժայռի գագաթին, որ միմիայն մի դժուարանցանելի ճանապարհ ունի արևելեան կողմից։ Ժայռի գագաթը մի փոքրիկ հարթութիւն է ներկայացնում և շրջապատուած է եղել պարսպով։ Ժայռի

Digitized by Google

արևելեան ստորոտում, փոքրիկ հարթութեան վրայ դեռ ևս մնում են մի կիսաւեր եկեղեցի և գերեզմանատուն:

Համանուն մի բերդ ևս կայ Նիւկզար գիւղի արևելեան կողմում, որ բաւական հին լինելով՝ շատ քիչ հետքեր է թողած:

**Կեռասավանք բերդ.**—Արդէն այնպէս աւերուած է, որ դժուար է հաստատապէս ասել, թէ բերդ է եղած, որովհետև տմանք էլ կարծում են թէ վանք է եղած: Գտնւում է Զամքոր գետի աջ կողմի բարձրութեան վրայ, Բուսկան նահատակից փոքր ինչ ներքև: Բոլոր շինութիւններից միմիայն պարսպի միքանի մասերն են մնացած:

**Ղալա.**—Ոսկանապատից դէպի վերև, մօտ մի մղոն հեռաւորութեամբ նոյն գետակի ձախ ափին գտնւում է մի գրեթէ քառակուսի, չորս աշտարակներով փոքրիկ ամրոց, որի իսկական անունը անյայտ է: Գետակի կողմում կայ և կրկնապարիսպի մնացորդներ:



Digitized by Google

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Ելենէնդորֆ.—Գտնուում է Գանձակէց գէպի հիւսիս, մօտ 7 վերստ հեռու, մի հաբթուլթեան վրայ, Գանձակ գետի աջ կողմում։ Հինգ կանոնաւոր, լայն և ուղիղ փողոցներ ձգւում են գրեթէ մի վերստ երկարութեամբ, որոնց երկու կողմը տընկուած կազամախի, բարտի և սօսու ծառերը մի առանձին գեղեցկութիւն են տալիս գաղութին։ Գրեթէ կենդրոնում բարձրանում է գոթական ճաշակով սրբատաշ կարմիր քարից շինած եկեղեցին, որի մի կողմը գտնւում է պետական երկդասեան, երկսեռ դպրոցը, իսկ միւս կողմում մի գեղեցիկ, երկյարկանի տուն, փոքրիկ պարտիզով, որ համայնքը յատկացրել է պաստորի բնակութեան համար։ Եկեղեցու առաջ տարածւում է մի բաւական ընդարձակ հրապարակ, նոյնպէս կազամախի ծառերով զարդարուած։ Տները մի, երկու և մինչև անգամ եռյարկանի են, իրենց առաջը ունենալով ընդարձակ բակեր և փոքրիկ բանջարանոցներ։

Գաղութում կայ բաւական թուով գեղեցիկ, հարուստ խանութներ, արհեստանոցներ, գերմանական և ռուսաց զինուորական կլուբներ, մի հիւրանոց, հասարակաց այգի, պոստ և հեռագրատուն և այլն. բնակիչները, թուով 249 տուն՝ 735 ար. 722 իգական, իմիասին 1457 հոգի, վիւրտեմբերգցի գերմանացիներ են, և 50 տուն, 116 ար. 44 իգ. իմիասին 160 հոգի հայեր, կան նաև երկու տուն ռուսներ և երկու տուն թուրքեր։

Հայերն ունին մի շարժական խորան մի դահլիճի մէջ, ուր թէև իրաւունք չունին պատարագ մատուցանելու, բայց կարող են ժամասացութիւն և զանազան ծիսակատարութիւններ կատարել։

Գերմանացիները գլխաւորապէս պարապում են երկրագործութեամբ, այգեպանութեամբ, գինեգործութեամբ և գա-

Digitized by Google

բեջրի պատրաստութեամբ, հայերը՝ բացառապէս առևտրով և արհեստներով։

Այս գաղութում նշանաւոր է Ֆորէր գերմանացին, որ միլիոնատէր է, ունի բաւական թուով այգիներ, արտեր, ընդարձակ արօտատեղիներ, ձիաբուծարան, գինու և գարեջրի գործարաններ և այլն։

Այս գաղութում 25 տարուց ի վեր մնում է մի գունդ զօրք, ցրուած գերմանացիների տնելում։

Անճելճէլդ.—Գտնւում է Զամքոր գետից 8 վերստ դէպի հիւսիս, մի ընդարձակ դաշտի վրայ։ Ուղիղ, կանոնաւոր փողոցները բարձր ծառերով, գեղեցիկ տները ընդարձակ բակերով այստեղ էլ գիւղին բաւական լաւ տեսք են տալիս։ Գաղութի մօտ երևում են մի շարք կուրգաններ, որոնք դեռ ևս պեղուած չեն։ Այս գաղութը միանդամայն նման լինելով Ելենէնդորֆին, առանձին յիշատակելու բան չունի. այս միայն կարելի է ասել, որ սա այնքան յառաջադիմած չէ, որքան Ելենէնդորֆը, որովհետև կենդրոնից աւելի հեռու է գտնւում։ Բնակիչները 116 տուն են, 231 ար. 261 իգ. իմիասին՝ 492 հոգի, որից 97 տունը, 201 ար. 236 իգ. գերմանացի են, 16 տունը, 23 ար. 20 իգ. հայեր. 1 տունը, 3 ար. 4 իգ. ռուս, 1 տունը, 2 ար. 1 իգ. վրացի և 1 տունը 2 ար. պարսիկ։

Digitized by Google

## ԴՈՒԽԱԲՈՐՆԵՐԻ ԳԻՒՂԵՐ

Գանձակի գաւառում կան դուխաբորների հետևեալ գիւղերը.

1) Սլավեանկա, 2) Նովո-Գարելոյէ, (Արթափա) 3) Նովո-Սպասկոյէ, 4) Նովո-Տրոիցկոյէ (Գիւնալ)։

Այս չորս գիւղը ի միասին կազմում են մի, Սլավեանկայի, հասարակութիւն և ունին 339 տուն, 1220 ար. 1226 իգ. ի միասին՝ 2446 հոգի։

Սրանցից Սլավեանկա գիւղը գտնւում է Գետաբէկի պղընձահանքից 8 վերստ դէպի հիւսիս, Գանձակից մօտ 70 վերստ դէպի արևմուտք, մի դաշտավայրի վրայ, Արեշէնկա գետակի ափերին, որ սկիզբն է առնում Ղըզըլ-չակ լեռից և թափւում Ջակիր-չայի մէջ։ Աւանդութեան ասելով հնումը սա Հայաբնակ է եղել և կրել է Վարդանապատ անունը։ Թուրքերը սրան կոչում են Ենկիջա-Բազար։ 1837—38 թուերին Թաղէթից 40 տուն հայեր գաղթել են այստեղ, սակայն թուրքերից սաստիկ նեղուելով 1844 թ. վերադարձել են իրենց գիւղը։ Սրանց շինած եկեղեցին այժմ էլ կայ գիւղի հիւսիսային կողմում։ Սլավեանկան, ինչպէս և միւս բոլոր դուխաբորների գիւղերը, ունին կանոնաւոր, երկար և լայն փողոցներ։ Բնակարանների առաջ կան պարտէզներ, պտղատու ծառերով, որոնք գիւղին բաւական գեղեցիկ տեսք են տալիս։

Գիւղում կայ պետական երկդասեան տղայոց դպրոց, հիմնուած 1888 թուին։

Ամառները այստեղ են մնում գաւառիս չորրորդ ոստիկանական բաժնի ոստիկանը, հաշտարար դատաւորը և քննիչը։ Բնակիչները 211 տուն են, 774 ար. 763 իգ. իմիասին 1537 հոգի։

**Նովո-Գարէլոյէն** գտնւում է Սլավեանկայից մօտ 3 վերստ դէպի արևելք. հնումը հայաբնակ է եղել Էրէնեոյ անունով,

Digitized by Google

յետոյ Թուրքաց ամառանոց՝ Աբլեֆա կոչումով։ Բնակիչները 61 տուն են, 236 ար. 238 իգ. իմիասին՝ 474 հոգի։

Նովո-Սպասկոյէն գտնուում է Սլավեանկայից 5—6 վերստ դէպի արևելահարաւ. հնումը նոյնպէս հայաբնակ է եղած խնուս անուամբ։ Բնակիչները 31 տուն են, 108 ար. 114 իգ. ի միասին՝ 222 հոգի։

Նովո-Տրոիցկոէն ընկնում է Նովո-Գարելոյի մօտ, 2 վերստ դէպի արևելահիւսիս։ Բնակիչները 36 տուն են. 102 ար. 111 իգ. ի միասին 213 հոգի։

Այս չորս գիւղերի մէջ էլ ոչ մի առանձին նշանակութիւն ունեցող բան չկայ։

Digitized by Google

## ՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԳԻՒՂԵՐ

**Նովo-Սարատովկա** գիւղը ընկնում է Գանձակից մօտ 96 վերստ դէպի արևմուտք։ Սա կոչւում է նաև Փնտիլու, (Կաղնուտ) թերևս շուրջը գտնուած կաղնիների պատճառով։ Գիւղի մօտ մի փոքրիկ եկեղեցու աւերակ կայ, որի (1558) թուականը կրող խաչաքարերով. դռան կից քարերից մինի վրայ մի մարդ է քանդակուած, ձեռին մի փունջ բռնած։ Բնակիչները որ 1844 թուին Սարատովի նահանգից գաղթած են եղել Լոռու գաւառում, իշ. Օրբելեանի կալուածքը, 1850 թուին վերաբնակել են այստեղ։ Ընդամէնը 177 տուն են, 591 ար. 508 իգ. իմիասին 1099 հոգի. որից՝ 375 ար. 331 իգ. մալական են, 92 ար. 72 իգ. սուբբոտնիկ, 124 ար. 125 իգ. պրիգուն։

**Նովo-Իվանովկա.** գաւառիս արևմտեան կողմի վերջին գիւղն է, Գանձակից 103 վերստ հեռու։ Սրա սահմանում, Դեմիրդաղի մօտ գտնւում է մի եկեղեցու աւերակ, որ կրում է Սպիտակ եկեղեցի անունը, որա անունով էլ այս գիւղը շատ անգամ կոչւում է Աղ-քիլիսա (Սպիտակ եկեղեցի)։ Նուս աղանդաւորները վերաբնակուել են այստեղ 1853 թ. գալով մասամբ Ջամախու գաւառի Ջիբանի գիւղից, մասամբ էլ Տամբովի և Սարատովի նահանգներից։ Ընդամէնը 145 տուն են, 544 ար. 406 իգ. իմիասին 950 հոգի, որից 399 ար. 321 իգ. մալական, 38 ար. 34 իգ. բաբտիստ, 105 ար. 49 իգ. սուբբոտնիկ։

**Ռուսաց-Պարիս** (Բորիսի).—Գտնւում է Հայոց Պարիսի մօտ, նախկին Հայոց Պարիսի տեղում, ուր կայ մի աւերակ եկեղեցի և Հանգստարան։ Չորս կողմից պատած է լեռներով, որոնք ծածկուած են հասարակ և պտղատու ծառերով։ Ամբողջ գիւղը բաղկացած է երկու զուգընթաց, երկար փողոցներից, տները միմեանցից անջատուած են և ունին ընդարձակ բակեր, որոնց

Digitized by Google

մէջ կան ջրհորներ։ Գիւղն ունի միմիայն երկու աղբիւր։ Գիւղի մօտ, լեռան լանջին գտնւում է Նահատակ անուն հայոց ուխտատեղին։

Բնակիչները ռուս աղանդաւոր՝ մալականներ են, որ գաղթել են այստեղ Տամբովի նահանգից, միաւորամանակ մնալով նախ Զանգեզուրի գաւառի Բազարչայ և ապա Ջիբրայէլի գաւառի Ղալաբուլախ գիւղերում։ Բոլորը 141 տուն են, 331 ար. 316 իգ. ի միասին՝ 647 հոգի։ Հողը պատկանում էր Մելիք-Բէկլարեանին, որից 1888 թուին արքունի գանձարանից փոխառութիւն անելով գնել են։

Թիխաղովկա.—Գտնւում է Հաճիքենտ ամարանոցից մօտ 3 վերստ հեռու դէպի հարաւ. մի փոքրիկ հարթութեան վրայ։ Գիւղի երկու կողմում տնկուած են ծառեր։ Գիւղը հիմնուած է 1870 թուին և ոչ մի նշանաւոր բան չունի բացի ներսից, որ մեղմ կլիմայ և բաւականաչափ լաւ բնակարաններ ունենալով՝ ամարանոց է դարձած։ Գիւղին կից անտառ չկայ։ Բնակիչները 28 տուն են, 70 ար. 61 իգ. իմիասին՝ 131 հոգի, որից 3 ար. 1 իգ. ստարոօբրեատցի են, 34 ար. 33 իգ. մալականներ, 15 ար. 19 իգ. բաբտիստ, 6 ար. 2 իգ. սոսբ-բոտնիկ, 10 ար. 5. իգ. պրիզուններ։

Digitized by Google

# ԹՈՒՐՔԵՐԻ ԳԻՒՂԵՐ

Թուրքերի գիւղերն մեծ մասամբ գտնուում են դաշտային, ջրարբի և արգաւանդ մասում։ Այսպէս առաջին ոստիկանական շրջանում, որ բռնում է գաւառի հիւսիսային դաշտային մասը, կան 61 գիւղ. բոլոր թրքաբնակ գիւղերը 117 են և բոլորն էլ կրում են դրեթէ միևնոյն բնաւորութիւնը,—սաստիկ կեղտոտ, տները հասարակ և մեծ մասամբ գետնափոր, փողոցները ծուռ ու մուռ և կեղտոտութիւններով լի։ Համարեա ոչ մի գիւղում պատմական կամ ճարտարապետական տեսակէտից նշանաւոր մի որևէ շէնք չկայ։ Կան, ի հարկէ, ուխտատեղիներ, մզկիթներ, սակայն սրանք զուտ կրօնական տեսակէտից փոքր ի շատէ նշանակութիւն ունին և ոչ-մահմեդականի համար բոլորովին հետաքրքրական չեն։ Ամենաբազմամարդ գիւղը Երկրորդ Խիլխինան է, որ 730 տուն բնակիչ ունի, բոլորն էլ շիաներ։ Նոյնպէս բազմամարդ են Վերին Սիպլին (474 տ.) Այրումը (376 տ.), Ղարադաղլի Պադարը (372 տ.) Ներքին Սիպլին (349 տ.), Գէօրանբոյ Ահմետլին (335 տ.), ուր նըստում է ոստիկանական երրորդ շրջանի ոստիկանը, Պալլեարը (329 տ.), Մորուլը (282 տ.), Ղըզըլ-Հաջիլին (277 տ.), Գիւգարլին (252 տ.), Քեչիլին (222 տ.), Բայրամլին (214 տ.) և այլն։

Digitized by Google




Նկար. Վարդան Աբրահամեանց 1899 թ. Թիֆլիս.

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google